

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ  
ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМЕНИ М. АБЕГЯНА

А. С. ШАРУРЯН

ЛЕТОПИСЬ  
ЖИЗНИ И ТВОРЧЕСТВА  
ДАНИЭЛА ВАРУЖАНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1984

8(092)  
2-36

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ  
ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

1861



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1984



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս է. Գ. ՋՐԲԱՇՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ Մ. Մ. ՄԵԼԻՔՅԱՆԸ  
և Ի. Դ. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ

Շարունայան, Ա. Ս.

Վ 339 Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության  
տարեգրություն /Պատ. խմբ. է. Գ. Ջրբաշյան.—Եր.:  
ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984. 284 էջ, նկ. 9:

Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Մ. Աբեղյանի անվ. գրակ-  
ին-տ.

Գրքում վավերագրական տվյալներով ներկայացվում է Դ. Վա-  
րուժանի կյանքի կարճատև, բայց բեղմնավոր ուղին: Տարեգրու-  
թյունն արտացոլում է կենսագրական և ստեղծագործական նշանա-  
կություն ունեցող բազմաթիվ նորահայտ փաստեր: Հասցեագրվում  
է գրականագետներին և ընթերցող լայն շրջաններին:

4603010000

ԳՄԴ 83. 321

Շ ————— 68—84

7 03 (02)—84

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984



*Դանիել Վարուժան*

## ԵՐԿՈՒ ԽՈՍ-Ը

Դանիել Վարուժանը (1884—1915) հայ գրականության ամենամեծ և ինքնատիպ դեմքերից է: Իր հզոր տաղանդով և արվեստի բացառիկ ուժով նա արձագանքեց դարաշրջանի բարդ ու դժվարին խնդիրներին, դարձավ այն եղակի ստեղծագործողներից մեկը, որը բարձրացրեց հայ բանաստեղծության հեղինակությունը:

Գրողի կարճ, բայց արգասավոր ու հարուստ կյանքը վաղուց է արժանացել հետազոտողների ուշադրությանը: Սկսած 1919-ից, երբ լույս տեսավ Լևոն Հսաճանյանի «Դանիել Վարուժան (կյանքը և իր գործը)» աշխատությունը, մինչև մեր օրերը հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ և ուսումնասիրություններ, որոնցում ուրվագծվել է նրա կյանքը, ներկայացվել ստեղծագործական դիմանկարը, բացահայտվել գրական-պատմական ծառայությունները, արծարծվել են արվեստին ու գրական ուղղությանը վերաբերող այլուայլ տեսական-գեղագիտական խնդիրներ:

Խոստովանելով հանդերձ այն արդյունքները, որ ձեռք են բերվել Վարուժանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրման ճանապարհին, հարկ ենք համարում նշել էական մի բաց. մինչև այժմ չի ստեղծվել զրոյի գիտական կենսագրությունը: Անգամ «բանասիրական կտրվածքով» աշխատություններում ոչ միայն տեղ են գտել փաստական սխալներ և վրիպումներ, այլև շեն արտացոլվել կենսագրական ու ստեղծագործական կարևորություն ունեցող շատ իրողություններ: Պահանջված խորությամբ չի հետազոտվել ոչ Վարուժանի արխիվը, ոչ էլ ժամանակի պարբերական մամուլը, ուսումնասիրողներին անձանոթ են մնացել Արամ Անտոնյանի, Հովհան Կարապետյանի, Միքայել Շամտանձյանի և այլոց հետաքրքիր հուշերն ու վկայությունները: Ավելի քան շորս տասնամյակ առաջ Մեսրոպ Ճանաչյանը գրախոսելով Լ. Ճ. Սիրունու «Դանիել Վարուժան» մենագրությունը (Պուրբեշ, 1940), արձանագրել էր. «Անշուշտ օր մը պետք է ելլե Դ. Վ. [արուժան]ի բուն կենսագիրը, որ իր տրամադրության տակ ունենալով բոլոր սվյալները, իր նամակ-



ներն և ուրիշ փաստաթուղթեր՝ պատմե լրիվ անոր կարճատե, բայց զանազան հեղաշրջումներե անցած կյանքը...»<sup>1</sup>: Վարուժանագիտությունը տակավին սպասում է այդ կենսագրին: Սույն «Տարեգրությունը» նպատակ է հետապնդում օգնել ապագա հետազոտողին և ինչ-որ շափով դյուրացնել մեծ բանաստեղծի գիտական կենսագրության դժվարին ու շնորհակալ գործը:

\* \* \*

Գրողի կյանքի ու ստեղծագործության տարեգրությունը սովորաբար համարվում է «տեղեկատվական-մատենագիտական հետազոտության» մի տեսակ, որը նպատակ ունի ներկայացնել հեղինակի կյանքի վավերագրական ժամանակագրությունը, հաղորդել տեղեկություններ նրա գրած ու հրատարակած երկերի մասին, արտացոլել քննադատության և ժամանակակիցների կարծիքները<sup>2</sup>:

Անգամ այս ժլատ բնութագրումից երևում է, թե գիտական ինչպիսի կարևորություն ունեն տարեգրությունները: Նման աշխատությունները ինքնօրինակ ուսումնասիրություններ են, որոնք հնարավորում են քայլ առ քայլ, ծնունդից մինչև մահ հետևել գրողի կյանքի ուղուն, բացահայտում են ստեղծագործական, հասարակական ու անձնական հետաքրքրությունները, հաղորդում են բազմաթիվ շահեկան մանրամասնություններ, օգնում են ավելի լավ ու մոտիկից ճանաչել նրան և վերջին հաջովով դառնում են հեղինակի կյանքի ու ստեղծագործության համակողմանի հետազոտության անփոխարինելի աղբյուրներ: Գրանում համոզում են ռուս դասականներին նվիրված այդօրինակ հետազոտությունները, իսկ մեր գրականագիտության մեջ՝ Արամ Ինձիկյանի «Միքայիլ Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» (առաջին հրատարակությունը՝ 1954 թ., երկրորդը՝ 1980 թ.) և Նաթակ Գյուլնազարյանի ու Սարիբեկ Մանուկյանի «Հակոբ Հակոբյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» (1965 թ.):

Ինչ խոսք, որ տարբեր գրողների կյանքի ու ստեղծագործության տարեգրությունները ենթադրում են ընդհանուր խնդիրներ և կառուցվածքային միասնական սկզբունքներ: Սակայն անկասկած է նաև, որ ամեն մի տարեգրություն ունի իր առանձնահատկությունները, որոնք

<sup>1</sup> «Բազմավեպ», 1943, թիվ 7—12, էջ 815:

<sup>2</sup> Տե՛ս «Краткая литературная энциклопедия», т. 9, М., 1978, էջ 431:

պայմանավորված են հեղինակի «առանձնահատկություններով» և անկախ նյութով:

Ներկա «Տարեգրության» կապակցությամբ անհրաժեշտ ենք զբախում ուշադրություն հրավիրել հետևյալ պարագաների վրա:

Հայտնի է, որ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը 1963-ին ձեռք բերեց Դանիել Վարուժանի արխիվը, որը հետագա տարիներին համալրվեց նոր միավորներով (այս գործում մեծ են բանասեր Գոհար Աղնավուրյանի ծագալությունները): 1965-ին «Գրական ժառանգություն» մատենաշարով տպագրվեց Վարուժանի մեծաբժեք «Նամականին», այս ու այն առիթով շրջանառության մեջ դրվեցին արխիվային նյութեր, վերջապես պատրաստվում է գրողի երկերի ամբողջական ու քննական (ակադեմիական) հրատարակությունը երեք հատորով: Այս ամենը այն անհրաժեշտ «նախապատրաստական փուլն» է, առանց որի չէր կարելի ձեռնարկել Վարուժանի կյանքի ու ստեղծագործության տարեգրությանը:

Ինքնին հասկանալի է, որ «Տարեգրությունը» կազմելիս պետք էր կատարել նոր որոնումներ, պետք էր ապավինել առաջին հերթին արխիվային ու տպագիր սկզբնաղբյուրներին՝ անհրաժեշտության դեպքում կատարելով ստուգումներ ու ճշգրտումներ: Մենք հենց այդպես էլ վարվել ենք: Ջանացել ենք ամենայն բժախնդրությամբ ուսումնասիրել Վարուժանի արխիվում պահվող յուրաքանչյուր միավոր՝ լինի ինքնագիր, ստացած նամակ, վավերագիր, գիրք թե լուսանկար: Կենսագրական ու ստեղծագործական հետաքրքրություն ներկայացնող փաստեր հայթայթելու նպատակով պեղել ենք թերթերն ու հանդեսները, պարբերական այլ հրատարակությունները, այդ թվում արևմտահայ գավառական մամուլը, գրականության դասագրքերն ու զանազան ժողովածուները, դիմել ենք ժամանակակիցների հիշողություններին և վկայություններին: Առաջադիր խնդիր համարելով Վարուժանի կյանքի ու ստեղծագործության ըստ կարելիության ամբողջական ու հավաստի տարեգրության ստեղծումը, միաժամանակ փորձել ենք գրողին չկտրել միջավայրից ու ժամանակաշրջանից: Ահա ինչու տեղ ենք տվել նաև այնպիսի փաստերի, որոնք թեև անմիջաբար չեն վերաբերվում նրա կյանքին ու գործունեությանը, բայց ըստ էության աղերսվում են դրանց:

«Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը» պատրաստելիս աշխատել ենք շիտախտել ընդունված «ժանրային» պահանջները՝ ժամանակային հաջորդականության խստիվ պահպա-



նում, վավերական կայուն հիմք, աղբյուրագիտական հղումներ: Երբ որևէ իրողության ստույգ ժամանակը հնարավոր չի եղել պարզել, թվագրել ենք մոտավորապես՝ վերցնելով սուրանկյուն փակագծերում: Առանձին փաստեր, որոնք արտածված են բանասիրական հետախուզմամբ, հիմնավորված են համապատասխան գրառմանն առնչվող առհարկի բացատրություններով:

Վարուժանը Կ. Պոլսում և Թուրքիայում ապրած տարիներին իր երկերն ու նամակները թվագրել է հին, իսկ Եվրոպայում գտնված ժամանակ՝ նոր տոմարով: Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու նպատակով հարմար ենք գտել փաստերը ցույց տալ ըստ վավերագրում հիշատակված տոմարի: Որոշ դեպքերում, շփոթության տեղիք չտալու մտահոգությամբ, սովորական փակագծերում ցույց ենք տվել նաև համապատասխան տոմարը: «Տարեգրությանը» կցել ենք օգտագործված աղբյուրների, Վարուժանի ստեղծագործությունների ու նամակների, ինչպես նաև անձնանունների ցանկեր:

Չենք թաքցնում, որ այս «Տարեգրությունը» կարող էր շատ ավելի հարուստ լիներ, եթե ձեռքի տակ ունենայինք Վարուժանի բոլոր ստեղծագործությունների ինքնագրերը, 1909—1915 թվականների ամբողջական նամակագրությունները, եթե հանրապետության գրադարաններում արևմտահայ պարբերականների հավաքածուները պահպանվեին անթերի վիճակում: Բացառված չէ նաև, որ մեր ուշադրությունից կարող են վրիպած լինել սփյուռքի մամուլում հրատարակված ինչ-ինչ նյութեր, որոնք թերևս պարունակում են ուշաքան տեղեկություններ: Ուզում ենք հուսալ, որ ժամանակի ընթացքում գրականագետների և ընթերցողների օգնությամբ կարվեն անհրաժեշտ լրացումներ ու շտկումներ, և Վարուժանի «Տարեգրությունը» կդառնա առավել ամբողջական ու հավաստի: Իսկ առայժմ, համարձակվում ենք հավաստիացնել, որ առկա վիճակում էլ «Տարեգրության» մեջ արտացոլված են տասնյակ ու տասնյակ շահեկան, նորահայտ փաստեր ու իրողություններ, որոնք հարստացնում են պատկերացումներն ու գիտելիքները մեծ բանաստեղծի մասին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԳԱԹ—Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
- ԴՎՖ—Դանիել Վարուժանի ֆոնդ
- ԱԶՖ—Արշակ Չոպանյանի ֆոնդ
- ա. ք.—անթվակիր
- հ.—հատոր
- լր.—լրացուցիչ նյութեր
- ԲԵՀ—«Բանբեր Երևանի համալսարանի»
- ՀԺՊ—«Հայ ժողովրդի պատմություն» հատոր V, ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981
- ՀՍՀ—Հայկական սովետական հանրագիտարան
- ՊԲՀ—«Պատմա-բանասիրական հանդես»
- «Նամականի»—Դանիել Վարուժան, նամականի, տեքստը պատրաստեց, ծանոթագրեց և անձնանունների բառարանը կազմեց Գոհար Ազնավուրյանը, Երևան, 1965
- «Մրրկահույզ կայծոռիկներ»—բանաստեղծությունների ինքնագիր № 7 տետր
- «Փոշի ակոսներ»—բանաստեղծությունների ինքնագիր № 4 տետր
- «Հուշամատյան...»—«Հուշամատյան Դանիել Վարուժանի», Փարիզ 1958
- Գալեմֆերյան—Զարուհի Գալեմֆերյան (Եվտերպե), Կյանքիս ճամբեն, Անթիլիաս, 1952
- Ճիզվեճյան—Դերենիկ Ճիզվեճյան, Դանիել Վարուժան, դպրոցական կյանքը, անտիպ նամակները, գրականությունը, Գահիրե, 1955
- Շամտանյան—Միքայել Շամտանյան, Հայ մտքին հարկը եղեռնին, աքսորականի մտածումներ և ղգացողություններ, Կ. Պոլիս, 1919
- Պալաֆյան—Գրիգորիս Ժ. վրդ. Պալաֆյան, Հայ Գողթթան, Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն, Պոլիսեն դեպի Տեր-Ջոր, 1914—1920, Ա հատոր, Վիեննա, 1922
- Ա. Պատրիկ,—Առաքել Պատրիկ, Դանիել Վարուժանն իմ հուշերում, Թ տպագրություն, Պեյրուս, 1968
- Սիրունի—Հ. Ճ. Սիրունի, Դանիել Վարուժան, Պուրբեշ, 1940



Վահան Չպուգբջարյանի վկայութեամբ իր եղբորը Դանիել են անվանել ի հիշատակ մոր պապի՝ Նիկիտ Տոնելի, որ եղել է քաջ անձնավորութուն և կռվել է ավազակների դեմ: «Նիկիտ Տոնել» դյուցազնավեպում Վարուժանը «անմահացուցած է» իր պապին:

ԳԱԹ, ԴՎՖ, № 339:

1884

Ապրիլի 21.—Սեբաստիայի գավառի Բրգնիկ գյուղում ծնվում է Դանիել Չպուգբջարյանը (Չուպուգբջարյան, Չրպուգկեոյան, Չպպուգբջար, Չուպուբջար, Չպուգբար): Հայրը՝ Գրիգոր Չպուգբջարյան, մայրը՝ Թագուհի Պաղտիկյան: «Մնած եմ 1884—ին,—ինքնակենսագրության մեջ գրում է Վարուժանը,—Սեբաստիո մոտ Բրգնիկ գյուղը, ուր աճած է մանկութունս, ուռնիներուն տխուր հովանիներուն տակ երազկոտ կամ գետնզերքներուն վրա բաղերուն քարեր նետելով անառակորեն»:

«Նամակահի», 157:

Վարուժանի եղբայրը՝ Վահան Չպուգբջարյանը իրենց ազգանվան ծագումը կապում է Չիպուգբջար ապուպապի հետ (ծնվ. 1770 թ.): Չիպուգբջար պապը,—վկայում է նա,—նվաստացնելու մտադրությամբ թուրք խանը կատիպե, որ իր ծխափողին կրակը վառողի սպասարկութեամբ զբաղի... Այս ձևով «Չիպուգբջար» անունը կրլա սկիզբը Դ. Վարուժանի պապին»:

ԳԱԹ, ԴՎՖ, № 339:

Վարուժանի կինը՝ Արաքսի Թաշճյանը գրառել է ամուսնու հետևյալ վկայութունը. «Գրիգորի և Թագուհիի ամուսնութենեն երեք տարի վերջը Զատիկի խթման իրիկուն (ապրիլ 21), երբ Գրիգոր Բրգնիկի եկեղեցին Դանիել մարգարեի ավետարանը մտիկ կըներ, իր բարեկամներեն մեկը կուգա ավետելու իրեն, որ մանչ գավակ մը ծնած է իրեն: Կը վազե տուն և կը մտածե տղուն անունը Դանիել դնել: Իր հայրն ու հորեղբայրը... միջնակարգ ուսումով զարգացած մարդիկ էին: Գրիգոր անսխալ կը գրեր հայերենը: Դանիելի ընտանիքը և ամբողջ Բրգնիկ գյուղը կաթոլիկ էին...»:

ԳԱԹ, ԴՎՖ, № 340, 22—25, 39—39 ա:

1887

Հայրը պանդխտում է Կ. Պոլիս, դառնում իշխանատան (խանի) պահակ:

ԳԱԹ, ԴՎՖ, № 345:

Ինքնակենսագրության մեջ Վարուժանը հիշում է. «Դեռ հազիվ ես թիթեռնիկներ որսալու հասակին մեջ, հայրս պանդխտած է Պոլիս, և մայրս ձմեռային երկար երեկոները թոնրատունը նստած, երևակայութունս օրորած է ենիշերիներու և գայլերու պատմութուններով...»: Եվ պապ. «Հայրս կամավոր որբ մը ըրած է մանկութունս, պանդխտելով Պոլիս, և իմ նորածին դիտակցութունս մեղամաղձիկ բողբոջում մը ունեցած է դաշտերուն և հովերուն մեջ թափառելով և լսելով դիվային հեքիաթներ ձմռան իրիկունները թոնիրին շուրթը»:

«Նամակահի», 157, 194:

1894—1895

Հաճախում է Բրգնիկի դպրոցը: Վարուժանը ինքնակենսագրության մեջ գրում է. «Գյուղին դպրոցը հազիվ սկսած եմ ժամագիրքը կարդալ սովորիլ՝ դիս տարած են Պոլիս...»:

Անդ, 157:

«Մանկութենես» բանաստեղծության մեջ գրողը հիշում է.

Քերականը ես բոլոր սովորեցա  
Մորըս սիրալի ծունկերուն վրա:

«Մերկանույզ կայծառիկներ», 23:



1896

Սօցոստոսի 14—16—հոկտեմբերի վերջ.—Կ. Պոլսում տեղի են ունենում հայկական կոտորածներ:

ՀՍՀ, հ. 6, 184, ՀԺՊ, հ. VI, 969:

<Նույն շրջանում>.—Մոր հետ Բրգևիկից մեկնում է Կ. Պոլիս՝ հոր մոտ:

Վարուժանը ինքնակենսագրության մեջ պատմում է. «...Զիս տարած են Պոլիս 1896-ի կոտորածի օրերուն, ուր հայրս արյան սարսափին մեջ փնտրելե հուսահատ՝ գտած եմ բանտին մեջ այն տխուր օրերուն ստորեն ամբաստանված»: Եվ ապա. «1896-ին, կոտորածի օրերուն, մորս հետ զացած ենք Պոլիս»:

«Նամականի», 157, 194:

<Նույն շրջանում>.—Կ. Պոլսի բանտերից մեկում հանդիպում է հորը: Այդ մասին Վարուժանը «Հորս բանտին մեջ» բանաստեղծության մեջ գրում է.

Դեռ փոքր էի. եկա բեղի մենավոր  
Մութ զնդանիզ մեջ այցի:  
Մայրս հիվանդ էր. կը շրջեի ես ազատ  
Մեջտեղ բանտի և մահճի:  
.....  
Ո՞վ տխուր ծամ—քեզ մի առ մի պատմեցի  
Սև վիպակները մեր տան,  
Հանիխ մահն ու հիվանդ մորս հազը խուլ  
Լուսթյան մեջ գիշերվան:

«Յեզին սիրտք», 67—68:

<Աշուն>.—Սկսում է հաճախել Սազըզ Աղաճի Մխիթարյան զբոսայգի, ուր սովորում է երկու տարի:

«Նամականի», 157, 194:

Այս վարժարանը նախակրթարան էր: Կենցաղավարության ու բարոյականության ուսուցիչն էր Գարեգինը, թվաբանությանը՝ Տրդատը: Գ. Զպուգքյարյանի դասընկերներից էր Վահրամ Փափազյանը: Վերջինս «Հետադարձ հայացք» հուշերում վկայում է. «Եվ ահա մի օր, երբ

զասարանում նստած, լուռ, զուսպ լսում էինք պարոն Տրդատին... բարձրացավ մի անսովոր իրարանցում: Տեսուչ վարդապետի և Գարեգին վարժապետի կարգադրությամբ անմիջապես փակվեցին դպրոցի բոլոր պատուհանները, դարպասի ծանրափեղկ դռների նիզբը դրվեցին: Մեր հաղթանդամ մշեցի Գրիգորը, մի մեծ մահակով զինված, կանգնեց մուտքի դռան ետև, իսկ տարեց աշակերտներից երկուսը բարձրացրին դպրոցի տանիքին խտլական պետական դրոշակը... Օտար պետության դրոշակը պահպանեց դպրոցը և հարյուրից ավելի աշակերտների կյանքը: Զարդարար խուժանը հեռացավ ավարով բեռնավորված, իր հետև թողնելով արյունի, առևանգման ու խուժղուժ մահվան զարհուրելի տեսարանը: 1896-ի ջարդն էր այդ... Այդ դեպքը ամենախոր կերպով, ինչ-որ մոգական գավազանի նման բոլորովին հեղաշրջեց մեծանուն ընկերոջս՝ Վարուժանի նկարագիրը: Լուսկյաց, մենավոր, խոհուն պատանին դարձավ անզուսպ, բողբոջող, կովարար մի գազան: Կովում էր բոլորիս հետ և կատաղության նուպաներին զրասեղաններն ու աթոռները կոտրատում, իսկ հաճախ էլ, լուռ նստած, մի տեսակ խուլ մռնչյունով եղունգներն էր կրծոտում»:

Վ. Փափազյան, Երկեր, հ. առաջին, Երևան, 1979, 53—55:

Հուշագրի այն պնդումը, թե Վարուժանը «Զարդը» գրել է 1896-ի կոտորածների օրերին, չի հաստատվում արխիվային նյութերով: Տե՛ս 1906-ի օգոստոսի 25—30-ի գրառումը:

1897

Շարունակում է սովորել Սազըզ Աղաճի Մխիթարյան վարժարանում: Կ. Պոլսում գտնված տարիներին արձակուրդներն անց է կացնում հոր մոտ: «Արձակուրդի օրերուն,— վերհիշում է Վարուժանը,— խավյար խանի մեջ, ուր հայրս ծառայած է, կենակցած եմ հայ պանդուխտներու հետ և արտասոված անոնց վիճակին վրա»:

«Նամականի», 194: Տե՛ս 158:

1898

Աշուն.— Ընդունվում է Քաղկեդոնի Վենետիկի Մխիթարյանց վարժարանը: Վարուժանը վկայում է. «Հաճախած եմ... Քաղկեդոնի վար-



ժարանը, ուր երկար ատեն պատանեկությունս երազած է ընդմեջ Մոտայի ծովակին և Դուրյանի ոսկրներուն՝ Սկյուտար»:

«Նամակակի», 157—158, Տե՛ս նաև՝ 194»

Սկզբնապես վարժարանի ուսումնապետն էր Մեսրոպ Սահակյանը, ապա՝ Դավիթ Նազարեթյանն ու Աթանաս Տիրոյանը: 1896-ից դպրոցում ուսման տեղությունը յոթ տարի էր: Առաջին երկու դասարաններ չի ունեցել (հավանաբար դրանց փոխարինել է Սազը Աղաճի կամ Մըխիթարյան որևէ այլ նախակրթարան): Գ—Ե դասարանները կոչվել են Քերականական կարգ, Զ—է դասարանները՝ Բարձրագույն: Դանիել Զպուգքյարյանը դառնում է Գ դասարանի ուսանող: Այս դասարանում ավանդվել են քրիստոնեական կրոն, հայերեն, ֆրանսերեն, տաճկերեն, թարգմանություն, պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, իրագիտություն, գեղագրություն, երաժշտություն, ձայնական, գծագրություն և մարմնամարզություն: Դ. Զպուգքյարյանի հայերենի ուսուցիչն էր Արիստակես Քասգանտիլյանը, ֆրանսերենինը՝ պր-ն Ուոն, աշակերտակիցներն էին Մկրտիչ Պարտիզյանը, Ահարոն Տատուրյանը, Ք. Մանկասարյանը: Ա. Քասգանտիլյանը, տեսնելով որ Գրիգոր Զպուգքյարյանը զուրկ է նյութական միջոցներից, Դանիելին դարձնում է ձրիավարժ աշակերտ:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 211, 213, 1931, թիվ 11, 489, ԳԱԹ, ԴՎՅ, № 289, 348:

Մկրտիչ Պարտիզյանը իր հուշերում հավաստում է. «Դանիելը իբր այդ պզտիկ տարիքին ընդունակություն ուներ հայերեն ոտանավորներ ու ազգային երգեր արտասանելուն մեջ՝ դպրոցական հանդեսներուն ժամանակ»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 348, 3:

1899

Մայիս.— Լուսանկարվում է Քաղկեդոնի Վենետիկի Մխիթարյանց վարժարանի աշակերտների հետ: Խմբանկարում են նաև Մկրտիչ Պարտիզյանն ու Ահարոն Տատուրյանը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 432:

<Հունիս>.— Փոխադրվում է Քաղկեդոնի Վենետիկի Մխիթարյանց վարժարանի Քերականական կարգի Դ դասարանը: Նախորդ տարվանից ավանդվող առարկաներին ավելանում են իտալերեն, թարգմանություն, բնական պատմություն և երաժշտություն:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 211:

1900

<Հունիս>.— Փոխադրվում է Քաղկեդոնի Վենետիկի Մխիթարյանց վարժարանի Քերականական կարգի Ե դասարանը: Նախորդ ուսումնական տարվանից դասավանդվող առարկաներին ավելանում է գերմաներենը: Վարժարանի ուսումնապետ է նշանակվում Արիստակես Քասգանտիլյանը:

Անդ:

— Մնվում է Դանիել Զպուգքյարյանի եղբայրը՝ Վահանը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 339:

1901

<Տարեկիր>.— Կատարում է բանաստեղծական անդրանիկ փորձերը: Վարուժանը խոստովանում է. «Հայր Արիստ. Քասգանտիլյան... առաջնորդած է մանկական նախափորձերս՝ սրբազրելով սիրահարական ոտանավորներս...»: Եվ ապա. «Այդ շրջանին (Քաղկեդոնի վարժարանում— Ա. Շ.) բանաստեղծությունը ծլարձակած է մեջս... Առաջին երգերս սե՛ր եղած են՝ քաջալերված և սրբազրված Քաղկեդոնի տեսուչես՝ Հ. Արիստակես Քասգանտիլյանի»:

«Նամակակի», 158, 194:

Մարտի 24.— Գրում է «Հրաժեշտ» բանաստեղծությունը: Հրապարակվել է «Արձագանք Մոտայի» աշակերտական թերթում (թիվ 1):

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 401:

Ապրիլի 20.— Գրում է «Սիրերգ» («Մանուկ էինք տակավին») բա-



նաստեղծութիւնը: «Մրրկահույզ կայծոռիկներում» նախապես վերնագրել է՝ «Սիրո արցունքներ»:

«Փուշի ակոսներ», 13—14, «Մրկահույզ կայծոռիկներ», 27:

Ապրիլի 28.— Եղիշե Դուրյանի՝ Քաղկեդոնի Վենետիկի Մխիթարյանց վարժարան այցելելու առիթով գրում է արձակ ձոն: Հրապարակվել է «Արձագանք Մոտայի» աշակերտական թերթում (թիվ 10):

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 401:

Մայիսի 7.— Գրում է «Սիրերգ» («Ամոթխած լուսին») բանաստեղծութիւնը: Նախապես վերնագրել է՝ «Վաղինակ ծաղկին», «Խընձոր ծաղկին»:

«Մրկահույզ կայծոռիկներ», 17—17 ա:

Մայիսի 12.— Գրում է «Առ ցողիկն ի վարդի» բանաստեղծութիւնը: Հրապարակվել է «Արձագանք Մոտայի» աշակերտական թերթում (թիվ 9):

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 401:

Մայիսի 20.— Գրում է «Մանուշակին (սիրերգ)» բանաստեղծութիւնը:

«Փուշի ակոսներ», 84—85, «Մրկահույզ կայծոռիկներ», 26 ա:

Նույն օրը.— Գրում է «Երգ» («Այսպես այդ մ'էր մայիսի») բանաստեղծութիւնը: «Մրրկահույզ կայծոռիկներում» նախապես վերնագրել է՝ «Այգերգ»:

«Փուշի ակոսներ», 49, «Մրկահույզ կայծոռիկներ», 49, ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 32 լր., 7 ա:

Հունիսի 4.— Գրում է «Ուրախութիւն» բանաստեղծութիւնը (չընչել է):

«Փուշի ակոսներ», 46:

Հունիսի 10.— Սկսում է գրել «Սև օրերու սև նոթեր» բանաստեղծու-

թիւնը: Նախապես վերնագրել է՝ «Հուսահատական մրմունջներ» (շարդրում է երկու տուն):

«Մրկահույզ կայծոռիկներ», 28 ա:

«Սև օրերու սև նոթեր» բանաստեղծութիւնը «Փուշի ակոսներ» ժողովածուում ունի «Քնարին հեծկտանքներ» վերնագիրը:

Հունիսի 20.— Շարունակում է «Սև օրերու սև նոթեր» («Քնարին հեծկտանքներ») բանաստեղծութիւնը (գրում է համապատասխանաբար մեկ և չորս տուն):

«Մրկահույզ կայծոռիկներ», 28 ա, «Փուշի ակոսներ», 75:

Հուլիս.— Ավարտում է Քաղկեդոնի Վենետիկի Մխիթարյանց վարժարանի Քերականական կարգը և փոխադրվում Բարձրագույն կարգի Զ դասարանը: Դասավանդվել են գործնական բարոյախոսութիւն, հայոց լեզու և մատենագրութիւն, ֆրանսերեն լեզու և մատենագրութիւն, տաճկերեն, իտալերեն, գերմաներեն, պատմութիւն, շափաբերութիւն, բնաբանութիւն (ֆիզիկա), տարրաբանութիւն (քիմիա), երգ, գծագրութիւն և մարմնամարզութիւն:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 211:

Օգոստոսի 2.— Գրում է «Սև օրերու սև նոթեր» բանաստեղծութիւն շարունակութիւնը (1 տուն):

«Մրկահույզ կայծոռիկներ», 28 ա:

Օգոստոսի 23/5 սեպտեմբերի.— Շնորհավորում է Մխիթարյան միաբանութիւնը նրա 200-ամյա հոբելյանի առթիվ:


«Նամակներ», 23:

Սեպտեմբերի 5.— Գրում է «Սև օրերու սև նոթեր» բանաստեղծութիւն շարունակութիւնը (1 տուն):

«Մրկահույզ կայծոռիկներ», 28 ա:

<Սեպտեմբերի 8-ից հետո>— Տպագրվում է Մխիթարյան միաբանութիւն 200-ամյա հոբելյանի առթիվ հղած ողջույնը: Ստորագրու-

1861





թյունը՝ Գանիել Գ. Չուպուզկեոյան Բեգնիկցի, Քաղկեդոնի Մլս.[Իթար-  
յանց] վարժարանին ուսանող:

«Հիշատակ երկհարյուրամյա հոբելիւնի Միթրարյան միաբա-  
նության ի Վենետիկ, 8 սեպտ. 1701—1901 սեպտ. 8», Վենե-  
տիկ, 1901, 149:

Սեպտեմբերի 20.— Գրում է «Սև օրերու սև նոթեր» բանաստեղ-  
ծության շարունակութիւնը (2 տուն):

«Մերկահայգ կայծոռիկներ», 28ա—29:

Սեպտեմբերի 22.— Շարունակում է «Սև օրերու սև նոթեր» («Քը-  
նարին հեծկլտանքներ») բանաստեղծութիւնը (գրում է համապա-  
տասխանաբար 2 և 6 տուն):

«Մերկահայգ կայծոռիկներ», 29, «Փռչի ակօսներ», 75—76:

Ռեկտեմբերի 5.— Շարունակում է «Սև օրերու սև նոթեր» («Քնա-  
րին հեծկլտանքներ») բանաստեղծութիւնը (գրում է 5-ական տուն):

«Մերկահայգ կայծոռիկներ», 29—29ա, «Փռչի ակօսներ»,  
76—77:

— Աշակերտական մի տետրում արտագրում է հետևյալ ստեղծա-  
գործութիւնը. «Բարիկենդանի վերջին իրիկունն. Չավեշտ միակ արար-  
վածով. թարգմանյալ իտալերենն: Հայերեն ընդօրինակված 1901»: Շապիկի առաջին էջին մակագրել է. «Դանիելն հիշատակ բող մնա  
մեծ հորը և մեծ մորը բով»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 475:

— Քաղկեդոնի Վենետիկի Միթրարյանց վարժարանի «Արձագանդ  
Մոտայի» աշակերտական խմբատիպ թերթում հրատարակում է իր  
առաջին ստեղծագործութիւններից մի քանիսը (թիվ 1, 9, 10):

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 401:

— Քաղկեդոնի Վենետիկի Միթրարյանց վարժարանի նոր ուսում-  
նապետ է նշանակվում Հովհաննես Թորոսյանը:

Անդ, 213:

190

<Տարեսկիզր>.— Աթանաս Տիրոյանից նվեր է ստանում նրա լու-  
սանկարը: Մակագրութիւնը՝ «Ի հիշատակ որդիական գորովանաց առ  
սիրելի Դանիել Գ. Չուպուզկեոյան»:

Հավանաբար նվիրել է Կ. Պոլսից Վենետիկ մեկնելու առիթով:

ԳԱԹ, ԴՎՅ, № 466:

Փետրվարի 3.— Գրում է «Սև օրերու սև նոթեր» բանաստեղծութիւն  
շարունակութիւնը (2 տուն):

«Մերկահայգ կայծոռիկներ», 29ա:

Մարտի 22/5 ապրիլի.— Միթայել Պ. Աթիճյանի անունից նամակ՝  
նրա որդուն:

«Բազմավեպ», 1941, թիվ 1—12, 90:

<Նույն շրջանում>.— Երկու նամակ՝ Լևոն Աթիճյանին: Խորհուրդ  
է տալիս լինել ջանասեր, մաղթում է հաջողութիւններ:

Անդ:

Մարտի 29.— «Մեծմուսլը խիսպար» հայատառ տաճկերեն թեր-  
թում տպագրում է «Քատրոնին շուրջը» վերնագրով հոդված: Ստորա-  
գրութիւնը՝ Դանիել Գ. Չուպուզկեոյան:

Թերթի հավաքածուն Սովետական Հայաստանում լկա:  
«Հառաջ», 1962, թիվ 9453:

Ապրիլի 11.— Շարունակում է «Սև օրերու սև նոթեր» («Քնարին  
հեծկլտանքներ») բանաստեղծութիւնը (գրում է համապատասխանա-  
բար 1 և 5 տուն):

«Մերկահայգ կայծոռիկներ», 29ա, «Փռչի ակօսներ», 77—78:

Մայիսի 5.— Գրում է «Սև օրերու սև նոթեր» բանաստեղծութիւն  
շարունակութիւնը (1 տուն):

«Մերկահայգ կայծոռիկներ», 29ա:

Մայիսի 10.— Գրում է «Նաբուսիկ սեր» բանաստեղծութիւնը:

«Մրրկահույզ կայծոռիկներում» նախապես վերնագրել է՝ «Յեներպահ-  
շեի աղջիկը», ապա դարձրել՝ «Խարեական սեր. սիրերգ»:

«Փուշի ակոսներ», 88, «Մրրկահույզ կայծոռիկներ», 27ա:

Հունիս. — Գրում է «Վարդեր» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՅ, տետր № 13, 222 և № 1 լր. (Արաբսի Վարուժա-  
նի արտմը):

Հունիսի 1. — Գրում է «Քնարին հեծկլտանքներ» բանաստեղծու-  
թյան շարունակությունը (3 տուն):

«Փուշի ակոսներ», 78:

Հունիսի 2. — Գրում է «Յայգերգ (սիրային)» բանաստեղծությունը:  
«Մրրկահույզ կայծոռիկներում» նախապես վերնագրել է՝ «Քեզի հա-  
մար»:

«Փուշի ակոսներ», 53, «Մրրկահույզ կայծոռիկներ», 28:

Հունիսի 9. — Գրում է «Գերեզմանատան մեջ» արձակ ստեղծագոր-  
ծությունը:

ԳԱԹ, ԳՎՅ, № 39, 7—12:

Հունիսի 11. — Գրում է «Սև օրերու սև նոթեր» բանաստեղծության  
շարունակությունը (3 տուն):

«Մրրկահույզ կայծոռիկներ», 30:

Հունիսի 22. — Շարունակում է «Սև օրերու սև նոթեր» («Քնարին  
հեծկլտանքներ») բանաստեղծությունը (գրում է 3-ական տուն):

«Մրրկահույզ կայծոռիկներ», 30, Փուշի ակոսներ», 78—79:

Հունիսի 30. — Ավարտում է Քաղկեդոնի Վենետիկի Մխիթարյանց  
վարժարանի Բարձրագույն կարգի 2 դասարանը: Ստանում է հետևյալ  
վկայականը.

ՎԱՐԺԱՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆՑ Ի ՎԵՆԵՏԿՈ

Գատրֆյո

ՎԿԱՅԱԳԻՐ

Գ ա ս տ ի ճ ա ն ի

Պ. Դանիել Չուպուֆյերյան աշակերտին ի փոխարեն իր 1901—1902  
տարեշրջանի աշխատությանց և վերջին հարցախնուությանց մեջ ստացած  
նիշերով, որով իրեն կը շնորհվի է դասարան անցնելու իրավունքը:

Վ Ե Ր Ա Տ Ե Ս Ո Ւ Չ Ն՝ Հ. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԱՍԳԱՆՏԻՎՅԱՆ

Տվյալ Կ. Պոլիս, 30 հունիս 1902

ԳԱԹ, ԳՎՅ, № 336:

Խույն շրջանում. — է. դասարան լի հաճախում: Արիստակես Քաս-  
գանտիլյանի միջնորդությամբ պատրաստվում է մեկնել Վենետիկ՝ ուսու-  
նելու Մուրատ-Ռափայելյան վարժարանում: Իր ինքնակենսագրության  
մեջ Վարուժանը գրում է. «Հայր Արիստ. Քասգատիլյան... ուղարկած է  
զիս Վենետիկ՝ Մուրատ-Ռափայելյան, բարեկու համար իր տեղը Ալի-  
շանի նվիրական աճյունը»:

«Նամականի», 158:

Հուլիսի 18 (31). — Աթանաս Տիրոյանը Վենետիկից՝ Գ. Չպուզ-  
քյարյանին: Հույս է հայտնում, որ նրա հայրը կկարողանա լուծել ան-  
ցագրի հարցը և կուղարկի Մուրատ-Ռափայելյան վարժարան:

ԳԱԹ, ԳՎՅ, № 289:

<Մինչև հուլիսի 27>. — Կազմում է «ծաղկեփունջ կամ Բրզնիկցիի  
մը նվագները» ժողովածուն: Բաղկացած է երկու՝ Ա և Բ մասերից: Առա-  
ջինը կոչվում է «Մաղկեփունջ» և ամփոփում է 12 «երգ»՝ Դափնե վարդ,  
Շուշան, Վարդ, Նարգես, Հասմիկ, Մեխակ, Անմտուկ, Թշվառ լեյակ,  
Հակինթ, Կուսածաղիկ, Խնձոր ծաղիկ, Մանուշակ: Բ մասն անխորա-  
զիր է և ընդգրկում է 22 բանաստեղծություն, որոնցից երկուսն արձակ.



Մայիս, Գարեան երեկոները Մոսայի մեջ (արձակ), Չինադագեղն Շուշանիկ, Աղբար, Առ ցողիկն ի վարդի, Հիշատակ՝ անցելույն, Գերեզմանատան մեջ (արձակ, ջնջել է), Նորայրներուս և Բուրեռուս շիրմին վրա, Իդձ, Քեզի համար, Բառ մը, Անցա հագար անգամներ, Սիրտս (ջնջել է), Ի՞նչ է երջանկությունը, Հուսահատի մրմունջներ, Սիրտ ակունքներ, Ֆեներպահչի աղջիկը, Հուսահատի մրմունջներ, Յայգեբզ, Սիրտ փունջ մը, Համբույր մը, Հուսահատի մրմունջներ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 1,2,3 և 24 րդ:

<Նույն շրջանում>.— Մտադրվում է ժողովածուն հրատարակել: Հովհաննես Թուրյանին հայտնում է. «Մտադիր եմ բանաստեղծական գրքույկ մը հրատարակել Արճ.[իսպատիվ] Հաճյան գերապայծառի նըվիրված»:

«Սովետական գրականություն», 1977, № 6, 145:

<Նույն շրջանում>.— Գրքույկը ձոնում է Սեբաստիայի առաջնորդ Սահակ Հաճյանին (ընծայականը տե՛ս «Նամականի», 24): Արիստակես Քասգանտիլյանը կցում է հանձնարարական-առաջաբան, ուր ասված է. «Պե՞տք է ըսել, թե երիտասարդ, բայց խոստամալից մտքի մը առաջին թերթերն են այս «ժողկեփունջը կամ Բրգնիկցիի մը նվագները»: Չարհամարհենք... Քաջալերենք: Թերթեցի զանոնք հաճույքով և խրախույսի ժպիտով մըն է, որ կը գրեմ անոնց համար այս երկու բառս և կը հանձնարարեմ աղնիվ և գթոտ քննադատության»:

Ժողովածուն ներկայացվում է գրաքննության՝ Սեբաստիայում տպագրելու համար: Ստանում է տեղի գրաքննության թույլատրությունը (կա համապատասխան կնիք): Գրաքննությանը հանձնված օրինակի անվանաթերթն է՝

ԴԱՆԻԵԼ Գ. ՉՈՒՊՈՒԳՔՅԱՐՅԱՆ

Մաղկեփունջ կամ Բրգնիկցիի մը նվագները

Կ. Պ ո լ ի ս, 1902

Ժողովածուի հրատարակությունը չի հաջողվել հավանաբար նյութական միջոցների բացակայության պատճառով:

ԳԱԹ, ԴՎՅ, № 2:

<Նույն շրջանում>.— «Մեճմուայը ախպար» հայատառ տաճկերեն թերթում տպագրում է ևս շորս հողված: Այդ մասին Հովհաննես Թուրյանին հայտնում է. «Այս հինգերորդ անգամն է, որ հղածս հողվածները կարտատպեք հաճությամբ»:

Թերթի հավաքածուն ձեռքի տակ չունենալու պատճառով հնարավոր չէ պարզել հողվածների բովանդակությունը:

«Սովետական գրականություն», 1977, № 6, 145:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Հովհաննես Թուրյանին: Հայտնում է «Մեճմուայը ախպար» թերթում «բանաստեղծական գրվածքներով» հանդես գալու մտադրության մասին, որպես նմուշ «Մաղկեփունջ կամ Բրգնիկցիի մը նվագները» ժողովածուից ուղարկում է «երկ-երկու արձակ կամ ոտանավոր»:

Հայտնի չէ տպագրվել են, թե ու:

Անդ:

<Նույն շրջանում>.— Ստանում է վենետիկ մեկնելու անցագիր: Միքայել Չպուգբյարյանին և Աթանաս Տիրոյանին հայտնում է. «Անցագիրը գրպանս դրած՝ մնաս բարովի մաղթանքը կը մրմնջեմ»:

Անդ, 144—145:

<Նույն շրջանում>.— Պատասխանում է Աթանաս Տիրոյանի հուլիսի 18-ի նամակին: Հայտնում է «հատաշիկա շաբաթ օրը» վենետիկ մեկնելու մասին:

Անդ, 144:

<Նույն շրջանում>.— Հրածեշտի նամակ հորեղբորը՝ Միքայել Չպուգբյարյանին:

Անդ:

<Նույն շրջանում>.— Լուսանկարվում է ծնողների և կրտսեր եղբոր՝ վահանի հետ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 442:

<Նույն շրջանում>.— Արիստակես Քասգանտիլյանը հանձնարա-



րական նամակ է տալիս Դ. Զպուգբյարյանին՝ Մուրատ-Ռափայելյան վարժարանի տեսչությանը ներկայացնելու համար: Նամակը չի պահպանվել: Ըստ Մկրտիչ Պոտուրյանի, Ա. Քասզանտիլյանը գրել է. «Նոր Մկրտիչ Պեշիկթաշլյան մը կը ղրկեմ, լավ նայեցեք»:

«Եջմիածին», 1958, ը, 35:

<Հուլիսի 27>.— 4. Պուլսից շոգենավով մեկնում է Վենետիկ՝ ուսանելու Մուրատ-Ռափայելյան վարժարանում:

«Սովետական գրականություն», 1977, № 6, 144:

<Հուլիսի վերջ—օգոստոսի սկիզբ>.— Հասնում է Վենետիկ: Վարժանը ինքնակենսագրության մեջ գրում է. «Ալիշանի աճյունները դեռ թարմ էին. կը համբուրեմ զանոնք և կը կարգամ իր գործը»:

«Նամականի», 194:

Օգոստոսի 2.— Ավարտում է «Սև օրերու սև նոթեր» («Քնարին հեծկլտանքներ») բանաստեղծությունը (գրում է մեկական տուն):

«Մերկահույզ կայծոռիկներ», 30, «Փուշի ակոսներ», 79:

Օգոստոսի 4.— Գրում է «Բանաստեղծի մահը (Հ. Ալիշանի հիշատակին)» բանաստեղծության սևագրությունը (ջնջել է):

«Մերկահույզ կայծոռիկներ», 19—19ա:

<Օգոստոսի 4-ից նետ>.— Վենետիկից մեկնում է Ազոլո՝ Մուրատ-Ռափայելյան վարժարանի ամառանոցը:

Թրեվիզի գավառի Ազոլո ավանի բարձունքում Միխայելյանները իրենց աշակերտության համար ունեցել են ամառանոց:

«Բագմավեպ», 1936, թիվ 8—12, 234—237:

Օգոստոսի 9.— Գրում է «Թզենիններուն տակ» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 20, «Մերկահույզ կայծոռիկներ», 24ա, ԳԱԹ, ԴՎՅ, № 32 լր.:

Օգոստոսի 20.— Գրում է «Երգ» («Ծառի մը տակ, մամուռն ինձ

բարձ») բանաստեղծությունը: «Փուշի ակոսներում» նախապես վերնագրել է՝ «Այգերգ»:

«Փուշի ակոսներ», 54, ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 216:

Օգոստոսի 31.— Հակոբոս վարդապետ Իսավերտենցի մահվան (օգոստոսի 28) առիթով գրում է «Եղբրերգ» արձակ ստեղծագործությունը:

Հ. Իսավերտենցի մահվան մասին տե՛ս «Բագմավեպ», 1902, թիվ 11, 493: ԳԱԹ, ԴՎՅ, № 39, 6—6ա:

<Մինչև սեպտեմբերի 3>.— Ազոլոյից նամակ՝ Արիստակես Քասզանտիլյանին: (Չի պահպանվել): Հայտնում է երախտագիտությունն ու գոհունակությունը Վենետիկ ուղարկվելու համար:

ԳԱԹ, ԴՎՅ, № 322:

Սեպտեմբերի 3.— Արիստակես Քասզանտիլյանը 4. Պուլսից Դ. Զպուգբյարյանին: Պատվիրում է. «Կը հանձնարարեմ քեզ բոլոր սրտովս, որ արժանի ըլլաք բարիքին, որ քեզի եղավ և աշխատիք ուսման մեջ և չըլլա թե որևէ կերպ վշտացնեք ձեր տեսուչը»:

Անդ:

Սեպտեմբերի 9.— Գրում է «Հառա՛ջ» բանաստեղծությունը: «Մրբ-կահույզ կայծոռիկներում» ունի նաև «Հարատևողը» վերնագիրը, տպագրվել է «Նպատակին» խորագրով:

«Փուշի ակոսներ», 86—87, «Մերկահույզ կայծոռիկներ», 18:

Սեպտեմբերի 15.— Ազոլոյում խաշվերաց օրը կատարվում է Ս. Նշան (Ս. Խաշ) հայկական նորակառույց եկեղեցու օծումը: Այդ առթիվ տեղի են ունենում հանդիսություններ, հյուրերի և աշակերտության համար տրվում է ճաշկերույթ, արտասանվում են բանախոսություններ: Հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ ելույթ է ունենում նաև Դանիել Զպուգբյարյանը: «Հանկարծ,— պատմում է Մկրտիչ Պոտուրյանը,— մեզի անժանոթ երիտասարդ մը հրաշալի առողանությամբ ճառ մը կար-



դաց: Կարծեցիկնք թե Ս. Ղազարի միաբան Հ. Արիստակես Քասազանտիլյան վարդապետին... շեշտն էր, որ բոլորիս դեմքերը իրեն դարձուց»:

Գ. Զպուգքյարյանի բանախոսությունը չի պահպանվել: «Բազմավեպ», 1902, թիվ 11, 534—536, «Էջմիածին», 1958, Ը, 35:

Սեպտեմբերի 20.— Մշակում է «Երգ» («Ծառի մը տակ, մամուռն ինձ բարձ») բանաստեղծությունը՝ վերնագիրը դարձնում է «Այգերգ»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 32 լր., 7:

Սեպտեմբերի 28.— Գրում է «Սրինգին օրորը» բանաստեղծությունը:

«Մրբկահույզ կայծոռիկներ», 40ա—41ա:

<Սեպտեմբերի վերջ-հոկտեմբերի սկիզբ>.— Մուրատ-Ռափայելյանի աշակերտների հետ Ազոլոյից վերադառնում է Ս. Ղազար՝ սկսելու ուսանողական պարապմունքները:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 237:

<Նույն շրջանում>.— Դառնում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի լիկեոնական շրջանի ուսանող:

Վարժարանում ուսման տևողությունը չորս տարի էր: Առաջին տարում սաներն ըստանում էին կրթական (գիմնազիական) ուսում, իսկ հաջորդ երեք տարիները լիկեոնական (լիցեյական) շրջանն էր: Քանի որ Դանիել Զպուգքյարյանը ավարտել էր Քաղկեդոնի վարժարանի Զ կարգը, ուստի Վենետիկում բաց է թողնում «կրթարանը» և հետևում «լիկեոնական շրջանին»: Ուսումնական ծրագրով այս շրջանում դասավանդվել են հայերեն, տաճկերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, ռուսերեն, լատիներեն, հունարեն, թվաբանություն, շափարերություն, բնական պատմություն, քաղաքական աշխարհագրություն, բնալուծություն, բնագիտություն, արվեստարանություն, վաճառագիտություն, հին ու նոր ազգերի պատմություն, զիցարանություն, ազգային և օտար ազգերի հին ու նոր մատենագիտություն, հոետորություն, իմաստասիրություն, տնտեսագիտություն, իրավագիտություն, հաշվակալություն և այլ առարկաներ:

Վարժարանի տեսուչն էր Ստեփան Սարյանը, ուսումնապետը՝ Հովհան (Օհան) Ավզերը, ուսուցիչ վարդապետը՝ Նզիր Պապիկյանը: Գ. Զպուգքյարյանի աշակերտակիցներից ու ընկերներից էին Դերենիկ Ճիզմեճյանը, Մկրտիչ Պարտիզյանը, Վահրամ Փափազյանը, Պոռչ Պոռչյանը, Գոգմոս Գոգիկյանը, Նշան Տեր-Ստեփանյանը, Հովսեփ Վանաչարյանը և ուրիշները:

«Բազմավեպ», 1904, թիվ 7, շապիկի Բ էջը, 1936, թիվ 8—12, 571, 1931, թիվ 11, 491—492, ԳԱԹ, ԴՎՅ, № 348

Վարժարանի առօրյալի մասին Դերենիկ Ճիզմեճյանը պատմում է. «Առավոտ կանուխ, ժամը վեցին, կելլեիք անկողնեն և կաճապարիքնք սառ շուրով լվացվիլ: Ննջաբանեն կիշենիք մատուռ, ուր պահ մը աղոթելի ետք կերթայինք ճաշարան կաթ և սուրճ առնելու: Հետո կիշենիք պարտեղ քիչ մը մարզանք ընելու: Դասերը կսկսեին ժամը ութին և կը լրանային տասներկուօրին: Ճաշի ատեն բացարձակ լռություն: Աշակերտ մը բարձր ամպիոնի մը վրա կեցած, գիրք մը կը կարդար, ընդհանրապես պատմական նյութ մը: Կես ժամ շէր տներ մեր ճաշը. տեսուչը կը հնչեցներ զանգակը. մենք ոտքի կը կենայինք լսելու իր աղոթքը: Ժամը հինգին նորեն կիշենիք պարտեղ: Դասերեն ետք ազատ ժամանակ ունեինք ունեելու, երբեմն այ գիրքեր կարդալու: Երեկոյան ժամը իննին կերթայինք մատուռ աղոթելու, ապա կը բարձրանայինք ննջարան՝ մեր խուցբռուն մեջ: Շաբաթը երկու անգամ, հինգշաբթի և կիրակի, կեսօրեն ետք, հագնելով մեր համազգեստները, ամեն դասարան զատ-զատ վարդապետի մը կամ իտալացի հսկիչի մը ընկերակցությամբ կերթայինք պտույտի»:

Ճիզմեճյան, 11:

Գ. Զպուգքյարյանը Մուրատ-Ռափայելյանում զբաղվում է ընթերցումներով: Կարդում է Բագրատունի, Ալիշան, Բաֆֆի, Արովյան, Շեքսպիր, Լամարթին, Միլտոն, Հյուգո, Ռասին, Շատոբրիան, Դանտե: Ընդունակություններ է ցուցաբերում լեզուների ուսումնասիրման մեջ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 348, «Բազմավեպ», 1931, թիվ 11, 492:

Իեկտեմբերի 2/15.— Հայրը և հորեղբայրը Կ. Պոլսից՝ Գ. Զպուգքյարյանին: Անձնական բովանդակությամբ հայատառ տաճկերեն նամակ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 39 լր.:

Իեկտեմբերի 14.— Գրում է «Գուլ» բանաստեղծությունը:

«Փուլի ակասներ», 68, «Մրբկահույզ կայծոռիկներ», 19ա:

Իեկտեմբերի 31.— Գրում է «Անցնող տարին» բանաստեղծությունը:

«Փուլի ակասներ», 96:



1903

Հունվարի 1.— Մշակում է «Անցնող տարին» բանաստեղծությունը: «Մերկահույզ կայծառիկներ», 21:

<Մինչև հունվարի 17>.— Նամակ՝ Արիստակես Քասազանտիլյանին: (Չի պահպանվել): Շնորհավորում է զատիկը, հաղորդում բարեմաղթություններ:

ԳԱԹ, ԴՎՖ, № 323:

Հունվարի 17.— Արիստակես Քասազանտիլյանը Կ. Պոլսից՝ Գ. Զպուգբյարյանին: Պատասխանում է նրա շնորհավորական նամակին: Անդ:

Հունվարի 23.— Գրում է «Պահապան հրեշտակիս» բանաստեղծություն սևագիր ու մաքրագիր օրինակները:

«Փուշի ակոսներ», 89 (չնչել է) «Մերկահույզ կայծառիկներ», 20ա:

Փետրվարի 8.— Գրում է «Ավազանին ձուկերուն» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 55—57 «Մերկահույզ կայծառիկներ», 22—22ա:

Փետրվարի 11.— Աշակերտական տետրում ամփոփում է հետևյալ արձակ գործերը՝ «է տառը մեր այբբենարանին մեջ», «Պտույտ մը մեր դասարանին շուրջը», «Ստվերին մեջ», «Ստվերներ», «Վերականգանություն (նամակաբար)», «Վիպերգներ «Ուրացողը», «Կմաղբե սիրահարը» (շարադրված է միայն առաջին մասը): Ուրիշի ձեռագրով կանա «Տաղաշափական» վերնագրով գրականագիտական բնույթի մի հոդված:

Տետրի անվանաթերթը՝ Տետր հայերեն լեզվի. Դանիել Զուպուգբյար, 11 փետրվար, 1903:

ԳԱԹ, ԴՎՖ, № 43:

Փետրվարի 24.— Գրում է «Պատկերդ (սիրերգ)» բանաստեղծության սևագիր և մաքրագիր օրինակները:

«Փուշի ակոսներ», 27 (չնչել է), «Մերկահույզ կայծառիկներ», 21ա:

Մարտի 29.— Գրում է «Մանկութենես» բանաստեղծության սևագիր և մաքրագիր օրինակները:

«Փուշի ակոսներ», 82—83 (չնչել է), «Մերկահույզ կայծառիկներ», 23:

Մայիսի 27.— Մուրատ-Ռափայելյան վարժարանի դասատու և հակող է նշանակվում Մկրտիչ Պոտուրյանը (այդ պաշտոնում մնում է մինչև 1905-ի մարտի 27-ը): Մ. Պոտուրյանի և Գ. Զպուգբյարյանի միջև ստեղծվում են մտերմական հարաբերություններ: Իր հուշերում Մ. Պոտուրյանը պատմում է. «Մուրատ-Ռափայելյան վարժարանին աշակերտներուն մեջ ամենեն առաջ Դանիելը աչքիս զարկավ, իսկույն մտերմացավ հետս, սենյակս եկավ, գրքերս աչքի անցուց, քանի մը հատոր ձեռքն առած, խնդրեց, որ քանի մը օրվան համար իր մոտ մնան»:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 571, «էջմիածին», 1958, Ը, 36:

Հունիսի 10.— Գրում է «Մխիթար Աբբա» բանաստեղծության սևագիր օրինակը:

«Փուշի ակոսներ», 18—19:

Հունիսի 22.— Գրում է «Մանուկը» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 60—62, «Մերկահույզ կայծառիկներ», 39—40:

<Հունիս>.— Մուրատ-Ռափայելյանի աշակերտները հանձնում են տարեկան քննությունները: Առաջին քննությունը մարմնամարզանքն է, ապա հանձնաժողովը ընդունում է գրավոր ու բանավոր քննությունները: Քննաչրջանից հետո կատարվում է մրցանակաբաշխության հանդեսը:

«Բազմավեպ», թիվ 8—12, 236—237:



<Հուլիս-սեպտեմբեր>.— Սկսվում են Մուրատ-Ռափայելյան վարժարանի ամառային արձակուրդները: Աշակերտների հետ հանգստանում է Ազոլոյում:

Վարժարանում պաշտոնապես արձակուրդի օրեր են համարվել յուրաքանչյուր հինգշաբթիի ետմիջօրեն, կիրակին, ինչպես նաև եկեղեցական ու քաղաքական բոլոր տոն օրերը: Քննաչափից հետո տրվում էր եռամսյա մեծ արձակուրդ: Աշակերտներին նախ տանում էին ծով, ապա՝ Ազոլոյի ամառանոցը, ուր հանգստյան ծրագրով նախատեսվում էին խաղեր, ժամանց, ընթերցումներ:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 234—237:

Սոցստոսի 20.— Գրում է «Հառաչանք մը» բանաստեղծության սևագիր և մաքրագիր օրինակները: Մաքրագիրն ունի «Ծերուկը» խորագիրը:

«Փուշի ակոսներ», 63—64 (չնչել է), «Մերկահույզ կայծառիկներ», 25—26:

Սեպտեմբերի 24.— Գրում է «Ս. Խաչին» բանաստեղծության արձակ, սևագիր տարբերակը:

«Մերկահույզ կայծառիկներ», 30ա—31:

Սեպտեմբերի 25.— Գրում է «Խաչին» («Ս. Խաչին») բանաստեղծության մաքրագիր, շափածո օրինակները:

«Փուշի ակոսներ», 50—52, «Մերկահույզ կայծառիկներ», 31ա—32ա:

Սեպտեմբերի 27.— Գրում է «Որբուհին» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 65—67, «Մերկահույզ կայծառիկներ», 33—33ա:

<Սեպտեմբերի վերջ>.— Ամառային արձակուրդների ավարտից հետո Մուրատ-Ռափայելյանի աշակերտների հետ վերադառնում է Ս. Ղազար:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 237:

Հոկտեմբերի 1.— Մուրատ-Ռափայելյան վարժարանի ուսումնապետ և հայերենի ուսուցիչ է նշանակվում Հովհան Ավզբը: Նա անբարյացակամ է եղել աշակերտների հանդեպ, ի մասնավորի վատ է վերաբերվել

Գ. Զպուգքյարյանին: Դերենիկ Ճիզմեճյանը իր հուշերում վկայում է. «Հ. Յհան որևէ համակրություն չգտավ իր աշակերտներուն մոտ: Մասնավոր ջանք մը կը դնեի Դանիելի շարադրությունները քննադատելու»: Աշակերտների մեջ առաջանում է դժգոհություն, Հ. Ավզբի դեմ սկսվում է պայքար, որը զլիսավորում են Դ. Զպուգքյարյանն ու Դ. Ճիզմեճյանը:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 571, Ճիզմեճյան, 15—16:

Հոկտեմբերի 11.— Գրում է «Պապս» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 37—39, «Մերկահույզ կայծառիկներ», 34—35, ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 247—250:

Հոկտեմբերի 16.— Գրում է «Աստուծո ասուպը» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 30—33, «Մերկահույզ կայծառիկներ», 35ա—37:

Հոկտեմբերի 18.— Գրում է «Ես ինձի» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 69—71, «Մերկահույզ կայծառիկներ», 37ա—38ա:

Նոյեմբերի 2.— Նամակ՝ Հովակիմ Եզեկյանին: Հայտնում է տպավորությունները արձակուրդներից և վարժարանից:

«Նամականի», 25—27:

Նոյեմբերի 12.— Գրում է «Սիրուհին գետեզերքը» բանաստեղծությունը: «Մրրկահույզ կայծառիկներում» նախապես վերնագրել է «Նշանածը», տպագրվել է «Արյունոտ ճյուղը» խորագրով:

«Փուշի ակոսներ», 21—23, «Մերկահույզ կայծառիկներ», 42—43:

Նոյեմբերի 13.— Գրում է «Ինչպես որ...» բանաստեղծությունը: «Մրրկահույզ կայծառիկներում» վերնագրել է՝ «Ինչպես...»:

«Փուշի ակոսներ», 80—81, «Մերկահույզ կայծառիկներ», 43ա:



Նոյեմբերի 20.— Գրում է «Գյուղիս դպրոցը» արձակ ստեղծագործությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 39, 1—3:

<Նոյեմբեր>.— Նամակ՝ մորը:

«Նամականի», 25:

Դեկտեմբերի 2.— Գրում է «Խավարկոտ հյուղակե ձայն մը (Զմեռ)» արձակ ստեղծագործությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 39, 1—3:

— Նոթատետրում արտագրում է բառեր իրենց բացատրություններով և անում զանազան նշումներ: Անվանաթերթը՝ Դանիել Չպուգֆյար, Կյանգֆիս գանձանակը, Վենետիկ, 1903:

ԳԱԹ, ԴՎՅ, № 53:

— Գրում է «Մխիթար Արքա» բանաստեղծության մաքրագիր օրինակը: Նախապես վերնագրել է՝ «Մեծ մարդը»:

«Մերկանույզ կայծառիկներ», 23ա—24:

1904

Հունվարի 6.— Գրում է «Վշտին» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 112—115, «Մերկանույզ կայծառիկներ», 44—45ա:

Փետրվարի 10.— Գրում է «Ինչո՞ւ...» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 40—45, «Մերկանույզ կայծառիկներ», 46—48ա:

Փետրվարի 16.— Դերենիկ Ճիզմեճյանից Վենետիկում նվեր է ստանում նրա լուսանկարը: Մակագրությունը՝ «Սիրտս, որ կը ճանչնաս, անոր անմոռանալի հիշատակը թող ըլլա աս»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 453:

Ապրիլի 2.— Գրում է «Մուրացիկը» բանաստեղծությունը: «Մրրկահույզ կայծառիկներում» նախապես վերնագրել է՝ «Մուրացիկին երգեհոնիկը»:

«Փուշի ակոսներ», 10—12, «Մերկանույզ կայծառիկներ», 11—12ա:

Ապրիլի 3.— Գրում է «Մաղթանքի ձայներ» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 9:

Ապրիլի 6.— Գրում է «Տղաք, ներեցե՛ք» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 28—29, «Մերկանույզ կայծառիկներ», 49ա—50ա:

Ապրիլի 10.— Գրում է «Զյունե դագաղը» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 120—124, «Մերկանույզ կայծառիկներ», 53—55:

Ապրիլի 18.— Գրում է «Ալիշանի շիրմին առջև» բանաստեղծությունը: «Մրրկահույզ կայծառիկներում» ունի նաև «Բանաստեղծ նահապետի շիրմին առջև» վերնագիրը:

«Փուշի ակոսներ», 97—101, «Մերկանույզ կայծառիկներ», 50ա—52ա:

Ապրիլի 18-ից հետո.— «Ալիշանի շիրմին առջև» բանաստեղծությունը կարդում է Մկրտիչ Պոտուրյանին: Վերջինս այն հանձնում է «Բազմավեպի» խմբագիր Սիմոն Երեմյանին՝ տպագրելու համար:

«Էջմիածին», 1958, ը, 36:

<Մինչև մայիսի 1>.— Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին (չի պահպանվել): Գրել է Կ. Տեր-Սահակյանի՝ Կ. Պոլսում գտնվելու առիթով:

ԳԱԹ, ԴՎՅ, № 301:

Մայիսի 1.— Կարապետ Տեր-Սահակյանը Կ. Պոլսից՝ Դ. Չպուգֆյարյանին: Հաղորդում է իր տպավորությունները Կ. Պոլսից, խորհուրդ է տալիս հրատարակվել «Մասիս» հանդեսում:

Այս պարբերականում Դ. Չպուգֆյարյանը ուինչ չի տպագրել:



Մայիսի 2.— Գրում է «Չորս տարեկանի մը նամակը» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 104—106, «Մերկահույզ կայծոռիկներ», 55ա—56:

Մայիսի 4.— Գրում է «Հիսուսի պաճուճապատանքը» բանաստեղծությունը: № 13 տետրում ունի «Հիսուսին պեպեքը» վերնագիրը:

«Փուշի ակոսներ», 116—118, «Մերկահույզ կայծոռիկներ», 56ա—57ա, ԳԱԹ, ԳՎՖ, տետր, № 13, 240—243:

Մայիսի 7.— Գրում է «Միծաղ, զայրույթ» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 24—26, «Մերկահույզ կայծոռիկներ», 6—7:

Մայիսի 11.— Աշակերտական տետրում սկսում է նշումներ անել փիլիսոփայության, Շոգեբանության դասերի վերաբերյալ: Նշել է 12 (ԺԱ) դաս, որոնցից թվագրել է միայն առաջինը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 49:

<Մայիսի 19>.— Նամակ՝ Գրիգոր Զպուղբյարյանին (չի պահպանվել): Բարեններ է հաղորդում Երանոս Տեր-Աստվածատրյանին, հավանաբար խնդրում է նյութական օգնություն:

ԳԱԹ, ԳՎՖ, № 300:

<Մինչև մայիս 22/3 հունիսի>.— «Բազմավեպում» տպագրվում է «Բանաստեղծ-Նահապետի շիրմին առջև» բանաստեղծությունը (թիվ 6, 244—245): Ստորագությունը՝ Դանիել Զուպուղբյար, աշակերտ Մուր. [ատ]—Ռափ. [այեկյան] Վ. [արժարան]-ի: Հետագայում տպագրել է «Ալիշանի շիրմին առջև» վերնագրով:

Մայիսի 22/3 հունիսի.— Սմբատ Դավթյանը Կ. Պոլսից Գ. Զպուղբյարյանին: Շնորհավորում է «Բանաստեղծ-Նահապետի շիրմին առջև» բանաստեղծության տպագրության առթիվ: Գրում է. «Շատ հաջողած ես սրտագրավ տողեր... Ի վեր կը հանեն զգայուն հոգի մը և բանաստեղծ Նահապետին արժանի խանդով լի սիրտ մը»:

«Նամակակ», 217:

Մայիսի 29/11 հունիս.— Երանոս Տեր-Աստվածատրյանը Կ. Պոլսից՝ Գ. Զպուղբյարյանին: Հայտնում է, որ նա հոր խնդրանքով ուղարկում է երկու ոսկի: Խնդրում է պատասխանել իր նամակին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 300:

Հունիսի 1.— Կարապետ Տեր-Սահակյանը Կ. Պոլսից Գ. Զպուղբյարյանին: Շնորհավորում է «Բանաստեղծ-Նահապետի շիրմին առջև» բանաստեղծության տպագրության առթիվ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 302:

Հունիսի 2.— Գրում է «Վերադարձ սիրո թաղումեն» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 108—111, «Մերկահույզ կայծոռիկներ», 8—10:

Հունիսի 4.— Գրում է «Անհավատը» բանաստեղծությունը: «Մրրկահույզ կայծոռիկներում» նախապես վերնագրել է՝ «Անհավատ հոգվույն գահավիժումը», «Անհավատություն»:

«Փուշի ակոսներ» 94, «Մերկահույզ կայծոռիկներ», 10ա:

Հունիսի 17.— Գրում է «Եիկիտ Տոնել» դրույցադնավեպը: Գլխավոր հերոսի նախատիպ է ծառայել հեղինակի մոր պապը: Տե՛ս 1884-ի ապրիլի 21-ի գրառումը:

«Բազմավեպ», 1904, թիվ 9—10, 423—426:

Հունիսի 19.— Գրում է «Մատնիչը» բանաստեղծության նախնական տարբերակը:

«Փուշի ակոսներ», 15—17:

Հունիսի 20.— Գրում է «Պսակման խորհուրդեն վերջ» բանաստեղծությունը: № 13 տետրում նախապես վերնագրել է՝ «Առազաստն ենք», ապա դարձրել՝ «Երգ սրկապանի»:

«Փուշի ակոսներ», 34—36, «Մերկահույզ կայծոռիկներ», 13—14, ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 227—228:



(Հունիսի 25)Ց հուլիսի.— Նամակ՝ Սմբատ Դավթյանին:

«Նամակներ», 267:

<Հունիս>.— Հանձնում է տարեկան քննությունները և մեկնում Ազոլո՝ հանգստանալու Մուրատ-Ռափայելյան վարժարանի ամառանոցում:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 236—237:

Ամառ.— Մկրտիչ Պոտուրյանի նախաձեռնությամբ Ազոլոյում հրատարակվում է դպրոցական ձեռագիր թերթ, որը Դանիել Զպուգքյարյանի առաջարկությամբ կոչում են «Եղի» («Դեռ չհասունցած ցորեն»): Մ. Պոտուրյանը պատմում է. «Դանիել ամեն շաբաթ գրեց մեկն ավելի քերթվածներ, որոնք հետո «Ցեղին սիրտին» մեջ արտատպվեցան: Իսկ Դերենիկ ձիգմեճյանը վկայում է. «Ես էի խմբագրապետը և ունեի իրրաշխատակից առաջին գծի վրա Վարուժանը...»:

Մ. Պոտուրյանը իր հուշերը վերահրատարակելիս «Ցեղին սիրտը» ժողովածուի փոխարեն նշել է «Հացին երգը», որը վրիպանք է և չի հաստատվում ոչ մի փաստով: «Իրցավան», գիրք Ա, Պուքրեշ, 1923, 25, ձիգմեճյան, 21:

Դ. Զպուգքյարյանը, բուն ստորագրությամբ հրատարակած գործերից բացի, «Եղիում» հանդես է եկել նաև «Զիրգուշտ» կեղծանվամբ. այդ ստորագրությամբ գետնեղել է գրաքննադատական, երգիծական ու բանավիճային հոդվածներ, որոնցից պահպանվել են մի քանիսի սևագրությունները՝ «Փայլակնացայտ հացկերույթ մը (երգիծաբանության իրավունքով)», «Իջի՛ր», «Հետաքրքիր ոգիին» և այլն:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 5:

Օգոստոսի 25.— Գրում է «Մեռածին համբույր մը» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 102—103, «Մերկանույզ կայծոռիկներ», 58—58ա:

Օգոստոսի 26.— Գրում է «Դաստիարակ» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 107, «Մերկանույզ կայծոռիկներ», 16ա:

Օգոստոսի 28.— Գրում է «Հայր, օրհնե՛» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 8—9, «Մերկանույզ կայծոռիկներ», 58—58ա:

Սեպտեմբերի 10.— Գրում է «Մոխիրներուն առջև» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 72—74, «Մերկանույզ կայծոռիկներ», 59—60ա:

Սեպտեմբերի 14.— Գրում է «Դաշտերու տղան» բանաստեղծությունը:

«Փուշի ակոսներ», 47—48, «Մերկանույզ կայծոռիկներ», 61—62, ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 244—246:

<Սեպտեմբերի վերջ-հոկտեմբերի սկիզբ>.— Ամառային արձակուրդներից հետո Ազոլոյից վերադառնում է Ս. Ղազար:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 236—237:

<Նույն շրջանում>.— «Բազմավեպում» տպագրվում է «Երկիտ Տոնել» դրուցադնավեպը (թիվ 9—10, 423—426): Ստորագրությունը՝ Դանիել Զպուգքյար:

Նույն շրջանում.— Հովհան Ավզերը Դանիել Զպուգքյարյանին ծանոթացնում է «Բազմավեպի» խմբագիր Սիմոն Երեմյանի հետ: Վերջինս իր հուշերում պատմում է. «...Իմ առջև կանգ կառնեի պատանի մը և ինձի շնորհակալ կրլար, որ «Բազմավեպի» մեջ անկյուն մը տված էի իր «Երկիտ Տոնել» քերթվածին: Ես շնորհավորեցի զինքը ու քաջալերեցի իր գրիչը»:

«Բազմավեպ», 1931, թիվ 11, 491:

Հոկտեմբերի 18.— Գրում է «Սարսուռներ» խորագրով սևագիր պատահիկը:

«Փուշի ակոսներ», 125:

Հոկտեմբերի 22.— Գրում է «Վենետիկ» բանաստեղծությունը:

«Մերկանույզ կայծոռիկներ», 62ա—64ա:



Նոյեմբերի 4.— Գրում է «Երազ և խոհ» բանաստեղծութիւնը:

«Փոլի ակունք», 90—92:

Նոյեմբերի 4-ից հետո.— Կազմում է «Փոլի ակունք» ժողովածուն: Անվանաթերթը՝ Դ. Չ Պ Ո Ի Գ Ք Յ Ա Ր, Փ Ո Ի Շ Ի Ա Կ Ո Ս Ն Ե Ր, 1904: Պարունակում է 1901-ի ապրիլի 20-ից մինչև 1904-ի նոյեմբերի 4-ը գրած հետևյալ 49 բանաստեղծութիւնները՝ Մուսային (ա. թ., նախապես վերնագրել է՝ «Նախերգան»), Հայր, օրհնե՛, Մուրացիկը, Սիրերգ («Մանուկ էինք տակավին»), Մատնիչը, Մխիթար Աբրա (ջնջել է), Թգենիներուն տակ, Սիրունին գետեգերէր, Միծաղ, գայրույթ, Պատկերդ (սիրերգ), (ջնջել է), Տղաք, երեցե՛ք, Աստուծո ասուպը, Պսակման խորհուրդն վերջ, Պապս, Ինչո՞ւ... Ուրախույուն, Դաշտերու տղան, Երգ («Այսպես այգ մ'էր մայիս»), Խաչին, Յայգերգ (սիրային), Երգ («Մտոի մը տակ, մամուռն ինձ բարձ»), Ավազանին ձուկերուն, Մանուկը, Հառաչանք մը (ջնջել է), Որբունին, Գուր, Ես ինձի, Մոխրներուն առջև, Քնարին հեծկլտանքներ, Ինչպես..., Մանկութենես, Մանուկին (սիրերգ), Հառա՛չ, Խաբուսիկ սեր, Պահապան հրեշտակիս (ջնջել է), Երագ և խոհ, Անհավատը, Սիրո վագր, Անցնող տարին, Ալիշանի շիրմին առջև, Մեռածին համբույր մը, Չորս տարեկանի մը նամակը, Դաստիարակ, Վերադարձ սիրո քաղամեն, Վշտին, Հիսուսի պանունապատանքը, Երգ («Անմոռուկ ծաղիկ»), ա. թ.), Ջլունն դագաղը, Սարսուռներ (ջնջել է):

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 4:

Նոյեմբերի 21.— Գրում է «Երգ խոստովանանքի» բանաստեղծութիւնը: «Մրրկահույզ կայծոռիկներում» նախապես վերնագրել է «Խոստովանանքի ժամուն», ապա դարձրել՝ «Խոստովանանք»:

«Մրրկահույզ կայծոռիկներ», 65—67, ԳԱԹ ԴՎՅ, տետր № 13, 255—259:

Նոյեմբերի 21-ից հետո.— Կազմում է «Մրրկահույզ կայծոռիկներ» ժողովածուն: Անվանաթերթը՝ Դ Ա Ն Ի Ե Լ Չ Պ Ո Ի Գ Ք Յ Ա Ր, Մ Ր Ր Կ Ա Ն Ո Ի Յ Չ Կ Ա Յ Մ Ո Ռ Ի Կ Ն Ե Ր, Վ Ե Լ Ե Թ Ի Կ, 1904: Պարունակում է 1901-ի ապրիլի 20-ից մինչև 1904-ի նոյեմբերի 21-ը գրած հետևյալ 53 բանաստեղծութիւնները՝ Նախերգան. Մուսային (ա. թ.), Միծաղ, գայրույթ, Վերադարձ սիրո քաղամեն, Անհավատը, Մուրացիկ, Պսակման խորհուրդն վերջ, Մատնիչ (ա.թ.), Դաստիարակ, Սիրերգ («Ամոթխած լուսնին»), Հառա՛չ,

Այգերգ («Մտոի մը տակ, մամուռն ինձ բարձ»), Բանաստեղծի մահը (Հ. Ալիշանի հիշատակին) (ջնջել է), Գուր, Սիրո վագր, Պահապան հրեշտակիս, Անցնող տարին, Պատկերդ (սիրերգ), Ավազանին ձուկերուն, Մանկութենես, Մխիթար Աբրա, Թգենիներուն տակ, Մերուկը, Մանուկին (սիրերգ), Սիրերգ («Մանուկ էինք տակավին»), Խաբուսիկ սեր (սիրերգ), Յայգերգ, Աս օրերու սև նոքեր, Ս. Խաչին (արձակ, ջնջել է), Ս. Խաչին (չափածո), Որբունի, Պապս, Աստուծո ասուպը, Ես ինձի, Մանուկը, Մրինգին օրորը, Սիրունին գետեգերէր, Ինչպես որ..., Վշտին, Ինչո՞ւ..., Երգ («Այսպես այգ մ'էր մայիս»), Տղաք, երեցե՛ք, Բանաստեղծ-Նահապետի շիրմին առջև, Ջլունն դագաղը, Չորս տարեկանի մը նամակը, Հիսուսի պանունապատանքը, Մեռածին համբույր մը, Հայր, օրհնե՛, Մոխրներուն առջև, Դաշտերու տղան, ՎԵԼԵԹԻԿ, Խոստովանանք, Թողեմ մեծնամ (ա. թ.):

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 7:

Նոյեմբերի 26.— Գրում է «Թողեր մեծնամ» բանաստեղծութիւնը:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 251—254:

<Մինչև նոյեմբերի 27>.— Նամակ՝ Հովակիմ Սուլովյանին (գրել է Գրիգոր Խանպեկոֆի ու Հ. Սիրունյանի հետ), (չի պահպանվել): Տպագորութիւններ են հաղորդել Սուլովյանի գրվածքների մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 267:

Նոյեմբերի 27.— Հովակիմ Սուլովյանը Աստրախանից՝ Դ. Զպուգբյարյանին, Գրիգոր Խանպեկոֆին և Հ. Սիրունյանին: Վերհիշում է իրենց աշակերտական տարիները Մուրատ-Ռափայելյանում:

Անդ:

Իեկտեմբերի 7.— Գրում է «Աստուծո լացը» բանաստեղծութիւնը:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 239:

<Ձմեռ>.— Հիվանդանում է 4—5 օր: Մկրտիչ Պոտուրյանից խնդրում է ընթերցանութիւն գրքեր:

«Էջմիածին», 1958, Ը, 26:



— Մոցատեսարում ֆրանսերենով արտագրում է Ժորժ Սանդի, Անատոլ Ֆրանսի, Ֆրանսուա Կոպեի, Պիեռ Լոտիի, Լամարթինի, Ալեքսանդր Դյումայի, Վիկտոր Հյուգոյի, Օնորե դը Բալզակի, Ալֆրեդ դե Մյուսեի և այլոց ասույթները: Անվանաթերթը՝ ԴԱՆԻԵԼ ՉՈՒՊՈՒԳՔՅԱՐ, Ընտիր ասացվածք, Վենետիկ, 1904: Ֆրանսերեն խորագիրն է՝ Մտածմունքի ծաղկեփունջ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 64:

— Մշակում է «Երգ» («Անմոռուկ ծաղիկ») բանաստեղծությունը: Տպագրվել է «Վարդեր» խորագրով:

«Փուշի ակասներ», 119:

— Կ. Պոլսում ծնվում է Դանիել Զպուգբյարյանի երկրորդ եղբայրը՝ Պետրոս Զպուգբյարյանը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 339:

1905

Հունվարի սկիզբ.— Ուժեղանում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի աշակերտների դժգոհությունը ուսումնապետ և հայերենի ուսուցիչ Հովհան Ավգերից: Բողոքում են ճաշերի որակից ու մանկավարժական եղանակներից: Պահանջում են պաշտոնանկ անել Ավգերին, հրաժարվում են մասնակցել դասերին: Դերենիկ Ճիզմեճյանի վկայությամբ «Վարուժան և ես պայքարին ղեկավարներն էինք»: Այդ անցքերի մասին Վարուժանը ինքնակենսագրության մեջ գրել է. «Այդ շորս տարիները (Մուրատ-Ռափայելյանում ուսանելու—Ա. Շ.) ինձի համար եղած են նաև ըմբոստացումներու տարիներ ընդդեմ վարժարանական անմիտ վարչության մը, զոր ի վերջո կրցած ենք տապալել կարգ մը ոռուսահալ և թրքահալ ընկերներու հետ»:

Ճիզմեճյան, 15—16, «Նամակահի», 206:

Հունվարի 29.— Հովհան Ավգերին ազատում են Մուրատ-Ռափայելյան վարժարանի ուսումնապետի պաշտոնից:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 571:



«Մանկագիրքի մը նվագները» ժողովածուի անվանաթերթը գրաքննության կնիքով





Գանիել Զպուգբարյանը ծնողների ու կրտսեր եղբոր հետ (1902, Կ. Պոլիս):

Հունվար.—Վահան Թեքեյանը «Շիրակում» տպագրում է «Հանդես հանդեսներու» տեսութունը, որտեղ Դ. Զպուգբարյանի «Երկիր Տոնել» դյուցազնավեպի առիթով հեղինակի մասին գրում է. «Ճշմարիտ բանաստեղծի մը հայտնության հազվագեղ անակնկալը կընծայե»: Նշում է նրա ստեղծագործության «ինքնատիպ և ուժեղ տողերը» (թիվ 1,71—72):

<Մինչև մարտի 14/27>.— Նամակ հորը (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 121:

Մարտի 14/27.— Մարտիրոս Արայճյանը Կ. Պոլսից՝ Դ. Զպուգբարյանին: Առաջարկում է գտնել նամակագրոջմի սիրահարներ կամ «նույն գործով զբաղվող վաճառականներ» զրոշմանիշներ ձեռք բերելու համար:

Անդ:

Մարտի 19.— Հովակիմ Եղեկյանը Միլֆոր Մեսից (ԱՄՆ)՝ Դ. Զպուգբարյանին: Տեղեկություններ է հաղորդում «Շիրակին» աշխատակցող հեղինակների մասին: Խորհուրդ է տալիս բանաստեղծությամբ արձագանքել Սասունի դեպքերին (նկատի ունի 1904-ի փետրվարին սկսված Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը, որ տևեց մինչև մայիսի կեսերը):

ԳԱԹ, ԴՎՅ, № 140:

Մարտի 27.— Հովհան Ավգերին ազատում են Մուրատ-Ռափայելյանի հայերենի ուսուցչի պարտականություններից: Ուսումնապետ է նշանակվում Սիմոն Երեմյանը, հայերենի ուսուցիչ՝ Արսեն Ղազիկյանը:

Դանիել Զպուգբարյանի ու Ս. Երեմյանի ծանոթությունը վերածվում է բարեկամության: Վերջինս իր հուշերում պատմում է. «Անոր առջև կը բանայի գրատունս, անոր տրամադրության տակ կը դնեի ամբողջ ազգային և օտարազգի նորագույն հեղինակներու բազմությունը: Կը խոսեի իտալացի մտավորական նոր շարժումին վրա, կը հանձնարարեի կարգալ Գարտուշիի, Խենուցիոյի, Վիկտորիա Աղանուրի և Ատա Նեկրիի քերթվածները: Վարուժանը զանոնք լրջորեն կուսումնասիրեի և կը յուրացնեի անոնց քերթողական արվեստի բոլոր նրբությունները»: Ա. Ղազիկյանը նույնպես հոգատար է վերաբերվում իր ուսանողի հանդեպ. «Հ. Արսեն Ղազիկյան,— գրում է Մկրտիչ Պարտիզյանը,— անմիջապես նկատեց



Դանիելի ընդունակութիւնը հայերեն դասերուն, կղզբաղեր անոր հետ ու միշտ լավագույն նիշերը կստանար քննութիւններուն»:

«Բազմավեպ», 1931, թիվ 11, 492, 1936, թիվ 8—12, 571, ԳԱԹ, ԴՎՖ, № 348:

<Մինչև ապրիլի 4>.— Պատրաստում է բանաստեղծութիւնների ժողովածուն, դիմում է մխիթարյան վարդապետներից մեկին, խնդրելով օգնել տպագրել այն արտասահմանում: Մխիթարյան վարդապետներից մեկը հաստատում է. «Դանիել Զպուգքյար... պատրաստած է հավաքածո մը ինքնագիր ոտանավորներու... Արդ սա, փափագելով տպագրութիւն մը հրատարակել զայն արտասահմանի մեջ, դիմած է Տեսչութեանս՝ դիտել տալով միանգամայն գործույն ստիպողական ըլլալը»:

ԳԱԹ, ԴՎՖ, № 491:

Ապրիլի 4.— Մխիթարյան վարդապետներից մեկը «գաղտնածածուկ հարաբերութեան» մեջ է մտնում Կարապետ Բասմաջյանի հետ՝ առաջարկելով տպագրել Դ. Զպուգքյարյանի բանաստեղծութիւնների ժողովածուն՝ 500 օրինակ տպաքանակով և ցուցումներ է տալիս գրքի շարվածքի, տառատեսակների, թղթի ու այլ հարցերի վերաբերյալ, խնդրում է ծանոթացնել հրատարակութեան պայմաններին:

Անդ:

Ապրիլի 8.— Նամակ՝ Մարտիրոս Արայճյանին (չի պահանջվել): Մերժում է նամակադրոշմներ ձեռք բերելու վերաբերյալ նրա խնդրանքը, պատճառաբանում է, թե Մուրատ-Ռափայելյան վարժարանի աշակերտներին արգելված է նման գործերով զբաղվել:

Տե՛ս մարտի 14/27-ի գրառումը:

ԳԱԹ, ԴՎՖ, № 121ա:

Ապրիլի 11/24.— Մարտիրոս Արայճյանը Կ. Պոլսից՝ Դ. Զպուգքյարյանին: Շնորհակալութիւն է հայտնում նամականիշներ ձեռք բերելու իր խնդրանքով զբաղվելու համար:

Անդ:

<Մինչև մայիսի 7>.— Կարապետ Բասմաջյանը Փարիզից՝ Մխի-

թարյան վարդապետին: Ներկայացնում է Դ. Զպուգքյարյանի բանաստեղծութիւնների ժողովածուի հրատարակութեան պայմանները, հայտնում, որ «չուրաքանչյուր տպագրական թերթի (16 էրես) համար» կպահանջվի 55 ֆրանկ:

ԳԱԹ, ԴՎՖ, № 481:

<Նույն շրջանում>.— Մխիթարյան վարդապետը Վենետիկից՝ Կարապետ Բասմաջյանին: Խնդրում է հայտնել Դ. Զպուգքյարյանի ժողովածուի տպագրութեան համար վճարվելիք գումարի պայմանաժամը: Նամակը չի պահանջվել:

Անդ:

Մայիսի 7.— Կարապետ Բասմաջյանը Դ. Զպուգքյարյանի ժողովածուի տպագրութիւնն սկսելու համար Մխիթարյան վարդապետից խընդրում է «մոտավորապես 200 ֆրանք» կանխավճար:

Անդ:

<Մայիսի 7-ից հետո>.— Մխիթարյան վարդապետը իրեն համարելով Դ. Զպուգքյարյանի «միակ նեցուկը», նամակ է գրում Միքայել Թիմենճյանին՝ խնդրելով միջնորդել Հովհաննես Պալյանին, ժողովածուի տպագրութեան համար տրամադրելու 500—600 ֆրանկ:

Ժողովածուի հրատարակութիւնը չի հաջողվել:  
ԳԱԹ, ԴՎՖ, № 490:

Մայիսի 15.— Մշակում է «Մատնիչը» բանաստեղծութիւնը:

ԳԱԹ, ԴՎՖ, տետր № 13, 16—19:

<Մինչև մայիսի 24>.— Նամակ՝ Հովակիմ Եղեկյանին (չի պահանջվել): Տեղեկութիւններ է խնդրում ամերիկահայութեան վերաբերյալ, իր մասին ասում է. «Ապագային անորոշութիւնն է, որ ուղեղս փրտոր-փսոր կըննե»:

ԳԱԹ, ԴՎՖ, № 141:

Մայիսի 24.— Հովակիմ Եղեկյանը ԱՄՆ-ից՝ Դ. Զպուգքյարյանին: Տեղեկութիւններ է հաղորդում ամերիկահայութեան մասին:

Անդ:



Հունիսի 21.— Գրում է «Գեո կանուխ...», բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր N 13, 224—226:

<Հունիս>.— Հանձնում է ավարտական քննությունները Մուրատ-Ռափայելյան վարժարանում, վերջացնում է «լիկեոնական շրջանը»:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 234—236:

<Նույն շրջանում>.— Ցանկություն է հայտնում ուսումը շարունակել ժնեի կամ Լոզանի համալսարաններում:

Ընդունելության պայմաններով «լիկեոնական շրջան» ավարտած «արժանավոր և քաջ հանդիսացող աշակերտաց համար» սահմանված էր «համալսարանական ընթացք»:

Վարժարանի տեսչությունը մերժում է Լոզանում կամ ժնեում սովորելու վերաբերյալ Գ. Զպուգբյարյանի խնդրանքը: Այդ առթիվ 1905-ի դեկտեմբերի 17-ին Վարուժանը Արշակ Զոպանյանին խոստովանել է. «Կըցանկանալի ժնե երթալ, վարժարանն ընդդիմացավ»: 1906-ի մարտի 5-ին բանաստեղծը Սիմոն Երեմյանին հիշեցնում է. «Միասին համախոհ էինք Լոզան երթալուս վրա»: Ս. Երեմյանը իր հուշերում պատմում է. «Դասընկերները կը պատրաստվեին համալսարան մտնելու, իսկ Վարուժանին վիճակը անորոշ կը մնար... Մեծավոր վարդապետը (տեսուչ Ստեփան Սարյանը—Ա. Շ.)... կառարկեք, որ Վարուժանը լիկեոնական շրջանին ամբողջապես հետևած չէ, որով կարելի չէ համալսարանի թոշակ մը սահմանել տալ»:

«Բազմավեպ», 1904, թիվ 7, շապիկի Բ էջը, 1931, թիվ 11, 491, 493, «Նամականի», 36, 58:

<Հուլիս-սեպտեմբերի վերջը>.— Մուրատ-Ռափայելյանի աշակերտների հետ հանգստանում է Ազոլոյում: Կազմում և տպագրության է պատրաստում «Սարսուռներ» ժողովածուն: «Սարսուռներու» ձեռագիրը առաջին անգամ կարդաց իմ և Հ. Մկրտիչ Պոտուրյանի ներկայությամբ, — պատմում է Մկրտիչ Պարտիլյանը, — և մենք երկուքս ալ հուզմունքով լսեցինք և աչքերնիս արցունքով գրկեցինք Դանիելը մեր կուրծքերնուն»: Ժողովածուն ձեռագիր վիճակում կարդում է նաև Սիմոն Երեմյանը:

«Բազմավեպ», 1931, թիվ 7—8, 328, ԳԱԹ, ԴՎՅ, N 348, 11:

Հուլիսի 7.— Գրում է «Վաղվան բողոքներ» բանաստեղծությունը:

«Բազմավեպ», 1905, թիվ 7—8, 384:

Նույն օրը.— Մշակում է «Դաշտերու տղան» բանաստեղծությունը:

«Բազմավեպ», 1905, թիվ 9, 393:

Հուլիսի 21.— Գրում է «Կովի երթ» բանաստեղծությունը: N 12 ինքնագրում վերնագրել է՝ «Վայրենի երգ»:

ԳԱԹ, ԴՎՅ, N 12, 2—4, տետր N 13, 33—36:

<Օգոստոս>.— «Բազմավեպի» հուլիս-օգոստոսի միացյալ համարում տպագրվում է «Վաղվան բողոքներ» բանաստեղծությունը (թիվ 7—8, 384): Ստորագրությունը՝ Դանիել Զպուգբյար, ուս.[անող] Մուս.[ատ]—Ռափ.[այելյան] Վարժ.[արանի]ի:

<Նույն ամսին>.— Վահան Թեքեյանը «Շիրակում» տպագրում է «Հանդես հանդեսներու» տեսությունը, որտեղ Գ. Զպուգբյարյանի «Վաղվան բողոքները» գնահատում է «հայրենասիրական ներշնչմամբ, դյուցազնական շունչով տրոփուն, մերթ կուռ, մերթ զգալուն տողերով գեղեցիկ քերթված մը» (թիվ 8, 157):

Նույն ամսին.— Ազոլոյից մեկ օրով գալիս է Ս. Զենոն՝ Մխիթարյան վարդապետների ամառանոցը՝ տեսակցելու Մկրտիչ Պոտուրյանի հետ: Հանդիպումը տեղի է ունեցել Մուրատ-Ռափայելյանի դեկավարությունից գաղտնի և ըստ երևույթին վերաբերվել է Գ. Զպուգբյարյանի հետագա ճակատագրին:

ԳԱԹ, ԴՎՅ, N 251:

Սեպտեմբերի 10.— Գրում է «Վերածնության երգը» բանաստեղծությունը: Նախապես վերնագրել է՝ «Վերածնություն»:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր N 13, 13—15:

<Սեպտեմբերի վերջ>.— Որոշվում է տպագրել Գ. Զպուգբյարյանի «Սարսուռները» «Գեղունի» հանդեսում և միաժամանակ՝ առանձին գրքով: Վարուժանին ուղղած Սուքիաս Էփրիկյանի 1905-ի դեկտեմբերի 21-ի նամակից երևում է, որ հրատարակության գործը նախաձեռնել է Սիմոն Երեմյանը. «Ըստ կանոնադրության, — գրում է նա, — «Գեղունի»



հոգիվածները առանձին գիրք չեն ըլլար, բայց այդ շնորհքն քեզ ըրինք ըստ բաղձանաց Հ. Սիմոն վարդապետի: Ս. Երեմյանը իր հուշերում վկայում է. «Տակավին «Գեղունիի» հիմք նոր էի դրած և 1905-ին կը հրատարակեի այդ պատկերազարդ թերթին մեջ Վարուժանի «Սարսուռները» ամբողջովին»:

«Նամակներ», 226, 229, «Բազմավեպ», 1931, թիվ 11, 491:

<Նույն շրջանում>.— Մկրտիչ Պոտուրյանը Ս. Ղազարից՝ Գ. Չպուգբյարյանին: Հայտնում է. «Զես կարծեր, թե որչափ ուրախացա, երբ լսեցի որ ոտանավորներդ պիտի տպվին, որոնք պիտի վկայեն, թե այս դարուս միջի հայ բանաստեղծներեն ամենեն մեծը Բրգնիկցի է...»:

«Նամակներ», 218:

<Նույն շրջանում>.— Ազդույից վերադառնում է Վենետիկ: Գրում է «Հին սեր» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 229—230:

<Նույն շրջանում>.— Դիմում է Սիմոն Երեմյանին՝ խնդրելով օգնել ընդունվելու համալսարան: Ս. Երեմյանը համոզում է տեսուչ Ստեփան Սարյանին, և ուսումնական ժողովը որոշում է Գ. Չպուգբյարյանին նշանակել համալսարանական թոշակ՝ ուղարկելով Բելգիա՝ Գենետ (Կանտ): 1906-ի հունվարի 5-ի նամակում Վարուժանը երախտագիտություն արձակում է Սիմոն Երեմյանին. «զՁեզ կողջունեմ իբրև առջի բարեկամ... որ չլլացավ ձեռքեն եկածը ապագայիս բարելավության համար»: Իսկ իրեն Կանտ ուղարկելու որոշման մասին նկատում է. «Մեծավորը այսպես ուզեց՝ Կանտը ավելի կաթոլիկ գտնալով...»:

«Բազմավեպ», 1931, թիվ 11, 493, «Նամակներ», 58:

Սեպտեմբեր.— «Բազմավեպում» տպագրվում է «Դաշտերու տղան» բանաստեղծությունը (թիվ 9, 397—398): Ստորագրությունը՝ Դանիել Չպուգբյար, ուս.[անող] Մուր.[ատ]—Ռափ.[այելյան] վարժ.[արանի]:

<Նույն ամսին>.— Վահան Թեքեյանը «Շիրակում» տպագրում է «Հանդես հանդեսներու» տեսությունը, որտեղ Գ. Չպուգբյարյանի «Դաշտերու տղան» բանաստեղծության մասին նկատում է. «Անհավասար է դժբախտաբար և շատ գեղեցիկ տողերու հետ ունի անհաջողներ ալ» (թիվ 9, 234):

Հոկտեմբերի 24.— Գրում է «Արծիվներու կարավանը» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 20—22:

Հոկտեմբերի վերջ.— Վենետիկից մեկնում է Բելգիա՝ ուսանելու Գենետի համալսարանում:

Մտքատ-Ռափայելյան վարժարանի տեսչությունը Գ. Չպուգբյարյանի ամսաթոշակը սահմանում է 100 ֆրանկ՝ պահանջելով ամենամսյա մանրամասն հաշվետվություններ: Գենետից գրած նամակներում Վարուժանը պարբերաբար ներկայացնում է «ամսահաշիվը»:

Գենետ է հասնում ուշացումով (համալսարանում դասերն սկսվում էին հոկտեմբերի 15-ից): Բնակարան է վարձում Դեզ առ փողոցի № 27 տանը:

«Նամակներ», 38, 54, 68 և այլն: ԳԱԹ, ԳՎՖ, № 86, ԱԶՖ № 6862:

Նոյեմբերի 4.— Գրանցվում է Գենետի համալսարանի 1905—1906 ակադեմիական տարվա «Փիլիսոփայության թեկնածություն» բաժնի ուսանող (առանձին դասընթաց):

ԳԱԹ, ԳՎՖ, շնչակած նյութեր, Գենետի համալսարանի արխիվի գրանցման մատյանի № 38062 արձանագրությունից:

Նոյեմբերի 6.— Գրում է «Մաղրանկար» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 231, № 32 լր., 9—9ա:

Նույն օրը.— Գենետի համալսարանի ռեկտորի ստորագրած № 38062 վկայագրով ճանաչվում է 1905—1906 ուսումնական տարվա ուսանող: Վարուժանը դառնում է համալսարանի զրական և փիլիսոփայական ճյուղերի ազատ ուսանող: Այդ առթիվ նա 1905-ի դեկտեմբերի 17-ին Արշակ Չոպանյանին գրել է. «Ազատ ուսանող եմ. պատճառը մեր վարժարաններուն մեջ հունարեն և լատիներեն չավանդվիլն է. համալսարան մուտքի առաջին քննության պետք է Կիկերոն թարգմանել...»:

Համալսարանում Վարուժանը մտերմանում է Պիեռ Մալեսի, Հանքի էզվար Պիոնի հետ: Զրուցում են բանաստեղծական ու փիլիսոփա-



յական հարցերի շուրջ, ընթերցում Վիկտոր Հյուգո, Ալֆրեդ դե Վինյի, էմիլ Վերհարն, Պոլ Կլոդել:

ԳԱԹ, ԳՎՖ, № 103 ր., «Նամակահի», 36, Ա. Պատրիկ, 140—147:

<Մինչև նոյեմբերի 10>.— Նամակ՝ Գարեգին Տյուրկերյանին (չի պահպանվել): Տպավորություններն է հաղորդում Գենտից, նշում, որ հայ ժողովուրդը Բելգիայում նույնպես բարեկամներ ունի:

ԳԱԹ, ԳՎՖ, № 125:

Նոյեմբերի 10.— Գարեգին Տյուրկերյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղեկություններ է հայտնում Մուրատ-Ռափայելյան վարժարանի մասին:

Անդ:

<Նոյեմբերի կեսեր>.— Նամակ՝ Վահան Թեքեյանին (չի պահպանվել): «Շիրակում» տպագրելու համար ուղարկում է «Վերածնություն» բանաստեղծությունը:

«Նամակահի», 234, 57:

<Նույն շրջանում>.— Վենետիկում «Գեղունիում» տպագրելու համար արտադրության է հանձնվում «Սարսուռներ» ժողովածուից մի շարք: Միաժամանակ նույն բանաստեղծությունները պատրաստում են լույս ընծայել առանձին գրքով: Այդ առթիվ Մկրտիչ Պոտուրյանը 1905-ի նոյեմբերի 19-ին Վարուժանին հայտնել է. «Սարսուռները» գիրք կը ձևանան. եթե դու գոհ ես, ես՝ ոչ այդպիսի տպագրություն... Հուսամ, թե երկրորդ տպագրությունը (առանձին գրքով—Ա. Շ.) lusso (շքեղ) կըլլա և ամբողջությունը միասին շնորհքով հատոր մը կը կազմեն:

Անդ, 220: ՏՆՍ նաև 29—30:

<Մինչև նոյեմբեր 15>.— Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին (չի պահպանվել): Խոսում է իր բանաստեղծությունների տպագրության մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 304:

Նոյեմբերի 15.— Կարապետ Տեր-Սահակյանը՝ Վենետիկից Վարուժանին: Հայտնում է. «Նպատակին» ոտանավորը հրատարակելու «գայթակղություն» մեղավ մեր կրոնավորաց. ուստի զգուշությամբ պիտի հրատարակեմ դեկտեմբերի մեջ մյուս մնացած ոտանավորները». Եվ ապա. «Քիչ առաջ «Թողեք մեծնամ»-ը հանձնեցի տպագրիչին: «Խաչին»-են հետո ամենեն լավ ոտանավորը. շատ ավելի լավ, քան «Դեպ կանուխ...»-ը, որուն նախասիրություն մը ցույց կուտայիր»:

ԳԱԹ, ԳՎՖ, № 304:

Նոյեմբերի 16.— Գրում է «Հայկականերուն օրրանը» բանաստեղծությունը: Նախապես վերնարգել է՝ «Հայկականերուն օրոցքը»:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 37—38:

<Մինչև նոյեմբերի 19>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել): Հիշում է Մուրատ-Ռափայելյանում անցկացրած տարիները, խնդրում է հայերեն պարբերականների հասցեները:

«Եջմիածին», 1958, Հ, 36, «Նամակահի», 220—221:

<Նույն շրջանում>.— Ս. Ղազարի տպարանում շարվում է «Սարսուռներ» ժողովածուն:

ԳԱԹ, ԳՎՖ, № 257:

Նոյեմբերի 19.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է. «Այսօր տպարան գացի, տեսա որ մանր գրերով գիրք մը կը տպվեր... Քիչ մը կարդացի, տեսա որ լավ բաներ մըն էին: Հ. Կարապետին (Տեր-Սահակյանին—Ա. Շ.) հարցուցի. «Այս ո՞րու գիրքը»: «Զե՞ս գիտեր, Դանիելինն է» ըսավ»: Խոսքը «Սարսուռների» մասին է:

Անդ:

<Մինչև նոյեմբերի 20>.— Նամակ՝ Հովակիմ Եղեկյանին (չի պահպանվել): Հայտնում է, որ արդեն ուսանող է:

ԳԱԹ, ԳՎՖ, № 142:



Նոյեմբերի 20.— Հովակիմ Եզեկյանը ԱՄՆ-ից՝ Վարուժանին: Շնորհավորում է ուսանող դասնալու առիթով:

Անդ:

<Մինչև նոյեմբերի 21>.— Մանոթանում է «Գեղունիում» տպագրվող «Մարտուններ» շաբաթի մի մասի շարվածքին:

«Նամականի», 29—30:

Նոյեմբերի 21.— Նամակ՝ Սուքիաս էփրիկյանին: Հույս է հայտնում, որ «Մարտունների» հատորը կլինի «ամբողջ, ճաշակով և կատարյալ՝ գերծ ամեն (պոռշուրով) վիժած ծավալ մը ըլլալե»:

Անդ:

<Մինչև նոյեմբերի 22>.— Նամակ՝ Ֆիլիպ Արփիարյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՖ, № 124:

Նոյեմբերի 22.— Ֆիլիպ Արփիարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղեկություններ է հայտնում նախկին աշակերտակիցների մասին:

Անդ:

<Մինչև նոյեմբերի 27>.— Նամակ՝ Գարեգին Տյուրկերյանին (չի պահպանվել): Խնդրում է ուղարկել գրքեր և հայտնել Դերենիկ Ճիզմեճյանի հասցեն:

ԳԱԹ, ԴՎՖ, № 126:

Նոյեմբերի 27.— Գարեգին Տյուրկերյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղեկություններ է հայտնում իրենց դասընկերների ու ծանոթների մասին:

Անդ:

Նոյեմբերի 28.— Արփիար Արփիարյանը «Լուսաբերում» «Հայ մամուլ» բաժնում գրախոսում է «Բազմավեպի» 1905-ի նոյեմբերյան թի-

վը՝ գրելով. «Դանիել Վարուժան կես կեղծանունով կը գտնենք ներշնչված բանաստեղծություններ, որոնց գնահատումը կը թողունք «Շիրակին» իբրև Դանիել Վարուժանը ժողովրդականացնող առաջին հանդեսը. քսենք թե Բոթնիկ (իմա՝ Բրգնիկ—Ա. Շ.) գեղը մեզի լավ բանաստեղծ մը տված է, եթե մթնոլորտին խեղդամահ չմեռնի» (թիվ 151):

Նոյեմբեր.— «Բազմավեպում» տպագրվում են «Ենաչին», «Հիսուսի պաճուճապատանքը» և «Նպատակին» բանաստեղծությունները (թիվ 11, 514, 518, 523): Առաջին անգամ դիմում է Դանիել Վարուժան ստորագրությանը:

Նույն ամսին.— Գենտում գրում է «Հրավեր» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՖ, տետր № 13, 219—221:

<Նույն ամսին>.— Արսեն Ղազիկյանը Վենետիկից՝ Վարուժանին (չի պահպանվել): Խնդրում է կարծիք հայտնել «Գեղունիում» վիկտորիա Աղանուրից իր կատարած թարգմանությունների մասին:

«Նամականի», 28:

<Նույն ամսին>.— Նամակ՝ Արսեն Ղազիկյանին: Կարծիք է հայտնում վիկտորիա Աղանուրից նրա կատարած թարգմանությունների մասին:

Անդ, 28—29:

Դեկտեմբերի 1.— Գրում է «Բժիշկը» բանաստեղծությունը: Նախապես վերնագրել է «Հայ բժիշկը»:

ԳԱԹ, ԴՎՖ, տետր № 13, 39—41:

Դեկտեմբերի 7.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Ուղարկում է «Հայ բժիշկը» բանաստեղծությունը՝ «Անահիտում» տպագրելու համար:

«Նամականի», 31:

Դեկտեմբերի 11.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Կարծիք է հայտնում «Հայ բժիշկը» բանաստեղծության մասին, հրավի-



րում է աշխատակցել «Անահիտին»։ «Ձեզ այսուհետև կը նկատեմ «Անահիտի» աշխատակից և իբր այդ «Անահիտը» միշտ պիտի ստանաք...»։

Անդ, 221—223:

<Մինչև դեկտեմբերի 17>.—Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել)։ Խնդրում է Սիմոն Երեմյանի հասցեն, տեղեկություններ «Լուսաբերի» մասին։

«Նամականի», 223—224:

Դեկտեմբերի 17.—Նամակ՝ Արշակ Չոպանյանին։ Իր կարծիքն է հայտնում «Հայ բժիշկը» բանաստեղծության առթիվ արված դիտողությունների մասին։ Իր ծրագրերի վերաբերյալ ասում է. «Եթե լավ մը վարժիմ գաղղիերենի, մտադիր եմ հոս ազգերնուս վերաբերյալ մերթմերթ ճաներ արտասանել, եթե այս նշանախեց մը օգտակար ըլլա մեզի, ուրախ պիտի ըլլամ»։

Անդ, 31—37:

<Նույն օրը>.—Մկրտիչ Պոտուրյանը վենետիկից՝ վարուժանին։ Հայտնում է, որ «Սարսուռներում» տեղ են գտել «Գեղունիում» տպագրվածները՝ առանց «Բաղմավեպում» լույս տեսած բանաստեղծությունների։

Անդ, 223—224:

Դեկտեմբերի 18.—Արշակ Չոպանյանը Փարիզից՝ վարուժանին։ Բացատրություններ է տալիս «Հայ բժիշկը» բանաստեղծության մասին վարուժանի առարկությունների վերաբերյալ։

Անդ, 224—225:

<Մինչև դեկտեմբերի 21>.—«Սարսուռներ» ընդհանուր խորագրի տակ «Գեղունիում» (թիվ 1—10, 42—52) տպագրվում են հետևյալ բանաստեղծությունները՝ Մուսային, Հայր, օրհնե՛, Ջյունե դագաղը, Գասախարակ, Հաշիշ, Տղաք, ներեցե՛ք, Մոխիրներուն առջև, Վշտին, Վիժածը, Մուրացիկը, Մեռածին համբույր մը, Հավերժության սեմին, Հիվանդ

է, Ավագանին ձուկերուն, Արյունոտ ճյուղը, Չորս տաբեկանի մը նամակը։

Միաժամանակ ավարտվում է «Սարսուռներ» ժողովածուի տպագրությունը։ Անվանաթերթը ՍԱՐՍՈՒՌՆԵՐ, քնարական բանաստեղծությունե՛ք, երգեց ՎԱՐՈՒԺԱՆ ԴԱՆԻԵԼ, ՎԵՆԵՏԻԿ—Ս. Ղազար, 1906 (42 էջ)։

Ժողովածուն «Գեղունիում» հրատարակված 16 բանաստեղծություններից բացի պարունակում է նաև «Անհավատը» և «Երազ և խոհ» քերթվածները։ Ժողովածուի ինքնագիր օրինակը բովանդակում է նույն 18 քերթվածները։ Անվանաթերթը՝ Դ Ա Ն Ի Ե Լ Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն, ՍԱՐՍՈՒՌՆԵՐ, 1903—1905:

Գրքույկը հրատարակվում է 500 օրինակ տպաքանակով։ «Սարսուռների» տպագրությունը «Գեղունիի» հրատարակությանը զուգահիշակալու պատճառով տպաքանակը բաց չի թողնվում։ Սուբիաս էփրիկյանը այդ մասին տեղյակ է պահել վարուժանին 1905-ի դեկտեմբերի 21-ի նամակում. «Օրինակները Ձեր տրամադրության տակ կը դրվին «Գեղունիի» լույս տեսնելն 2 ամիս վերջ, որ է ըսել փետրվարի մեջ»։

Ժողովածուն ամփոփում է հրատարակության հանձնված բանաստեղծությունների մի մասը միայն։ Տարբեր առիթներով վարուժանը հաստատել է. «Վանքը քերթվածներուս հրատարակությունն այլանդակեց», «Ոտանավորներուս 1/4-ը կը հրատարակեն», «Կեսնն ավելին—կրնամ ըսել լավ մասը—չհրատարակվեցավ՝ շնորհիվ... վանքի մամուլին կուսակրոնության և կուսազգուրյան»։

«Նամականի», 226, 41, 42, 55, ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 8:

Դեկտեմբերի 21.—Սուբիաս էփրիկյանը վենետիկից՝ վարուժանին։ «Սարսուռների» մասին հայտնում է. «Տպված 500 օրինակներեն 200 օրինակը պիտի մնա մեր մոտ իբր վարձք թղթի և գիրք ձևացնելու տրպարանական ծախուց համար, իսկ մնացյալ 300 օրինակներն արկղիկով մը կը դրկենք Ձեզի փետրվարի մեջ»։

«Նամականի», 226:

Նույն օրը.—Նամակ՝ Աթանաս Տիրոյանին (չի պահպանվել)։ Խընդրում է «Սարսուռներից» դուրս մնացած բանաստեղծությունները հրատարակել առանձին ժողովածուով՝ «Մաշած լար» վերնագրով։

Անդ, 227—228:



<Դեկտեմբերի երրորդ տասնօրյակ>.— «Անահիտում» տպագրվում է «Հայ բժիշկը» բանաստեղծությունը (թիվ 12, 249):

Դեկտեմբերի 23.— Աթանաս Տիրոսյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է, որ ինքը հասու չէ «Մաշած լար» ժողովածու հրատարակելու խնդրում:

«Նամակներ», 227—228:

Դեկտեմբերի 25.— Սկսվում են Գենտի համալսարանի տասնօրյա արձակուրդները:

Անդ, 37—38:

Նույն օրը.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Ներկայացնում է ամսահաշիվը:

Յնդ:

<Մինչև դեկտեմբերի 27>.— Նամակ՝ Գարեգին Տյուրկերյանին (չի պահպանվել): Տեղեկություններ է հայտնում իր մասին, խորհուրդներ է տալիս ընկերոջը, գրում է, որ գոհ է ընտրած ասպարեզից:

ԳԱԹ, ԳՎՅ, № 127:

Դեկտեմբերի 27.— Գարեգին Տյուրկերյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է, որ իրեն ուղղված նամակը ընկել է Ստեփան Սարյանի ձեռքը և դժգոհ է մնացել բովանդակությունից:

Յնդ:

Դեկտեմբերի 28.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: Իր վրդովմունքն է հայտնում «Սարսուռների» աղճատված հրատարակության առթիվ:

ԳԱԹ, ԳՎՅ, № 248:

Դեկտեմբերի 30.— Նամակ՝ Դերենիկ Ճիղմեճյանին:

«Նամակներ», 39—40:

Դեկտեմբեր.— «Բազմավեպում» տպագրվում են «Թողեք մեծնամ»

և «Անցնող տարին» բանաստեղծությունները (թիվ 12, 56—567, 573):

<Նույն ամսին>.— Վահան Թեքեյանը «Շիրակում» տպագրում է «Հանդես հանդեսներու» տեսությունը, որտեղ Վարուժանի «Թողեք մեծնամ» բանաստեղծության մասին գրում է. «Պզտիկ գլուխգործոց մըն է՝ հյուղոյական գոռ ու հզոր շունչով» (թիվ 10—11, 364):

<Տարեվերջ>.— Գենտում բանախոսում է Հայկական հարցի մասին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՅ, № 95 ր.:

Նույն շրջանում.— Նամակ՝ Մուրատ-Ռափայելյան վարժարանի իր նախկին դասընկեր Ստեփանին (չի պահպանվել): Պատմում է իր զբաղումների մասին, հայտնում, որ հանգես է եկել Հայկական հարցին նվիրված բանախոսությամբ:

Անդ:

1906

<Մինչև հունվարի 3>.— Նամակ՝ Ստեփան Սարյանին (չի պահպանվել): Անդրադառնում է իր կրթաթոշակի առաքման խնդրին:

ԳԱԹ, ԳՎՅ, № 259:

Հունվարի 3.— Ստեփան Սարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է, որ այսուհետև կանոնավորապես կուղարկվի կրթաթոշակը:

Անդ:

Նույն օրը.— Ստեփանը ժնկից՝ Վարուժանին: Գրում է. «Շատ և շատ ուրախացրեց ինձ այն լուրը, որ դու այդտեղ կայացած կոնգրեսին խոսել ես ինչպես մի հայ՝ ծանոթ իր ազգի ցավերի հետ: Գիտցիր, սիրելիս, որ հայ ազգը քեզանից շատ բան է սպասում և դու պարտակալն ես օգնելու»:

ԳԱԹ, ԳՎՅ, № 95 ր.:

<Հունվարի 5—7>.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Դժգոհում է «Սարսուռների» հրատարակությունից և Սուբիաս էփրիկյանի վերաբերմունքից:

«Նամակներ», 40—41:







# ՑԵՂԻՆ ՄԻՐՏԸ

Ընդ եղեգան փոզ բոց ելաներ

Մոփս. Խորենացի (Առասպելք)

ԲԱԳԻՆԻՆ ՎՐԱՑ. — ԿՐԿԷՍԻՆ ՄԷՋ. —

ԴԻԻՑԱՋՆԱՎԷՊԵՐ

(1908—1909)

Հրատարակութիւն

ԱՐՄԻ ԺՈՂ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ

1909

Ե. ԳՈՒՆԱ

«Ցեղին սիրտը» ժողովածուի անվանաթերթը

նասիրութեամբ սկսեց պարապել ֆրանսերենով ու այնքան արագորեն առաջադիմեց, որ մի քանի ամիս հետո համարձակութեամբ ունեցավ պատմութեան ուսանողներու շրջանակում մի ասուլիս կազմակերպելու «Համառոտ ակնարկ Հայաստանի մասին» թեմայով:

«Նամականի», 44, Ա. Պատրիկ, 141:

Հունվարի 14.— Արշակ Զոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: «Առեփանգիչը» բանաստեղծութեան մասին գրում է. «Սքանչելի է Ձեր այս քերթվածը... Դուք մեր մեծագույն բանաստեղծներէն մին պիտի ըլլաք, տարակույս չունիմ»:

«Նամականի», 232:

Հունվարի 17.— Ռափայել Պազարճեանը Ֆելթրերից՝ Վարուժանին: Խորհուրդ է տալիս ավելի խոր ուսումնասիրել հունական ու գերմանական գրականութիւնը, հայտնում է «զուտ զավառացի ուժերով հանդես մը» հիմնելու իր մտադրութեան մասին, խնդրում է Վարուժանին աջակցել:

ԳԱԹ, ԴՎՅ, № 220:

Հունվարի 22.— Գրում է «Կովկասահայ վիրավորը» բանաստեղծութիւնը: Տպագրվել է «Վիրավորը» վերնագրով:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 46—49:

<Մինչև հունվարի 28>.— Նամակ՝ Արփիար Արփիարյանին (չի պահպանվել): Շնորհակալութիւն է հայտնում «Վուսաբերում» տպված կարծիքի համար, ուղարկում է բանաստեղծութիւն՝ «Շիրակում» հրատարակելու ցանկութեամբ:

Տե՛ս 1905-ի նոյեմբերի 28-ի գրառումը:

«Նամականի», 232—233:

Հունվարի 28.— Արփիար Արփիարյանը Կահիրէից՝ Վարուժանին: Հայտնում է, որ ուղարկած բանաստեղծութիւնը հավանել են:

Անդ:



Հունվարի 29.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Ներկայացնում է ամսահաշիվը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 67/5, 12—13:

Նույն օրը.— Աթանաս Տիրոյանը Վենետիկից՝ Վարուժանին: Վրդովմունք է հայտնում Սուրբաս էփրիկյանից, հորդորում է շարունակել աշխատակցել «Բազմավեպին»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 292:

<Մինչև փետրվարի 1>.— Նամակ՝ Գարեգին Տյուրկերյանին (չի պահպանվել): Խնդրում է ուղարկել գրքեր:

ԳԱԹ, ԴՎՅ, № 128:

Փետրվարի 1.— Գարեգին Տյուրկերյանը Վենետիկից՝ Վարուժանին՝ Կարծիք է հայտնում «Գեղունիում» տպագրված «Սարսուռներ» շարքի մասին, տեղյակ է պահում Մուրատ-Ռափայելյան վարժարանի առօրյային:

Անդ:

<Փետրվարի 1—2>.— Նամակ՝ Աթանաս Տիրոյանին: Խնդրում է ուղարկել Վենետիկում մնացած իր բանաստեղծությունների երկու տետրերը:

«Նամակաճի», 47—48:

Փետրվարի 2.— Նամակ՝ Սուրբաս էփրիկյանին: Իր դայրույթն է արտահայտում «Սարսուռներ» աղճատված հրատարակության ու լուսաչափված վիրավորական պայմանների կապակցությամբ:

Տե՛ս 1905-ի դեկտեմբերի 21-ի գրառումը:

Անդ, 45:

<Փետրվարի 3—6>.— Նամակ՝ Արիստակես Քասզանտիլյանին: Գրում է. «Ոչ մեկ հայերենի վարժապետ իմ վրա այնքան ազդած չէ, որքան Դուք: Մյուսներուն դասերը ինձի սովորեցուցին զիտնալ, Ձերիններն՝ ստեղծել»:

Անդ, 48—49:

Փետրվարի 4.— Սուրբաս էփրիկյանը Վենետիկից՝ Վարուժանին: Ի պատասխան փետրվարի 2-ի նամակի, գրում է. «Կրնամ զրկել Ձեզ նաև բոլոր 500 օրինակները («Սարսուռներ») — Ա. Շ), միայն թուղթի և այլ ծախսերը պետք է հոգաք Դուք և կամ Ռափայելյան վարժարանի տեսչությունը»:

Անդ, 229—230:

Փետրվարի 6.— Նամակ՝ Գերենիկ Ճիզմեճյանին: Խնդրում է Ադա Նեգրիի «Ճակատագիր» ծողովածուն:

Անդ, 49—50:

Նույն օրը.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին: Հետաքրքրվում է գերմանական գրականության մեջ, խոսում իր համոզմունքների մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 94:

Փետրվարի 7.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Հետաքրքրվում է «Սարսուռներ» վաճառքը Փարիզում կազմակերպելու խնդրով:

«Նամակաճի», 51—52:

Փետրվարի 10.— Կարապետ Տեր-Սահակյանը Վենետիկից՝ Վարուժանին: Ուղարկում է նրա բանաստեղծությունների երկու տետրերը:

Տե՛ս 1906-ի փետրվարի <1—2>-ի գրառումը: Հիշյալ տետրերի ճակատագիրը հայտնի չէ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 303:

Նույն օրը.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Խորհուրդներ է տալիս «Սարսուռներ» վաճառքը դյուրացնելու համար:

«Նամակաճի», 233:

Փետրվարի 11.— Նամակ Սուրբաս էփրիկյանին՝ «Սարսուռներ» օրինակները իրեն ուղարկելու մասին:

Անդ, 52—53:

Փետրվարի 13.— Վահան Թեքեյանը Ալեքսանդրիայից՝ Վարուժանին: Հիացմունք է հայտնում «Գեղունիում» տպագրված «Սարսուռներ»



մասին, բացատրում է, թե ինչու չի կարող հրատարակել «Վերածնուն-  
թյուն» բանաստեղծությունը:

Անդ, 234—236:

<Մինչև փետրվարի 16>.— Նամակ՝ ներսեհ Անդրիկյանին (չի  
պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՖ, № 119:

Փետրվարի 16.— Ներսեհ Անդրիկյանը Վենետիկից՝ Վարուժանին:  
Հայտնում է, որ համաձայն է իր «Հանգած եկեղեցի» աշխատության  
առթիվ նրա արած դիտողություններին:

Անդ:

Նույն օրը.— Սուքիաս էփրիկյանը Վենետիկից ուղարկում է «Սար-  
սուռների» ամբողջ տպաքանակը, պահանջելով, որ Վարուժանը վաճառ-  
քից գոյացած գումարի հաշվին հատուցի տպարանական ծախսերը:

«Նամակաճի», 236:

<Փետրվարի 16—20>.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Ներկա-  
յացնում է ամսահաշիվը:

Անդ, 53—54:

Փետրվարի 18.— Աթանաս Տիրոյանը Վենետիկից՝ Վարուժանին:  
Մտերմական նամակ:

Անդ, 236—238:

Փետրվարի 19.— Գրում է «Կարմիր հողը» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՖ, տետր № 13, 61—63:

Փետրվարի 26.— Նամակ՝ Արշակ Զոպանյանին: Ուղարկում է 100  
օրինակ «Սարսուռներ»՝ Ֆրանսիայում վաճառելու համար:

«Նամակաճի», 55:

<Փետրվարի 26-ից հետո>.— «Անահիտը» ծանուցում է «Սար-  
սուռների» լույս ընծայումը և տպագրում «Առևանգիչը» բանաստեղծու-

թյունը (թիվ 1—2, 32, 25—26): Մանուցման մեջ ասված է. «Դանիել  
Վարուժան, որուն մեկ հոյակապ քերթվածը կը հրատարակենք մեր այս  
թիվով, ի լույս ընծայած է բանաստեղծությանց հատորիկ մը, որ սքան-  
չացմամբ պիտի կարդացվի: Վարուժան հայ բանաստեղծության ամենեն  
ինքնատիպ և հզոր դեմքերեն մին ըլլալու կոչված է»:

Փետրվարի 27.— Արշակ Զոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտ-  
նում է իր զմայլանքը «Սարսուռներից», խոստանում գրել ժողովածուի  
մասին:

«Նամակաճի», 238:

Նույն օրը.— Պիլեզճիկյանը Վիեննայից՝ Վարուժանին: Խնդրում է  
Վիեննայի Մխիթարյանների մատենադարանին կանխիկ վճարով ուղար-  
կել մեկ օրինակ «Սարսուռներ»:

ԳԱԹ, ԴՎՖ, № 93 լր.:

<Փետրվարի 27-ից հետո>.— Վիեննայի Մխիթարյանների մա-  
տենադարանին է ուղարկում մեկ օրինակ «Սարսուռներ»:

ԳԱԹ, ԴՎՖ, շմշակված նյութեր:

<Նույն շրջանում>.— «Սարսուռները» նվեր է ուղարկում «Հանդես  
ամսօրյային»: Մակագրությունը՝ «Հանդես ամսօրյայի» խմբագրության  
հարգանքներով կը նվիրե հեղինակը:

Անդ:

Փետրվար.— «Բազմավեպը» տպագրում է ներսեհ Անդրիկյանի «Հայ  
հանդեսներ» տեսությունը: Այստեղ կարդում ենք. «Տաղնապ կա և պ.  
Դանիել Վարուժանի «Հայ բժիշկը» ոտանավորին մեջ... Բայց հոս ճշը-  
մարիտ ցավի արտահայտություն ալ կա, ու կը կարեկցինք... Պիտի  
փափագի, որ երիտասարդ բանաստեղծը հեռացներ քիչ մը փնտրված և  
ուժով պատկերները: Ես կը սիրեմ իր բանաստեղծությունը և եթե այս  
դիտողությունը կրնեմ, որովհետև ավելի կատարյալ կուզեմ տեսնել զա-  
նոնք» (թիվ 2, 90—91):

Նույն ամսին.— Շնորհավորական նամակ՝ Սահակ Հաճյանին, նրա  
քահանայական գործունեության հիսնամյա հորելյանի առիթով:

«Նամակաճի», 56:



<Մինչև մարտի 3>.— Նամակ՝ Աթանաս Տիրոջանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները» (նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 294:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 221:

Մարտի 3.— Աթանաս Տիրոջանը Վենետիկից՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Սարսուռները» նվիրելու համար, տեղեկացնում է, որ «Բազմավեպի» աշխատակիցներից «քաջախոհ գրչի մը» հանձնարարել է «երկարիկ» գրախոսական նվիրել այդ ժողովածուին:

Անդ:

Նույն օրը.— Նամակ՝ Վահան Թեքեյանին: «Շիրակում» հրատարակելու համար ուղարկում է «Կովի երթ», «Հայկականերուն օրոցքը» և «Արծիվներու կարավանը» բանաստեղծությունները: Իր ստեղծագործական ծրագրերի մասին գրում է. «Վերջերս սկսած եմ ամբողջովին Հայաստանի վրա հատոր մը պատրաստել» (խոսքը «Յեղին սիրտը» ժողովածուի մասին է):

«Նամականի», 57—58:

<Մինչև մարտի 4>.— Նամակ՝ Ստեփան Սարյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 260:

Մարտի 4.— Ստեփան Սարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Շնորհավորում է «Սարսուռների» հրատարակության առթիվ, ուղարկում է ամսաթոշակը:

Անդ:

Նույն օրը.— «Ռազմիկ» լրագիրը «Անահիտ» հանդեսին նվիրված տեսություն մեջ Վարուժանի «Առևանգիչը» բանաստեղծությունը համարում է «ազատ տաղաչափված ջղուտ կտոր մը» (թիվ 39):

<Մինչև մարտի 5>.— Նամակ՝ Հովակիմ Եզեկյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 143:

<Նույն ժամանակ>.— Նամակ՝ Ներսես Անդրիկյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները» (նամակը և նվիրած գիրքը չեն պահպանվել):

«Նամականի», 238:

Մարտի 5.— Ներսես Անդրիկյանը Վենետիկից՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Սարսուռները» նվեր ստանալու համար: Ծանոթացնում է այդ ժողովածուի մասին գրած իր հոդվածին:

Անդ:

Նույն օրը.— Հովակիմ Եզեկյանը ԱՄՆ-ից՝ Վարուժանին: Կարծիք է հայտնում Հայկական հարցի մասին: Առաջարկում է դրամական օգնություն:

ԳԱԹ, ԴՎՅ, № 143:

Նույն օրը.— Նամակ՝ Սիմոն Երեմյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները»: Օրինակը չի պահպանվել:

«Նամականի», 58—59:

<Մարտի 7—9>.— Նամակ՝ Ներսես Անդրիկյանին: Արծարծում է գրական-գեղագիտական խնդիրներ:

Անդ, 59—62:

<Մինչև մարտի 8>.— Նամակ՝ Գարեգին Տյուրկերյանին: Հետաքրքրվում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակով: Նրան և Հովսեփ Գարապաճաքյանին նվեր է ուղարկում «Սարսուռները»: Նամակը և գրքի նվիրած օրինակները չեն պահպանվել:

«Նամականի», 240—242:

Մարտի 8.— Գարեգին Տյուրկերյանը Վենետիկից՝ Վարուժանին: Իր



տպավորություններն է հաղորդում «Սարսուռներից»: Նամակին կից երկտող է գրում նաև Հովսեփ Գարապաճաքյանը:

Անդ:

<Մինչև մարտի 10>.— Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները»: Նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել:

«Նամակաճի», 242—243:

Մարտի 10.— Կարապետ Տեր-Սահակյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է իր կարծիքը «Սարսուռների» մասին. «Զեր ընտրած տիտղոսը իսկույն մտքին մեջ կը պատկերե լճակ մը, ուր ամեն հով դող ու մրմունջ կը դնե և ամեն անցնող առարկա՝ պատկեր մը ի հայելվոջ... Թեպետ լավ նկարներ կան տառապողներու կյանքեն, բայց ինձի ազելի սրտառուչ երևեցան այն քերթվածները, ուր երգված թշվառը Դուք եք»:

Անդ:

Մարտի 12.— Գրում է «Կռունկը» բանաստեղծությունը: Տպագրվել է «Մեր կռունկը» վերնագրով:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 64—66:

<Մինչև մարտի 15>.— Նամակ Մկրտիչ Պոտուրյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները»: Նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել:

ԳԱԹ, ԴՎՅ, № 251:

Մարտի 15.— Մկրտիչ Պոտուրյանը Ս. Զենոնից՝ Վարուժանին: Գրում է. «Նորեն շնորհակալություն աղամանդի շափ փոքրիկ գրքույկիդ համար, որ փարոսի մը ազդեցությունը պիտի ընե տնկված Կանի մեջ, և ամենքը, ընթերցողներ և լսողներ, Պելճիգայի այդ քաղաքը պիտի ուղղին աչքերնին Վարուժանը տեսնելու համար»:

Անդ:

<Մինչև մարտի 16>.— Նամակ՝ Յիլիպ Արփիարյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները»: Նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել:

ԳԱԹ, ԴՎՅ, № 123:

Մարտի 16.— Յիլիպ Արփիարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Սարսուռները» նվիրելու համար:

Անդ:

Նույն օրը.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին: Տեղեկություններ է հաղորդում իր և իրենց ընդհանուր ծանոթների մասին:

«Նամակաճի», 61—62:

Նույն օրը.— Ռափայել Պաղարճյանը Պաղուայից՝ Վարուժանին: Խորհուրդ է տալիս շատ պարապել:

ԳԱԹ, ԴՎՅ, № 221:

Նույն օրը.— Նամակ՝ Վիեննայի միխիթարյաններին: Հարցում է անում արդյոք ստացե՞լ են «Սարսուռները»:

ԳԱԹ, ԴՎՅ, լմշակված նյութեր:

<Մինչև մարտի 17>.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները»: Նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել:

«Նամակաճի», 243—244:

Մարտի 17.— Ստեփան Սարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Շնորհակալական նամակ «Սարսուռները» նվեր ստանալու համար:

Անդ:

Նույն օրը.— Նամակ՝ Արշակ Զոպանյանին: «Անահիտում» հրատարակելու համար ուղարկում է «Կարմիր հողը» բանաստեղծությունը:

Անդ, 62—64:

Մարտի 23.— Մտերմական նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին:

Անդ, 64—66:



Մարտի 26.— Նամակ՝ Ստեփան Սարգսյանին: Ներկայացնում է ամսահաշիվը:

Անդ, 66—68:

<Մինչև մարտի 27>.— Նամակ՝ Ալեքսիանոս Գազազյանին: Նըվեր է ուղարկում «Սարսուռները»: Նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել:

ԳԱԹ, ԳՎՅ, № 132:

Մարտի 27.— Ալեքսիանոս Գազազյանը վենետիկից՝ վարուժանին: Չնորհակալություն է հայտնում «Սարսուռները» իրեն նվիրելու համար:

Անդ:

Նույն օրը.— Սահակ Հաճյանը Բերայից (Վ. Պոլիս)՝ վարուժանին: Շնորհակալություն է հայտնում իր քահանայական գործունեության հոբելյանի առթիվ հղած շնորհավորանքի համար:

ԳԱԹ, ԳՎՅ, № 85 1ր.:

Մարտի 28.— Ռափայել Պազարճյանը Պաղուայից՝ վարուժանին: Խնդրում է «Հայ բժիշկը» և «Սարսուռների» մի քանի բանաստեղծությունների ֆրանսերեն թարգմանությունները, գերմաներենի վերածելու և հրատարակելու համար:

ԳԱԹ, ԳՎՅ, № 90 1ր.:

Մարտ.— «Բազմավեպը» ծանուցում է «Սարսուռների» լույս ընծայումը. «Վարուժան Դանիել, որուն մուտքը հայ գրականության մեջ այնքան համակրանոք ողջունվեցավ գրագիտաց կողմե, ի լույս կընծայե իր բանաստեղծությանց առաջին հատորիկը: «Սարսուռները» ղգացված են երիտասարդ հոգիե մը՝ Ապագայի անորոշությանց, բնության Խորհուրդներու և մարդկային Տառապանքի առջև: Գթության և զայրության մեղեդիները ծննդյան տարեթիվը կը կրեն իրենց մեջ՝ ներդաշնակելով ներկա սերունդին տրամադրությանց հետ...» (Թիվ 3, շապիկի Բ էջը):

<Նույն ամսին>.— «Սարսուռները» նվեր է ուղարկում Դերենիկ

Ճիզմեճյանին: Մակագրությունը՝ «Մտերիմներխ մտերիմին՝ իմ սիրելի Դերենիկին» (օրինակը չի պահպանվել):

Ճիզմեճյան, 20:

<Նույն ամսին>.— «Սարսուռները» նվեր է ուղարկում «Մշակին»: Մակագրությունը՝ «Մշակի» խմբագրության հարգանքներով կը նվիրե հեղինակը:

Ա. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, անձնամխելի ֆոնդ:

<Նույն ամսին>.— «Սարսուռները» նվիրում է Վաղինակ Բյուրատին: Մակագրությունը՝ «Սիրելի ընկերոջս՝ Տ.[յար] Վ. Բյուրատին»:

ԳԱԹ, ԳՎՅ, № 358:

<Նույն ամսին>.— «Սարսուռները» նվիրում է «Սուրհանդակի» (Վ. Պոլիս) խմբագրությանը: Մակագրությունը՝ «Սուրհանդակի խմբագրության, հարգանքներով՝ հեղինակը»:

Անդ:

<Մինչև ապրիլի 4>.— Նամակ Գառնիկ Գլըճյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները»: Նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել:

ԳԱԹ, ԳՎՅ, № 134:

Ապրիլի 4.— Գառնիկ Գլըճյանը վենետիկից՝ վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Սարսուռները» իրեն նվիրելու համար:

Անդ:

Ապրիլի 6.— Ռափայել Պազարճյանը Պաղուայից՝ վարուժանին: Գրում է իր գործունեության և ապագա ծրագրերի մասին:

ԳԱԹ, ԳՎՅ, № 222:

Ապրիլի 7.— Սիմոն Նրեմյանը վենետիկից՝ վարուժանին: Շնորհավորում է «Սարսուռների» հրատարակության առթիվ: Նվեր է ուղարկում



իր «Հայ միտք» աշխատությունը (Վենետիկ, 1906): Գրքի նվիրած օրինակը չի պահպանվել:

«Նամակներ», 244:

<Ապրիլի 8>.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին: Ի պատասխան նրա խնդրանքի, ուղարկում է «Հայ բժիշկը» բանաստեղծության ֆրանսերեն թարգմանությունը, տե՛ս մարտի 28-ի գրառումը: Հայտնում է, որ իր բանաստեղծություններից մի քանիսը ֆրանսերեն թարգմանությամբ «այս օրերս» լույս են տեսնելու Գենտի համալսարանի արմանախում: Հաղորդում է նաև, որ մտահոգված է իր «հայրենասիրական» գործերի հատորի հրատարակությամբ:

Անդ, 68—70:

Ապրիլի 13.— Նամակ՝ Հովակիմ Եղեկյանին (չի պահպանվել): Մերժում է իրեն նյութական օգնություն ցույց տալու առաջարկը (տե՛ս 1906-ի մարտի 5-ի գրառումը):

ԳԱԹ, ԳՎՖ, № 144:

Ապրիլի 15.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Շնորհավորում է Զատիկի առթիվ:

«Նամակներ», 70—71:

Նույն օրը.— Գրում է «Անի» բանաստեղծությունը: Տպագրվել է «Անիի ավերակներուն մեջ» վերնագրով:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 67—68:

<Ապրիլի 15—20>.— Նամակ՝ Արսեն Ղազիկյանին: Տեղյակ է պահում իր գրաբար ընթերցումներին:

«Նամակներ», 71:

Ապրիլի 18.— Գրում է «Ապրիլի» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 77—79:

Նույն օրը.— Ստեփան Սարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Փոխադարձաբար շնորհավորում է Զատիկը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 262:

<Մինչև ապրիլի 22>.— Նամակ՝ Գարեգին Տյուրկերյանին (չի պահպանվել): Հայտնում է, որ հայրենասիրական բանաստեղծությունները մտադիր է լույս ընծայել Եվրոպայի հայ ուսանողաց ընկերության միջոցով:

Այս մտադրությունը չի իրականացել:

ԳԱԹ, ԳՎՖ, № 130:

<Նույն օրերին>.— Նամակ՝ Մ. Մարմարյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռները»: Նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել:

ԳԱԹ, ԳՎՖ, № 183:

Ապրիլի 22.— Մ. Մարմարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Սարսուռները» նվեր ստանալու համար:

Անգ:

Նույն օրը.— Գարեգին Տյուրկերյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղյակ է պահում Մուրատ-Ռափայելյանում կատարվող հուշումներին: Նամակը գրված է տեսչությունից գաղտնի:

ԳԱԹ, ԳՎՖ, № 130:

<Ապրիլի 22—24>.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Ներկայացնում է ամսահաշիվը:

ԳԱԹ, ԳՎՖ, 67/19, 37—38:

Ապրիլի 25.— Գրում է «Դերենիկը» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 80—81:

<Մինչև ապրիլի 29>.— Նամակ՝ Ստեփան Սարյանին (չի պահպանվել): Ցանկություն է հայտնում արձակուրդներն անցկացնել Վենետիկում:

ԳԱԹ, ԳՎՖ, № 263:

Ապրիլի 29.— Ստեփան Սարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Գրում է, որ մտածում է ամռանը Վարուժանին հրավիրել հանգստանալու Ազոլոյում:

ԳԱԹ, ԳՎՖ, № 263:



Ապրիլի 30.— Հովակիմ Եղեկյանը ԱՄՆ-ից՝ Վարուժանին: Առաջարկում է իր ծառայությունները «Սարսուռները» Ամերիկայում տարածելու գործում:

ԳԱԹ, ԴՎՅ, № 144:

Ապրիլի 30-ից հետո.— Հովակիմ Եղեկյանին է ուղարկում 30 օրինակ «Սարսուռներ»՝ Ամերիկայում վաճառելու համար:

ԳԱԹ, ԴՎՅ, № 145:

<Մինչև մայիսի 3>.— Նամակ՝ Ս. Տեր-Ջաքարյանին (չի պահպանվել): Ուղարկում է «Գեղունի» հանդեսը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 293:

Մայիսի 3.— Ս. Տեր-Ջաքարյանը Բրյուսելից՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Գեղունին» իրեն ուղարկելու համար:

Անդ:

<Մինչև մայիսի 5>.— Գնում է Անվերս ու Բրյուսել, ծանոթանում Ռուբենսի, Իորդանսի, Վան Գեյկի կտավներին ու ճարտարապետական կոթողներին:

«Նամականի», 72:

Մայիսի 5.— Նամակ՝ Ռաֆայել Պազարճյանին: Հաղորդում է իր տպավորությունները Անվերսից ու Բրյուսելից:

Անդ:

<Մինչև մայիսի 8>.— Ստեփան Սարյանը Վարուժանին հրավիրում է ամռանը հանգստանալ Ազոլոյում:

Անդ, 72—73:

Մայիսի 8.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Հայտնում է, որ համաձայն է ամռանը հանգստանալ Ազոլոյում:

Անդ:

<Մինչև մայիսի 10>.— «Բազմավեպում» տպագրվում է Ներսէ՛ Անդրիկյանի «Դանիել Վարուժանի բանաստեղծությունը» հոդվածը՝

նվիրված «Սարսուռներին»: «Տխրությունը,— գրում է նա,— նորաձևության տրամադրություն մը չէ իր քով. սկզբունք մըն է հարատև, ճշմարիտ, անկեղծ ու կարեկցող... Ճնշված տխուր մտածությանց բեռան տակ, ինչ որ դեռ գեղեցիկ կա Վարուժանի բանաստեղծության մեջ՝ իր կորույն է, արիությունը, հույսը, խրոխտ շեշտը: Իրականությունն հաղթված է, բայց ոչ ընկճված և ճիգ կընե, կը բողբոխի ու կը կովի, երբ նույնիսկ բոլոր հոսանքն իրեն հակառակ կընթանա...» (թիվ 5, 221—226):

Մայիսի 10.— Նամակ՝ Ներսէ Անդրիկյանին: Շնորհակալություն է հայտնում «Սարսուռներ» մասին գրած հոդվածի համար:

«Նամականի» 73—74:

<Մայիսի 10—15>.— Նամակ՝ Վահան Թեքեյանին: Հետաքրքրվում է «Շիրակին» ուղարկած իր բանաստեղծությունների ճակատագրով:

Տե՛ս մարտի 3-ի գրասույր:

Անդ, 74:

Մայիսի 13.— Գրում է «Հորս բանտը» բանաստեղծությունը: Տպագրվել է «Հորս բանտին մեջ» վերնագրով:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 82—84:

Մայիսի 15.— Ստեփան Սարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Վերջնական համաձայնություն է տալիս՝ ամառը Ազոլոյում հանգստանալու մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, №, № 264:

<Մինչև մայիսի 19>.— Երկու նամակ՝ Գարեգին Տյուրկերյանին (չեն պահպանվել): Հայտնում է շուտով Վենետիկում հանդիպելու հնարավորության մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 131:

Մայիսի 19.— Գարեգին Տյուրկերյանը Վենետիկից՝ Վարուժանին: Պատմում է իր գործերի և Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի վիճակի մասին:

Անդ:



Մայիսի 29.— Ռափայել Պաղարճյանը Ալպեթթոյից (Իտալիա)՝ Վարուժանին: Հրավիրում է մի քանի օրով հանգստանալ իր մոտ:

ԳԱԹ, ԴՎՅ, Մ 224:

<Մայիս>.— «Անահիտում» տպագրվում է «Կարմիր հողը» բանաստեղծությունը (թիվ 3—5, 89):

<Նույն ամսին>.— Ֆրանսերեն նամակ՝ բելգիացի մի ծանոթի: Հայտնում է, որ չի կարող ինչ-որ ինստիտուտում իտալերեն դասընթաց վարել:

ՊԲԶ, 1977, Մ 4, 227:

<Նույն ամսին>.— Ֆրանսերեն նամակ՝ անհայտ ընկերության: Հայտնում է, որ չի կարող անդամակցել ընկերությանը:

Անդ:

Հունիսի 1.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, Մ 224:

<Հունիսի սկիզբ>.— Մի քանի օրով մեկնում է հոլանդական Թեր-նեզեն գյուղը՝ հանգստանալու:

«Նամականի», 74—75:

Հունիսի 4.— Նամակ Թերնեզեն գյուղից՝ Գրիգոր Զպուգքյարյանին: Հայտնում է տասն օրից հետո Վենետիկ մեկնելու հնարավորության մասին:

Անդ:

Հունիսի 5.— Ռափայել Պաղարճյանը Ալպեթթոյից՝ Վարուժանին: Կրկին հրավիրում է հանգստանալ իր մոտ:

ԳԱԹ, ԴՎՅ, Մ 224ա:

<Մինչև հունիսի 7>.— Հոլանդիայից վերադառնում է Գենտ:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր Մ 13, 86:

Հունիսի 7.— Գրում է «Լվացարարուհին» բանաստեղծությունը:

Անդ, 85—86:

Նույն օրը.— Գենտի համալսարանի փիլիսոփայության և բանասիրության ֆակուլտետի դեկան Հանրի Պիոենը ստորագրում է մի վկայական, որով հավաստվում է, թե Դ. Զպուգքյարյանը մեծ ջանասիրությամբ է հետևել 1905—1906 ազգայնապաշտպանական տարվա դասընթացներին:

ԳԱԹ, ԴՎՅ, Մ 115 և:

<Հունիսի 8>.— Նամակ՝ Սալվադոր Ռոկ դե Պլինոյին: Խնդրում է քաղաքական և հասարակական գիտությունների դասընթացի առաջին կուրսի տետրերը:

ՊԲԶ, 1977, Մ 4, 228:

Հունիսի 9.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղեկություններ է տալիս իր գիտական ու թարգմանական գործերի մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, Մ 245:

Նույն օրը.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Հայտնում է, որ 2—3 օրից մեկնելու է Ազրոն:

«Նամականի», 75:

Նույն օրը.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին: Հայտնում է, որ հունիսի 12-ի առավոտյան կամ երեկոյան կլինի նրա մոտ: Գրում է նաև, որ կարճ ժամանակով ցանկանում է մնալ Միլանում:

Ռափայել Պաղարճյանին այցելելու կամ Միլանում մնալու մասին տեղեկություններ չկան:

Անդ, 76:

<Նույն օրը>.— Նամակ՝ Արշակ Զոպանյանին: Հայտնում է, որ 1—2 օրից մեկնելու է Վենետիկ:

Անդ:

<Մինչև հունիսի 10>.— Ֆրանսերեն նամակ՝ Պոլ Ֆրեդերիկին:



Շնորհակալություն է հայտնում նրա կարդացած դասախոսությունների համար:

ՊԲԶ, 1977, № 4, 228:

Հունիսի 10.— Պոլ Ֆրեդերիկը՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում իր հասցեին ասված երախտագիտական խոսքերի համար:

Անդ, 228—229:

<Նույն օրը>.— Դուրս է գալիս Գինտից Իտալիա մեկնելու համար:

«Նամականի», 76:

<Հունիսի երկրորդ տասնօրյակ>.— Իտալիայի ճանապարհին կանգ է առնում Ժնևում: Հանդիպում է Միամանթոյին: Այդ մասին Վարուժանը գրել է. «Յոթը տարի առաջ էր, երբ Ժնև կերթայի... Առաջին անգամ ուղեցի Յարճանյանը տեսնել: Գտա զինքը կեմանի գեղածիծաղ փեբրուն վրա: Յարճանյան ազատ ու անկախ երիտասարդի մը տպավորությունը ըրավ վրաս... Արիանայի հոյակապ թանգարանին բարձունքն էինք: Հոն, հորիզոնին վրա, վեր կը կարկառվեր Սպիտակ լեռը: Քոպս էր Յարճանյան՝ նույն գեղակարկառ հասակով: Որչա՛փ այդ քերթողը նման էր այդ լեռան: Երկունքն ալ սպիտակ, աստեղնահույս: Երկունքն ալ խորունկ ու մրրկոտ սիրտերով»:

Գրական Առուիսներ, Զ., Առոմ Յարճանյան (Միամանթո), 23—24:

<Հունիսի երկրորդ տասնօրյակից>.— Ամառային արձակուրդներն անց է կացնում Ազոլոյում: Վարուժանի հետ հանգստանալու է գալիս նաև Գերենիկ Ճիզմեճյանը: Վերջինս իր հուշերում պատմում է. «Ազոլոյի մեր արձակուրդի օրերը կանցնեինք կարդալով: Կեսօրվան ճաշեն ետք ժամ մը թուղթ կամ թավու կը խաղայինք: Ապա կերթայինք պտույտի հարդե լայն գլխարկներ դրած...»:

Ճիզմեճյան, 33:

Հունիսի 21.— Արշակ Զոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտնում է, որ «Սարսուռների» մասին հողված է գրել, որը հրատարակվելու է օգոստոսի վերջերին լույս տեսնող «Անահիտում»:

«Նամականի», 245:

<Միևչև հունիսի 28>.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 225:

Հունիսի 28.— Ռափայել Պազարճյանը Ալպեթթոյից՝ Վարուժանին: Հույս է հայտնում, որ հուլիսի սկզբին կզա Վենետիկ և կհանդիպի նրան: Անդ:

Հունիս.— «Բազմավիպում» տպագրվում է «Մամուս աղոթքը» բանաստեղծությունը (թիվ 6, 274):

Նույն ամսին.— «Շիրակում» տպագրվում է «Կովի երթ» բանաստեղծությունը (թիվ 1, 24—26):

Հուլիս.— «Շիրակում» տպագրվում են «Հայկական օրոցքը» (վերահրատարակվել է «Հայկականերուն օրոհներ» վերնագրով) և «Արծիվներու կարավանը» բանաստեղծությունները (թիվ 2, 98—100):

<Նույն ամսին>.— Ազոլոյից նամակ՝ Էդվարդ Պիոնին: Հայտնում է, որ աշխատում է հայկական ջարդերը նկարագրող մի վիպերգի վրա, որը մտադրի է ֆրանսերեն հրատարակել:

Նոսքը «Ջարդը (1895—1896)» բանաստեղծության մասին է: Մի շարք վկայություններ նույնպես հաստատում են, որ «Ջարդը» հեղինակվել է Ազոլոյում հանգստանալու ժամանակ: Ավելի քան մեկ տարի հետո Վարուժանին գրած Նշան Տեր-Ստեփանյանի նամակից երևում է, որ հեղինակը իրեն ընթերցել է այս ստեղծագործությունը. «Միշտ կը հիշեմ և բնավ պիտի չմոռնամ այն օրը, յորում առաջին անգամը ըլլալով կարդացիր ինձ «Ջարդը» առանձին սենյակիդ մեջ և ըսիր ինձ. «Չլաս»... Տարի մըն է զայն կրկին և կրկին կարդալու պապակը կզգամ...»: Միմոն Երեմյանը վերհիշում է. «Ան զպրոցականի հատուկ տեսրակի մը մեջ ամփոփած ջարդերուն քերթվածը ինձի կը հանձներ և կը խնդրեր դիտողություններս: Ես միայն սքանչացումս կը հայտնեի և նույն ատեն այդ գրությունը կը հանձնեի վարժարանիս հյուր Սմբատ Բյուրատին և կը խնդրեի, որ ինքն ալ հաղորդակից ըլլա «Ջարդի» գրական նորասքանչ հայտնության: Ան շհայտնեց իր սքանչացումը, ալլ քննադատեց զայն...»: Վարուժանը «Ջարդը, կարդացել է նաև Գերենիկ Ճիզմեճյանին:

ՊԲԶ, 1977, № 4, 229, «Բազմավիպ», 1931, թիվ 11, 492, թիվ 9—10, 443, «Նամականի», 253, Ճիզմեճյան, 19—20:



<Ամառ>.— Ազոլոյում «գրական խոսակցութեան» ժամանակ ներսե՛հ Անդրիկյանը Վարուժանի ուշադրութեանն է հրավիրում Զաքարիա Սարկավազի պատմութեան մի դրվագի վրա, որը բանաստեղծը խոստանում է «հավերժացնել»:

«Նամակների», 246—247:

<Նույն շրջանում>.— Վենետիկից նամակ՝ Հովակիմ Եզեկյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 145:

<Նույն շրջանում>.— Ազոլոյում աշխատակցում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի աշակերտութեան «Հրայրք» ձեռագիր պարբերականին («գլուղին ավանդական լրագիրք»), որի համար գրում է «Գերմանները և Ուլֆիա» հոդվածը: Այս հոդվածը տրվում է գրախոսութեան և հայտնվում է հետևյալ կարծիքը. «Պ. Վարուժանի այս գրվածը սիրով կարդացինք, պատմական լուրջ ուսումնասիրութեանն մ՛ է, բայց շատ ավելի ուրախ պիտի ըլլայինք, եթե ատոր տված ժամանակը ոտանավորի հատկացվեր, որ մեր սրտին հետ կը խոսի, քանի որ ինքը մեր վշտի, թշվառութեան և բռնութեան դեմ բողոքող բանաստեղծն է»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 396:

<Սգոստոսի երոսդ տասնօրյակ>.— «Անահիտում» տպագրվում է Արշակ Չոպանյանի «Գրական քրոնիկը», որտեղ գրախոսված է Վարուժանի «Սարսուռները» (թիվ 6—7, 107—113): «Հատորիկը,— գրում է քննադատը,— այնպես ինչպես կուգա ներկայանալ հասարակութեան, ինքնին ազվոր ամբողջություն մըն է: Դեռ անհավասար իր արտահայտութեան մեջ, պատանեկան անփորձութենեն ու հապճեպեն դեռ ոչ բուլորովին ազատագրված, Վարուժանի քնարը ամենամեծ հատկութեանն ունի ինքնահատուկ հնչյունով մը օժտված ըլլալու, ու հոն, ուր ուժեղ կը թրթռա՝ ուժը կը ձգտի դեպ ի վե՛հ բարձունքներ ու մերթ կը հասնի շքեղ թռիչով մը... Իր սկզբնավորութեանը մին է ամենեն շքեղներեն, որ Հայոց մեջ հայտնված ըլլան»:

Սգոստոսի 24.— Նամակ՝ Աթանաս Տիրոյանին (չի պահպանվել): Կարծիք է հայտնում «Բազմավեպի» վերջին համարների մասին, ուղարկում է մի բանաստեղծություն:

ԳԱԹ, ԴՎՅ, № 295:

Սգոստոսի 25—30.— Ավարտում է «Զարդը (1895—1896)» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 87—100, № 22, 1—14, «Անանիտ», 1907, թիվ 10—12, 181:

Սգոստոսի 30.— Աթանաս Տիրոյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղյակ է պահում «Բազմավեպի» խմբագրական կազմում կատարված փոփոխություններին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 295:

Սեպտեմբերի 6.— Ազոլոյից նամակ՝ Արշակ Չոպանյանին: Շնորհակալութեամբ է հայտնում «Սարսուռների» մասին գրած հոդվածի համար. խոստանում է «Զարդը» առանձին գրքույկով շնորատարակվելու դեպքում տպագրութեան հանձնել «Անահիտին»: Ուղարկում է «Լվացարարուհին» բանաստեղծությունը:

«Նամակների», 77:

Սեպտեմբերի 9.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտնում է, որ «Լվացարարուհին» բանաստեղծությունը ընդունել է տպագրութեան: Խոստանում է «Զարդը» «Անահիտում» զետեղելուց հետո հրատարակել առանձին գրքույկով:

Անդ, 245—246:

Սեպտեմբերի 10.— Գենտի համալսարանի ռեկտորը ստորագրում է № 39087 վկայագիրք, որով Դանիել Զպուզբյարյանը ճանաչվում է 1906—1907 ակադեմիական տարվա ուսանող:

ԳԱԹ, ԴՎՅ, № 104 լր.:

<Սեպտեմբերի երկրորդ կես>.— Մուրատ-Ռափայելյան վարժարանի տեսուչ Ստեփան Սարյանի կարգադրությամբ Վարուժանն ու Դերենիկ Ճիզմեճյանը արձակուրդները կիսատ են թողնում և հեռանում Ազոլոյից: Այդ առթիվ Գ. Ճիզմեճյանը վկայում է. «Դպրոցին մեջ անպակաս էին խլրտումները Հ. Ստեփան Սարյանի դեմ: Մեր ցանած սերմերը կը հասունային: Հ. Սարյան, երբ տեսավ, որ կը ծանրանա կացությունը, կարգադրեց, որ մեկնինք, հակառակ որ համալսարանները չէին



բացված»։ Մկրտիչ Պոտուրյանը իմանալով Վարուժանի անակնկալ մեկնելու մասին, նրան կշտամբել է. «Պիրտեն պիրտե մեզմե հեռացար... Չէի՞ր կրնալ կենալ Վենետիկ, մինչև որ շրջանդ (ուսումնական տարին— Ա. Շ.) սկսեր, որով կրնայիր ստեպ Ս. Ղազար հաճախել»։

ԳԱԹ, ԴՎՅ, № 252, Ճիզմենյան, 33։

<Նույն շրջանում>.— Գենտ մեկնելուց առաջ կարճ ժամանակով լինում է Վենետիկում։ Գրում է «Նեղզված միջատը» բանաստեղծությունը։

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 213—218։

Սեպտեմբեր.— «Բազմավեպը» տպագրում է «Հորս բանտը» բանաստեղծությունը (Թիվ 9, 415)։ Վերահրատարակել է «Հորս բանտին մեջ» վերնագրով։

<Նույն ամսին>.— Վարուժանի ընկերները «Ջարդը» ուղարկում են Եվրոպայի ուսանողաց միությունը՝ առանձին գրքույկով տպագրելու համար։

«Նամակների», 106—107։

Նույն ամսին.— «Անահիտը» տպագրում է «Եվացարարուհին» բանաստեղծությունը (Թիվ 8—9, 176)։

<Հոկտեմբերի սկիզբ>.— Հասնում է Գենտ, բնակարան է վարձում Բելգրադ փողոցի № 63 տանը։

ԳԱԹ, ԴՎՅ, № 101։

<Մինչև հոկտեմբերի 11>.— Նամակ՝ Քերոբե Չրաբյանին (չի պահպանվել)։

ԳԱԹ, ԴՎՅ, № 218ա։

Հոկտեմբերի 11.— Քերոբե Չրաբյանը Վենետիկից՝ Վարուժանին։ Հաղորդում է մաղթանքներ։

Անդ

Հոկտեմբերի 16.— Ներսեհ Անդրիկյանը Ս. Ղազարից՝ Վարուժանին։

Ուղարկում է Զաքարիա Սարկավազի «Ժամանակագրության» մի հատվածը՝ «ոտանավորի մը մեջ» «հավերժացնելու» համար։

«Նամակների», 246—247։

Հոկտեմբերի 20.— Գրում է «Առաջին մեղքը» բանաստեղծությունը։

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 233—236։

<Մինչև հոկտեմբերի 24>.— Նամակ՝ Ներսեհ Անդրիկյանին (չի պահպանվել)։ Խնդրում է գիրք։

ԳԱԹ, ԴՎՅ, № 252։

Հոկտեմբերի 24.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին։ Իր զգացումներն է արտահայտում Ազոլոյից Վարուժանի «փախստյան» և առանց հրաժեշտի հեռանալու առթիվ։ Կցված է նաև Հովսեփ Մարտիրոսյանի նամակը։

ԳԱԹ, ԴՎՅ, № 252։

Հոկտեմբեր.— «Բազմավեպը» տպագրում է «Ե» ստորագրությամբ «Եվրոպայի հայ գրականությունը» վերնագրով հոդված։ Այստեղ Վարուժանի «Կովի երթ» բանաստեղծությունը համարվում է արդարության զինվորի «վսեմ քայլերգ», որի մեջ «հավասար քայլով կընթանան Վսեմն ա Գեղեցիկը, Զայրույթն ու Սերը»։ Նշվում է նաև «Կարմիր հողը» (Թիվ 10, 451—452)։

<Մինչև նոյեմբերի 3>.— Ռափայել Պազարճյանը՝ Վարուժանին (չի պահպանվել)։ Հայտնում է, որ մտադիր է «գրախոսական նվիրել «Սարսուռներին»։

«Նամակների», 78։

Նոյեմբերի 3.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին։ Ցանկություն է հայտնում նախապես ծանոթանալ «Սարսուռների» մասին նրա գրախոսականին։

Անդ

Նույն օրը.— Նամակ՝ Հովակիմ Եղեկյանին (չի պահպանվել)։ Հայտնում է, որ սկսել է համալսարանական ու գրական պարապմունքները։

ԳԱԹ, ԴՎՅ, № 145։



<Մինչև նոյեմբերի 9>.— Դիմում է Գենտի համալսարանի ուսուցիչ խնդրելով ազատել «ուսանողական մուտքի» քննությունից՝ թողնելով ազատ ուսանող: Երկրորդ դիմումով խնդրում է ազատել ուսման վարձից:

Երկու խնդրանքն էլ մերժվել է:

«Նամականի», 79—80:

Նոյեմբերի 9.— Գրանցվում է Գենտի համալսարանի 1906—1907 ակադեմիական տարվա ուսանող՝ «Քաղաքական գիտությունների թեկնածություն» բաժնում:

ԳԱԹ, ԳՎՖ, № 105 լր. և շմշակված նյութեր, համալսարանի արխիվի մատյանի № 39087 արձանագրությունից:

Նույն օրը.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Ներկայացնում է ուսանողական իր վիճակը, խնդրում է ուսման վարձը:

«Նամականի», 79—81:

Նոյեմբերի 10.— Բեզլիայի հանրային ու ներքին գործերի մինիստրությունը թույլատրում է Դանիել Չպուգքյարյանին մասնակցելու Գենտի համալսարանի «Քաղաքական գիտությունների թեկնածություն» բաժնի քննություններին՝ ցերեկային բաժնի ուսանող համարվելու համար:

ԳԱԹ, ԳՎՖ, № 117 լր.:

<Մինչև նոյեմբերի 20>.— Մուրատ-Ռափայելյան վարժարանի տեսչությունը ուղարկում է Վարուժանի ամսաթոշակը:

«Նամականի», 81:

Նոյեմբերի 20.— Շնորհակալական նամակ՝ Ստեփան Սարյանին:

Անդ:

Նույն օրը.— Ստեփան Սարյանը վենետիկից՝ վարուժանին: Հորդորում է ուսման վարձի պատճառով կիսատ չթողնել ուսումնառությունը, խոստանում է կարգավորել այդ հարցը:

Անդ, 247—248:

<Նոյեմբերի 23—25>.— Նամակ՝ Ստեփան Սարյանին: Խնդրում է ուղարկել ուսման վարձի գոնե մի մասը՝ ուսումնառությունը շարունակել կարողանալու համար:

Անդ, 81—83:

Նոյեմբերի 27.— Գերենիկ Ճիզմեճյանը Բոլոնիայից՝ վարուժանին: Դժգոհում է իր ուսանողական գործերից ու անձնական ճակատագրից, խոսում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակի մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 180:

Նոյեմբերի 30.— Գրում է «Մարած օճախը» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 101—106:

Դեկտեմբերի 2.— Նշան Տեր-Ստեփանյանը վենետիկից՝ վարուժանին: Տեղեկություններ է հաղորդում Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակի մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 314:

Նույն օրը.— Արշավիր Եղիազարյանը վենետիկից՝ վարուժանին: Տեղեկություններ է տալիս Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակի մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 149:

Դեկտեմբերի 3.— Ֆենտի համալսարանի վարչությունը Դանիել Չպուգքյարյանին թույլատրում է մասնակցել քննաշրջանին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 116 լր.:

Դեկտեմբերի 11.— Մուրատ-Ռափայելյան վարժարանի առժամյա տեսուչ է նշանակվում Արիստակես Քասզանտիլյանը:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 571:

Դեկտեմբերի 16.— Ստեփան Սարյանին հեռացնում են Մուրատ-Ռափայելյան վարժարանի տեսուչի պաշտոնից:

Անդ:



Դեկտեմբերի 17.— Նամակ՝ Ստեփան Սարգսնին: Խնդրում է ամսաթռչակը:

«Նամակահի», 83:

<Դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին՝ Աթանաս Տիրոյանի հասցեով: Առաջարկում է իր ուղղումները Մ. Պոտուրյանի հրատարակած Կոստանդին Երզնկացու և Գրիգորիս Աղթամարցու բնագրերում:

ԳԱԹ, ԴՎՅ, № 250:

<Նույն շրջանում>.— Աթանաս Տիրոյանը Վենետիկից՝ Վարուժանին: Ուղարկում է դեկտեմբերի ամսաթռչակը՝ փոխ առնելով Արիստակես Քասգանտիլյանից:

ԳԱԹ, ԴՎՅ, № 291:

<Մինչև դեկտեմբերի 20>.— Ռափայել Պաղարճյանը Վարուժանին է ուղարկում «Սարսուռների» մասին գրած հոդվածը՝ ծանոթանալու նպատակով:

«Նամակահի», 83—84:

Դեկտեմբերի 20.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին: Հայտնում է, որ Բելգիայի հայ ուսանողական միություն կազմելու, «հայոց վրա կոնֆերանս տալու» պատրաստություններով ղրաղված լինելու պատճառով ուշացնում է «Սարսուռների» առթիվ նրա գրած հոդվածի պատասխանը:

Այս միության և «կոնֆերանսի» մասին ոչինչ հայտնի չէ:

Անդ:

<Դեկտեմբերի երրորդ տասնօրյակ>.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: Ընդունում է նրա առաջարկած դիտողությունները Կոստանդին Երզնկացու և Գրիգորիս Աղթամարցու բնագրերի վերաբերյալ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 250:

<Մինչև դեկտեմբերի 21>.— Չորս նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Չեն պահանջվել: Ուղարկել է տարբեր հասցեներով:

«Նամակահի», 84—85:

Դեկտեմբերի 21.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին:

Անդ:

Դեկտեմբերի 23.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: «Անահիտում» ապագրելու համար ուղարկում է «Առաջին մեղքը» բանաստեղծությունը:

Անդ, 86:

Նույն օրը.— «Բազմավեպին» է ուղարկում «Մարած օճախը» բանաստեղծությունը:

Անդ:

Նույն օրը.— Քերոբե Չրաքյանը Վենետիկից՝ Վարուժանին: Ստեփան Սարգսնի հանձնարարությամբ ուղարկում է ամսաթռչակը, հաղորդում է մաղթանքներ նոր տարվա ու ծննդյան տոների առթիվ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 218ա:

<Դեկտեմբերի 25—26>.— Երկտող՝ Ստեփան Սարգսնին: Հույս է հայտնում, որ շեն ուշացնի նյութական օգնությունը:

«Նամակահի», 86:

<Նույն օրերին>.— Նամակ Ռափայել Պաղարճյանին: Պատասխանում է «Սարսուռների» առթիվ գրած ու իրեն ուղարկած գրախոսությունը:

ԲԵԶ, 1909, № 3, 146—154:

Դեկտեմբերի 28.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին: Խնդրում է ուղարկել ամսաթռչակն ու ուսման վարձը:

«Նամակահի», 89—90:

Նույն օրը.— Հովակիմ Եղեկյանը ԱՄՆ-ից՝ Վարուժանին: Հավաստում է իր ջերմ վերաբերմունքը նրա հանդեպ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 145:

<Մինչև դեկտեմբերի 30>.— Բացիկ՝ Աթանաս Տիրոյանին (չի պահանջվել): Շնորհավորում է նոր տարվա առթիվ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 291:



Դեկտեմբերի 30.— Արիստակես Քասգանտիլյանը Վենետիկից՝ Վարուժանին: Ուղարկում է ամսաթոշակը, տեղեկություններ է հայտնում Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակի մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 324:

— «Շիրակից» արտատպվում է «Կովի երթ» բանաստեղծությունը: Հրատարակչի ծանոթության մեջ ասվում է, թե նախագես զետեղվելու էր Ռափայել Պատկանյանի «Արաքսի արտասունքը», բայց քանի որ այդ ստեղծագործությունը «վաղուց է ծանոթ հայ ժողովուրդին, այս պատճառով դուրս ձգվեց: «Կովի երթը» շնչում է գյուցադնականություն և զայրույթ»:

Աշխարհի ամենագեղեցիկ գիրքը, հավաքածուք ի Եվրոպայի և Ասիայի ամենահայտնի մատենագիրների ամենալավ գործերի: Կազմեց՝ Արմենակ Արամյանց, Ալեքսանդրապոլ, 1906, 227—231:

1907

Հունվարի 2.— Վահրամ Փափաղյանը Վենետիկից՝ Վարուժանին: Խնդրում է մատենագիտական տեղեկություններ ու քննադատականներ Շեքսպիրի «Համլետի» և Թատերական արվեստի մասին:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 320:

<Մինչև հունվարի 3>.— Նամակ՝ Գոզմոս Գոզիկյանին (չի պահպանվել): Տեղեկություններ է խնդրում Մուրատ-Ռափայելյան վարժարանում տիրող վիճակի մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 137:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Նշան Տեր-Ստեփանյանին (չի պահպանվել): Խորհուրդներ է տալիս Մուրատ-Ռափայելյան վարժարանում աշակերտների բարձրացրած խոռվության մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 314:

Հունվարի 3.— Նշան Տեր-Ստեփանյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղյակ է պահում Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակին, հե-

տաքրքրվում է «Զարդով»: Գրում է. «Զարդը» կարոտցա, կրկին ու կրկին կարդալ կուզեմ: Դեռևս հրատարակել չտվի՞ր»:

Անդ:

Նույն օրը.— Գոզմոս Գոզիկյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղեկություններ է տալիս Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակի մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 137:

<Մինչև հունվարի 4>.— Նամակ՝ Մկրտիչ Պարտիզյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է Մուրատ-Ռափայելյան վարժարանով:

ԳԱԹ, ԳՎՖ, № 240:

Հունվարի 4.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին: Խնդրում է շտապ ուղարկել ամսաթոշակը:

«Նամականի», 88—89:

Նույն օրը.— Նամակ՝ Նշան Տեր-Ստեփանյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է Մուրատ-Ռափայելյան վարժարանում տիրող վիճակով:

ԳԱԹ, ԳՎՖ, № 315:

Նույն օրը.— Մկրտիչ Պարտիզյանը Վենետիկից՝ Վարուժանին: Տեղեկություններ է տալիս Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակի մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 240:

Հունվարի 5.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին:

«Նամականի», 89—90:

<Հունվարի 6—8>.— Նամակ՝ Աթանաս Տիրոյանին: Խնդրում է ուղարկել հունվար ամսվա կրթաթոշակը և ուսման վարձը «առանց որոշ 2—3 ամիս վերջը ինձ անկարելի կըլլա դասերս շարունակել»:

Անդ, 90—92:



<Հունվարի 10—12>.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին: Հիշատակում է «Սարսուռներին» նվիրած նրա հոդվածը:

Անդ, 92—93:

Հունվարի 15.— Նամակ՝ Հովակիմ Եղեկյանին (չի պահպանվել): Հայտնում է «Զարդը» առանձին գրքույկով հրատարակելու մտադրությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 146:

Հունվարի 16.— Գենտի համալսարանը Դ. Զպուգբարյանից պահանջում է անհապաղ վճարել ուսման վարձը: Տալիս է 6 օր ժամանակ:

«Նամակներ», 93:

Նույն օրը.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին: Խնդրում է շտապ ուղարկել հունվարի ամսաթղթակն ու ուսման վարձը:

Անդ, 93—94:

Հունվարի 17.— Արիստակես Քասգանտիլյանը վեներտիկից՝ վարուժանին: Ուղարկում է հունվարի ամսաթղթակը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 325:

Հունվարի 20.— Արիստակես Քասգանտիլյանը վեներտիկից՝ վարուժանին: Ուղարկում է ուսման վարձի մի մասը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 326:

<Հունվարի 22—23>.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին: Շնորհակալություն է հայտնում գրամ ուղարկելու համար և հավաստիացնում. «Միակ նպատակս է հայրենիքիս օգտակար դառնալ. ահա դադափարականը, որ զիս կոզկորե և կը կանգնե. այդ միայն իրմով կապրիմ, իրմով եմ հաղթական...»:

«Նամակներ», 94—97:

Հունվարի 27.— Գրում է «Հայրենիքի ոգին» բանաստեղծությունը: Նախապես վերնագրել է՝ «Յեղին ոգին», «Յեղական ոգին»:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 107—111:

<Հունվար>.— Նամակ՝ Երանոս Տեր-Աստվածատրյանին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 67/33ա, 65:

Փետրվարի 4.— Նամակ՝ Գոգմոս Գոգիկյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակով և իր ընկերներով:

ԳԱԹ, ԴՎՅ, № 133:

Փետրվարի 6.— Արիստակես Քասգանտիլյանը վեներտիկից՝ վարուժանին: Հայտնում է, որ ուղարկում է փետրվարի ամսաթղթակը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 327:

Փետրվարի 13.— Նամակ՝ Նշան Տեր-Ստեփանյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակով:

ԳԱԹ, ԴՎՅ, № 316:

<Մինչև փետրվարի 16>.— Նամակ՝ Ներսես Անդրեկյանին (չի պահպանվել): Կարծիք է հայտնում նրա «Հանդած եկեղեցին» աշխատության վերաբերյալ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 119:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին (չի պահպանվել): Կարծիք է հայտնում նրա «Հայ կայսերք» աշխատության մասին:

«Նամակներ», 248—249:

Փետրվարի 16.— Կարապետ Տեր-Սահակյանը վեներտիկից՝ վարուժանին: Խոսում է «Մարած օճախ» բանաստեղծության տպագրության հանգամանքների մասին:

Անդ:

Նույն օրը.— Ներսես Անդրեկյանը վեներտիկից՝ վարուժանին: Տեղյակ է պահում իր «Հանդած եկեղեցի» աշխատության հրատարակության ընթացքին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 119:



Նույն օրը.— Գողմոս Գողիկյանը Թուրինից՝ վարուժանին: Հայտնում է Մուրատ-Ռափայելյան վարժարանից իրեն հեռացնելու մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 138:

Փետրվարի 19.— Գենտի համալսարանին ուսման վարձի դիմաց մուծում է 50 ֆրանկ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 108 ԼՐ. (ստացական):

Փետրվարի 20.— Գրում է «Օձը (խորհրդանկար)» բանաստեղծությունը: Տպագրել է առանց ենթավերնագրի:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 112—116:

Փետրվարի 23.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին: Հայտնում է, որ իր համալսարանական վիճակը լավ է և «իբրև ուսանող ֆաղափական և հասարակական գիտությունց՝ օրինավոր ընթացք կընեմ»:

«Նամականի», 97:

Փետրվարի 27.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Գրում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի և իր վիճակի մասին:

Անդ, 98—90:

Փետրվար.— «Բաղմավեպում» տպագրվում է «Մարած օճախը» բանաստեղծությունը (թիվ 2, 86—87):

<Նույն ամսին>.— «Անահիտում» տպագրվում է «Առաջին մեղքը» բանաստեղծությունը (թիվ 1—2, 22—23):

<Մինչև մարտի 2>.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 91 ԼՐ.:

Մարտի 2.— Ռափայել Պաղարճյանը Սոֆիայից՝ վարուժանին: Հայտնում է իր մտորումները Հայկական հարցի մասին:

Անդ:

Մարտի 3.— Արիստակես Քասզանտիլյանը Վենետիկից՝ վարուժանին: Ուղարկում է մարտի ամսաթղթակը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 328:

Մարտի 4.— Հովակիմ Եղեկյանը՝ ԱՄՆ-ից վարուժանին: Խոսում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի վիճակի մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 146:

Մարտի 8.— Գրիգոր Լազայանը իր դերակատարմամբ լուսանկարը նվիրում է վարուժանին: Մակագրությունը՝ «Առ սիրելի Դանիել Չուպուզ-ֆյառ: Հիշե՛ գիս. «Գարբինեու գործադուր» F. Coppee-ի Գրիգոր Լազայանե»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 604, ԼՐ.:

<Մինչև մարտի 12>.— Նամակ՝ վարդան Հացունուն (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 86 ԼՐ.:

Մարտի 12.— Վարդան Հացունին Վենետիկից՝ վարուժանին: Հայտնում է ամսաթղթակն ուղարկելու մասին:

Անդ:

Մարտի 14.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին: Գրում է իր զբաղումների և ընթերցումների մասին:

«Նամականի», 99—100:

Մարտի 16.— Նշան Տեր-Ստեփանյանը Վենետիկից՝ վարուժանին: Տեղեկություններ է հաղորդում Մուրատ-Ռափայելյան վարժարանի մասին: Հիացական գնահատական է տալիս «Մարած օճախը» բանաստեղծությանը, հետաքրքրվում է «Ջարդով»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 316:

<Մարտի 22>.— Վահրամ Փափաղյանը Վենետիկից վարուժանին նվեր է ուղարկում Համլետի դերակատարմամբ իր լուսանկարը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 321ա:

Ապրիլի 3.— Արիստակես Քասզանտիլյանը Վենետիկից՝ վարուժանին: Շնորհավորում է Զատիկի առթիվ և ուղարկում ապրիլի ամսաթղթակը:

«Նամականի», 249—251:



Ապրիլի 4.— Գրում է «Հայհոյություն» բանաստեղծությունը: Նախապես վերնագրել է «Ընդդեմ Աստուծո», տպագրվել է «Հայհոյանք» խորագրով:

ԳԱԹ, ԴՎՖ, տետր № 13, 117—121:

Նույն օրը.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: «Անահիտում» տպագրելու համար ուղարկում է «Ցեղական ոգիին» («Հայրենիքի ոգին») բանաստեղծությունը:

«Նամականի», 100—101:

<Ապրիլի 4—7>.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին: Պատասխանում է վերջինիս ապրիլի 3-ի նամակին (տե՛ս համապատասխան գրառումը):

Անդ, 101—103:

<Մինչև ապրիլի 7>.— «Գենտի համալսարանի ազատ ունկնդիրների արմանախում» («Ալմանախ դեզ էթյուդան լիբեռ դը լ'ունիվերսիթեթե դը Գան») 1907-ի հատորում տպագրվում է «Հայկականերուն օրրանը» բանաստեղծության ֆրանսերեն թարգմանությունը:

«Բազմավեպ», 1939, թիվ 3—5, 131—132, ԳԱԹ, ԴՎՖ, № 253:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՖ, № 253:

Ապրիլի 7.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: Շքնորհավորում է «Հայկականերուն օրոցքը» բանաստեղծության ֆրանսերեն հրատարակության համար, խնդրում է Վարուժանի լուսանկարը և մի ոտանավոր նորաբաց «Ընթերցարան Ալիշանի» համար:

Անդ:

<Մինչև ապրիլի 8>.— Նամակ՝ Ս. Միանսարյանին: Նվեր է ուղարկում «Սարսուռներ» ժողովածուն: Նամակը և զրբի օրինակը չեն պահպանվել:

ԳԱԹ, ԴՎՖ, № 185:

Ապրիլի 8.— Ս. Միանսարյանը Անվերսից՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Սարսուռները» նվեր ստանալու համար:

Անդ:

Ապրիլ.— «Բազմավեպը» տպագրում է Ղուկաս Բժիկյանի «Հայկական բանաստեղծությունը, Սարսուռներ» հոդվածը, որտեղ մասնավորապես ասվում է. «Վարուժան ունի իր մեջ միացուցած, ձուլած Ատա նեկրին, Վ. Հյուկոն, քիչ մ'ալ Վ. Աղանուրը... Անոնց ոճը կը հիշեցնե, բայց առանց կորսնցնելու իր հայության կորովը, իր ինքնուրույնությունը» (թիվ 4, 172—173):

<Ապրիլ-մայիս>.— Ֆրանսերեն նամակ՝ անհայտ կնոջ: Անձնական բնույթի:

ՊԲԷ, 1977, № 4, 229—230:

<Մինչև մայիսի 2>.— Արամ Անտոնյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին (չի պահպանվել): Խնդրում է բանաստեղծություն իր «Գանձարան» դասագրքում զետեղելու համար:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ:

«Նամականի», 103:

Մայիսի 2.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին:

Անդ:

Նույն օրը.— Արիստակես Քասգանտիլյանը Վենետիկից՝ Վարուժանին: Ուղարկում է մայիսի ամսաթղթակը:

ԳԱԹ, ԴՎՖ, № 330:

<Մայիսի 5—6>.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին: Պատասխանում է վերջինիս մայիսի 2-ի նամակին:

«Նամականի», 104—105:

Մայիսի 22.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին: Խոսում է փիլիսոփայության ու բանաստեղծության փոխհարաբերության մասին:

Անդ, 105—106:



Մայիսի 24.— Ռափայել Պազարճյանը Սոֆիայից՝ վարուժանին: Հայտնում է իր կարծիքը հայ գրականության մասին, «Առաջին մեղքը» բանաստեղծությունը համարում է «շատ տկար»:

ԳԱԹ, ԳՎՖ, № 225ա:

Մայիսի 25.— Ռուբեն Զարդարյանը Ֆիլիպից (Բուլղարիա)՝ վարուժանին: Հայտնում է իր «խորին դժայլումը» նրա «չքնաղ» տաղանդի հանդեպ, հրավիրում է աշխատակցել «Ռազմիկ» թերթին:

«Նամականի», 251—252:

<Մայիսի վերջ>.— Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին (չի պահպանվել): Մտաբերում է Ազուլոյի բլուրները և Ս. Զենոնի դաշտերը: Խնդրում է կանոնավորապես ուղարկել «Բազմավեպը»:

ԳԱԹ, ԳՎՖ, № 305:

<Նույն շրջանում>.— Կարապետ Տեր-Սահակյանը Վենետիկից՝ վարուժանին: Խոստանում է հունիսից սկսած կանոնավորապես ուղարկել «Բազմավեպը»: Տեղեկություններ է տալիս հանդեսի խմբագրական կազմի մասին:

Անդ:

<Մայիս>.— «Անահիտում» տպագրվում է «Ցեղական ոգիին» բանաստեղծությունը (թիվ 3—5, 56—57): Վերահրատարակվել է «Հայրենիքի ոգին» վերնագրով:

Հունիսի 2.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Տպագրության համար ուղարկում է «Զարդը»:

«Նամականի», 106—107:

Հունիսի 8.— Արիստակես Քասգանտիլյանը Վենետիկից՝ վարուժանին: Ուղարկում է հունիսի ամսաթղթակիր:

ԳԱԹ, ԳՎՖ, № 331

Հունիսի 11.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ վարուժանին: Հայտնում է, որ «Զարդը» տպագրելու է դեկտեմբերին «Անահիտում», որից հետո հրատարակելու է առանձին գրքույկով, 500 օրինակ տպաքանակով:

«Նամականի», 252:

Նույն օրը.— Գենտի համալսարանին ուսման վարձի դիմաց մուծում է 105 ֆրանկ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 109, 1ր. (ստացական):

Հունիսի 14.— Նամակ՝ Ռուբեն Զարդարյանին: Ընդունում է «Ռազմիկին» աշխատակցելու հրավերը: Տպագրության համար ուղարկում է «Հայհոյություն» բանաստեղծությունը:

«Նամականի», 107—108:

<Հունիսի 14—15>.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին:

Անդ, 108—109:

Հունիսի 18.— Հովհաննես Թորոսյանը նշանակվում է Մուրատ-Ռափայելյան վարժարանի տեսուչ:

«Բազմավեպ», 1936, թիվ 8—12, 572:

Հունիսի 9(22).— «Ռազմիկում» տպագրվում է «Հայհոյություն» բանաստեղծությունը: Վերահրատարակել է «Հայհոյանք» վերնագրով (թիվ 58):

Հունիսի 26.— Գենտի համալսարանին ուսման վարձի դիմաց մուծում է 200 ֆրանկ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 107 1ր. (ստացական):

Հուլիսի 6.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին: Առաջիկա քննաշրջանին մասնակցելու համար խնդրում է լրացուցիչ 100 ֆրանկ:

«Նամականի», 109—111:

Հուլիսի 9.— Արիստակես Քասգանտիլյանը Վենետիկից՝ վարուժանին: Ուղարկում է ուսման վարձը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 332:

<Մինչև հուլիսի 12—15>.— Հանձնում է 1906—1907 ակադեմիական տարվա քննությունները՝ ստանալով «լավ» ընդհանուր գնահատականը:

ԳԱԹ, ԳՎՖ, շճակված նյութեր, համալսարանի արխիվի տրվյալները:



<Հուլիսի 12—15>.—Նամակ՝ Արխատակես Քասգանտիլյանին: Ցանկություն է հայտնում ամառային արձակուրդներն անցկացնել Ազոլոյում՝ «նախնյաց գործերը» ուսումնասիրելու և գրաբարի մեջ հմտանալու նպատակով, որպեսզի կարողանա «իմաստասիրական և քաղաքագիտական տեսակետով» ֆրանսերեն աշխատություն գրել հայոց պատմության վերաբերյալ:

Վարուժանի խնդրանքը Ազոլոյում հանգստանալու մասին մերժվել է: «Նամակահեթ», 111—114, ԳԱԹ, ԴՎՅ, Մ 254:

Հուլիսի 20.—Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին: Շնորհակալություն է հայտնում հուլիսի ամսաթղթակն ստանալու համար: Անդ, 114:

Հուլիսի 30.—Գրում է «Առաքյալը» բանաստեղծությունը: ԳԱԹ, ԴՎՅ, տետր Մ 13, 122—128:

Նույն օրը.—Արխատակես Քասգանտիլյանը վենետիկից՝ Վարուժանին: Ուղարկում է օգոստոսի ամսաթղթակը: ԳԱԹ, ԴՎՅ, Մ 333:

<Մինչև օգոստոսի 3>.—«Բաղմավեպում» տպագրվում է «Օձը» բանաստեղծությունը (թիվ 7—8, 373—374): Միաժամանակ նույն համարում հրատարակվում է Ղուկաս Բժիկյանի «Մեր արդի գրականությունը. «Անահիտ» տեսությունը», որտեղ ասված է. «Պ. Գ. Վարուժանի տողերը... միշտ լի են թարմ պատկերներով, զարմանալի կորովով: Իսկ «Առաջին մեղքը» ամբողջովին պատկերացում մ'է, այսինքն՝ այլաբանություն, որ լավ կը հատկանշե Անմեղությունը՝ «կապույտ աչքերով» ուլին տակ» (անդ, 331—337):

Օգոստոսի 3.—Կարապետ Տեր-Սահակյանը վենետիկից՝ Վարուժանին: Իր կարծիքն է արտահայտում նրա մի քանի բանաստեղծությունների մասին. «Շնորհակալություն «Բաղմավեպի» ընթերցողներուն կողմե Ձեր «Օձը» ոտանավորին համար. դեպ ի խորհրդապաշտության, այլաբանության կը դիմեք, բայց պահելով ազատություննիդ: «Առաջին մեղքը» ամենեն զեղեցիկն էր վերջին երեք («Հայտնություն», «Առաջին մեղքը» և «Օձը» —Ա. Շ.) ոտանավորներուն մեջ պատկերներու շնորհալիությամբ»: ԳԱԹ, ԴՎՅ, Մ 309:

Օգոստոսի 7.—Նամակ՝ Նշան Տեր-Ստեփանյանին (չի պահպանվել): Խորհուրդ է տալիս կարգալ Շեքսպիր, Մետելլինկ: «Նամակահեթ», 253—256:

<Մինչև օգոստոսի 9>.—Նամակ՝ Արշակ Չոպանյանին (չի պահպանվել): Ցանկություն է հայտնում հանդիպել նրան Փարիզում: Անդ, 253:

<Օգոստոսի երկրորդ տասնօրյակ>.—Նյութական միջոցներ չունենալով Իտալիա մեկնելու համար, հանգստանում է Գենտի մոտակայքի Օսթաբեր Լուրդ գյուղում, «Սենթ Ժոզեֆ» հյուրանոցում: Անցկացնում է միայնակ, տխուր ու տագնապալի օրեր՝ կապված անձնական կյանքի պարագաների հետ: Ինչպես երևում է Վարուժանի նամակներից և Դերենիկ Ճիզմեճյանի հիշողություններից, բանաստեղծը սիրահարվել է բելգիացի մի կնոջ, որը զավաճանել է նրան: «Ձեռք մը սիրտս ամբողջ պատառ-պատառ ըրավ և հեռացավ. թողուց զիս մենակ»,— գրում է ընկերոջը: Հետագայում «Տրտունջը» բանաստեղծության մեջ ևս Վարուժանը վերհիշել է իր կյանքի այդ ծանր պահը:

ես ալ պաշտեցի կին մ'հրաշագեղ. . . . .  
Ամբողջ տարի մը եկավ աշխատության խուցիս մեջ  
Քնարիս լարերն հարգարել ու զըրած գլուխը կտրծբիս՝  
Մեծ գաղտնիքներն երգերուս սըրտիս խորունկը փընտռել:  
Ան կը զըրծեր, ու զըրծանքն համբույրը իր կը ծածկեր.  
Սիրտը՝ գոր ես բացի, օր մ'ուրիշ բալլիք մ'էր կըզպած:  
«Նամակահեթ», 115—119, 128, Ճիզմեճյան, 42, «Հերանս երգեր», 182—183:

Օգոստոսի 15.—Օսթաբեր Լուրդում գրում է «Լքում (Նիրվանայի հորը)» բանաստեղծությունը: ԳԱԹ, ԴՎՅ, տետր Մ 13, 260—263:

<Մինչև օգոստոսի 18>.—Դերենիկ Ճիզմեճյանը Վարուժանին հրավիրում է Թուրին (Իտալիա)՝ հանգստանալու իրենց ընկերական շրջանում: Ճիզմեճյան, 41:



Օգոստոսի 18.— Օսթաքեր Լուրդից նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Ծանապարհածախս շունենալու պատճառով մերժում է Թուրին մեկնելու հրավերը:

«Նամակահի», 115—119:

<Մինչև օգոստոսի 23>.— Դերենիկ Ճիզմեճյանը կրկին վարու- ժանին հրավիրում է Թուրին:

Ճիզմեճյան, 43:

<Նույն ժամանակ>.— Օսթաքեր Լուրդից վերադառնում է Գենտ:

«Նամակահի», 119:

Օգոստոսի 23.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Հայտնում է, որ քնդոնում է Թուրին մեկնելու հրավերը:

Անդ:

Օգոստոսի 24.— Գենտից դուրս է գալիս և ճանապարհվում Իտալիա:

Անդ:

Օգոստոսի 29.— Գենտի համալսարանին ուսման վարձի դիմաց մու- ծում է 125 ֆրանկ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 111 լր. (ստացական):

Նույն օրը.— Գենտի համալսարանի ռեկտորը ստորագրում է № 41006 վկայագիրը, որով վարուժանը ճանաչվում է 1907—1908 ակադեմիական տարվա ուսանող:

ԳԱԹ, ԴՎՅ, № 106 լր.:

<Օգոստոսի վերջ>.— Հասնում է Թուրին, որտեղ Դերենիկ Ճիզ- մեճյանը վիա վենթի Սեթե Սեթեմպրե փողոցի № 40 տանը 12 ուսանող ընկերների (Զրաքյան, Ֆերահյան, Հայկ Մարտիկյան, Զամարյան և այլք) հետ վարձել էր հինգսենյականոց բնակարան և ստեղծել «Աղբա- տաց ճաշարանը»:

Վարուժանը անց է կացնում ուրախ ժամանակ՝ զբոսանքներ, ներկա- յացումներ, կերուխում, վիճարանություններ փիլիսոփայական, պատ-

մական ու այլ նյութերի շուրջ: Շարունակում է ստեղծագործել: Գ. Ճիզմեճ- յանը իր հուշերում պատմում է. «Վարուժան մեր մոտ ապրած ասե՛ն կը գրեր. անգործ չէր մնար: Իր գրածներու առաջին ունկնդիրները մենք էինք: «Ցեղին սիրտը» արդեն սկսել էր պատրաստել»: Զրաղվում է նաև ընթերցումներով: «Երբ Դուրինի մեջ ձեռքս անցավ ճոխ գրատուն մը, — գրել է նա Արշակ Զոպանյանին, — առիթը չփախցուցի քանի մը ուսում- նասիրություններ ընելու: Շատ ուշագրությամբ կարդացի «Ավիստան», հնդկականներեն՝ «Ռամայանան», «Մահապարաթան» և քանի մը հատ- վածներ «Վետաներեն»:

Ճիզմեճյան, 45, «Նամակահի», 120:

Սեպտեմբերի 2.— Նշան Տեր-Ստեփանյանը Ազոլոյից՝ վարուժանին: Մտաբերում է մեկ տարի առաջ Ազոլոյում անցկացրած համատեղ կյան- քը, տեղեկություններ է հաղորդում Մուրատ-Ռափայելյան վարժարանի մասին:

«Նամակահի», 253—256:

Սեպտեմբերի 7.— Արիստակես Քասդանտիլյանը վենտիկից՝ վա- րուժանին: Ուղարկում է սեպտեմբերի ամսաթղակը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 334:

Սեպտեմբերի 20.— Թուրինում գրում է «...Օրհնեալ ես դու ի կա- նայս» բանաստեղծությունը: Նախապես վերնագրել է «Հղին», «Մայրե- դություն»:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 264—265:

Սեպտեմբերի 29.— Գենտի համալսարանին ուսման վարձի դիմաց մուծում է 125 ֆրանկ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 110 լր. (ստացական):

<Հոկտեմբերի սկիզբ>.— Թուրինից Յրանսիայի վրայով մեկնում է Գենտ: Ծանապարհին առնվազն երկու օր մնում է Փարիզում, փորձում է հանդիպել Արշակ Զոպանյանին: Զի հաջողվում:

Ճիզմեճյան, 47, «Նամակահի», 120:



<Մինչև նոկտեմբերի 12>.— Հասնում է Գենտ:

«Նամականի», 257—258:

Հոկտեմբերի 12.— Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին (չի պահանջվել): Շնորհավորում է Մուրատ-Ռափայելյանի տեսչությունն ստանձնելու առթիվ:

Անդ,

Հոկտեմբերի 13.— Գենտում վարձում է միջին գնով մի սենյակ ժառանգի փողոցի № 35 տանը:

Ճիզմեյան, 87, «Նամականի», 127:

Նույն օրը.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Վերհիշում է Թուրինում անցկացրած օրերը:

«Նամականի», 119—120:

Նույն օրը.— Նամակ՝ Արշակ Զոպանյանին: Հայտնում է. «Եթե ժամանակ գտնեմ՝ պիտի գրեմ բոճմա մը, որուն ծրագիրը կազմած եմ» (խոսքը «Արմենուհի» մասին է):

Անդ, 120:

Հոկտեմբերի 22.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Վերհիշում է Թուրինում ապրած օրերը:

Անդ, 121:

Հոկտեմբերի 23.— Դերենիկ Ճիզմեճյանը Թուրինից՝ Վարուժանին: Տեղեկություններ է հայտնում իր և ընկերների մասին:

Անդ, 256—257:

Հոկտեմբերի 26.— Հովհաննես Թորոսյանը Վենետիկից՝ Վարուժանին: Պատասխանում է հոկտեմբերի 12-ի նամակին (տե՛ս համապատասխան գրառումը):

Անդ, 257—258:

Հոկտեմբերի 29.— Գրանցվում է Գենտի համալսարանի 1907—1908

ակադեմիական տարվա ուսանող «Քաղաքական գիտությունների թեկնածուներ» բաժնում (հանձնել է երկրորդ քննաշրջանը):

ԳԱԹ, ԴՎՅ, շմշակված նյութեր, համալսարանի արխիվի գրանցման մատյանի № 40006 արձանագրությունից:

Նույն օրը.— Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին: Մանուցում է կրթաթոշակի ստացումը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 81:

Նոյեմբերի (4)17.— Հովսեփ Վայնաշարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է, որ գրել է «ոտանավորի չափով» մի «վիպակ» և խնդրում է «ճոխ սրբագրությունների» ենթարկել՝ «անոր գեղեցիկ ու նոր հոգի մը ներշնչելով»: Ավելացնում է. «Ազատ եք զայն Ձեր ուզածին պես փոխել ու գրել՝ պակաս աեղերը լեցնելով ու գոցելով»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 268:

<Մինչև նոյեմբերի 5/18>.— Նամակ՝ Ռուբեն Զարգարյանին (չի պահանջվել): «Ռազմիկում» տպագրելու համար ուղարկում է «Առաքյալը» բանաստեղծությունը:

«Նամականի», 258—259:

Նոյեմբերի 5/18.— Ռուբեն Զարգարյանը Ֆիլիպեից՝ Վարուժանին: Գրում է. «Ձեր մեջ կը տեսնեմ ավելի հայ, ավելի հայաստանցի Սիամանթո մը և բոլոր հոգովս կը հետևիմ Ձեր հաջողություններուն ու կատարելագործման»:

Անդ,

<Մինչև նոյեմբերի 15>.— Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին (չի պահանջվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 309:

Նոյեմբերի 18.— Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին: Խնդրում է նոյեմբերի ամսաթոշակի առաքումը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 32:



Նոյեմբերի 21.— Հովհաննես Թորոսյանը վենետիկից՝ վարուժանին: Ուղարկում է նոյեմբերի ամսաթոշակը:

ԳԱԹ, ԴՎՖ, № 169:

Նոյեմբերի 22.— Նամակ՝ Դերենիկ ճիզմեճյանին: Հետաքրքրվում է նրա վիճակով, խորհուրդ է տալիս, թե ինչ գրքեր կարդա:

«Նամականի», 121—122:

Նույն օրը.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Հայտնում է, որ ավարտելու վրա է «Արմենուհի» վիպերգը:

Անդ, 123—124:

Նոյեմբերի 24.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ վարուժանին: Հայտնում է, որ «Զարդը» տվել է շարվածքի:

Անդ, 259:

Նույն օրը.— «Ռազմիկում» տպագրվում է «Առաքյալը» բանաստեղծությունը (թիվ 12):

<Մինչև դեկտեմբերի 8>.— Նամակ՝ Հովսեփ Վայնաշարյանին (չի պահանջվել): Տեղեկություններ է ուղում նրա նախասիրությունների և ծրագրերի մասին:

ԳԱԹ, ԴՎՖ, № 269:

Դեկտեմբերի 8.— Հովսեփ Վայնաշարյանը վենետիկից՝ վարուժանին: Կրկնում է նոյեմբերի 17-ի խնդրանքը իր ստեղծագործությունը խմբագրելու և «լավ վերնագիր մը» ընտրելու վերաբերյալ (տե՛ս համապատասխան գրառումը):

Անդ:

Դեկտեմբերի 9.— Նամակ՝ Վարդան Հացունուն: Շնորհակալություն է հայտնում դեկտեմբերի ամսաթոշակն ուղարկելու համար:

«Նամականի», 123:

<Մինչև դեկտեմբերի 11>.— Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին (չի պահանջվել): Գանգատվում է, որ ուշ է ստանում «Բաղմավեպը»,

հայտնում է, որ սպասում է մեկենասի իր գործերը տպագրելու համար: ԳԱԹ, ԴՎՖ, № 310:

Դեկտեմբերի 11.— Կարապետ Տեր-Սահակյանը վենետիկից՝ վարուժանին: Խոստանում է կանոնավորապես առաքել «Բաղմավեպը», հավաստիացնում է, որ հանդեսի էջերը բաց են նրա առջև:

Անդ:

Դեկտեմբերի 12.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Հայտնում է, որ «Իրավաբանական խնդիրներով» ղբաղված լինելու պատճառով կհստատ է թողել «Արմենուհին»:

«Նամականի», 124:

<Մինչև դեկտեմբերի 15>.— Նամակ Հարություն Վարդավառյանին (չի պահանջվել):

ԳԱԹ, ԴՎՖ, № 282:

Դեկտեմբերի 15.— Հարություն Վարդավառյանը Կ. Պոլսից՝ վարուժանին: Առաջարկում է կազմել առևտրական ընկերություն և դառնալ նրա հանձնակատարը՝ ստանձնելով «այն մասը, որ բանաստեղծական է»: «Քու գործը, — գրում է նա, — պիտի ըլլա այցելել առանց քաշվելու գործարաններու տնօրինությանց, որ քու քաղքին մեջ կը գտնվին, կը մատուցանին քու ծառայությունը իբր ֆապրիքին ներկայացուցիչ»:

Անդ:

Դեկտեմբերի 24.— Հովսեփ Վայնաշարյանը վենետիկից՝ վարուժանին: Շնորհավորում է նոր տարին և ուղարկում իր լուսանկարը:

ԳԱԹ, ԴՎՖ, № 270:

Դեկտեմբերի 25.— Ավարտում է «Արմենուհի» դյուցազնավեպը:

ԳԱԹ, ԴՎՖ, № 27, 1—25, ԱԶՖ, № 6875տ, «Աճախ», 1908, թիվ 5—12, 90:

Դեկտեմբերի 31.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Ուղարկում է «Արմենուհի» դյուցազնավեպը՝ խնդրելով նրա կարծիքը:

«Նամականի», 124—125:



Գեկտեմբեր.— Նամակ՝ հորեղբորը:

Անդ, 125:

Ղմեռ.— Հիվանդանում է ցնցղատապով (բրոնխիտ):

Անդ, 160:

— Գրում է «Վերջին հույսը» բանաստեղծությունը:

«Ճակատամարտ», 1921, թիվ 740:

— Նամակ՝ Ս. Տեր-Ջաքարյանին (չի պահպանվել): Շնորհավորում է ինչ-որ առիթով:

ԳԱԹ, ԳՎՅ, № 299:

— Ս. Տեր-Ջաքարյանը Բրյուսելից՝ Վարուժանին: Շնորհակալական նամակ:

Անդ:

— Նամակ՝ Արշավիր Եղիազարյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է Մուրատ-Ռափայելյան վարժարանից նրան հեռացնելու պարագաներով:

ԳԱԹ, ԳՎՅ, № 150:

1908

Հունվարի 3.— Նամակ՝ Գարեգին Լեոնյանին: Առաջարկում է իր աշխատակցությունը «Գեղարվեստ» հանդեսին: Տպագրության համար ուղարկում է «Անիի ավերակներուն մեջ» բանաստեղծությունը:

«Նամակների», 126—127:

<Մինչև հունվարի 4/17>.— Նամակ՝ Հարություն Վարդավառյանին (չի պահպանվել): Գիտողություններ ու առարկություններ է անում նրա առաջարկի վերաբերյալ (տե՛ս 1907-ի դեկտեմբերի 15-ի գրառումը):

ԳԱԹ, ԳՎՅ, № 279:

Հունվարի 4/17.— Հարություն Վարդավառյանը Կ. Պոլսից՝ Վարու-

ժանին: Բացատրություններ է տալիս իր առաջարկի մասին, հորեղբորմ է դառնալ արևելյան քաղցրավենիքների ու այլ ապրանքների ներմուծող-միջնորդ Գենտում:

Անդ:

Հունվարի 6.— Նամակ Գերենիկ Ճիզմեճյանին: Խոսում է իր տխուր հոգեվիճակից՝ կապված անձնական դրամայի հետ (տե՛ս 1907-ի «Օգոստոսի երկրորդ տասնօրյակ» գրառումը):

«Նամակների», 128—129:

<Մինչև հունվարի 8/21>.— Նամակ՝ Հովսեփ Վայնաշարյանին (չի պահպանվել): Խիստ դիտողություններ է անում նրա հեղինակած «վեպի» ու լեզվի մասին (տե՛ս 1907-ի նոյեմբերի 17-ի գրառումը):

ԳԱԹ, ԳՎՅ, № 271:

Հունվարի 8/21.— Հովսեփ Վայնաշարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Քոհունակություն է հայտնում արած դիտողությունների համար, խոստանում է վերացնել մատնանշած թերությունները:

Անդ:

Հունվարի 15.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտնում է, որ «քիչ օրեն» առանձին գրքույկով տպագրվելու է «Ջարդը»:

«Նամակների», 260—261:

Հունվարի 16.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Խնդրում է զգուշության նկատառումներով «Ջարդի» վրա շփոթել իր իսկական ազգանունը:

Անդ, 129:

<Մինչև հունվարի 19>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՅ, № 254:

Հունվարի 19.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին:



Առաջարկում է Հովհաննես Թորոսյանի հոբելյանի առթիվ հոգված հրատարակել «Ռազմիկում»:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ, բայց «Ռազմիկում» նա ոչ մի հոգված չի տպագրել:

Անդ:

Հունվարի 22.—Հովակիմ Եղեկյանը ԱՄՆ-ից՝ Վարուժանին: Առաջարկում է համալսարանն ավարտելուց հետո տեղափոխվել Բրզնիկ, ստանձնել տեղի դպրոցի ուսուցչապետությունը: Խոստանում է դառնալ նրա օգնականը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 147:

Հունվարի 23.—Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Դիտողություններ է անում «Արմենուհի» դյուցազնավեպի վերաբերյալ, վերադարձնում է փոփոխություններ կատարելու համար:

«Նամականի», 261—262:

<Հունվարի երեռոդ տասնօրյակ>.—«Անահիտում» տպագրվում է «Ջարդը (1895—1896)» բանաստեղծությունը (թիվ 10—12, 117—121): Միաժամանակ հանդեսը ծանուցում է. «Առանձին գրքույկով լույս տեսավ Գ. Վ ա ր ր ւ ժ ա ն, ՋԱՐԴԸ, (1895—1896)» (208):

«Անահիտի» լույս բնօրինակն մասին տե՛ս «Նամականի», 261:

<Մինչև հունվարի 27>.—Նամակ՝ Հովակիմ Եղեկյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է նրա վիճակով:

ԳԱԹ, ԳՎՖ, № 147:

<Մինչև հունվարի 29>.—Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է նրա գրական ստեղծագործություններով:

ԳԱԹ, ԳՎՖ, № 311:

Հունվարի 29.—Կարապետ Տեր-Սահակյանը Վենետիկից՝ Վարուժանին: Ծանոթացնում է հայ-բյուզանդական շրջանը ներկայացնող իր թատերախաղին: Վարուժանի «Առաքյալը» համարում է «շատ լավ» բանաստեղծություն:

Անդ:



Վարուժանը կնոջ՝ Արաքսիի հետ (1910, Սերաստիա)



Հունվարի 30.— Գրում է «Քաղցած ժողովուրդին» բանաստեղծությունը: Տպագրվել է «Ողորմություն» վերնագրով:

ԳԱԹ, ԴՎՖ, տետր N 13, 129:

Փետրվարի 4.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին:

«Նամականի», 130—131:

Նույն օրը.— Գրում է «Վահագն» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՖ, տետր N 13, 130—134, «Ազգակ», 1909, 101—103:

<Մինչև փետրվարի 11>.— Դերենիկ Ճիզմեճյանը Թուրինից՝ Վարուժանին (չի պահպանվել): Ընկերոջը հրավիրում է իր մոտ՝ սփոփելու և տխուր խոհերից կտրելու նպատակով:

«Նամականի», 131—132:

Փետրվարի 11.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Մերժում է Թուրին գնալու հրավերը՝ հիվանդության և ժամանակ չունենալու պատճառով:

Անդ:

<Մինչև փետրվարի 17>.— Առանձին գրքուկով լույս է տեսնում «Ջարդը»: Անվանաթերթը՝ Դ. ՎԱՐՈՒԺԱՆ, Ջ Ա Ր Դ Ը (1895—1896), Փարիզ, տպագր.[ություն] Տ. Տոլրամանյան (16 էջ, տպաքանակ՝ 450):


«Նամականի», 262:

Փետրվարի 17.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Տեղեկություններ է հաղորդում «Ջարդի» տպագրության մասին, խնդրում է նոր բանաստեղծություն «Անահիտի» համար:

Անդ:

Նույն օրը.— Տիգրան Տոլրամանյանը Փարիզից՝ Վարուժանին: Ուղարկում է «Ջարդի» տպաքանակը, տեղեկացնում է, որ թղթի պատճառով նախատեսված 500 օրինակի փոխարեն հրատարակել է 450-ը:

ԳԱԹ, ԴՎՖ N 319:



«Նամասարդյան» բանաստեղծության ինքնագիրը (1913)



<Մինչև փետրվարի 22>.— Նամակ՝ Մկրտիչ Պարտիզյանին (չի պահպանվել): Առաջարկում է 10-ական օրինակ «Սարսուռներ» ու «Ջարդ»՝ Բուլղարիայում վաճառելու համար:

ԳԱԹ, ԴՎՅ, № 241:

Փետրվարի 22.— Մկրտիչ Պարտիզյանը Բուլղարիայից՝ Վարուժանին: Խնդրում է 20-ական օրինակ «Սարսուռներ» ու «Ջարդ»՝ Բուլղարիայում վաճառելու համար: Խնդրում է նաև խմբագրել ու հնարավորության դեպքում տպագրության հանձնել իր հեղինակած մի բանաստեղծությունը:

Անդ:

<Փետրվարի վերջ>.— Նամակ՝ Թիֆլիսի «Գուտտենբերգ» գրախանութի տնօրեն Գալուստ Գալստյանին (չի պահպանվել): Առաջարկում է կազմակերպել «Սարսուռների» ու «Ջարդի» վաճառքը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 60 ԼԻ:

<Նույն շրջանում>.— Գալուստ Գալստյանը Թիֆլիսից՝ Վարուժանին: Հայտնում է իր համաձայնությունը «Սարսուռները» ու «Ջարդը» վաճառելու մասին: Խորհուրդ է տալիս բարձր գին շնչանակել:

Անդ:

<Նույն շրջանում>.— «Ջարդը» նվիրում է «Լուսային»: Մակագրությունը՝ «Լուսայի» խմբագրության. հարգանքով՝ Գ. Վարուժան:

Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, անձնակազմի ֆոնդ:

<Մինչև փետրվարի 27>.— Նամակ՝ Ռուբեն Զարդարյանին: Նվեր է ուղարկում «Ջարդը» (նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել):

«Նամակների», 269—270:

Փետրվարի 27.— Ռուբեն Զարդարյանը Ֆիլիպից՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Ջարդը» նվիրելու համար, խոստանում է կազմակերպել նրա գրքերի վաճառքը, իսկ 25 օրինակ «Ջարդ» «գաղտնի ճանապարհներով» ուղարկել «Երկիր»:

Անդ: Տե՛ս նաև ԳԱԹ, ԴՎՅ, № 155:

<Մինչև փետրվարի 28>.— Նամակ՝ Ներսէ Անդրիկյանին: Նվեր է ուղարկում «Ջարդը» (նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 120:

Փետրվարի 28.— Ներսէ Անդրիկյանը՝ Վենետիկից՝ Վարուժանին: Կարծիք է հայտնում «Ջարդի» մասին. «Կսկծալի ցավերով, արդար զայրույթով ու գեղեցկագույն հույսերով լի այս քերթվածը բացատրված կը գտնեմ կորովի ոճով մը, կարող է՛ն լքված սիրտն ալ ամբաստելու»:

Անդ:

Փետրվարի 29.— Արշակ Զոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտնում է, որ սպասում է նրա բանաստեղծությանը՝ «Անահիտում» տպագրելու համար:

«Նամակների», 263:

Մարտի 1.— «Ռազմիկ» լրագիրը տպագրում է հետևյալ ազդը. «ԶԱՐԴ Գրեց Դանիել Վարուժան: Այս 16 էջե բաղկացյալ գրքույկը կը պարունակե հայ նոր քնարական բանաստեղծության սխրալի էջերեն մեկը, որով Դանիել Վարուժան, տակավին շատ երիտասարդ, կը գրավե մեր լավագույն քերթողներու կարգին մեջ իր անվիճելի տեղը արդեն» (թիվ 229):

<Մինչև մարտի 3>.— «Ջարդի» տպաքանակի մի մասը «գաղտնի ճանապարհով» ուղարկվում է Արևմտյան Հայաստան:

«Նամակների», 132—133:

<Նույն շրջանում>.— Դերենիկ Ճիզմեճյանը Թուրինից՝ Վարուժանին (չի պահպանվել): Հրավիրում է ամռանը հանգստանալ Թուրինում: Խնդրում է 20 օրինակ «Ջարդ»՝ Եգիպտոսում վաճառելու համար:

Անդ:

Մարտի 3.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Հայտնում է, որ քրննություններով ծանրաբեռնված լինելու պատճառով հույս չունի ամռանը հեռանալ Գենտից: Ուղարկում է 20 օրինակ «Ջարդ»՝ Եգիպտոսում վաճառելու համար:

Անդ:



<Մինչև մարտի 8>.— Նամակ՝ Նշան Քաշճյանին (չի պահպանվել): Խնդրում է կազմակերպել «Ջարդի» վաճառքը Ամերիկայում:

ԳԱԹ, ԴՎՅ, № 161:

Մարտի 8.— Նշան Քաշճյանը Բոստոնից՝ Վարուժանին: Խոստանում է օգնել Ամերիկայում վաճառելու «Ջարդը»: Հրավիրում է աշխատակցել «Հայրենիքին»:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ: Բայց նա իր աշխատակցած պարբերականների թվում հիշատակել է նաև «Հայրենիքը» (տե՛ս «Նամականի», 158): Հիշյալ թերթի ամբողջական հավաքածուները կան, սակայն գրողի ստորագրությամբ որևէ բանաստեղծություն, հոդված կամ այլ նյութ չի տպագրվել:

Նույն օրը.— «Ռազմիկ» լրագիրը «Մահվան արհամարանքը» առաջնորդողում Վարուժանին համարում է «Ցեղին աղնվական ու պատվական մեկ զավակը» և մեջբերում մի հատված «Ջարդը» բանաստեղծությունից (թիվ 231):

<Մինչև մարտի 13>.— Նամակ՝ Հովսեփ Վայնաչարյանին: Հայտնում է իր դիտողությունները նրա ստեղծագործության վերաբերյալ (տե՛ս 1907-ի նոյեմբերի 17-ի և 1908-ի հունվարի 8/21-ի գրառումները): Նվեր է ուղարկում «Ջարդը» (նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 272:

Մարտի 13.— Հովսեփ Վայնաչարյանը Վենետիկից՝ Վարուժանին: Խոստանում է կատարել նրա բոլոր դիտողությունները: Շնորհակալություն է հայտնում «Ջարդը» իրեն նվիրելու համար:

Անդ,

Նույն օրը.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: «Անահիտում» տպագրելու համար ուղարկում է «Հղի» («Օրհնեալ ես դու ի կանայս») բանաստեղծությունը:

«Նամակներ», 133—134:

Մարտի 15.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: «Հղի» բանաստեղծությունը համարում է «զմայելի կտոր մը», հեղինակի

«ամենն աղվոր» գործերից մեկը, առաջարկում է խորագրել «Օրհնեալ ես դու ի կանայս»:

Անդ, 263:

<Մինչև մարտի 16>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին: Նվեր է ուղարկում «Ջարդը» (նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 256:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Ալեքսիանոս Գաղաղյանին: Նվեր է ուղարկում «Ջարդը» (նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել):

Անդ,

Մարտի 16.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է, որ Մուրատ-Ռափայելյան վարժարանի սաների օգնությամբ իրացրել է 60 օրինակ «Ջարդ», Ահարոն Տատուրյանին հանձնարարել է հոդված գրել «Ջարդի» մասին՝ «Ռազմավեպում» տպագրելու համար:

Անդ,

Նույն օրը.— Գենտի պատմության ակադեմիական ընկերությանը մուծում է 2,5 ֆրանկ անդամավճար:

ԳԱԹ, ԴՎՅ, № 119 լր. (ստացական):

<Մինչև մարտի 18>.— Նամակ՝ Կարապետ Տեր-Սահակյանին: Առաջարկում է գիտական պարամունքների համար գալ Գենտ: Նվեր է ուղարկում «Ջարդը» (նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 312:

Մարտի 18.— Կարապետ Տեր-Սահակյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է իր կարծիքը «Ջարդի» մասին. «Ընդհանրությունը այդ ոտանավորին իր լայնությամբ և իր բոլոր ահռելիությամբ կը պատկերացնե իրականությունը...»:

Անդ,

<Մինչև մարտի 22>.— Գրում է «Վան Արդվիլդի արձանին» ֆրանսերեն արձակ բանաստեղծությունը: Արշակ Չոպանյանի դիտո-



դուժյունները հիման վրա մշակում-ավարտում է «Արմենուհի» դյու-  
ցազնավեպը: Նվեր է ստանում Չոպանյանի «Քերթվածներ» ժողովա-  
ծուն (նվիրած օրինակը չի պահպանվել):

«Նամականի», 134—137:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ գրավաճառ Ավետիս Զարպհանալ-  
յանին (չի պահպանվել): Ուղարկում է «Մարտունների» և «Զարդի» օրի-  
նակները Բուլղարիայում վաճառելու համար:

ԳԱԹ, ԴՎՖ, № 156:

Մարտի 22.— Ավետիս Զարպհանալյանը Բուլղարիայից՝ Վարուժա-  
նին: Նրա գրքերի վաճառքը կազմակերպելու մասին:

Անդ:

Նույն օրը.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Կարծիք է հայտնում  
Նրա «Քերթվածներ» ժողովածուի մասին:

«Նամականի», 134—137:

<Մարտի 22-ից հետո>.— «Գեներալի համալսարանի ազատ ուն-  
կընդիրների արմանախում» («Ալմանախ դեղ էթյուդան լիբեռ դը լ'ունի-  
վերսիթե դը Գան») տպագրվում է «Վան Արդվելդի արձանին» ֆրանսե-  
րեն արձակ բանաստեղծությունը: Ըստ Պիեռ Մայեսի, ստեղծագործու-  
թյունը հրատարակության է տվել ինքը:

«Բազմավեպ», 1939, թիվ 6—7, 171, Ա. Պատրիկ, 142:

<Մինչև մարտի 29>.— Նամակ՝ Գրիգոր Մխիթարյանին <Մի-  
քայելյանին> (չի պահպանվել): Խորհուրդ է տալիս մեկնել Լյեծ:

ԳԱԹ, ԴՎՖ, № 191:

Մարտի 29.— Գրիգոր Մխիթարյանը <Միքայելյանը> ժնեից՝ Վա-  
րուժանին: Խոսում է ժամանակի քաղաքական անցքերից:

Անդ:

Նույն օրը.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Ծնոր-

հակալուսյուն է հայտնում իր «Քերթվածներ» ժողովածուի մասին ար-  
տահայտած կարծիքի համար:

«Նամականի», 263—264:

Մարտ.— «Գեղարվեստ» հանդեսը «Պոստարկը» բաժնում գրում է.  
«ԳԱՆԳ (Բելգիա). Պ. Վարուժանին: Ծնորհակալ ենք Ձեր ուշադրության  
համար: Կը տպագրվի (№ 1, 10: Խոսքը «Անիի ավերակներուն մեջ»  
բանաստեղծության մասին է): Միաժամանակ «Հավելված» բաժնում  
հրատարակվում է մի հատված 1908-ի հունվարի 3-ի նամակից Գարե-  
գին Լևոնյանին:

Ապրիլի 1.— Մուրատ-Ռափայելյան վարժարանի «Քնարիկ» կիս-  
ամսյա խմորատիպ հանդեսում տպագրվում է «Դիակի սայլը» բանաս-  
տեղծության նախնական տարբերակը (թիվ 1, 31—33):

Նույն օրը.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Կարծիք է հայտնում  
«Ծրհենալ ես դու ի կանայս» բանաստեղծության առթիվ նրա արած դի-  
տողությունների մասին:

«Նամականի», 137—138:

<Մինչև ապրիլի 2>.— Նամակ՝ Ահարոն Տատուրյանին: Նվեր է  
ուղարկում «Զարդը» (նամակը և գրքի օրինակը չեն պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՖ, № 234:

Ապրիլի 2.— Ահարոն Տատուրյանը Վենետիկից՝ Վարուժանին:  
Խնդրում է տեղեկություններ եվրոպական համալսարանների մասին:

Անդ:

Նույն օրը.— «Ռազմիկում» տպագրվում է «Մատնիչը» բանաստեղ-  
ծությունը (թիվ 45):

Ապրիլի 3.— Գրում է «Աղբյուրը լույսին» բանաստեղծությունը:  
Տպագրվել է «Լույսը» վերնագրով:

ԳԱԹ, ԴՎՖ, տեսք № 13, 266—269:

Նույն օրը.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտ-



նում է, որ տպագրելու է «Օրհնեալ ես դու ի կանայս» բանաստեղծութիւնը, հրատարակելու համար խնդրում է «Արմենուհին»:

«Նամականի», 264—265:

Ապրիլի 4.— Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթը զետեղում է հետեւյալ ազդը. «ՋԱՐԴԸ (Գանիել Վարուժան)—16 էջերն բաղկացած գողտրիկ տետրակ մը, որ կը պարունակէ երիտասարդ քերթողի քնարական բանաստեղծութիւն մեկ սիրալի կտորը՝ գրված 1895—96-ի հայկական շարդերուն վրա» (թիվ 14, 6):

Ապրիլի 5.— Նամակ՝ Նշան Տեր-Ստեփանյանին: Նվեր է ուղարկում «Ջարդը» (նամակը և գրքի օրինակը շին պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 318:

Ապրիլի 8.— Նշան Տեր-Ստեփանյանը վենետիկից՝ Վարուժանին, Շնորհակալութիւնն ու սերն է հայտնում «Ջարդը» նվեր ստանալու համար:

Անդ:

Ապրիլի 14.— Մշակում է «Դիակի սայլը» բանաստեղծութիւնը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 135—137:

<Մինչև ապրիլի 20>.— Նամակ՝ Հովսեփ Մարտիրոսյանին: Նվեր է ուղարկում «Ջարդը» (նամակը և գրքի օրինակը շին պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 184:

Ապրիլի 20.— Հովսեփ Մարտիրոսյանը վենետիկից՝ Վարուժանին: Կարծիք է հայտնում «Ջարդի» մասին. «Պարսից միտիստը ըլլայի նե, այնչափ պիտի շքնծայի, շուրախանայի, իսկ եթե շահ ըլլայի՝ զքեզ, եթե հանձն առնէիր, Ֆիրդուսի կը ձեռնադրէիր»:

Անդ:

Ապրիլի 21.— Գրում է «Կարոտի նամակ» բանաստեղծութիւնը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 138—139:

<Ապրիլի վերջ>.— Մկրտիչ Պոտուրյանը վենետիկից՝ Վարուժանին (չի պահպանվել): Հայտնում է, որ վահրամ Փափազյանի հետ մեկնելու է Կ. Պոլիս, որտեղից ինքը գնալու է Պարտիզակ:

«Էջմիածին», 1908, ը, 36:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել): Խնդրում է Կ. Պոլսում հանդիպել հորը և տեղեկութիւններ տալ իր մասին:

Անդ, 37:

Ապրիլ.— «Անահիտում» տպագրվում է «Օրհնեալ ես դու ի կանայս» բանաստեղծութիւնը (թիվ 1—4, 40):

<Մինչև մայիսի 6>.— Մաքրագրում և Արշակ Չոպանյանին է ուղարկում «Արմենուհի» դրուցազնավեպի ավարտուն օրինակը:

«Նամականի», 265:

Մայիսի 6.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտնում է, որ «Արմենուհին» թողնում է «գմայլելի» տպավորութիւն և հրատարակելու է այդ «հոյակապ կտորը»:

Անդ:

Մայիսի 7.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին (չի պահպանվել): Արժարժում է փիլիսոփայական խնդիրներ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 227:

<Մինչև մայիսի 8>.— Նամակ՝ Նշան Թաշճյանին (չի պահպանվել): Ռուբեն Զարդարյանի խորհրդով ուղարկում է 100 օրինակ «Ջարդ»՝ Ամերիկայում վաճառելու համար:

ԳԱԹ, ԳՎՖ, № 161:

Մայիսի 8.— Նշան Թաշճյանը Բոստոնից՝ Վարուժանին: Խոստանում է կազմակերպել «Ջարդի» վաճառքը Ամերիկայում: Կրկին հրավիրում է աշխատակցել «Հայրենիքին» (տե՛ս 1908-ի մարտի 8-ի զրառման ծանոթագրութիւնը):

Անդ:



Մայիսի 10.— Ռափայել Պաղարճյանը էնեկոյից (Իտալիա)՝ Վարուժանին: Պատասխանում է նրա մայիսի 7-ի նամակին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 227:

<Մինչև մայիսի 15>.— «Քնարիկ» աշակերտական հանդեսի երկրորդ թվում Մկրտիչ Պոտուրյանը տպագրում է Վարուժանի «Սրինգին օրորը» բանաստեղծությունը: Միաժամանակ հրատարակվում է Ահարոն Տատուրյանի գրախոսականը «Ջարդի» մասին:

«Քնարիկի» հիշյալ համարը Հայաստանում չկա:

«Նամակների», 259—260, «Քաղմակ», 1936, թիվ 8—12, 402, «Քնարիկ», 1908, թիվ 1:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել): Դժգոհում է, որ չի ստացել «Քնարիկի» երկրորդ թիվը:

«Նամակների», 259—260:

Նույն շրջանում.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է «Քնարիկում» տպագրված ու հրատարակելիք գործերի մասին:

Անդ:

Մայիսի 15—30.— «Քնարիկ» հանդեսում տպագրվում է «Վերածնություն» բանաստեղծությունը (թիվ 3—4, 49—56):

Մայիսի 25.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Իր ստեղծագործական ծրագրերի մասին հայտնում է. «Տենդագին քննություններուս կը պատրաստվիմ... որպեսզի երկու ամիս ազատ ըլլամ ոտանավորներս կարգի դնելու և ձմռան սկիզբը հրատարակելու ամբողջովին... Արդեն ծրագիր դրած եմ բանաստեղծությանց ուրիշ շարքի մը, բոլորովին մտերմական և ապրված»: Հետաքրքրվում է խաչատուր Աբովյանի կենսագրությամբ. «Մտադիր եմ իր վրա վիպերգ մը գրել, հոգեբանական կտոր մը գուցե»:

«Նամակների», 138—139:

Մայիս.— «Մանզումեի էֆթյար» հայատառ տաճկերեն թերթում տպագրվում է «Վան Արդվելիի արձանին» ֆրանսերեն արձակ բանաստեղծության հայերեն թարգմանությունը:

ստեղծության հայերեն թարգմանությունը: Միաժամանակ «Սարսուռներից» արտատպվում է «Հիվանդ է» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 62 լր. և № 274, 275:

Հունիսի 2.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Ուղարկում է խաչատուր Աբովյանի մասին տպագրած իր հոդվածը:

«Նամակների», 264—265:

Նույն օրը.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին (չի պահպանվել): Շոշափում է փիլիսոփայական խնդիրները:

ԳԱԹ, ԳՎՖ, № 228:

<Մինչև հունիսի 6>.— Նամակ՝ Ահարոն Տատուրյանին (չի պահպանվել): Տեղեկություններ է հաղորդում համալսարանում գրականության հետևողների համար պահանջվող քննություններից:

«Նամակների», 266—267:

Հունիսի 6.— Ահարոն Տատուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: «Մատնիչը» բանաստեղծությունը համարում է «գեղեցիկ», «Օրհնեալ ես դու ի կանայսր»՝ «միշտ գեղեցիկ, սակայն քիչ մը իրապաշտական»: Հայտնում է, որ Վահրամ Փափաղյանը Եգիպտոսում արտասանել է «Ջարդը»:

Անդ:

Հունիսի 11.— Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին: Խնդրում է ուսման վարձը՝ քննություններին մասնակցելու թույլտվություն ստանալու համար: Ցանկություն է հայտնում ամսուսն անցկացնել Աղոլոլում:

Անդ, 139—140:

Հունիսի 12.— Ռափայել Պաղարճյանը էնեկոյից՝ Վարուժանին: Պատասխանում է հունիսի 2-ի նամակին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 228:

<Մինչև հունիսի 14>.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին (չի պահպանվել): Ուղարկում է «Անահիտի» թվերը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 229:



Հունիսի 14.— Ռափայել Պաղարճյանը էնեկոյից՝ վարուժանին: Կարծիք է հայտնում Արշակ Չոպանյանի անձի ու Արփիար Արփիարյանի սպանության մասին:

Անդ:

<Մինչև հունիսի 18>.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին (չի պահանջվել): Հարցնում է, թե արդյոք ի՞նքն է «Արտեմիս» հանդեսում «Տերվիշ» ստորագրությամբ տպագրվող հեղինակը:

«Նամականի», 267—268:

Հունիսի 18.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ վարուժանին: Հայտնում է, որ «Տերվիշը» ինքը չէ:

Անդ:

<Մինչև հունիսի 19>.— Դերենիկ Ճիզմեճյանը Թուրինից՝ վարուժանին (չի պահանջվել): Հրավիրում է ամռանը հանգստանալ Թուրինում:

Ճիզմեճյան, 51, «Նամականի», 149:

Նույն շրջանում.— Նամակ՝ Մկրտիչ Պարտիզյանին (չի պահանջվել): Խորհուրդ է տալիս կարգալ Ալֆրեդ դը Մյուսե: Իր մասին հայտնում է, որ սպասում է «հարուստ մը լրբի քմահաճույթին» հայրենասիրական բանաստեղծությունների հատորը տպագրելու համար:

ԳԱԹ, ԴՎՅ, № 242:

Հունիսի 19.— Մկրտիչ Պարտիզյանը Ֆիլիպեից՝ վարուժանին: Տեղյակ է պահում «Սարսուռների» ու «Ջարդի» վաճառման ընթացքին (տե՛ս 1908-ի փետրվարի 22-ի գրառումը):

Անդ:

Նույն օրը.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Խոստանում է 20 օրվա ընթացքում պատասխանել, թե կկարողանա՞ Թուրին մեկնել:

«Նամականի», 140—141:

Հունիսի 20.— Հովհաննես Թորոսյանը Վենետիկից՝ վարուժանին:

Ուղարկում է ուսման վարձը, բայց մերժում է Ազդոյում հանգստանալու մասին նրա խնդրանքը՝ պատճառաբանելով, որ դա արվում է «վանքիս վարչական ժողովին ըրած մեկ որոշումին համաձայն»:

ԳԱԹ, ԴՎՅ, 170:

<Հունիսի 26>.— Գենտի համալսարանին ուսման վարձի դիմաց մուծում է 105 ֆրանկ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 112 լր. (ստացական):

<Մինչև հուլիսի 3>.— Դերենիկ Ճիզմեճյանը Թուրինից՝ վարուժանին (չի պահանջվել): Դարձյալ հորդորում է շուտափույթ հանգստանալու գալ Թուրին:

«Նամականի», 141—142:

Հուլիսի 3.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Խոստանում է 15 օրվա ընթացքում պատասխանել Թուրին մեկնելու հրավերի առաջարկին:

Անդ:

(Հունիսի 24) 7 հուլիսի.— Թուրքիայում կատարվում է պետական հեղաշրջում: Իշխանության գլուխ են կանգնում երիտթուրքերը:

ՀԺՊ, հ. VI, 973:

Հուլիսի 11.— Գառնիկ Գլըճյանը իր լուսանկարը նվիրում է վարուժանին: Մակագրությունը՝ «Իմ պաշտելի բանաստեղծ Գ. Վարուժանին»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 454:

<Մինչև հուլիսի 17>.— Հանձնում է Գենտի համալսարանի 1907—1908 ակադեմիական տարվա ընդունելության քննությունները, ստանում է «բավարար» ընդհանուր դնահատականը:

ԳԱԹ, ԴՎՅ, շժակված նյութեր, «Նամականի», 142:

Հուլիսի 17.— Նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Հայտնում է Գենտից մեկնելու և Թուրին հասնելու օրերը:

«Նամականի», 142:



Հուլիսի 20.— Գենտից մեկնում է Թուրին:

Անդ:

<Մինչև հուլիսի 22>.— Լինում է Փարիզում:

Ճիզմենյան, 52:

<Նույն շրջանում>.— «Մեծմուսլը ախպար» հայատառ տաճկերեն լրագրում տպագրում է հողված Սերաստիայի առաջնորդական խնդրի վերաբերյալ:

Թերթի հավաքածոն չի պահպանվել:

ԳԱԹ, ԴՎՅ, № 280:

Հուլիսի (9)22.— Հարություն Վարդավառյանը Կ. Պոլսից՝ Վարուժա-  
նին: Հայտնում է իր բարեկամներից մեկի կարծիքը «Մեծմուսլը ախ-  
պար» թերթում Վարուժանի տպագրած հողվածի մասին: Նամակին կից  
է Գրիգոր Զպուգբյարյանի երկտողը:

Անդ:

<Մինչև հուլիսի 23>.— Հասնում է Թուրին:

Արձակուրդներն անց է կացնում ընկերական ուրախ շրջապատում:  
Դերենիկ Ճիզմենյանը պատմում է. «Առավոտները հանգիստ էր և կաշ-  
խատեր: Կեսօրվան ճաշեն ետք կընեինք մեր անխուսափելի պտույտ-  
ները, որոնց ընթացքին տեղի կունենային մեր վիճաբանությունները  
անխուսափելի նյութերու շուրջ: Մեր կատակները կը վերապահեինք  
«Աղքատաց ճաշարանին» սեղանին շուրջ բոլորվելու պահին»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 171, Ճիզմենյան, 52—53:

<Նույն օրերին>.— Թուրինից նամակ՝ Հովհաննես Թորոսյանին  
(չի պահպանվել): Հայտնում է քննությունները հաջողությամբ հանձնե-  
լու լուրը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 171:

Հուլիսի 23.— Հովհաննես Թորոսյանը Վենետիկից՝ Վարուժանին:  
Շնորհավորում է քննությունները հաջող հանձնելու առթիվ:

Անդ:

Նույն օրը.— Թուրքիայում հռչակվում է Ազգային սահմանադրու-  
թյունը:

ՀՍԶ, հ. 3, 590:

<Հուլիսի 23-ից հետո>.— Գրում է «Ավերակներու տիկինը (Թուր-  
քիո Սահմանադրության առթիվ)» բանաստեղծությունը:

«Ռեզմիկ», 1908, օգոստոս 9, թիվ 79:

Հուլիսի 25.— Հովսեփ Վայնաշարյանը Կահիրեից՝ Վարուժանին:  
Հայտնում է, որ կատարել է իր ստեղծագործության առթիվ նրա առա-  
ջարկած բոլոր դիտողությունները, ինչդրում է նորից խմբագրել (տե՛ս  
1908-ի մարտի 13-ի գրառումը):

ԳԱԹ, ԴՎՅ, № 273:

(Հուլիսի 21)3 օգոստոսի.— Կ. Պոլսում Շիշլիի գերեզմանատանը  
տեղի է ունենում սգահանդես ի հիշատակ նահատակների: Առաջին ան-  
գամ հրապարակորեն արտասանվում է «Ջարդը»: Թերթը հաղորդում է.  
«Նովելիի թատերախմբին անդամ պ. Վահրամ Փափաղյան արտասանեց  
Դանիել Վարուժանի զգայացունց մեկ քերթվածը՝ «Սասունի ջարդը»  
(իմա՝ «Ջարդը»):

«Թյուզանդիոն», 1908, հուլիս 22/4 օգոստոս, թիվ 3594:

<Օգոստոսի 3-ից հետո>.— Շավարշ Միսաքյանը Կ. Պոլսից՝  
Վարուժանին: Խնդրում է մեկ օրինակ «Ջարդ», առաջարկում է իր ծա-  
ռայությունները այն արտասպելու և վաճառքը կազմակերպելու գոր-  
ծում:

ԳԱԹ, ԴՎՅ, № 186:

<Մինչև օգոստոսի 4/17>.— Թուրինից նամակ՝ Հարություն Վար-  
դավառյանին (չի պահպանվել): Անդրադառնում է Սերաստիայի առաջ-  
նորդական խնդրին (տե՛ս հուլիսի 9/22-ի գրառումը): Խնդրում է մեկե-  
նաս գտնել իր բանաստեղծությունների հատորը տպագրել տալու հա-  
մար:

ԳԱԹ, ԴՎՅ, № 282:



<Սգոստոսի 4—5>.— Թուրինից նամակ՝ Աթանաս Տիրոյանին: Մուրատ-Ռափայելյան վարժարանի տեսչությանը մեղադրում է Դերենիկ Ճիզմեճյանի հանդեպ անտարբեր վերաբերմունքի, նրան բարձրագույն կրթութիւն ստանալու հնարավորութիւն չտալու մեջ:

«Նամակաճի», 143—146:

Սգոստոսի 6.— Աթանաս Տիրոյանը Վենետիկից՝ վարուժանին: Բացատրութիւններ է տալիս Դերենիկ Ճիզմեճյանի մասին գրած բողոքի առթիվ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 296:

<Սգոստոսի 8—10>.— Թուրինից նամակ՝ Աթանաս Տիրոյանին: Դերենիկ Ճիզմեճյանի խնդրի շուրջ:

«Նամակաճի», 146—151:

Սգոստոսի 17.— Թուրինից նամակ՝ Արիստակես Փասզանտիլյանին: Խնդրում է մեկնեսա գտնել իր բանաստեղծութիւնների ժողովածուն տրպագրել կարողանալու համար:

Անդ, 211—212:

Սգոստոսի (22)9.— «Ռազմիկը» տպագրում է «Ավերակներու տիկիներ (Թուրքիո Սահմանադրութեան առթիվ)» բանաստեղծութիւնը (թիվ 79):

Սգոստոսի 26.— Թուրինում մշակում է «Հայրենի լեռներ» բանաստեղծութիւնը:


Արշակ Զոպանյանին հղած մի նամակում վարուժանը ասում է, որ այս բանաստեղծութիւնը «գրված է Սահմանադրութենէն քանի մը օր առաջ» («Նամակաճի», 152): Սկզբնական օրինակի ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 140—143:

Նույն օրը.— Ռափայել Պաղարճյանը էնեկոյից՝ վարուժանին: Անձնական բնույթի նամակ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 230:

Սգոստոսի (17)30.— Հարութիւն Վարդավառյանը Կ. Պոլսից՝ վա-



Վարուժանի հուշատախտակը Գենտի (Սեպտեմբեր 1884) և Թուրինի (Սեպտեմբեր 1906) համալսարանի մասնագրագրանում



բուժանին: Կարծիք է հայտնում Վենետիկի Մխիթարյանների, Մուրատ-Ռափայելյան վարժարանի, Կ. Պոլսի ներկա վիճակի մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 282:

<Մինչև սեպտեմբեր>.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին (չի պահանջվել): Շնորհավորում է ինչ-որ առիթով: Հավանաբար խնդրում է Հայկական միության միջոցով հրատարակել բանաստեղծությունների իր ժողովածուն:

«Նամականի», 268—269:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Հովսեփ Վայնաչարյանին (չի պահանջվել): Հայտնում է, որ մեկ ամսից կվերադառնա Գենտ և կպահանջի նրա «մեծ քերթվածը»՝ խմբագրելու համար (տե՛ս 1908-ի հունիսի 25-ի գրառումը):

ԳԱԹ, ԴՎՅ, № 274:

Մինչև սեպտեմբերի 15/28.— Նամակ՝ Գրիգոր Զպուգբարյանին (չի պահանջվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 62 լր.

Սեպտեմբերի 15/28.— Վարուժանի հայրը Կ. Պոլսից վերադառնում է Բրզնիկ:

Անդ:

Սեպտեմբերի 21.— Պիեռ Մայեսը իր լուսանկարը նվիրում է Վարուժանին: Մակագրությունը՝ «Ի հիշատակ մեր հին բարեկամության և Գենտի համալսարանում մեր համատեղ ուսման»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 182:

Սեպտեմբեր.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտնում է, որ այլևս հնարավոր չէ Հայկական միության միջոցով հրատարակել նրա ժողովածուն: Խոստանում է այդ հարցով հետաքրքրվել Կ. Պոլսում: «Անահիտի» համար խնդրում է նոր բանաստեղծություն:

«Նամականի», 268—269, ԳԱԹ, ԴՎՅ, № 212:

Վարուժանի վերջին լուսանկարը (Ռ. Սեփի տանը, 1915, Կ. Պոլս):





<Մինչև հոկտեմբերի 4>.— Թուրինից վերադառնում է Գենտ: Սենյակ է վարձում Բենառ փողոցի № 31 տանը:

«Նամականի», 151—152, ԳԱԹ, ԱԶՖ, № 6882:

Հոկտեմբերի 4.— Նամակ՝ Կ. Պոլսում գտնվող Արշակ Չոպանյանին: «Անահիտում» տպագրելու համար ուղարկում է «Հայրենի լեռներ» բանաստեղծությունը: Խնդրում է բանակցություններ վարել իր ժողովածուի հրատարակության շուրջ: Իր ծրագրերի մասին գրում է. «Այս հատորը («Ցեղին սիրտը»—Ա. Շ.) երբ լույս տեսնե, պիտի սկսեմ ասկե վերջ լոկ կյանքե գրել. լարերս փոխելու վրա եմ»:

«Նամականի», 151—152:

Նույն օրը.— Ռուբեն Գոշիկյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Խնդրում է համալսարանն ավարտելուց հետո շուտափույթ վերադառնալ ծննդավայր, դարձան անել Բրգեիկի դպրոցի ծանր վիճակին: Նամակին կից՝ նրա փեսա Հակոբ Փափազյանի երկտողը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 62 ր.:

<Մինչև հոկտեմբերի 7>.— Նամակ՝ Կ. Պոլսում գտնվող Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 96 ր.:

Հոկտեմբերի 7.— Մկրտիչ Պոտուրյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Թեոդիկի հանձնարարությամբ խնդրում է նրա լուսանկարը, ինքնակենսագրությունը և մի անտիպ բանաստեղծություն՝ 1909-ի «Ամենուն տարեցույցում» տպագրելու համար: Հայտնում է. «Զարդարյանի, Յարձանյանի, Չոպանյանի, Զապել Ասատուրի, Թեոդիկի հետ ղեռ նոր խոսեցանք վրայոքդ»:

Անդ:

Նույն օրը.— Գրում է «Հաղթողը» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 144—147:

Հոկտեմբերի 8.— Արշակ Չոպանյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Ստեղծված քաղաքական պայմանների պատճառով նպատակահարմար

չի գտնում «Հայրենի լեռներ» «գեղեցիկ» բանաստեղծության հրատարակությունը: Խորհուրդ է տալիս հետաձգել «Հայրենասիրական քերթվածներու» հատորի տպագրությունը, «Անահիտի» համար խնդրում է ուրիշ բանաստեղծություն:

«Նամականի», 270—271:

Հոկտեմբերի 9.— Գրում է «Արյան հաղթանակ» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՖ, տետր № 13, 148:

Հոկտեմբերի 10.— Հովսեփ Վայնաշարյանը Կահիրեից՝ Վարուժանին: Խնդրում է «Ճոխ սրբագրությունների» ենթարկել իր «մեծ քերթվածը»: Հայտնում է, որ «Մանզումեի էֆքյարում» տպագրված «Վան Արդվելդի արձանին» բանաստեղծությունը ֆրանսերենից թարգմանել է Նշան Տեր-Ստեփանյանը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 274:

<Մինչև հոկտեմբերի 15>.— Երկու նամակ՝ Հովհաննես Թորոսյանին (չեն պահպանվել): Ուղարկում է վկայագիրը և հայտնում ուսման մեջ ունեցած հաջողությունների մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 172:

Հոկտեմբերի 15.— Հովհաննես Թորոսյանը Վենետիկից՝ Վարուժանին: Անդրադառնում է նրա ուսումնառության և կրթաթոշակի խնդիրների:

Անդ:

<Մինչև հոկտեմբերի 16/29>.— Նամակ՝ Ռուբեն Գոշիկյանին (չի պահպանվել): Նվեր է ուղարկում «Մարտունեքը» և «Զարդը»: Հայտնում է մեկ տարի հետո հայրենիք վերադառնալու և բանաստեղծությունների նոր ժողովածու հրատարակելու մտադրությունը: Խնդրում է «Մանզումեի էֆքյարի» այն թիվը, ուր տպագրվել են իր ստեղծագործությունները:

ԳԱԹ, ԳՎՖ, № 63 ր.:



Հոկտեմբերի 16/29.— Ռուբեն Գոշիկյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Խնդրում է հայտնել, թե որքան ծախս կպահանջվի նրա նոր ժողովածուի հրատարակության համար, գուժում է Սահակ Հաճյանի մահը՝ առաջարկելով այդ առթիվ «քանի մը տող ոտանավոր մը և կամ փառավոր հոգված մը գրել», որը խոստանում է տպագրել տալ տեղական թերթերից մեկում:

Անդ:

Հոկտեմբերի 17.— Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին: Բողոքում է ամառային ամիսների կրթաթոշակը կրճատելու դեմ: Գրում է. «Ինձի երկու միջոց կը մնա. կամ վարժարանը ուղղակի իմ օրինավոր և ուսանողի պետքերես առաջնորդված միայն՝ այդ պեմբերս բոլոր կը հոգա... և կամ պետք է ուսումս կիսատ թողած՝ երթամ և օրական հացս շահիմ»: Հայտնում է նաև «հայկական հին իրավագիտության» մասին աշխատանք գրելու մտադրության մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 84ա:

<Մինչև հոկտեմբերի 19>.— Նամակ Հարություն Վարդավառյանին (չի պահպանվել): Կ. Պոլսում վաճառելու համար ուղարկում է «Սարսուռների» և «Զարդի» օրինակները:

ԳԱԹ, ԳՎՖ, № 282:

<Նույն շրջանում>.— Հարություն Վարդավառյանը Գենտից Վարուժանի ուղարկած «Սարսուռների» ու «Զարդի» օրինակները հանձնում է Զարեհ Շիշմանյանին՝ Բլուզանդյան գրատան միջոցով վաճառելու, «Սուրհանդակ» օրաթերթում տպագրում է համապատասխան ծանուցում:

Անդ:

Հոկտեմբերի 19.— Հարություն Վարդավառյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Տեղյակ է պահում «Սարսուռների» ու «Զարդի» վաճառքի համար իր ձեռնարկած միջոցներին:

Անդ:

Հոկտեմբերի 22.— Տիգրան Սյուրմեյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին:

Հրավիրում է աշխատակցել իր խմբագրությունում հրատարակվող «Սատուն» պարբերականին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 266:

Նոյեմբերի 1.— Մշակում է «Կարոտի նամակ» բանաստեղծությունը:

«Ամենուրեք», 1909, 77:

Նույն օրը.— Նամակ՝ Թեոդիկին: Ուղարկում է ինքնակենսագրությունը, լուսանկարը և «Կարոտի նամակ» բանաստեղծությունը (տե՛ս հոկտեմբերի 7-ի գրառումը):

«Նամակակնի», 156—158:

<Մինչև նոյեմբերի 2>.— Նամակ Հովսեփ Վայնաշարյանին (չի պահպանվել): Պահանջում է նրա գրած «մեծ քերթվածք» խմբագրելու համար, հետաքրքրվում է «Մանզումեի էֆքյարում» իրենից արտատրված ստեղծագործություններով (տե՛ս հոկտեմբերի 10-ի գրառումը):

ԳԱԹ, ԳՎՖ, № 275:

Նոյեմբերի 2.— Հովսեփ Վայնաշարյանը Կահիրեից՝ Վարուժանին: Ուղարկում է իր «մեծ քերթվածք», խոստանում «գործով ցուցնել, որ Ձեր եղբայրական սիրուն արժանի եմ», խնդրում է 20 օրինակ «Սարսուռներ»՝ նգիպտոսում վաճառելու համար:

Անդ:

Նոյեմբերի 3.— Հարություն Խուպեսերը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Խնդրում է մեկ օրինակ «Զարդ» (Վարուժանի պատասխանը հայտնի չէ):

ԳԱԹ, ԳՎՖ, № 177:

Նոյեմբերի 4.— Հովհաննես Թորոսյանը Վենետիկից՝ Վարուժանին: Բացատրություններ է տալիս նրա հոկտեմբերի 17-ի նամակի (տե՛ս գրառումը) առթիվ:

«Նամակակնի», 271—272:

<Նոյեմբերի 7—8>.— Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին: Դարձ-



յալ բողոքում է ամառային ամիսների կրթաթոշակը կրճատելու որոշման դեմ, պաշտպանում է իր իրավունքները:

Անդ, 153—156:

Նոյեմբերի 8.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին (չի պահանջվել): Խոսում է Վենետիկի Մխիթարյանների բարքերի մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 231:

Նույն օրը.— «Ռազմիկ» լրագիրը «Քաղաքական ակնարկ» ընդհանուր վերնագրի տակ տպագրում է Վարուժանի «Սերպիա և Ավստրիա» հոդվածը (թիվ 296): Հեղինակը հայտնում է այն կարծիքը, որ Թուրքիան պետք է «Պաշտոնական նիզակակցություն մը» ստեղծի «Պալքանյան փոքրիկ տերություններուն հետ»:

Նոյեմբերի 11.— Թեոդիկը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Հայտնում է իր խանդավառ տպավորությունները «Սարսուռներից» ու «Ջարդից», խնդրում է մեկական օրինակ այդ գրքույկներից, նվեր է ուղարկում «Ամենուն տարեցույցի» 1907—1908 տարիների հատորները՝ ակնկալելով նրա կարծիքը:

«Նամականի», 272—274:

Նոյեմբերի 12.— Ռափայել Պազարճյանը Պաղուսից՝ Վարուժանին: Խորհուրդ է տալիս «Ռազմիկում» հոդվածով հանդես գալ Մխիթարյանների դեմ:

Վարուժանը նման հոդված չի տպագրել:

ԳԱԹ, ԳՎՖ, № 231:

Նոյեմբերի 13.— Գրանցվում է Գենտի համալսարանի 1908—1909 ակադեմիական տարվա ուսանող «Քաղաքական գիտությունների թեկնածություն (լիցենցիա)» բաժնում:

ԳԱԹ, ԳՎՖ, ընդհանուր նյութեր, համալսարանի գրանցման մատյանի 41230 արձանագրությունից:

Նոյեմբերի 18.— Հովհաննես Թորոսյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է, որ կրթաթոշակի հետ կապված դավաբանությունները հաղթահարված են:

ԳԱԹ, ԳՎՖ, № 174:

Նույն օրը.— Նամակ՝ Թեոդիկին:

«Նամականի», 162—164:

Նոյեմբերի 21.— Հովսեփ Վաչնաշարյանը Կահիրեից՝ Վարուժանին: Տեղյակ է պահում «Սարսուռների» վաճառքի ընթացքին, խնդրում է փութացնել իր ստեղծագործության խմբագրումը և ղեկը հարմար վերնագիր:

ԳԱԹ, ԳՎՖ, № 276:

Նոյեմբերի 22.— Հովակիմ Եղեկյանը ԱՄՆ-ից՝ Վարուժանին: Առաջարկում է իրենց կրթական ծրագրի համար ստեղծել «այժմեական օրինագիծ-կանոնագիր» (տե՛ս 1908-ի հունվարի 22-ի գրառումը):

ԳԱԹ, ԳՎՖ, № 148:

<Մինչև նոյեմբերի 27/9 ղեկտեմբերի>.— Նամակ՝ Վահրամ Գ. Ալանաքյանին (չի պահանջվել): Նրա խնդրանքով կանխիկ վճարով ուղարկում է մեկ օրինակ «Ջարդ»:

ԳԱԹ, ԳՎՖ, № 116:

Նոյեմբերի 27/9 ղեկտեմբերի.— Վահրամ Գ. Ալանաքյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Ուղարկում է «Ջարդի» արժեքը, հայտնում Շիշլիի գերեզմանատանը Վահրամ Փափազյանի արտասանությունից ստացած իր տպավորությունը (տե՛ս հուլիսի 21/3 օգոստոսի գրառումը):

Անդ:

Նոյեմբեր.— Գրում է «Արձան» բանաստեղծությունը: Տպագրվել է «Նեմեսիս» վերնագրով:

«Նամականի», 165:

Նույն ամսին.— Նամակ՝ Երզնկայում գտնվող Գերենիկ ճիզմեճյանին: Արտահայտում է հայրենաբաղձության զգացումները: Ապագա ծրագրերի մասին գրում է. «Հագիվ այս գիրքս («Ցեղին սիրտը»—Ա. Շ.) տպվի՝ պիտի սկսիմ պատրաստել Գողգոթայի ծաղիկներու շարքը, ուր միայն ճշգրիտ կյանքը պիտի վերլուծեմ և երգեմ»:

Անդ, 164—166:



Նույն ամսին.— Դերենիկ Ճիզմեճյանը Երզնկայից՝ Վարուժանին (չի պահպանվել): Հրավիրում է համալսարանն ավարտելուց հետո մանկավարժական աշխատանքի անցնել Երզնկայում:

Անդ, 276:

<Մինչև դեկտեմբերի 6>.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է նրա տպագրելիք աշխատանքով, խնդրում է Նշան Տեր-Ստեփանյանի հասցեն:

ԳԱԹ, ԴՎՅ, № 92 Լր.:

Դեկտեմբերի 6.— Ռափայել Պաղարճյանը Մյունխենից՝ Վարուժանին: Տեղյակ է պահում իր գիտական աշխատանքներին, կարծիք է հայտնում ժամանակաշրջանի ինչ-ինչ խնդիրների մասին:

Անդ:

<Մինչև դեկտեմբերի 22>.— Նամակ՝ Հովսեփ Վայնաշարյանին (չի պահպանվել): Հայտնում է, որ ավարտել է նրա «Ազատութեան շավիղ» պոեմի խմբագրումը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 277:

Դեկտեմբերի 22.— Հովսեփ Վայնաշարյանը Կահիրեից՝ Վարուժանին: Շնորհակալություն է հայտնում իր ստեղծագործության խմբագրումն ավարտելու համար: Խնդրում է «առաջաբանի մը պես» բան գրել:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ, բայց հավանաբար չի համաձայնվել, քանի որ գիրքը լույս է տեսել Նշան Տեր-Ստեփանյանի առաջաբանով (տե՛ս 1909-ի «Մինչև ապրիլի 24» գրառումը):

Անդ:

Նույն օրը.— Ռափայել Պաղարճյանը Մյունխենից՝ Վարուժանին: Հայտնում է, որ մեկնում է Պաղում:

ԳԱԹ, ԴՎՅ, № 232:

<Մինչև դեկտեմբերի 24>.— «Անահիտում» տպագրվում է «Ար-

մենուհի» դրուցազնավեպը (թիվ 5—12, 85—90): Տե՛ս նաև ԳԱԹ, ԴՎՅ, № 163:

Դեկտեմբերի 24.— Գրում է «Գիրքերուն մեջ» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 275—277:

Նույն օրը.— Թեոդիկը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Կարծիք է հայտնում «Արմենուհի» դրուցազնավեպի մասին. «Ապրիս, տղա՛ս, նկարագրականիդ մեղանը անսպառ ըլլա և գաղափարիդ փետուր գրիչը՝ միշտ ճկուն ու միշտ նորատաշ... «Անահիտի» այս թիվը քեզմով պանծացած էր»: Խնդրում է 1910-ի «Ամենուն տարեցույցի» համար ուղարկել «Արմենուհու» ծավալով մի ստեղծագործություն, իսկ 1909-ի համար հատորի մասին «գրախոսականի պես բան մը գրել»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 163:

Դեկտեմբերի 26.— Գրում է «Մինավորը» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 278—282:

Դեկտեմբերի 28.— Շավարշ Միսաքյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Հրավիրում է աշխատակցել իր խմբագրությամբ հրատարակվող «Ազդակ» հանդեսին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 188:

<Դեկտեմբերի վերջ>.— Նամակ՝ Ռուբեն Գոշիկյանին (չի պահպանվել): Շնորհավորում է նոր տարին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 64 Լր.:

<Նույն շրջանում>.— Ֆրանսերեն նամակ դասընկերուհիներից մեկին (չի պահպանվել): Շնորհավորում է նոր տարին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 175:

Դեկտեմբերի 29.— Պիեռ Մայեսը իր լուսանկարը նվիրում է Վարուժանին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 459:



Դեկտեմբերի 31.— Գրում է ֆրանսերեն ղեկուցում թուրքական պետական «հարկային սխառեմի» մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 54, 3—45 (ծոցատետր):

Նույն օրը.— Դերենիկ Ճիզմեճյանը Երզնկայից՝ վարուժանին: Կըրկին հրավիրում է համալսարանն ավարտելուց հետո ուսուցչական աշխատանքի անցնել Երզնկայում:

«Նամականի», 274—277:

— Գեներալ լուսանկարվում է Պիեռ Մայեսի հետ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 483:

— Մնվում է վարուժանի երրորդ եղբայրը՝ Արշակ Զպուզբյարյանը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 339:

1909

Հունվարի 1.— Ժակ Պիոնը՝ վարուժանին: Շնորհավորում է նոր տարին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 175:

Նույն օրը.— Ահարոն Տատուրյանը Վենետիկից՝ վարուժանին: Շնորհավորում է նոր տարին, արտահայտում իր հիացմունքը նրա նկատմամբ՝ անվանելով «գրական ֆիտայի»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 286:

Նույն օրը.— Դասընկերուհիներից մեկը Գենտից՝ վարուժանին: Շնորհավորում է նոր տարին, հույս է հայտնում, որ նրա հայրենիքը կազատագրվի օտար լծից:

ԳԱԹ, ԴՎՅ, № 175:

<Մինչև հունվարի 5/18>.— «Ամենուն տարեցույցի» 1909-ի հատորում տպագրվում են «Վարդու նամակ» բանաստեղծությունը (76—79) և Թեոդիկին հղած 1908-ի նոյեմբերի 1-ի ու 18-ի նամակներից հատվածներ (175):

«Ամենուն տարեցույցի» լույս ընծայման մասին տե՛ս «Ազդակ», 1909, հունվար 5/18, թիվ 1, 64:

<Մինչև հունվարի 9>.— Թեոդիկից ստանում է «Ամենուն տարեցույցի» 1909-ի հատորը:

«Նամականի», 166—168:

Հունվարի 9.— Նամակ՝ Թեոդիկին: Կարծիք է հայտնում «Ամենուն տարեցույցի» 1909-ի հատորի մասին, տեղեկացնում է, որ հայրենասիրական բանաստեղծությունների ժողովածուն տպագրելու համար մեկենաս է որոնում:

Անդ:

<Մինչև հունվարի 10>.— Նամակ՝ Ռուբեն Զարդարյանին (չի պահանջվել): Ուղարկում է «Վեհաճաշը» հոդվածը՝ նկատելով. «Դժբախտաբար թե հեռավոր միջավայրիս և թե Թուրքիո լուրերուն մանրամասնությունները ուշ հասնելուն պատճառով, ինձի դժվար եղավ և պիտի ըլլա երկաթը տաք-տաք ծեծել...»:

«Ռազմիկ», 1909, հունվար 10, թիվ 312:

Հունվարի 10.— «Ռազմիկ» լրագիրը տպագրում է վարուժանի «Վեհաճաշը» հոդվածը (թիվ 312), որը ուղղված է այն հայ երեսփոխանների ու երիտթուրքական պարագլուխների դեմ, որոնք ընդունել են Արդուլ Համիդի հրավերը և մասնակցել նրա տված հանդիսավոր ճաշկերույթին (սուլթանական ճաշկերույթը տեղի է ունեցել 1908-ի դեկտեմբերի 18-ին): Խմբագրությունը նկատում է, որ թեև «Ռազմիկը» այդ խնդրին անդրադարձել է, «բայց չենք կրնար ընթերցող հասարակության նկատմանով չի հանձնել մեր համակրելի երիտասարդ բանաստեղծին հետևյալ արտահայտություններն ևս, որոնք իբրև կենդանի և ուժեղ բողոք կուղղվին դեպի այդ «արյունոտ ճաշը» և դայն ճաշակողները»:

<Մինչև հունվարի 14>.— Երկու-երեք նամակ՝ Հարություն վարդապետյանին (չեն պահանջվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 283:

Հունվարի 14.— Հարություն վարդապետյանը Կ. Պոլսից՝ վարու-



ժանին: Տեղյակ է պահում «Սարսուռներին» ու «Ջարդին» վաճառքի ընթացքին: (Տե՛ս 1908-ի «Մինչև հոկտեմբերի 19» գրառումը):

Անդ:

Հունվարի 19.— Լեոն էսաճանյանը վարուժանին նվեր է ուղարկում իր «Եղիա Տեմիրճիպաշյան» աշխատությունը (Կ. Պ., 1909): Մակագրությունը՝ «Տաղանդավոր և իսկատիպ բանաստեղծին՝ Դանիել Վարուժանին»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 267 լր.:

<Մինչև հունվարի 24/6 փետրվարի>.— Նամակ՝ «Ազդակի» խմբագրությանը: Ընդունում է աշխատակցության հրավերը, տպագրության համար ուղարկում է «Վահագն» բանաստեղծությունը: (Տե՛ս 1908-ի դեկտեմբերի 28-ի գրառումը):

«Ազդակ», 1909, թիվ 7, հունվար 24/6 փետրվար, «Նամականի», 168—169:

Հունվարի 24/6 փետրվարի.— «Ազդակում» տպագրվում է «Վահագն» բանաստեղծությունը (թիվ 7, 101—103):

Հունվարի 31/13 փետրվարի.— «Ազդակում» «Հուշատետր» ընդհանուր վերնագրի տակ տպագրվում է խմբագրությանը հղած Վարուժանի նամակը (թիվ 8, 124):

<Մինչև փետրվարի 1/14>.— Նամակ՝ Ռուբեն Գոշիկյանին (չի պահպանվել): Պատասխանում է նրա՝ 1908-ի հոկտեմբերի 16/29-ի նամակին (տե՛ս համապատասխան գրառումը):

ԳԱԹ, ԴՎՅ, № 64 լր.:

Փետրվարի 1/14.— Ռուբեն Գոշիկյանը Կ. Պոլսից՝ վարուժանին: Խորհուրդ է տալիս «Յեղին սիրտը» հրատարակելու համար դիմել Կ. Պոլսի կաթոլիկ հարուստ հայ Հովհաննես Ալլահվերտիին և զիրքը նրա մահացած որդու հիշատակին նվիրելու պայմանով ձեռք բերել պահանջվող գումարը:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ, բայց ակնհայտ է, որ այս առաջարկը չի ընդունել և ժողովածուի հրատարակության իրավունքը հանձնել է «Ազդակին» (տե՛ս 1909-ի մարտի 13/26-ի գրառումը):

Անդ:

Փետրվարի 3.— Գառնիկ Գլրճյանը Լոզանից՝ վարուժանին: Հայտնում է, որ ինքը հորինել է «Օրոր Ավարայրի» («Հայկական օրոր») վերնագրով մի ստեղծագործություն, խնդրում է թույլտվություն «որպեսզի... քեզի նվիրեմ»:

«Նամականի», 277—278:

<Մինչև փետրվարի 13>.— Սիմոն Երեմյանը՝ վարուժանին (չի պահպանվել): Խնդրում է աշխատակցել Զմյուռնիայում հրատարակվելիք «Դաշինք» լրագրին:

Անդ, 169—170:

Փետրվարի 14.— Նամակ՝ Սիմոն Երեմյանին: Խոստանում է հնարավորության դեպքում աշխատակցել «Դաշինքին», տեղեկություններ է խնդրում հիշյալ թերթի ուղղության մասին:

Անդ:

Փետրվարի 15.— Նամակ՝ Գառնիկ Գլրճյանին: Խոստանում է հնարավորության դեպքում հանդիպել նրան Լոզանում: Համաձայնություն է տալիս նրա երաժշտական ստեղծագործությունը իրեն նվիրելու խընդրանքին:

Նամակը հրատարակվել է հապավումներով: Այս մասին տե՛ս «Գրական թերթ», 1982, № 17:

Անդ, 170:

<Փետրվարի երկուրդ տասնօրյակ>.— Մի քանի օր հիվանդանում է:

ԳԱԹ, ԴՎՅ, № 233:

<Մինչև փետրվարի 17>.— Նամակ՝ Ռաֆայել Պաղարճյանին (չի պահպանվել): Հայտնում է, որ հիվանդ է:

Անդ:

Փետրվարի 17.— Ռաֆայել Պաղարճյանը Արսիից (Ֆրանսիա)՝ վարուժանին: Խնդրում է Շեքսպիրի հատորները:

Անդ:



Փետրվարի 21.— Սիմոն Երեմյանը Վենետիկից՝ վարուժանին: Դարձյալ հորդորում է աշխատակցել «Դաշինքին»:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ, բայց ստույգ է, որ «Դաշինք» լրագրում ոչինչ չի հրատարակել:

«Նամականի», 278—279:

Փետրվարի 23/8 մարտի.— «Բյուզանդիոն» լրագիրը տպագրում է Արտաշես Հարությունյանի «Գիրքեր և դեմքեր» հոդվածը: Հեղինակը ընթերցողներին հանձնարարում է. «Ազդակի 7-րդ թիվին մեջ կարգալ խիստ տաղանդավոր բանաստեղծի մը՝ Դանիել Վարուժանի մեկ սքանչելի քերթվածը՝ «Վահագն» (թիվ 3773):

Փետրվարի 26.— Գառնիկ Գլըճյանը Լոզանից՝ վարուժանին: Հայտնում է, որ հույս ունի իր երաժշտական ստեղծագործությունը տպագրել մամուլը (տե՛ս փետրվարի 3-ի և 15-ի գրառումները):

ԳԱԹ, ԳՎՖ, № 61 լր.:

<Փետրվարի վերջ>.— Նամակ՝ Գալուստ Գալստյանին (չի պահպանվել): «Գուտտենբերգ» գրախանութին է ուղարկում 21-ական օրինակ «Սարսուռներ» և «Ջարդ» վաճառքի համար:

ԳԱԹ, ԳՎՖ, № 133:

Մարտի 5.— Գալուստ Գալուստյանը Թիֆլիսից՝ վարուժանին: Տեղյակ է պահում «Սարսուռների» և «Ջարդի» վաճառքի ընթացքին:

Անդ:

<Մինչև մարտի 11>.— Նամակ՝ Ռափայել Պաղարճյանին (չի պահպանվել): Տեղեկություններ է հաղորդում Շեքսպիրի ֆրանսերեն թարգմանությունների մասին:

Տե՛ս փետրվարի 17-ի գրառումը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 234:

Մարտի 11.— Ռափայել Պաղարճյանը Արսիից՝ վարուժանին: Շոշափում է գրական խնդիրներ:

Անդ:

Նույն օրը.— Թեոդիկը Կ. Պոլսից՝ վարուժանին: 1910-ի «Ամենուն տարեցույցի» համար խնդրում է «Երկարաշունչ հոդված», խորհուրդ է տալիս հայրենասիրական բանաստեղծությունների ժողովածուն տրպագրելու համար դիմել Վենետիկի Մխիթարյաններին:

«Նամականի», 279—281:

Մարտի 13/26.— Շավարշ Միսաքյանը Կ. Պոլսից՝ վարուժանին: Առաջարկում իր հիմնած «Արծիվ» հրատարակչությանը «Ազդակի» մատենաշարով տպագրել վարուժանի ժողովածուն:

ԳԱԹ, ԳՎՖ, № 188:

<Մինչև մարտի 18/31>.— Նամակ՝ Շավարշ Միսաքյանին (չի պահպանվել): Արծարծում է իր ստեղծագործությունների հրատարակչությանն առնչվող խնդիրներ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 190:

Մարտի 18/31.— Շավարշ Միսաքյանը Կ. Պոլսից՝ վարուժանին: Խնդրում է շարունակել աշխատակցել «Ազդակին»՝ հրատարակչության հանձնելով «տաղաշափական թե արձակ, գրական թե ընկերային» զբրվածքներ:

Անդ:

Մարտի 21.— Արշակ Զոպանյանը Փարիզից՝ վարուժանին: Խընդրում է բանաստեղծություն՝ «Անահիտում» տպագրելու համար:

«Նամականի», 279:

Մարտի 22.— Ռափայել Պաղարճյանը Արսիից՝ վարուժանին: Խոստում է իր հրատարակելիք աշխատությունների մասին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 235:

Նույն օրը.— Նամակ՝ Թեոդիկին: Ի պատասխան վերջինիս առաջարկի (տե՛ս մարտի 11/24-ի գրառումը) բացատրում է, թե ինչու չի կարող իր ժողովածուն հրատարակել Վենետիկում. «Վանքը փչացած է. քանի մը քահանաներ կան միայն, որ իսկապես հարգվելու արժանի են...»:

«Նամականի», 171—172:



<Մինչև մարտի 23/5 ապրիլի>.— Մերուժան Պարսամյանը Կ. Պոլսից վարուժանին (չի պահպանվել): Խնդրում է բանաստեղծություն՝ իր «Տարեցույցում» տպագրելու համար:

«Նամականի», 282:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Մերուժան Պարսամյանին (չի պահպանվել): Ուղարկում է «Վարդեր» բանաստեղծությունը «Տարեցույցում» տպագրելու համար:

Անդ:

<Նույն շրջանում>.— «Ազդակում» տպագրելու համար ուղարկում է «Արյան հաղթանակ» բանաստեղծությունը:

«Ազդակ», 1909, թիվ 15, 225:

Մարտի 23/5 ապրիլի.— Մերուժան Պարսամյանը Կ. Պոլսից՝ վարուժանին: Պատրաստակամություն է հայտնում հեղինակի ծախսով լրավ պայմաններով և զեղարվեստական տպագրությունով՝ հրատարակել «Յինզին սիրտը»:

«Նամականի», 282:

Նույն օրը.— «Ազդակում» տպագրվում է «Արյան հաղթանակ» բանաստեղծությունը (թիվ 15, 225):

Մարտի 30.— Նամակ՝ Մերուժան Պարսամյանին: Կարծիք է հայտնում սիրահարական ու հայրենասիրական բանաստեղծությունների մասին:

«Նամականի», 172:

<Մինչև մարտի 31>.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: «Անահիտում» տպագրելու համար ուղարկում է «Ծեր կռունկը» բանաստեղծությունը (չեն հասել հասցեատիրոջը):

Անդ, 281:

Նույն շրջանում.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին (չի պահպանվել): Հետաքրքրվում է «Ծեր կռունկը» բանաստեղծության ճակատագրով:

Անդ:

Մարտի 31.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ վարուժանին: Հայտնում է, որ չի ստացել «Ծեր կռունկը»: Խնդրում է նորից ուղարկել:

Անդ:

Ապրիլի 1—4 և 12—15.— Ադանայի և Հալեպի վիլայեթներում կազմակերպվում են հայերի զանգվածային կոտորածներ:

ՉՉԷ, հ. 1, 68:

Ապրիլի 2.— Մշակում է «Լքում» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՅ, № 16, 61—72, «Ամենուն տարեցույցը», 1910, 105—106:

Նույն օրը.— Նամակ՝ Թեոդիկին: 1910-ի «Ամենուն տարեցույցի» համար ուղարկում է «Լքում» բանաստեղծությունը: Ստեղծագործական ծրագրերի մասին հայտնում է. «Հիմա նոր հատոր մը («Հեթանոս երգերը»—Ա. Շ.) պատրաստելու ձեռնարկած եմ զուտ ապրված կյանքե, քիչ մը ավելի վերլուծող, ավելի խորիմաստ և հոգեբանական երգերով»:

«Նամականի», 172—173:

<Մինչև ապրիլի 6/19>.— Լևոն էսաճանյանը Կ. Պոլսից՝ վարուժանին (չի պահպանվել): Խնդրում է վարուժանի լուսանկարը և մի բանաստեղծություն:

«Նամականի», 282—283:

Նույն շրջանում.— Նամակ՝ Լևոն էսաճանյանին (չի պահպանվել): Ուղարկում է իր լուսանկարը և «Հաղթողը» բանաստեղծությունը:

Անդ:

Ապրիլի 6/19.— Լևոն էսաճանյանը Կ. Պոլսից՝ վարուժանին: Հայտնում է, որ մտադիր է արևմտահայ բանաստեղծների մասին հրատարա-



կել մի աշխատութիւն, ուր ղետեղելու է նաև Վարուժանի «Հաղթողը», «Կարոտի նամակ» և «Վահագն» բանաստեղծութիւնները:

Այս մտահացումը չի իրականացվել:

Անդ:

Նույն օրը.— Լեոն էսանճանյանը Վարուժանին նվեր է ուղարկում իր «Այրած քնար մը Բինկյանի մոխիրներուն վրա» գլուցազնեբգութիւնը (Կ. Պ., 1909): Մակագրութիւնը՝ «Նորապես զգայուն ու տաղանդավոր բանաստեղծին՝ Դանիել Վարուժանի»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 266 ր.:

<Մինչև ապրիլի 8>.— Լոզանում տպագրվում է գաշնամուրի համար գրված Գառնիկ Գլըճյանի «Հայկական օրոք» ստեղծագործութիւնը՝ նվիրված Դանիել Վարուժանին:

«Բազմավեպ», 1909, թիվ 8, 381:

<Նույն շրջանում>.— Գառնիկ Գլըճյանը իր երաժշտական ստեղծագործութիւնը ուղարկում է Վարուժանին:

Անդ:

Ապրիլի 8.— Նամակ՝ Գառնիկ Գլըճյանին: Շնորհակալութիւն է հայտնում «Հայկական օրոքը» իրեն նվիրելու համար. «Յրհնյալ ըլլաս, սիրելի Գառնիկ,— գրում է նա,— որ գոնե վայրկյան մը պատճառ եղար զիս սա անողորմ իրականութենէն դուրս քաշելու, որ օրորովդ քնացուցիր վիրավոր գիտակցութիւնս՝ արթնցնելով սրտիս մեջ շատոնց փակված երազանքի և զգացումների աշխարհը»:

Անդ, 381—382:

<Մինչև ապրիլի 15>.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին (չի պահպանվել): Ուղարկում է նրա խնդրած գրքերը:

Տե՛ս 1909-ի փետրվարի 17-ի գրաստումը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 236:

Ապրիլի 15.— Ռափայել Պազարճյանը Արսիից՝ Վարուժանին: Հայտնում է, որ ստացել է ուղարկած գրքերը:

Անդ:

Նույն օրը.— Շարագրում է «Հայաստանն ու տերութիւնը (Սան-Ստեֆանոյի դաշնագիրը. Կիպրոսի պայմանագիրը. Բեռլինի վեհաժողովը)» ֆրանսերեն աշխատութիւնը (52 էջ):

ԳԱԹ, ԴՎՅ, № 62:

<Մինչև ապրիլի 18/1 մայիսի>.— «Ազդակին» է ուղարկում «Ապրիլի» բանաստեղծութիւնը:

«Ազդակ», ապրիլի 18/1 մայիսի, 278:

Ապրիլի 18/1 մայիսի.— «Ազդակում» տպագրվում է «Ապրիլի» բանաստեղծութիւնը (թիվ 18, 278):

Ապրիլի 22.— Նամակ՝ Ռափայել Պազարճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 237:

Ապրիլի 23.— Գառնիկ Գլըճյանը Լոզանից՝ Վարուժանին: Խնդրում է «2 գեղեցիկ և եղանակի հարմար» բանաստեղծութիւն՝ երաժշտութիւն վերածելու համար:

«Նամականի», 284—285:

<Մինչև ապրիլի 24>.— Կահիրեում «Ազատորդի» կեղծանվամբ հրատարակվում է Հովսեփ Վայնաշարյանի «Ազատութիւն շափիղը» պոեմը՝ Նշան Տեր-Ստեփանյանի առաջաբանով: Անվանաթերթը՝ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՎԻՂԸ, երգեց ԱԶԱՏՈՐԴԻ, ի վեհետիկ, Գահիրե, տպագրութիւն Ազգ.[ային] տպարանի, 1909, (52 էջ):

Տե՛ս 1908-ի ղեկտեմբերի 22-ի գրաստումը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 278:

Ապրիլի 24.— Հովսեփ Վայնաշարյանը Կահիրեից՝ Վարուժանին: Մանուցում է իր գրքույկի լույս ընծայումը, խնդրում է «մի քանի թերթերու մեջ հոդվածներ տաս գրքիս վրայոք»:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ, բայց հավանաբար մերել է այդ խնդրանքը, քանի որ մամուլում այդ առթիվ ոչինչ հրատարակել:

Անդ:



Նույն օրը.— Ռափայել Պաղարճյանը Արսիից՝ Վարուժանինն Հայտնում է իր կարծիքը Կիլիկյան ջարդերի մասին, գրում է, որ մտադիր է վերագանալ Թուրքիա:

ԳԱԹ, ԴՎՅ, № 237:

Ապրիլի 29.— Նամակ՝ «Մասունի» խմբագրությանը: Շնորհակալություն է հայտնում հանդեսի առաջին թիվը իրեն ուղարկելու համար:

«Նամականի», 173—174:

Մայիսի 3.— Գրում է «Ադոնիսի մը» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13, 283:

<Մայիսի 3-ից հետո>.— Ընդհանուր մի տեսքում ընդօրինակում է 1902-ի հունիսից մինչև 1909-ի մայիսի 3-ը գրած հետևյալ բանաստեղծությունները՝ Վերածնության երգը, Մատնիչը, Արծիվներու կարավանը, Որբունին (ա. թ.), Առևանգիչը, Ես ինձի (ա. թ.), Կովի երթ, Հայկականեռուն օրոհանը, Բժիշկը, Բմբուստանի շեփոհ (ա. թ., նախապես վերնագրել է՝ «Ռազմի շեփոհ»), Կովկասահայ վիրավորը, Նպատակին (ա. թ., նախապես վերնագրել է՝ «Հառաջ»), Վաղվան բողբոջներ (ա. թ.), Ալիշանի շիրմին առջև (ա. թ.), Կարմիր հողը, Կռունկը, Անի, Ապրիլ, Դերենիկը, Հոսք բանտը (ա. թ.), Լվացարանին, Ջարդը (1895—1896), Մարած օնախը, Հայրենիքի ոգին, Օձը (խորհրդանկար), Հայհոյություն, Առաջյալը, Քաղցած ժողովուրդին, Վահագն, Դիակի սայլը, Կարոտի նամակ, Հայրենի լեռներ, Հաղորդը, Արյան հաղթանակ, Աստվածունին (ա. թ.), Երգ («Մառի մը տակ, մամուռն ինձ բարձ»), Խեղդված միջատը, Հրավեր, Վարդեր, Դեռ կանուխ, Երգ սրսկապանի, Հին սեր, Մաղրանկար, Առաջին մեղքը, Մամուս աղոթքը (ա. թ.) Աստուծո լացը, Հիսուսին պեպեքը, Դաշտերու տղան, Պապս, Թողեմ մեծնամ, Երգ խոստովանանքի, Լճում (Նիրվանայի հորը), «Օրհնեալ ես դու ի կանայս», Աղբյուրը լույսին, Վենետիկ (ա. թ.), Գրեհուն մեջ, Մինավոր, Ադոնիսի մը:

Անվանաթերթը՝ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ, Գ Ա Ն Ի Ե Լ Գ. Չ Ո Ի Պ Ո Ի Գ Թ-Յ Ա Ր:

ԳԱԹ, ԴՎՅ, տետր № 13:

<Մինչև մայիսի 4>.— Գրում է «Դյուցազնի մը սուրին» բանաստեղծությունը:

«Ազգակ», 1909, թիվ 2, 334:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ «Ազգակի» խմբագրությանը: Դատապարտում է Ադանայի կոտորածները: Տպագրության համար ուղարկում է «Դյուցազնի մը սուրին» բանաստեղծությունը:

«Նամականի», 174—175, «Ազգակ», 1909, թիվ 21, 334:

Մայիսի 4.— Շավարշ Միսաբյանը Կ. Պոլսից՝ Վարուժանինն: Բացատրություններ է տալիս, թե ինչու չի կարողացել կատարել վարձատրության մասին իր խոստումները:

ԳԱԹ, ԴՎՅ, № 189:

Մայիսի 9/22.— «Ազգակը», «Հուշատետր» ընդհանուր խորագրի տակ տպագրում է հատվածներ խմբագրությանը հղած Վարուժանի նամակից (թիվ 21, 334):

Մայիսի 12.— Ռափայել Պաղարճյանը Արսիից՝ Վարուժանինն: Կարծիք է հայտնում Թուրքիայի ներկա վիճակի մասին, տեղեկացնում է, որ մեկնում է Պաղոս:

ԳԱԹ, ԴՎՅ, № 237:

Մայիսի 16/29.— «Ազգակում» տպագրվում է «Դյուցազնի մը սուրին» բանաստեղծությունը (թիվ 22, 339—340):

Նույն օրը.— Թեոդիկը Կ. Պոլսից՝ Վարուժանինն: Հայտնում է, որ «Լքում» բանաստեղծությունը տպագրելու է «Ամենուն տարեցույցի» 1910-ի հատորում: Գրում է. «Լքումը» կարդացի ամենամեծ հաճույքով, հաճույք, որ իր մեջ այնքան շատ ուներ թախիժ ու կակիժ»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 164:

Մայիսի 18/31.— Եսայի վարդապետ Խայիկյանը Կ. Պոլսից՝ Վարուժանինն: Խնդրում է անդամակցել նոր կազմակերպված Մուրաու-



Ռափայելյան սանուց միությանը և աշխատակցել «Ամսօրյա տեղեկատուին»:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ:

ԳԱԹ, ԳՎՅ, № 175:

Նույն օրը.— Ահարոն Տատուրյանը Վենետիկից՝ Վարուժանին: Հայտնում է կարծիք «Արմենուհիի» մասին. «Քերթվածդ հոյակապ է և լուսապայծառ արևելյան երկինքն է արշալույսներուն մեջ լյուղ եկած», երգ-երգոցի հեշտ ու նվաղ բարախում մըն է հարեմի աղջիկներուն դուսաներգությունը՝ Հայուհիին աստվածագեղության շուրջը հյուսված»:

ԳԱԹ, ԳՎՅ, № 287:

<Մինչև մայիսի 29>.— «Անահիտում» տպագրվում է «Ծեր կրուսկը» բանաստեղծությունը (թիվ 1—2, 33—34), (տե՛ս մայիսի 29/11 հունիսի գրառումը):

Մայիսի 29/11 հունիսի.— Վահան Թեքեյանը Կ. Պոլսից՝ Վարուժանին: «Ծեր կրուսկը» համարում է «մեր բանաստեղծության անմահ մեկ էջը», վերադարձնում է իր մոտ պահած «Վերածնություն» քերթվածը (տե՛ս 1906-ի փետրվարի 13-ի գրառումը), հրավիրում է աշխատակցել Կ. Պոլիս փոխադրված «Շիրակին»:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ, բայց «Շիրակում» (Կ. Պոլսի) նա ոչինչ չի տպագրել:

«Նամակներ», 287—288:

Մայիս.— «Սասունում» տպագրվում է «Հաղթողը» բանաստեղծությունը (թիվ 3, 102—103):

Հավանաբար «Հաղթողը» «Սասունին» է ուղարկել իմանալով, որ Լևոն էսաճանյանի ձեռնարկը չի հաջողվում (տե՛ս 1909-ի ապրիլի 6/19-ի գրառումը):

Նույն ամսին.— Նամակ՝ Լևոն էսաճանյանին: Կարծիք է հայտնում նրա «Այրած քնար մը Բինկյանի մոխիրներուն վրա» դուցազներգությունը:

«Նամակներ», 176—178:

Հունիսի 1.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին: Հայտնում է իր կարծիքը Կիլիկյան եղեռնի և հայ ժողովրդի վիճակի մասին:

ԳԱԹ, ԳՎՅ, № 216:

Հունիսի 2/15.— «Ազատամարտի» խմբագրությունը Կ. Պոլսից՝ Վարուժանին: Հրավիրում է աշխատակցել:

Վարուժանի պատասխանը հայտնի չէ, բայց աշխատակցել է:

ԳԱԹ, ԳՎՅ, № 115:

<Մինչև հունիսի 13/26>.— Գրում է «Կիլիկյան մոխիրներուն» բանաստեղծությունը, ուղարկում «Ազգակին»:

«Ազգակ», 1909, թիվ 26, 401—404:

Հունիսի 13/26.— «Ազգակում» տպագրվում է «Կիլիկյան մոխիրներուն» բանաստեղծությունը (թիվ 26, 401—404):

Հունիսի 30.— Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին: Արծարծում է իր ուսումնառությանն առնչվող խնդիրներ:

ԳԱԹ, ԳՎՅ, № 86:

<Մինչև հուլիս>.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին (չի պահանջվել): «Անահիտում» տպագրելու համար ուղարկում է «Աղբյուրը լույսին» բանաստեղծությունը:

«Անահիտ», 1909, հունիս-հուլիս, թիվ 3—4, 70—71:

<Մինչև հուլիսի 2>.— Նամակ Ահարոն Տատուրյանին (չի պահանջվել): Հայտնում է հայրենիք վերադառնալու մտադրության մասին, խնդրում է ողջույններ հաղորդել Գրանիկ Գլըճյանին:

«Նամակներ», 285—287:

Հուլիսի 2.— Ահարոն Տատուրյանը Կահիրեից՝ Վարուժանին: Հաջողություններ է մաղթում հայրենիք վերադառնալու կապակցությամբ:

Անդր



<Մինչև հուլիսի 4/17>.— Գրում է «Պատվեր» բանաստեղծու-  
թյունը, ուղարկում «Ազգակին» տպագրության համար:

«Ազգակ», 1909, թիվ 29, 450:

Հուլիսի 4/17.— «Ազգակը» տպագրում է «Պատվեր» բանաստեղ-  
ծությունը (թիվ 29, 450):

Նույն օրը.— Գեներում հրատեղատի այցելություն է տալիս Պիեռ Մայե-  
սին, նվիրում է իր լուսանկարը: Մակագրությունը՝ «Անկեղծ բարեկա-  
մուրջան մեծաբանք բարեկամիս» Պիեռ Մայեսին. 17 հուլիս, Կառնո:

Ա. Պատրիկ, 143:

Հուլիսի 6/19.— Նամակ՝ Հովհաննես Թորոսյանին: Հայտնում է, որ  
պատրաստվում է համալսարանի ավարտական քննություններին, խընդ-  
րում է ճանապարհածախս հայրենիք մեկնելու համար:

«Նամականի», 212:

<Մինչև հուլիսի (12)25>— Հանձնում է քննությունները, ավար-  
տում Գեներտի համալսարանը՝ ստանալով «Լիցենիատ (թեկնածու) քա-  
ղաքական գիտությունների» որակավորումը:

Անդ, 178—179: Տե՛ս նաև ԳԱԹ, ԳՎՖ, շմշակված էջութեր,  
համալսարանի արտիվի տվյալները:

Հուլիսի (12)25.— Նամակ՝ Արշակ Զոպանյանին: Հայտնում է հա-  
մալսարանն ավարտելու լուրը և հայրենիք մեկնելու օրը:

«Նամականի», 178—179:

Հուլիսի (13)26.— Գեներտից մեկնում է Վենետիկ՝ այնտեղից Կ. Պո-  
լիս ու Սերաստիա գնալու համար:

Անդ, 178:

Հուլիսի 15/28.— Հասնում է Վենետիկ, այցելում Ս. Ղազար:  
«Դանիել Վարուժան դեպ ի հայրենիք. (15/28 հուլիս)» հաղորդու-  
մից. «Վարուժան ուխտավորի մը պես լուռ, ծաղկյա պսակ մը ձեռքը  
մտավ Ս. Ղազար, պսակը դրավ Հ. Ալիշանի դամբանին վրա, ուսկից

առած էր «վրեժի» ուժը և ձայնը: Երիտասարդ բանաստեղծը իր կենդա-  
նի աչքերը նահապետին մահարձանին աչքերուն հառած լուռ կեցավ  
մի քանի վայրկյան. անոնք անձայն իրարու միտք կարդացին...»:

«Բաղմավեպին» է հանձնում «Վերածնություն» բանաստեղծու-  
թյունը՝ տպագրելու համար:

«Բաղմավեպ», 1909, թիվ 9, 418—419:

<Մինչև հուլիսի (18)31>.— Գնում է Ազոլո, այցելում է Սիմոն  
Երեմյանին: Վերջինս իր հուշերում պատմում է. «Ան ծոցեն հանեց  
քերթվածներու հավաքածոն, որուն անունը դրած էր «Յեղին սիրտը»:  
Ճարտար հոետորի շեշտով ընտրանք կարդաց իր քերթվածները: Ճոխ-  
ճեմելով անդինարույր Բանեանոյի ծառուղիներուն մեջ, գրական զբո-  
սանք մը կունենանք»:

«Բաղմավեպ», 1931, թիվ 7—8, 328:

<Նույն օրերին>.— Իտալիայից մտերմական նամակ՝ Պիեռ Մա-  
յեսին:

ԳԱԹ, ԳՎՖ, № 49 ԼԻ:

Հուլիսի (18)31.— Վենետիկից նամակ՝ Թեոդիկին: Հայտնում է  
Կ. Պոլիս մեկնելու լուրը:

«Նամականի», 179:

Նույն օրը.— Իտալական «Մոնտենեգրո» շոգենավով Վենետիկից  
մեկնում է Կ. Պոլիս:

Անդ:

<Հուլիսի 20—22>.— Հասնում է Կ. Պոլիս: Հավանաբար մնում  
է ազգականներից մեկի՝ Երանոս Տեր-Աստվածատրյանի տանը: Մի քա-  
նի օր հիվանդանում է՝ կապված կլիմայի փոփոխության հետ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 39 ԼԻ:

Հուլիսի 27.— Կ. Պոլսից նամակ՝ Գառնիկ Գլըճյանին: Հայտնում  
է, որ հիվանդության պատճառով չի կարողանում տնից դուրս գալ և  
այցելել գրական գործիչներին:

Անդ:



<Հուլիսի 27-ից օգոստոսի 22>.— Մնում է Կ. Պոլսում: Այցելում է «Ազատամարտի» և «Ազդակի» խմբագրություններին, ժանոթանում Ռուբեն Զարդարյանի, Գեղամ Բարսեղյանի և այլոց հետ: Համաձայնության է գալիս «Արծիվ» հրատարակչական ընկերության հետ «Ցեղին սիրտը» ժողովածուն «Ազդակի» մատենաշարով հրատարակելու հարցի շուրջ: Տպագրության համար «Ազատամարտին» է հանձնում «Թնդանոթակիրները» (գրության ժամանակն ու վայրը անհայտ), իսկ «Ազդակին»՝ «Գիրքերուն մեջ» և «Վիրավորը» բանաստեղծությունները:

«Լուսադրյուր», 1954, թիվ 26—27, «Ազդակ», 1909, թիվ 33, 498, թիվ 34, 530, թիվ 36, 564, թիվ 38, 594—595, «Ազատամարտ», 1909, թիվ 51:

<Հուլիս>.— «Անահիտում» տպագրվում է «Աղբյուրը լույսին, բանաստեղծությունը: Վերահրատարակվել է «Լույսը» վերնագրով (հունիս-հուլիս, թիվ 3—4, 70—71):

Օգոստոսի 1/14.— «Ազդակը» իր մատենաշարով հրատարակվող գրքերի մեջ ծանուցում է. «ՅՆՂԻՆ ՍԻՐՏԸ. քերթվածներ ԴԱՆԻՆՆՎ ՎԱՐՈՒԹԱՆԻ» թիվ 33, 498):

Օգոստոսի 8/21.— «Ազատամարտում» տպագրվում է «Թնդանոթակիրները» բանաստեղծությունը (թիվ 51): Վերահրատարակվել է «Թիսպարտները» վերնագրով:

Նույն օրը.— «Ազդակում» տպագրվում է «Գիրքերուն մեջ» բանաստեղծությունը (թիվ 34, 530): Միաժամանակ հրատարակվում է Ազամ Միցկևիչի «Ալպուխարա» բալլադը Վարուժանի թարգմանությամբ (538—539):

Թարգմանչի անունը չի հիշատակված, բայց այդ թարգմանությունը նույնությամբ գետնովել է Ռուբեն Զարդարյանի «Մեղրագետում», ուր նշված է թարգմանչը (տես 1914-ի «Տարվա ընթացքում» գրառումները):

Օգոստոսի 22/4 սեպտեմբերի.— Կ. Պոլսից մեկնում է Բրզնիկ: «Դեպի բնագավառ» հոդվածում Գեղամ Բարսեղյանը հաղորդում է. «Մեք աշխատակից Դանիել Վարուժան այսօր դեպի գավառ՝ իր ծննդավայր Սեբաստյան գյուղ մը՝ Բրզնիկ կուղևորվի»:

«Ազդակ» 1909, թիվ 36, 564:

<Մինչև օգոստոսի 29>.— Բրզնիկի ճանապարհին արևմտահայ գրողների ու մտավորականների մի խմբի հետ այցելում է Պարտիզակ (այցը կազմակերպել է «Ազդակի» խմբագրությունը):

Սիրունի, 60:

<Նույն շրջանում>.— Պարտիզակում բանախոսում է տեղի հասարակայնության առաջ և արտասանում «Ջարդը»: Վահրամ Թաթուր (Վ. Թ.) «Վերագրածի ուրվագիր» թղթակցության մեջ գրում է. «Արևը արդեն խավարած էր այն ատենն, երբ մեր քնարահար բարեկամը՝ Դանիել Վարուժան կավարտեք իր ահավոր «Ջարդին» ահավոր ընթերցումը՝ քստմնած առաքյալի մը պես կալին մեջտեղը կանգուն իբրև անպարագիծ Բովանդակին կեդրոնը հողակառույց պատվանդանի մը, մեք սահմուկած հիացումին և հաբեկ հորիզոններուն դիմաց և մեր տասնըվեց հոգիներովը կիսաբոլորած մահիկաձև»:

«Ազդակ», 1909, օգոստոսի 29/11 սեպտեմբերի, թիվ 37, 580:

<Նույն շրջանում>.— Պարտիզակում այցելում է Դեղնիթան աղբյուր և նրա թարմ տպավորության տակ հղանում «Հրաշքին աղբյուրը» բանաստեղծությունը:

«Նամականի», 183:

<Նույն շրջանում>.— Պարտիզակից նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել): Հայտնում է, որ այցելել է նրա մորն ու եղբայրներին, պատմում է իր տպավորությունները Ս. Մինասի աղբյուրից:

«Էջմիածին», 1958, ը, 37:

Օգոստոսի 29/11 սեպտեմբերի.— «Ազդակը» տպագրում է մի հատված Պարտիզակում Վարուժանի արտասանած բանախոսությունից՝ «Հեռուս» խորագրով (թիվ 37, 582):

<Մինչև սեպտեմբերի 2>.— Սեբաստիա հասնելուց առաջ մեկ օրով մնում է Ամասիայում: Նրան է այցելում Մկրտիչ Բնակունին, որն իր հուշերում պատմում է. «Անմիջապես գացի գոտա դայն պանդոկի մը անկյունը, նստած կը գրեք: Իսկույն գրիչը վար դրավ և իրարու ծանոթանալի վերջ, սկսանք խոսակցիլ: Հետո խնդրեց ինձմե, որ քաղաքիս



հնուիցյան վայրերը առաջնորդեմ զինքը: Սիրով ընկերացա իրեն՝ առաջնորդելով բոլոր այն վայրերը, որոնց քարի պաղ երակներեն բանաստեղծական տաք ներշնչումներ կուզեր քաղել: Իրիկվան վերադարձանք պանդոկ, ուր քիչ մը հանգիստ առնելի վերջ հրաժեշտ առինք իրարմե, որովհետև մյուս առտու արշալույսին պիտի մեկնեիր Սեբաստիա»:

«Շանք», 1918, թիվ 6, 70:

Սեպտեմբերի 2.— Ժամանում է Սեբաստիա:

Գավառական լրագրի «Ժամանում» ծանուցումից. «Ուրախ ենք հայտարարելու «Անդրանիկի» բոլոր ընթերցողներուն, թե մեր գրականության ամենանշանավոր դուրսագնից բանաստեղծներեն ԳԱՆԻՆԻՎ ԱՐՈՒԻՍԻ Բրգնիկցի, որ Կանդի մեծ համալսարանը կը գտնվեր, շտաբը օր քաղաքս ժամանեց»:

«Անդրանիկ», 1909, սեպտեմբեր 5/18, թիվ 36:

Սեպտեմբերի 5/18.— «Անդրանիկը» հրապարակորեն հրավիրում է աշխատակցել լրագրին (թիվ 36):

Վարուժանն այս պարբերականում ոչինչ չի տպագրել:

Միաժամանակ թերթը հրատարակում է Վահան Մոսկոֆյանի «Բաց նամակը» Թորգոմ Գուշակյանին: Առաջնորդի ուշադրությունն է հրավիրվում այն փաստի վրա, որ դպրոցներում պակաս են «բարձրագույն կրթություն առած գիտակից «ուժերը» և ասվում է. «Հիմակ այդ պակասը լրացնելու առիթը ներկայացած է մեզի, հանձին համալսարանական տաղանդավոր բանաստեղծ-գրագետ Գանիել էֆ. Վարուժանի, որուն արժանիքը ամեն կասկածն վեր է»: Առաջարկվում է նրան «Ազգ. [ային] Արամյան վարժարանին մեջ առաջնակարգ պաշտոն մը հանձնելու»:

Նույն օրը.— «Ազգակում» տպագրվում է «Վիրավորը» բանաստեղծությունը (թիվ 38, 594—595):

<Մինչև սեպտեմբերի 12>.— Սեբաստիայի ուսումնական խորհուրդը պայմանավորվում է Վարուժանի հետ Արամյան ազգային վարժարանի բարձրագույն կարգում հայերեն, մատենագիտություն, ֆրանսերեն և քաղաքատնտեսություն դասավանդելու համար: Այս վարժարա-

նում հետագայում Վարուժանին առաջարկել են տեսչության պաշտոն, բայց «ինչ-ինչ փափուկ խնդիրներու համար» չի համաձայնել: Արամյան վարժարանում պաշտոնավարելուն զուգահեռ անդամակցել է Բրգնիկի Բագրատունյան վարժարանի հոգաբարձությունը:

«Անդրանիկ», 1909, թիվ 37, «Նամակների», 186, «Հողաբ», 1911, թիվ 30:

Սեպտեմբերի 12.— Բրգնիկից նամակ՝ Նշան Տեր-Ստեփանյանին: Հայտնում է առաջին տպավորությունները. «Սեբաստիո երիտասարդությունը լավ ընդունելություն ըրավ ինձ: Անպատճառ իրենց մեջ պաշտոնի մը կուզեն տեսնել զիս...»

«Նամակների», 179—180:

<Սեպտեմբերի 12-ից հետո>.— Սկսում է դասավանդել Սեբաստիայի Արամյան վարժարանում: Այդ մասին նա հետագայում գրել է. «Ես հոս հագիվ հասա, տվին ուսուցչական պաշտոն մը»: Երկուսենյալականոց հարկաբաժին է վարձում Սեբաստիայի Պեզիրճու Արտը հայկական թաղամասի Պուլուք Սոգաք փողոցի Օտապաշյաններին պատկանող տներից մեկում: Լի և կիրակի օրերին գնում է Բրգնիկ՝ ծնողների մոտ: Ժամանակակիցների վկայությամբ Վարուժանը եղել է սիրված ուսուցիչ: «Գպրոցին սեմեն մտնելի ետք,— հավաստում է Գրիգոր Կիրակոսյանը,— ան համակրանքին ու հիացումին առարկան էր թե իր պաշտոնակիցներուն և թե աշակերտության»:

«Նամակների», 187, «Պայխաբ», 1957, թիվ 207, 1973, թիվ 93:

<Մինչև սեպտեմբերի 26>.— «Ազգակին» է ուղարկում «Միշատի մը» բանաստեղծությունը:

«Ազգակ», 1909, թիվ 40, 628:

Սեպտեմբերի 26/9 հոկտեմբերի.— «Ազգակում» տպագրվում է «Միշատի մը» բանաստեղծությունը (թիվ 40, 628): Վերահրատարակվել է «Խեղդված միջատը» վերնագրով:

Սեպտեմբեր.— «Բաղմավեպում» տպագրվում է «Վերածնություն» բանաստեղծությունը (թիվ 9, 418—419):

<Նույն ամսին>.— Մկրտիչ Պոտուրյանը Վենետիկից՝ Վարուժա-



նին (չի պահպանվել): Խնդրում է Ադանայի կոտորածների պատճառով որբացած երեխաների օգտին հրատարակվող «Գեղունիի» համար ուղարկել մի բանաստեղծություն:

«Էշմիածին», 1958, 37:

<Նույն ամսին>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել): «Գեղունիում» տպագրելու համար ուղարկում է «Դիակի սալը» բանաստեղծությունը:

Անդ:

Հոկտեմբերի 3/16.— Կեսարիայից Ներսես-Շահնուր ստորագրության մի ընթերցող բաց նամակով դիմում է «Անդրանիկի» խմբագրությանը, հույս հայտնելով, որ «մեր ամենեն սիրված բանաստեղծը՝ Դանիել էֆ. Վարուժան պետք է չզլանա իր տողերը «Անդրանիկին»:

Տե՛ս նաև սեպտեմբերի 5/18-ի գրառումը:

«Անդրանիկ», 1909, հոկտեմբեր 3/16, թիվ 40:

Հոկտեմբերի 10/23.— «Անդրանիկը» «Խոսիտորաթա» քրոնիկում հարց է բարձրացնում, որպեսզի Արամյան վարժարանում Վարուժանին հանձնվի նաև մանկավարժության դասավանդումը, «զի ալ բավ է, որ խեղճ ուսանողները առարկա ըլլան քմահաճույքներու այն պաշտոնեից, որք անտեղյակ են ըստ մեծի մասին հայ խոսքե, հայ լեզվե և մանկավարժական գիտելիքներե, անտեղյակ են հոգեբանութենե» (թիվ 41):

Այս առաջարկը հավանաբար արձագանք չի գտել, և Վարուժանը մանկավարժություն չի դասավանդել: Հետագայում նա պարապել է «Քաղաքական սահմանադրություն» առարկան (տե՛ս «Պայթար», 1973, թիվ 93, Ա. Պատրիկ 19):

<Հոկտեմբեր>.— Առևտրական Միրիճան Թաշճյանի հրավերով դառնում է նրա դուստր Արաքսիի հայերենի ու ֆրանսերենի տնային ուսուցիչը: Վարուժանի և Արաքսիի միջև սկսվում է փոխադարձ համակրանք, որը վերաճում է ուժեղ սիրո: Աղջկա ծնողներն ընդդիմանում են (իրենք հարուստ էին ու լուսավորչական և Արաքսիին էլ մանկութենյանը էին մեկ ուրիշի հետ): Այդ մասին ակնարկել է Վարուժանը. «Հոսս (Սեբաստիայում—Ա. Շ.) տարի մը ապրեցա և վեպ մը ապրեցա»:

«Պայթար», 1973, թիվ 95, Կարո Գևորգյան, Ամենուն տարեգիրքը, 1959, 123—133, «Տեղեկատու», 1979, թիվ 12—13:

<Մինչև նոյեմբեր>.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին (չի պահպանվել): «Անահիտում» տպագրելու համար ուղարկում է «Վենետիկ» բանաստեղծությունը:

«Անահիտ», 1909, թիվ 10—11, 192:

Նոյեմբերի 8.— Բանախոսում է Սեբաստիայի մայր եկեղեցում հոգեհանգստի արարողության ժամանակ (չի պահպանվել):

«Անդրանիկ» 1909, նոյեմբեր 14/27, թիվ 46:

Նոյեմբերի 14/27.— Բանախոսում է Սեբաստիայի «Լույս» ընթերցատանը կազմակերպված ցայգահանդեսում և արտասանում «Ջարդը»: «Ցայգահանդեսներ» հաղորդման մեջ այդ մասին «Անդրանիկը» գրում է. «Հանրածանոթ քերթող Դանիել Վարուժան 95-ի սարսուղեղեցիկ կոտորածներուն վրա հրաշագործած իր «Ջարդը» վերնագրով դուրս գալիս կարգաց լսողները կարգաց այնքան առույգ արտասանությամբ, այնքան կիրթ ձևերով և հուզումնալից շեշտերով, որ բոլոր ունկնդիրները թովեց ու վրդովեց»:

Կարգացված բանախոսության նյութը հայտնի չէ: Գրիգոր Կիրակոսյանը իր հուշերում վկայում է. «Վարուժան սիրված բանախոս մըն էր, և լավ կը հիշեմ, թե Թորգոմ Սրբազան (Գուշակյան—Ա. Շ.) ինչ զգայուն բառերով ներկայացուց զինքը, երբ առաջին անգամ բեմ կը բարձրանար. «Բագրատունիներու, Հյուրմուզներու, Ալիշաններու կոճղեն վերընձյուղած շառավիղը...»:

«Անդրանիկ», 1909, նոյեմբեր 21/4 դեկտեմբեր, թիվ 47, «Ազատամարտ» 1909, նոյեմբեր 28, թիվ 45, «Պայթար», 1973, թիվ 94:

<Մինչև նոյեմբերի 17/30>.— Գրում է «Հրաշքին աղբյուրը» բանաստեղծությունը:

«Նամականի», 180:

<Նույն շրջանում>.— Վերցվում է զինվորական հաշվառման:

Անդ:

Նոյեմբերի 17/30.— Բրգնիկից նամակ՝ Գառնիկ Գլըճյանին: Իր առօրյայի մասին գրում է. «Հոս կգրաղիմ ուսուցչական պաշտոնով»:



Բանաստեղծությանց շարքը սկսած էմ տալ խիստ հաջող և մրկոտ...»: Հայտնում է նաև. «Հացին երգը» գարնան դեմ պիտի սկսիմ»:

Անդ:

Նոյեմբերի 28/11 դեկտեմբերի.— «Անդրանիկը» հաղորդում է, որ Սեբաստիայի ազգային հիվանդանոցի հոգաբարձությունը ի նպաստ հիվանդանոցի կազմակերպվելիք նվազահանդեսի կարգադիր մասնախմբում ընդգրկել է նաև Վարուժանին (թիվ 48):

<Մինչև նոյեմբերի 30>.— «Ամենուն տարեցույցի» 1910-ի հատորում տպագրվում են «Լքում» բանաստեղծությունը (68), և մի հատված 1909-ի հունվարի 9-ին Թեոդիկին հղած նամակից (105—106):

«Ամենուն տարեցույցի» լույս ընծայման ազդը տե՛ս «Հայրենիք», 1909, նոյեմբեր 30/13 դեկտեմբեր, թիվ 1541:

Նոյեմբեր.— «Անահիտում» տպագրվում է «Վենետիկ» բանաստեղծությունը (թիվ 10—11, 192):

<Մինչև դեկտեմբերի 5>.— Գառնիկ Գլրճյանը Գենտից՝ Վարուժանին (չի պահպանվել): Հայտնում է, որ իրեն նվիրել է երաժշտության:

«Նամականի», 181—182:

Դեկտեմբերի 5.— Նամակ՝ Գառնիկ Գլրճյանին: Խնդրում է քաղաքատնտեսության ու սահմանադրության վերաբերյալ ֆրանսերեն գրքեր, հայտնում է, որ «Յեղին սիրտը» ժողովածուն տպագրության ընթացքի մեջ է:

Անդ:

Նույն օրը.— Սեբաստիայից մտերմական նամակ՝ Պիեռ Մայեսին: ԳԱԹ, ԴՎՅ, № 50 լր.:

Դեկտեմբերի 12.— Սեբաստիայի Կարմիր խաչի ընկերության տված քատերական ներկայացումից հետո հանդես է գալիս արտասանությունը:

«Անդրանիկ», 1909, դեկտեմբեր 19/1 հունվար 1910, թիվ 51:

Դեկտեմբերի 17/30.— Սեբաստիայի ազգային լսարանում որբանոցի օգտին կազմակերպված հանդեսում արտասանում է Պետրոս Գուրյանի «Տրտունջը»: «Անդրանիկը» «Ուշագրավ հանդես» հաղորդման

մեջ գրում է. «Մեր ամենասիրած բանաստեղծը՝ Գանիկ էֆ. [ենտի] Վարուժան, բեմ ելնելով, թոքախտավոր Գուրյանն ըլլալով, բնականորեն արտասանեց աննման և անմահ Գուրյանի «Տրտունջը»... Բանաստեղծություն մը բանաստեղծի մը շրթունքներեն լսել արդարև հիանալի է... Կրկնված ծափերու մեջ Գ. Վարուժան վերջացուց իր հուզումնասլաց արտասանությունը: Այդ գերագույն վայրկյանին կարծես Վարուժանի հոգին, ղգացումն ու եռանդը համբուրված էր պաշտելի Գուրյանի երգող հոգվուն հետ...»:

«Անդրանիկ» դեկտեմբեր 19/1 հունվար 1910, թիվ 51: Տե՛ս նաև «Պայաք», 1973, թիվ 94:

Դեկտեմբերի 26/8 հունվարի 1910.— «Անդրանիկը» «Բոլոր քնարասերներուն» հայտարարության մեջ (թիվ 52) ծանուցում է, որ վաճառվում են «մեր ամենասիրած բանաստեղծին անդրանիկ հրատարակությունը եղող ՍԱՐՍՈՒՌՆԵՐԸ, որուն մեջ երգված են բնության գեղեցկությունները և մարդկային հոգուն թրթուրմանը ներդաշնակորեն»: Ապա ավելացնում է. «Կարծե, որ ամեն գեղարվեստասեր ունենա իր գրադարանին մեջ սույն գեղեցիկ հատորիկը, որով պիտի կրնա վայելել բանաստեղծը, լիովին ճանչնալ զայն մոտեն՝ խլելով անոր գեղեցկատիպ էջերեն զույն, գեղեցկություն, ճաշակ, գազափար և արվեստ»:

— «Գենտի համալսարանի ազատ ունկնդիրների արմանախի» («Ալմանախ դեղ էթյուդան լիբեո դը լ'ունիվերսիթե դը Գան») 1909-ի 25-րդ հատորում տպագրվում է «Առաջին մեղքը» բանաստեղծության ֆրանսերեն թարգմանությունը՝ «Ընկերոջս՝ Հանրի Պիոնին» ընծայականով: «Բագին», 1967, թիվ 4, 19—21:

— Արևմտահայ պարբերականներից մեկում տպագրվում է «Նեմեսիս» բանաստեղծությունը:

Արսեն Երեցյանի «Գրական էջեր» հոդվածում այդ մասին ասված է. «Թրազրի մը մեջ հանկարծ կը հանդիպիմ մեր իսկ սիրած բանաստեղծ Գանիկ Վարուժանի գողտրիկ բերթվածի մը մեծ կտորին, որ կը կրն «Նեմեսիս» վերնագիրը («Ասպարեզ», 1910, մարտ 11, թիվ 83):

— Նվեր է ստանում Գրիգոր Թելալյանի «Ուրվականներ» թատերախաղը (Կ. Պոլիս, 1909): Մակագրությունը՝ «Առ մեծանուն ֆերթոլ տյաք Գանիկ Վարուժան»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 207 լր.:



1910

<Տարեսկիզր>.— Նամակ՝ Թեոդիկին: Կարծիք է հայտնում 1910-ի «Ամենուն տարեցուլցի» մասին:

«Նամակների», 190—191:

Հունվարի 2/15.— Ծանուցվում է, որ հունվարի 3-ին Սեբաստիայի ազգային լսարանում բանախոսելու է Վարուժանը:

Հայտնի չէ, բանախոսությունը տեղի է ունեցել, թե ոչ:

«Անդրանիկ», 1910, հունվարի 2/15, թիվ 53:

Հունվարի 12.— Սեբաստիայի ազգային լսարանում Վարուժանի ղեկավարությամբ մի խումբ օրիորդներ ներկայացնում են Ալեքսանդր Մարտիրոսյանի «Արցունքի հովիտը»՝ ի նպաստ Գորգի բանվորուհիների միության: Ներկայացումից առաջ Վարուժանը հանդես է գալիս բանախոսությամբ (չի պահանջվել): «Հարգելի բանաստեղծը,— գրում է «Անդրանիկը»,— նախ պարզեց, թե ի՞նչ է տրվելիք բիսը և հետո անդրադարձավ բանվորուհիներու ոչ նախանձելի վիճակին վրա և իբր դարման շեշտեց անոնց միության կարևորությունը և ժողովրդական օժանդակությունը դեպի այդ բնկերություն»:

«Անդրանիկ», 1910, հունվար 16/29, թիվ 55:

Հունվարի 14/27.— Լույս է տեսնում Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուն: «Ազատամարտը» տպագրում է հետևյալ ազգը. «Ցեղին ՍԻՐՏԸ: Այս է անունը մատենաշար «Ազգակի» երրորդ հատորին, զոր երկնած է երիտասարդ քերթող Դանիել Վարուժան և որ հրապարակելով երեկ իսկ: «Ցեղին սիրտին» յուրաքանչյուր էջը մեկն է այն շքեղ և ուժգին տաղանդին, որ Վարուժանինն է: Հայ հոգով և զասական կատարելությամբ երգն է, որ կա ներդաշնակված հոն, պերճաշունչ է և պետք է բսել՝ հոյակապ»:

«Ազատամարտ», 1910, հունվար 15/28, թիվ 184:

Տիտղոսաթերթը՝ Դ Ա Ն Ի Ե Լ Վ Ա Ր Ո Ի Ժ Ա Ն, Ցեղին ՍԻՐՏԸ Քերթվածներ, Բագինին վրա, Կրկեսին մեջ, Դյուցազնավեպեր (1906—1909), մատենաշար, «Ազգակ», թիվ 9, հրատարակ. «Արծիվ» ժողովրդական գրավաճառանոցի, 1909, Կ. Պոլիս (շապիկի վրա նշված է՝ 1910), 152 էջ: Շապիկի Դ էջում տպված է հետևյալ ծանուցումը. «Պատրաստ

ություն մեջ են՝ ՀԱՅԻՆ ԵՐԳՐ, ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊԵՐ, ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ»:

Բովանդակությունը՝ Ջոն, Նախերգանք, Նեմեսիս, Բագինին վրա, Հայրենիքի ոգին, Անիի ավերակներուն մեջ, Ողորմություն, Մարած օճախը, Օձը, Թիապարտները, Վաղվան բողբոջներ, Կարմիր հողը, Հոս քանտին մեջ, Կարոտի նամակ, Թողեմ մեծնամ, Մեր կունկը, Հայ բրձիկը, Լվացարարունին, Ալիշանի շիրմին առջև, Ջարդը (1895—1896), Գիակի սայլը, Հայհոյանք, Կրիկյան մոխիրներուն: Կրկեսին մեջ, Վերածնություն, Ապրիլ, Պատվեր, Կովի երթ, Հայկակներուն օրորանք, Արծիվներու կարավանը, Հայրենի լեռներ, Առևանգիչը, Վահագն, Պապս, Առաջալը, Դյուցազնի մը սուրին, Մատենիչը, Գերենիկը, Վերավորը, Արյան հաղթանակ, Հաղթողը, Ավերակներու տիկինը: Դյուցազնավեպեր. Հովիվը, Արմենունին, Եկկիա Տանել:

<Հունվարի 14-ից հետո (մինչև ապրիլի 1)>.— Ատրուշանը (Սիմոն Երեմյան) Զմյուռնիայի «Դաշինք» լրագրում տպագրում է գրախոսական «Ցեղին սիրտը» ժողովածուի մասին:

Թերթի՝ նշված ժամանակահատվածի հավաքածոն Երևանում չկա:

Գրական ասուլիսներ, Գ, Դ. Վարուժանի «Հերանոս երգերը», մատենագիտական ցանկ:

<Նույն շրջանում>.— Սեբաստիայից նամակ՝ Սիմոն Երեմյանին: Շնորհակալություն է հայտնում «Դաշինքում» տպագրած գրախոսության համար:

«Նամակների», 182:

<Նույն շրջանում>.— «Ցեղին սիրտը» ժողովածուն նվիրում է Քորգոմ Գուշակյանին: Մակագրությունը՝ «Սիրելի Քորգոմ Սրբազանին՝ «Ցեղին սիրտը» հեղինակին սրտին հետ» (նվիրած օրինակը չի պահանջվել):

«Պայքար», 1913, թիվ 94:

<Հունվարի 14-ից հետո>.— Վրթանես Փափազյանը «Պատմություն հայոց գրականության, սկզբից մինչև մեր օրերը» աշխատության (Թիֆլիս, 1910) մեջ մի հատված է նվիրում Վարուժանին՝ գրելով. «Թեև հիբալի քարոզչական ու միտումնավոր են բոլոր այդ էջերը,— և պիտի ասել «Ցեղին սիրտը» գրքի մեծ մասը,— այնուամենայնիվ նրանք կարգացվում են ախորժով, որովհետև բանաստեղծը գիտե լավ գրել, ան-



կեղծորեն և զեզարվեստորեն արտահայտել իր ասելիքները և վարպետի վրձինով գրել պատկերները» (775—780):

Փետրվարի 5/18.— «Արևելքում» տպագրվում է Փայլակի (Ժակ Սայապալյան) գրախոսականը «Յեղին սիրտը» ժողովածուի մասին: Քննադատը եզրակացնում է. «Այս երիտասարդ բանաստեղծը այն քերթողներն է, որոնց ազգային երգիչ մակդիրը կուտար հին սերունդը: Ամեն բանն առաջ և ամեն բանն ավելի հայ մրն է ան, հայուն ցավերը կուլա, հառաչանքներու արձագանք կուտա, հայուն տվայտանքներուն ու հուսահատի պայքարներուն անդրադարձող շեշտերով կերգե... Դանիել Վարուժանին գրչին մեջ գրագիտական տիրապետող հատկությունն է ուժգնություն» (թիվ 7248):

<Մինչև փետրվարի 16>.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին (չի պահպանվել): Նվեր է ուղարկում «Յեղին սիրտը» ժողովածուն:

«Նամականի», 183:

<Նույն շրջանում>.— Արշակ Չոպանյանը Փարիզից՝ Վարուժանին (չի պահպանվել): Շնորհավորում է «Յեղին սիրտը» ժողովածուի հրատարակության առթիվ, կարծիք է հայտնում նրա մասին:

Անդ:

Փետրվարի 16.— Սերաստիայից նամակ՝ Արշակ Չոպանյանին: «Անահիտում» տպագրելու համար ուղարկում է «Հրաշքին շարժությունը» բանաստեղծությունը: Ստեղծագործական հետադա ծրագրերի մասին գրում է. «Այլևս կը պատրաստվիմ ապրված կյանքին միայն գրել և հյուսել նոր քերթվածներ՝ անվերապահ արվեստով մը, որոնք պիտի կազմեն «Հեթանոս երգերուն» մասը»:

Անդ:

Փետրվարի 17.— Թիֆլիսում ստացվում է «Յեղին սիրտը» ժողովածուն:

«Մշակ», 1910, № 36:

<Փետրվարի 17-ից հետո>.— Թիֆլիսում լույս է տեսնում «Գեղ-

արվեստ» հանդեսի 1909-ի հատորը (№ 3): Խմբագրությունը «Պոստարկը» բաժնում Վարուժանին տեղեկացնում է. «Անիի ավերակներուն մեջը» արդեն շարված էր և տպագրվելու էր այս գրքում, բայց երբ ըստացանք Ձեր «Ցեղին սիրտը» և տեսանք, որ նույն նյութն այնտեղ դուրս բերված է արդեն, քանզի տվինք: Սպասում ենք նոր նյութի» (191, տե՛ս նաև 1908-ի հունվարի 3-ի գրառումը):

Նույն գրքում տպագրվում է Մարգարի «Դանիել Վարուժան» հոդվածի առաջին մասը: Քննադատը Վարուժանին համարում է «ծաղկի ու երազի, աղատության ու տառապանքի, բնության ու մարդու սքանչելի երգիչ» և գրում. «Վրեժի զգացմունքը նրա հոգում եկամուտ հյուր է, իր էությունից չի բխում, և մեղմության ու սիրո ներողամտության ու եղբայրական քնքշության զգացմունքը ամեն բույն իր հմայուն դեմքը ցույց է տալիս այդ վրիժառու շեշտերի կողքին, ինչպես վարդի կոկոնը փշերի արանքից...» (127—134):

<Մինչև մարտի 3>.— Գերասիմ (Կարեն) Միքայելյանը Մոսկվայից՝ Վարուժանին (չի պահպանվել): Խնդրում է աշխատակցել «Գարուն» ալմանախին:

«Նամականի», 183—184:

Մարտի 3.— Սերաստիայից նամակ՝ Գերասիմ (Կարեն) Միքայելյանին: Նրա խնդրանքով «Գարուն» ալմանախում տպագրելու համար ուղարկում է «Ականջներուն» բանաստեղծությունը: Հակոբ Սիրունին պատմում է. «1910-ի առնչները «Մոսկվա» լույս տեսնող «Գարուն» ալմանախի առաջին հատորին համար քերթված մը ղրկեր էր: Այդ քերթվածը չէին տպեր խմբագիրները ու փոխարեն կարգ մը անարժեք դեմքերու տեղ էին տվեր: «Ականջներուն» խորագիրը կը կրեր և հետո «Հեթանոս երգերուն» զարդերեն մեկը կազմեց»:

«Նամականի», 183—184, Սիրունի, 96:

Մարտի 5/18.— Կ. Պոլսի Ազգային ժողովը սկսում է քննարկել եկեղեցիներում միտինգներ դուժարելու հարցը, որը լայն արձագանքներ է առաջ բերում հայ հասարակության տարբեր շրջաններում: Պատրիարքն ու Խառն ժողովի մեծամասնությունը համարել են թուլատրելի՝ պայմանով, որ շողափվեն կրոնական ու եկեղեցական խնդիրներ:

«Բյուզանդիոն», 1910, մարտ 6/19, թիվ 4075:



Մարտի 6.— «Հորիզոնում» տպագրվում է Մարգարի «Գրական էջեր» Դանիել Վարուժան, «Ցեղին սիրտը» գրախոսականը: Քննադատիկ կարծիքով Վարուժանը «Տոյակապ բանաստեղծ» է և ավելացնում է. «Ցեղի, հայ ցեղի սիրտը իբրև մի ազգ և իբրև հեծող մարդկության մի բեկոր դրված է ձեր առաջ վարպետ վրձինի նուրբ կերտումներով: Սրա հետ միասին ամեն տողում արտափայլում է բանաստեղծի իր հոգու նկարը, իր անձնական պատկերը, որ հետզհետե ձեզ մտերմանում ու վարակում է իր սրտի թրթիռներով» (№ 50):

Մարտի 11.— «Ասպարեզում» տպագրվում է Արսեն Երեցյանի «Գրական էջեր» հոդվածաշարի «Բանաստեղծություն» հատվածը: Վարուժանի «Նեմիսի» մասին հեղինակը գրում է. «Մեր բանաստեղծը իր այս քերթվածին մեջ նրբորեն և շնորհալիորեն ի հայտ կը բերե իր ճշմարիտ արվեստի տաղանդը... Դանիել Վարուժանի քով բառերը, նախադասությունները իրենց սովորական թանձրացյալ իմաստը չեն կորսնցնում, միայն թե բանաստեղծական կտորին մեջ այլաբանորեն ներկայացված մեծ իմաստ մը, միտք մը, իտեալ մը պետք է փնտրել» (թիվ 183):

<Մարտի 11-ից հետո>.— «Ասպարեզում» տպագրվում է գրախոսական «Ցեղին սիրտը» ժողովածուի մասին:

Լրագրի հավաքածուն թերի լինելու պատճառով ստույգ ժամանակը հնարավոր չէ որոշել:

Գրական ասուլիսներ, Գ. Գ. Վարուժանի «Էքսանս երգեր», մատենագիտական ցանկ:

Մարտի 12/25.— «Ձայն հայրենյաց» լրագրում տպագրվում է Արտաշես Հարությունյանի «Գիրքեր ու դեմքեր. Դանիել Վարուժանն ու իր նոր գիրքը» հոդվածը, որտեղ ասվում է. «Վարուժանի բանաստեղծության նկարագիրը խիստ ճոխ է: Պայծառ, հզոր, շնորհալի և առատորեն ստեղծագործ երևակայություն մը թրթռուն և մանկական միամտություն մեծ սիրտ մը՝ իրենց ակունքներու բոլոր արդյունաբերումը կը դնեն տրամադրությունը տակ՝ դասական մաքրասիրությամբ հզորակամ ու ջլապիրկ արվեստի մը, որ մարդված է եվրոպական հին ու նոր մեծագույն հանճարներու մոտ՝ եղբայրական երկարատև հաճախումի մը

մեջ» (թիվ 21, տե՛ս նաև Ա. Հարությունյան, Գիշերվան ճամբորդը, Երեվան 1968, 269—274):

Մարտի 29/6 ապրիլի.— Բանախոսում է Սերաստիայի «Լույս» ընթերցատանը: Առիթը եղել է եկեղեցիներում աշխարհիկ հավաքույթներ արգելելու պահանջը, որ պաշտպանել է Բյուզանդ Քեչյանը (տե՛ս մարտի 5/18-ի գրառումը):

Վարուժանի բանախոսությունը շի պահպանվել: Դրա մասին պատկերացում ենք կազմում մամուլում տպագրված մի թղթակցությունից, որտեղ մասնավորաբար ասված է. «Պ. Վարուժան անդրադառնալով հայ շերիեթիներու սկսած հակահեղափոխական պայքարին ու եկեղեցիները ազատ խոսքին առջև փակելու գաղափարին, պարզեց թե Բյուզանդ Քեչյաններ ինչ տեսակ միջոցներով կը փորձեն խաբել ու շահագործել ժողովուրդին անգիտակից մասը: Ներկա հոծ բազմության որոշումով պ.պ. Մուրատի և Վարուժանի ստորագրությամբ հեռագիր մը ուղղվեցավ Պոլիս՝ Ազգային երեսփոխանների ժողովին՝ պահանջելով, որ եկեղեցիները ըստ առաջնույն բաց մնան հրապարակային ատենախոսություններու առջև»:

«Ազատամարտ», 1910, ապրիլ 15/28, թիվ 260:

Մարտ.— «Բազմավեպը» տպագրում է Մկրտիչ Պոստոյանի «Նոր գրականություն» տեսությունը: «Դանիել Վարուժան, «Ցեղին սիրտը» հատվածում հեղինակը գրում է. «Վարուժանը կյանքի երգիչ համարած եմ. ան ծնած է սև օրերուն, տեսած է սև արցունքներ, լսած է սև ողբեր, ու հեռավորությունը ցավի երկրեն երբեք չկրցավ մոռցնել տալ հայրենիքը, հայ կյանքը»: Ներկայացնում է ժողովածուի բաժինները և ամբողջովին մեջբերում «Չոն» բանաստեղծությունը (թիվ 3, 142—143):

Ապրիլի 1.— Սերաստիայում գրում է «Հեթանոս երազ» բանաստեղծությունը: Ուղարկում է Մերուժան Պարսամյանին՝ «Մեր տարեցույցում» հրատարակելու: Տպագրվել է «Հեթանոսական» վերնագրով: ԳԱԹ, ԴՎՑ, № 15:

Ապրիլի 9.— Արաքսի Թաշճյանը Վարուժանին է նվիրում իր գրած «Հիշե զիս» բանաստեղծությունը, որի վերջին տներն են.



Արշալույսին շառավիղներ վարսագեղ,  
 Թե շեշտակի գան զարնվիլ պատ՛հանիդ,  
 Եվ անկե ներս թափանցելով գան ճակտիդ  
 Եվ վրդովեն քունդ ու հանգիստըդ խոտվին,  
 Հիշե՛ր զիս:

Եվ միշտ այսպես դու հիշե զիս ամեն օր՝  
 Թե տխրության, թե հանույթի ժամերուդ.  
 Մտածե ինչպես ես զո՛հն եղա քո սիրույդ,  
 Երբ հնչե ժամն հայրենիքիդ, պիտ զո՛հվիս.  
 Մոռցի՛ր զիս:

Տե՛ս 1909-ի «Հոկտեմբեր» գրառումը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 131 Լր.:

Ապրիլի 13/26 և 15/28.— «Աղատամարտում» տպագրվում է Հևոն էսաճանյանի գրախոսությունը «Ցեղին սիրտը» ժողովածուի մասին (թիվ 258, 260): Քննադատը գրում է. «Ինք (Վարուժանը—Ա. Շ.) պիտի մնա հավերժացող քերթող մը իբր քերթողական վերածնունդի հիմնադիրներեն մին: Իր հատորը աղամանդի մուրճի մը հարվածն է՝ մեր նոր բանաստեղծության ծոցեն բխեցնելու նոր երգերու աղբյուրներ»:

Ապրիլի 16.— Սերաստիայում գրում է «Պատգամավորներս» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 21 Լր.:

Ապրիլի երկուրդ կես.— Սերաստիայում Արամյան ազգային վարժարանի սրահում սկսվում են Կովկասահայ դրամատիկական խմբի ներկայացումները՝ Իսահակ Ալիխանյանի և Արտեմ Բերոյանի ղեկավարությամբ: Ներկայացումներից առաջ ներածական խոսքով հանդես է գալիս Վարուժանը: Առաքել Պատրիկը վկայում է. «Նա խոսեց թատրոնի դերի և ժողովրդի բարոյական դաստիարակության գործում նրա կատարած բարերար ազդեցության մասին: «Թատրոնը,— ասաց նա,— զվարճանքի տեղ չէ, ինչպես կարծում են ոմանք, այլ մեծահասակներու դպրոցը»: Անդրադարձավ դերասանական արվեստին... «Դերասանը կը նմանի մաքուր, թափանցիկ ջրի,— ասաց նա,— ինչպիսի ամանի մեջ որ լեցվի, կստանա անոր ձևը, անոր գույնը: Սակայն այդ արտաքին տպավորություն է միայն: Նա մեքենական կրկնող չէ, անշուշտ, հեղի-

նակի խոսքի»:

Ան այդ խոսքերի հոգեբանական ապրումները կը մեկնաբանե՛ր ըստ իր ըմբռնողության: Դրա մեջ կը կայանա ուրեմն դերասանական արվեստը և այլն»:

Հետագեմ շրջաններում հյուրախաղերը առաջ են բերում դժգոհություններ: Նրանք հանրագիր են տալիս քաղաքի երեսփոխանական ժողովին՝ պահանջելով արգելել ներկայացումները («անբարոյական ներկայացումներ կը տրվին», «աղջիկ կը խաղցվի» և այլն):

«Ազատամարտ», 1910, թիվ 275, 283, Ա. Պատրիկ, 55—56:

<Մինչև ապրիլի 24>.— «Գեղունիի» վեցերորդ գրքում տպագրվում է «Դիակի սայլը» բանաստեղծությունը (16):

«Գեղունիի» լույս բնծայման ազդը տե՛ս «Ազատամարտ», 1910, ապրիլ 24/7 մասիս, թիվ 266: Տե՛ս նաև 1909-ի «Սեպտեմբեր» գրառումը:

Մայիսի 1.— Կովկասահայ դրամատիկական խմբի «Հրեաները» ներկայացումից առաջ մի խումբ խուլիգաններ ներխուժում են Արամյան ազգային վարժարանի սրահ, ջարդում բեմն ու աթոռները, պատռում վարագույրը: Սերաստահայ երիտասարդությունը, թույլ չտալով վիժեցնել ներկայացումը, նույն օրը հանպատրաստի հանդիսասրահի է վերածում «Լույս» ընթերցատունը: Ներկայացումից առաջ ելույթ է ունենում Վարուժանը: Վահրամ Փոթուքյանը պատմում է. «Դեռ վարագույրը չբացված, Վարուժան իր դողացող ձայնով այսպես հայտարարեց. «Ամենասրիկա մուրճը այն մուրճն է, որ գեղարվեստի տունը կը քանդե: Անիծյալ է այդ մուրճը և օր մը իրենք իրենց գլխուն պիտի զարնեն զայն: Մենք մեր կամքի մուրճով նոր բեմ, նոր գեղարվեստի տուն կը շինենք, և ոչ ոք և ոչ մեկ մուրճ պիտի չհամարձակվի անոր մոտենալու»: Ըստ հուշագրի, հետագա ներկայացումներից առաջ ևս «խոսք մ՛ունեն Վարուժան, խոսք մը վերլուծող ներկայացվելիք թատերախաղի մասին»:

«Ազատամարտ», 1910, մայիս 15/28, թիվ 283, «Հառաջ», 1937, թիվ 3376:

<Մինչև մայիսի 5>.— Սահակ-Մեսրոպը՝ Վարուժանին (չի պահանջվել): Իր հրատարակած «Գավառին տարեցույցի» համար խնդրում է մի բանաստեղծություն:

«Ասավոտին տաբգիբբ», Կ. Պ., 1921, 47:



Մայիսի 5.— Սերաստիայում գրում է «Մեռնող բանվորը» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԳՎՅ, № 16:

Նույն օրը.— Նամակ՝ Սահակ-Մեսրոպին: Հայտնում է իր կարծիքը գրական որոշ խնդիրների մասին, «Գավառին տարեցույցում» տպագրելու համար ուղարկում է «Մեռնող բանվորը» բանաստեղծությունը:

«Առավոտին տարեգիրք», Կ. Պ., 1921, 47:

Նույն օրը.— Միրիճան Թաշճյանը՝ վարուժանին: Հայտնում է, որ դադարեցնում է իր դատեր՝ Արաքսիի հետ նրա պարապմունքները:

ԳԱԹ, ԳՎՅ, № 70 Ը.:

<Մայիսի 5-ից հետո>.— Նամակ՝ Արաքսի Թաշճյանին: Գրում է. «Կըսեմ, քեզ ընդմիջտ կը սիրեմ, վասնզնի սիրտիս վրա ամբողջ Տիեզերք և Աստված չի կրնար ճնշել»:

«Սովետական գրականություն», 1977, № 6, 145:

<Մինչև մայիսի 15>.— «Աստուծո լացը» բանաստեղծությունը ուղարկում է Խարբերդի «Եփրատ» պարբերականին:

«Եփրատ», 1910, թիվ 14, 223—224:

Մայիսի 15.— «Եփրատում» տպագրվում է «Աստուծո լացը» բանաստեղծությունը (թիվ 14, 223—224):

Անդ:

<Մինչև մայիսի 16>.— «Աղատամարտին» է ուղարկում «Պատգամավորներս» բանաստեղծությունը:

«Ազատամարտ», 1910, մայիս 16/29, թիվ 284:

Մայիսի 16/29.— «Աղատամարտում» տպագրվում է «Պատգամավորներս» բանաստեղծությունը (թիվ 284):

Նույն օրը.— Սերաստիայից մի թղթակից հաղորդում է, որ տեղի Ամերիկյան բարձրագույն վարժարանի ղեկավարները, ի շարս այլ

խստությունների, «կարգիլեն հայ բանաստեղծներու (օրինակ՝ Դանիել Վարուժանի) գործերը կարգալ՝ «գրգռիչ է» ըսելով»:

«Ազատամարտ», 1910, թիվ 284:

Հունիսի 1.— Սերաստիայի Արամյան ազգային վարժարանի ուսանողների նախաձեռնությամբ լույս է տեսնում «Նշդրակ» խմորատիպամասթերթի առաջին համարը, որտեղ հանդես է եկել նաև Վարուժանը:

Պարբերականի հավաքածոն չի պահպանվել:

«Անդամիկ», 1910, հունիս 12/25, թիվ 69:

Հունիսի 5/18.— «Անդրանիկը» տպագրում է Իրագեկ ստորագրությամբ մի հեղինակի «Հերքում մը» թղթակցությունը (թիվ 68), որտեղ մերժվում է այն մեղադրանքը (տե՛ս մայիսի 16/29-ի գրառումը), թե Ամերիկյան բարձագույն վարժարանի տեսչությունը արգելել է Վարուժանի «հեղինակություններն ընթերցումը աշակերտաց կողմե»: Թղթակիցը բացատրում է. «Տեսչությունն մասնակի դիտումնավոր արգելք մը չէ գրած երբեք հիշյալ էֆ.-ի հեղինակությանց ընթերցմանը հանդեպ, այլ, իբր խրատական, հորդորած է որ աշակերտներն ունեն գրգռիչ գրքավածքներ կարդալե զգուշանան դպրոցի ժամանակ: Այդ կարգի գրություններ, որովհետև ըսած է որ ուշադրություն ուրիշ տեղ կեղորոնանալով, կրնա ըլլալ որ առօրյա պարտականությունաց կատարմանը մեջ թերություն մը տեսնվի»:

Հունիսի 20.— «Բյուժանիա» շաբաթաթերթում տպագրվում է Մելքոն Հովսեփյանի «Դանիել վարուժանի «Պատգամավորներս» քերթվածին առիթով» հոդվածը, որտեղ ասված է. «Միրելի է մեզի «Պատգամավորներս» քերթվածը, ուր ցեղին Տառապանքն ու Հույսը կը խտանան, ազնվական կիրքեր ու գեղեցիկ զգացումներ կը ճառագայթեն» (թիվ 18, 206—208):

Հունիսի 27/10 հուլիսի.— «Արևելքը» տպագրում է Զոհրապ-Կարոյի «Զուգակշիռ մը. Ա. Յարճանյան և Դ. Վարուժան» հոդվածը: Հեղինակի կարծիքով, թեև Յարճանյանը «հոգիեն կը բխի», իսկ Վարուժանը՝ «միտքեն», բայց երկուսն էլ տաղանդներ են, «հոյակապ քերթողներ», և լուսապսակը պետք է տալ «անպայման երկուքին ալ» (թիվ 7350):

Նույն օրը.— Ուսումնական տարին ավարտվելու կապակցությամբ



բանախոսում է Արամյան ազգային վարժարանի շրջանավարտների հանդեսում (չի պահպանվել):

«Անդրանիկ», 1910, հուլիս 3/16, թիվ 72: Տե՛ս նաև Ա. Պատրիկ, 93:

Հունիսի 28.— Բանախոսում է Սեբաստիայի Ս. Նշանի վանքում ի պատիվ Մուրատի ամուսնության (չի պահպանվել):

«Անդրանիկ», 1910, թիվ 72:

<Մինչև հուլիսի 3/10>.— Ընտրվում է Սեբաստիայի ուսուցչաց քննության հանձնաժողովի անդամ:

Անդ:

Հունիսի 11/24.— «Ազատամարտը» տպագրում է Ավույի (Մելքոն Կյուրճյան) «Կես շինական նամականի» ստեղծագործության «Կարմիր հող» հատվածը (թիվ 331): Այստեղ բարձր է գնահատվում վարուժանի «Յեղին սիրտը» ժողովածուն («զորդ որ կրակ է, էնոր պես այրող, էնոր պես խաշխշող ու մրբկող»), իսկ «Կարմիր հողը» բանաստեղծության մասին ասվում է. «Վերքերու սպունգ է. էնոր ծակերը կուտին և մեր ողջ պատմությունը կու մտնե իր մեջ»:

<Հուլիսի կեսեր>.— Թիֆլիսում լույս է տեսնում Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի և Վրթանես Փափազյանի «Հայ գրողներ» ժողովածուի Բ հատորը, որտեղ արտատպվում են «Վահագն», «Հովիվը», «Պապս», «Մարած օձախը», «Լքում», «Պատվեր» և «Առաջին մեղքը» ստեղծագործությունները: Կենսագրական հակիրճ տեղեկություններում վարուժանը բնութագրվում է որպես «թրքահայ նորագույն ամենալավ բանաստեղծներից մեկը, որ ունի խնամված ու բարձր ոճ, զեղուն, զգացումներով լի էջեր՝ տողորված հայրենասիրական և ըմբոստացնող ոգով» (697—709):

Ժողովածուի լույս ընծայման ազդը տե՛ս «Մշակ», 1910, հուլիսի 22, № 150:

Հուլիսի (14)27.— Սեբաստիայից նամակ՝ Արիստակես Քասզանտիլյանին: Խնդրում է Մուրատ-Ռափայելյան վարժարան ընդունել սեբաստացի մի պատանու:

«Նամականի», 213:

Նույն օրը.— Նամակ՝ Արաքսի Թաշճյանին: Խորհուրդ է տալիս լինել «անվեհեր, քաջ, ճարտար և պաղարյուն»: Առաջարկում է փախչել ու ամուսնանալ:

«Սովետական գրականություն», 1977, № 6, 145—146:

<Հուլիսի 14-ից հետո>.— Արաքսի Թաշճյանը՝ վարուժանին: Հավաստում է իր սերը և դիմադրելու «աննկուն տոկունությունը»:

Անդ:

<Մինչև հուլիսի 24>.— Գրում է «Գրգանք» բանաստեղծությունը և ուղարկում «Ազատամարտ» շաբաթաթերթին:

«Ազատամարտ», 1910, թիվ 3, 35:

Հուլիսի 24/6 օգոստոսի.— «Ազատամարտ» շաբաթաթերթում տրպագրվում է «Գրգանք» բանաստեղծությունը (թիվ 3, 35):

<Մինչև հուլիսի 27>.— Մերուժան Պարսամյանը Կ. Պոլսից՝ վարուժանին (չի պահպանվել): Նվեր է ուղարկում իր «Բանաստեղծի սիրտը» ժողովածուն, խնդրում է կարծիք հայտնել նրա մասին:

«Նամականի», 184:

Հուլիսի 27.— Սեբաստիայից՝ Մերուժան Պարսամյանին: Կարծիք է հայտնում նրա «Բանաստեղծի սիրտը» ժողովածուի մասին: Գրում է, որ շնայած զբաղվածությանը, աշխատում է «Հեթանոս երգերի» վրա:

Անդ:

Նույն օրը.— Սեբաստիայից՝ Արիստակես Քասզանտիլյանին: Երկորդում հուլիսի 14-ի նամակի (տե՛ս գրառումը) խնդրանքը:

Անդ, 213—214:

<Հուլիս>.— Լուսանկարվում է Արամյան ազգային վարժարանի 1910 թ. շրջանավարտների հետ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 436:

Օգոստոսի 10.— Սեբաստիայում Թադեոս Կյոզլուրյանի (Աչազուրկ)



Քաղմանը արտասանում է դամբանական (չի պահպանվել): Ըստ «Հող-դարի», «Վարուժան դամբանականով մը ապտակեց ամբոխը»: Առաքել Պատրիկը վերհիշում է.

«Մեռավ մշտածոր աղբյուրը լույսի,  
Ինքը մնալով լույսի ծարավի...

Այսպես սկսեց Վարուժանն իր նշանավոր դամբանականը»:

«Աեկեիք», 1910, օգոստոս 19/1 սեպտեմբեր, թիվ 7395,  
«Հողգար», 1910, թիվ 1, 4, Ա. Պատրիկ, 45—46:

<Օգոստոսի 11>.— Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի առաջ-նորդությանը Միրիճան Թաշճյանը համաձայնում է իր դուստր Արաքսիի և Վարուժանի ամուսնությունը:

«Տեղեկատու», 1979, թիվ 13, 13:

Օգոստոսի 15.— Սեբաստիայում տեղի է ունենում Վարուժանի և Արաքսի Թաշճյանի պսակադրության հանդեսը:

Անդ:

Օգոստոսի 16.— Բրզնիկում կատարվում է Վարուժանի և Արաքսի Թաշճյանի հարսենյաց հանդեսը: Այդ առթիվ «Հողգար» պարբերականը գրել է. «Ասի չէ ամուսնությունը խմբագրությանս անձնական բարեկամին, չէ ամուսնությունը Դանիել Զպուգբյարյանի, այլ պսակումն է գրչին՝ բանաստեղծ Վարուժանին նախ, ապա նյութին ոգորումը գրչին հետ ու գրչին հաղթահարումը, հայ աղջկան ազատագրումի մեկ շրջանը, ճղճիմ բծախնդրություններու հրաժարումը ու զույգ մը մեծ հատվածներու (նկատի ունի կաթոլիկ ու լուսավորչական—Ա. Շ.) մերձեցման նախաշավիղ մը»:

Կ. Կևոզյան, Ամենուն տարեգրքեր, 1959, 123—133, «Տեղեկատու», 1979, թիվ 12—13, «Հողգար», 1910, թիվ 1:

<Նույն օրը>.— Լուսանկարվում է կնոջ՝ Արաքսի Թաշճյանի հետ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 437:

<Մինչև սեպտեմբերի 3>.— Թեոդիկը Կ. Պոլսից՝ Վարուժանին

(չի պահպանվել): Խնդրում է նոր բանաստեղծություն «Ամենուն տարեգրքի» համար:

«Նամականի», 184—185:

Սեպտեմբերի 3.— Սեբաստիայից նամակ՝ Թեոդիկին: Խոստանում է նոր բանաստեղծություններ ուղարկել:

Անդ:

<Մինչև սեպտեմբերի 10/23>.— Սեբաստիայի ուսումնական խորհրդի հետ պայմանավորվում է 1910—1911 ուսումնական տարում, ավելի բարձր աշխատավարձով և օրեկան 2 ժամ դասավանդելու ծանրաբեռնվածությամբ պարապել Արամյան աղջային վարժարանում:

Անդ, 186—187:

<Նույն շրջանում>.— Նշան Տեր-Ստեփանյանը վենետիկից՝ Վարուժանին (չի պահպանվել): Հրավիրում է մանկավարժական աշխատանքի Երզնկայում:

Անդ, 186:

Սեպտեմբերի 10.— Սեբաստիայից նամակ՝ Նշան Տեր-Ստեփանյանին: Մերժում է Երզնկայում աշխատելու հրավերը:

Անդ, 185—187:

Նույն օրը.— Սեբաստիայից նամակ՝ Զարմայր Կյուզլուրյանին: Ցավակցում է նրա հոր՝ Ավետիս Կյուզլուրյանի մահվան առթիվ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 88:

Սեպտեմբեր.— Բրզնիկում գրում է «Հարճը» դյուցազնավեպը:

«Ամենուն տարեցույցը», 1911, 138—139, «Նամականի», 186:

<Նույն ամսին>.— «Հարճը» դյուցազնավեպից մի հատված ուղարկում է Թեոդիկին՝ 1911-ի «Ամենուն տարեցույցում» տպագրելու համար:

«Ամենուն տարեցույցը», 1911, 138—139:



<Մինչև հոկտեմբերի 5>.— Դերենիկ Ճիզմեճյանը՝ Վարուժանին (չի պահպանվել):

«Նամականի», 187—188:

Հոկտեմբերի 5.— Սերաստիայից նամակ՝ Դերենիկ Ճիզմեճյանին: Հայտնում է եկող տարի ամռանը կնոջ հետ Կ. Պոլիս տեղափոխվելու հնարավորության մասին:

Անդ:

<Մինչև հոկտեմբերի 10>.— Վահրամ Երեցյանը ԱՄՆ-ից՝ Վարուժանին (չի պահպանվել): Ուղարկում է իր բանաստեղծությունները և խնդրում կարծիք հայտնել:

Անդ, 188—189:

Հոկտեմբերի 10/23.— Սերաստիայից նամակ՝ Վահրամ Երեցյանին, Կարծիք է հայտնում նրա բանաստեղծությունների մասին, խորհուրդ է տալիս զբաղվել ընթերցումներով:

Անդ:

<Մինչև հոկտեմբերի 24>.— Բոստոնի «Ազգ» շաբաթաթերթում տպագրվում է Սահակ-Մեսրոպի գրախոսությունը «Յեղին սիրտը» ժողովածուի մասին:

Գրական ասուլիսներ Գ. Գ. Վարուժանի «Հերանոս երգեր», մատենագիտական ցանկ, «Առավոտին տաբեզիբեր», Կ. Պ., 1921, 48—49:

Հոկտեմբերի 24/6 նոյեմբերի.— Նամակ՝ Սահակ-Մեսրոպին: Կարծիք է հայտնում «Յեղին սիրտը» ժողովածուին նվիրած նրա գրախոսականի մասին:

«Առավոտին տաբեզիբեր», Կ. Պ., 1921, 48—49:

Հոկտեմբերի 25.— Սերաստիայում գրում է «Բարձունքն ի վեր» բանաստեղծությունը: Տպագրվել է «Բեգաս» վերնագրով:

ԳԱԹ, ԴՎՅ, № 15, 25—29:

Հոկտեմբերի 28.— Սերաստիայում գրում է «...Ո՛վ կալազե» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 15, Գ. Լեոնյանի ֆոնդ, № 2370:

Նոյեմբերի 6.— Բանախոսում է Սերաստիայի «Լույս» ընթերցատանը (չի պահպանվել): Մամուլում զետեղված հաղորդման մեջ ասված է. «Պր-ն Վարուժան պատրաստված, ջոկված մանրավեպերով ցույց տրվավ ան մեծ միտքերը, լուսավորները, որոնք մարդկությունը քառանք փրկած զայն աստիճանապես բարձրացուցած են: Գրական-ընկերական բանախոսություն մըն էր ան՝ գրականացված, զգացում հազցված»:

«Հողար», 1910, նոյեմբեր 13, թիվ 3:

Նոյեմբերի 13.— «Հողարում» տպագրվում է «Մամուս աղոթքը» բանաստեղծությունը (թիվ 3, 4):

<Մինչև նոյեմբերի 22>.— «Բարձունքն ի վեր» բանաստեղծությունը ուղարկում է «Ազատամարտ» շաբաթաթերթին:

«Ազատամարտ», 1910, նոյեմբեր 22/5 դեկտեմբեր, թիվ 20, 310—314:

Նոյեմբերի 22/5 դեկտեմբերի.— «Ազատամարտ» շաբաթաթերթում տպագրվում է «Բարձունքն ի վեր» բանաստեղծությունը (վերահրատարակվել է «Բեգաս» վերնագրով, թիվ 20, 310—314):

<Մինչև նոյեմբերի 27>.— Գրում է «Առկայծ ճրագ» բանաստեղծությունը: Հանձնում է «Հողարին» տպագրելու համար:

«Հողար», 1910, թիվ 5:

Նոյեմբերի 27.— «Հողարը» տպագրում է «Առկայծ ճրագ» բանաստեղծությունը (թիվ 5, 1):

Նույն օրը.— Նամակ՝ Գրեղին Լեոնյանին: «Գեղարվեստում» տրպագրելու համար ուղարկում է «...Ո՛վ կալազե» բանաստեղծությունը:

«Նամականի», 189:



<Մինչև նոյեմբերի 28>.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին (չի պահպանվել): Հայտնում է ամուսնության լուրը և հետաքրքրվում երևի ճակով:

Անդ, 190:

<Նույն շրջանում>.— Բանախոսում է Սեբաստիայի ազգային լր-սարանում (չի պահպանվել): Ըստ «Ազատամարտի», նյութը «պատ-րիարքին հրաժարումը և անոր շուրջ սարքված դավերը»:

«Ազատամարտ» 1910, նոյեմբեր 28/11 դեկտեմբեր, թիվ 451:

<Նույն շրջանում>.— Արշակ Չոպանյանը՝ Փարիզից Վարուժանին (չի պահպանվել):

«Նամականի», 190:

Նոյեմբերի 28.— Նամակ՝ Արշակ Չոպանյանին: Նորից է ուղարկում «Հրաշքին աղբյուրը» բանաստեղծությունը, տպագրության է հանձնարարում կյուրդիկ Մինասյանի ոտանավորները:

Անդ:

<Տարեվերջ>.— «Ամենուն տարեցույցի» 1911-ի հատորում տպագրվում են Վարուժանի կարծիքը 1910-ի տարեգրքի մասին (3), և «Ասպետական կենցաղին» վերնագրով մի հատված՝ «Հարճը» դյուցազնու-վեպեն» նշումով (138—139):

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Թեոդիկին: Կարծիք է հայտնում 1911-ի «Ամենուն տարեցույցի» մասին:

«Նամականի», 193:

<Նույն շրջանում>.— Սահակ-Մեսրոպի «Գավառին տարեցույցի» 1911-ի գրքում (4. Պ., 1910) տպագրվում է «Մեռնող բանվորը» բանաստեղծությունը (56—58):

<Նույն շրջանում>.— Մերուժան Պարսամյանի «Մեր Տարեցույցի» 1911-ի հատորում տպագրվում է «Հեթանոսական» բանաստեղծությունը (94—96):

<Նույն շրջանում>.— Գրում է «Ճիվաղը կանցնի» բանաստեղծու-

թյունը: Ուղարկում է Ահարոն Տատուրյանին՝ «Բյութանիա» պարբերականում հրատարակելու համար:

«Բյութանիա», 1911, հունվար 2/15, թիվ

1, 327:

<Նույն շրջանում>.— Գրում է «Խաբված կույսեր» բանաստեղծու-թյունը: Ուղարկում է «Ազատամարտ» օրաթերթին:

«Ազատամարտ», 1911, հունվար 2/15, թիվ 480:

— Լեոն Կանիսը Սեբաստիայում հրատարակում է «Բուրվառ» պարբերականը կամ գիրքը, որտեղ տպագրում է Վարուժանի «Բաց նա-մակը»:

ԳԱԹ-ում պահպանվում է «Բուրվառի» առաջին էջը միայն՝ բովանդակության նշու-մով: «Բաց նամակի» դիմաց ձեռագրով ավելացված է՝ «Դանիել Վարուժանի»: Երևա-նում «Բուրվառ» անվամբ գիրք կամ պարբերական չկա, այլ աղբյուրներում ևս նրա մասին հիշատակություն չի հանդիպել:

ԳԱԹ, ԴՎՖ, Մ 368:

— Նվեր է ստանում Գրիգոր Մ. Թելալյանի (Գրիմիթել) «Հեթում Առաջին» ողբերգությունը (4. Պ., 1910): Մակագրությունը՝ «Առ մեծա-նուն ֆերթոլ այառ Դանիել Վարուժան»:

ԳԱԹ, ԴՎՖ, Մ 269 լր.:

1911

Հունվարի 1.— Իզմիտի (Նիկոմեդիա) «Բյութանիա» գավառաթեր-թում տպագրվում է «Ճիվաղը կանցնի» բանաստեղծությունը (թիվ 1, 327):

Հունվարի 2/15.— «Ազատամարտ» օրաթերթում տպագրվում է «Խաբված կույսեր» բանաստեղծությունը (թիվ 480):

Հունվարի 20.— «Բյութանիան» Յեղին սիրտը ժողովածուից ար-տատպում է «Դյուցազնի մը սուրին» բանաստեղծությունը (թիվ 3, 358):

Հունվարի 28.— Տրապիզոնի «Փեթակ» հանդեսը «Հողդախից» (տե՛ս 1910-ի նոյեմբերի 27-ի գրառումը) արտատպում է «Առկայծ ճրագ» բանաստեղծությունը (թիվ 11, 139):



<Մինչև հունվարի 31>.— Գրում է «Մեքենաները» բանաստեղծությունը: Ուղարկում է «Ազատամարտ» շաբաթաթերթին՝ տպագրելու համար:

«Ազատամարտ», հունվար 31/13 փետրվար, թիվ 29, 449—451:

Հունվարի 31/13 փետրվարի.— «Ազատամարտ» շաբաթաթերթում տպագրվում է «Մեքենաները» բանաստեղծությունը (թիվ 29, 449—451):

Փետրվարի 12.— Կ. Պոլսի «Տաճար» հանդեսը «Հողդարից» (տե՛ս 1910-ի նոյեմբերի 13-ի գրառումը) արտատպում է «Մամուլ աղոթքը» բանաստեղծությունը (թիվ 5, 84):

Փետրվարի 18.— Բանաստեղծ է Սեբաստիայի աղագյին լսարանում կայացած «Կարմիր խաչ» արհեստանոցի շրջանավարտուհիների հանդեսում (չի պահպանվել): Գևորգ Տերոյանցի վկայությամբ նրա բանաստեղծությունը «սպառշաճ, բանաստեղծական ու գործնական» բնույթ է ունեցել:

«Հողդար», 1910, մարտ 5, թիվ 15, 3:

<Մինչև փետրվարի 28>.— Գերենիկ Ճիզմեճյանը Վենետիկից՝ վարուժանին (չի պահպանվել): Հայտնում է, որ Մկրտիչ Պոտուրյանի հետ ձեռնարկել են «Աստղիկ» պարբերականի հրատարակությանը, խնդրում է աշխատակցել:

Ճիզմեճյան, 61—62:

<Նույն շրջանում>.— Գրում է «Կղեպատրա» բանաստեղծությունը:

Անդ:

Փետրվարի 28.— Սեբաստիայից նամակ՝ Գերենիկ Ճիզմեճյանին: «Աստղիկում» տպագրելու համար ուղարկում է «Կղեպատրա» բանաստեղծությունը, հայտնում է ամռանը Կ. Պոլսի մեկնելու հավանականության մասին:

Հանդեսի դադարման պատճառով «Կղեպատրան» չի տպագրվել:

«Նամականի», 191, Ճիզմեճյան, 263—264:

Նույն օրը.— Սեբաստիայում գրում է «Տրտունջք. Եղիա Տեմիրճի-պաշյանին» բանաստեղծությունը:

«Տրտունջք», Սեբաստիա, 1911, 16:

Նույն օրը.— Խարբեղի «Եփրատ» հանդեսում տպագրվում է Տիգրան Փիրանյանի «Դանիել Վարուժան» գրական դիմանկարը՝ «Գավառի զեմքեր» ընդհանուր վերնագրի տակ: «Վարուժանի գրիչը,— գրում է հեղինակը,— գերազանցորեն բարբարոս է և իրապաշտական» (թիվ 4, 53—57):

<Փետրվար>.— «Անահիտում» տպագրվում է «Հրաշքին աղբյուրը» բանաստեղծությունը (հունվար-փետրվար, թիվ 1—2, 43—44):

Մարտի 19.— «Հողդարում» տպագրվում է «Աղոնիսի մը» բանաստեղծությունը (թիվ 17, 1):

<Մինչև ապրիլի 1>.— Գրում է «Ճանապարհ խաչի» բանաստեղծությունը: Ուղարկում է «Ոստան» հանդեսին տպագրելու համար:

«Ոստան», 1911, թիվ 2, 284:

Ապրիլի 1.— «Ոստանում» տպագրվում է «Ճանապարհ խաչի» բանաստեղծությունը (թիվ 2, 284):

Ապրիլի 2.— «Հողդարը» հրատարակում է Վարուժանի նամակը խմբագրությանը, որով տպագրության է հանձնարարում սկսնակ բանաստեղծ Փայել Փարլազյանի «Իմ ուխտ» ստանալորը (թիվ 19, 1):

Ապրիլի 5.— Նամակ՝ Գերենիկ Ճիզմեճյանին: Խոստանում է անընթաց «ամիսը երկու անգամ» տպագրվել «Աստղիկում» և ուղարկում է նոր բանաստեղծություն (տե՛ս փետրվարի 28-ի գրառման ծանոթագրությունը):

«Նամականի», 192:

<Մինչև ապրիլի 25>.— «Մինավորը» բանաստեղծությունը ուղարկում է Ամասիայի «Ապառաժ» պարբերականին:

«Ապառաժ», 1911, թիվ 4, 50—51:



Ապրիլի 25.— «Ապառաժ» ամսաթերթը տպագրում է «Մինավոր» բանաստեղծությունը (թիվ 4, 50—51): Միաժամանակ հրատարակում է Լոնդոնից գրված Լևոն Շահազիզյանի «Դանիել Վարուժան և Ցեղին սիրտը» նամակի առաջին մասը, որտեղ ասված է. «Վարուժան մահվան ուրվականներն շվախնար, շաղոթեր, այլ կընդվզի, դուրս գալու չէր կերպ ու կը ջանա երգով հաղթել ոճիրին ու նույնչափ ահավոր մահվան» (52—53):

<Մինչև մայիսի 21>.— Գրում է «Հողդարի բլրակին» արձակ բանաստեղծությունը, հանձնում «Հողդարին» տպագրելու:

«Հողդար», 1911, թիվ 23:

<Նույն շրջանում>.— Արձագանքում է հայոց լեզվի շուրջ բացված բանավեճին: Գրում է «Հայ լեզվի խնդիրը» հոդվածը և ուղարկում «Ազատամարտ» շաբաթաթերթին:

«Ազատամարտ», 1911, թիվ 45, 705—710:

Մայիսի 21.— «Հողդարում» տպագրվում է «Հողդարի բլրակին» արձակ բանաստեղծությունը (թիվ 23, 1—2):

Մայիսի 22/4 հունիսի.— «Ազատամարտ» շաբաթաթերթում տպագրվում է «Հայ լեզվի խնդիրը» հոդվածը (թիվ 45, 705—710):

Մայիսի 25.— «Ապառաժը» տպագրում է Լևոն Շահազիզյանի «Դանիել Վարուժան և Ցեղին սիրտը» նամակի վերջին մասը: Քննադատը գրում է. «Երեկ Դուրջանն էր մտատիպարը հայ բանաստեղծին, իսկ այսօր Վարուժանն է ու պիտի մնա որչափ ատեն որ հայ ցեղին սիրտը կը արտփի իր պաշտելի գանկին մշտահունչ քնարին վրա» (թիվ 5, 73—76):

<Մինչև հունիսի 6>.— Մերուժան Պարսամյանը Կ. Պոլսից՝ վարուժանին (չի պահպանվել): Հայտնում է, որ հիմնում է նոր պարբերական, խնդրում է կենսագրական տեղեկություններ:

«Նամակներ», 193—195:

Հունիսի 6. — Բրգնիկից նամակ՝ Մերուժան Պարսամյանին: Պատասխանում է նրա առաջարկած հարցերին:

Անդ:

Հունիսի 15.— Բրգնիկի Բաղրատունյաց վարժարանի անունից նամակ՝ «Հողդարին»: Ծնորհակալություն է հայտնում Ալիքսան Պալապանյանին՝ դպրոցին մեկ տարվա «Հողդար» նվիրելու համար:

«Հողդար», 1911, հուլիս 9, թիվ 30:

<Մինչև հունիսի 18>.— Ելույթ է ունենում Բրգնիկում գումարված բողոքի ժողովում (չի պահպանվել): Ըստ «Հողդարի» «Բրգնիկցիին բողոքը» հաղորդման, «Այս ժողովը հակակրոնական չէր, այլ հակակղերական: Անզուգական Վարուժանը իր ճարտասանական կուռ բառերով հրդեհեց արծարծեց: Բողոքի առիթ է ծառայել Կ. Պոլսի հայ կաթոլիկ Պատրիարք Պողոս Պետրոս ԺԳ Թերզյանի ապրիլյան շրջաբերականները, որոնցով հայտարարել էր, թե չի ճանաչում Ազգային երեսփոխանական ժողովը, արգելում է նրա հրավիրումը:

«Հողդար», 1911, թիվ 27: Տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1911, թիվ 4409, 4421:

Հունիսի 19.— Բանախոսում է Սերաստիայի Արամյան ազգային վարժարանի աշակերտական ավարտական հանդեսում (չի պահպանվել): «Հողդարը» հաղորդում է. «Պր-ն Վարուժանի բանախոսությունը, ինչպես միշտ, սքանչելի էր»: «Անդրանիկը» գրում է. «Խոսք առնելով, տյար Դանիել Վարուժան ուսման և արվեստի կարևոր դերը շեշտեց իբր առաջին պլանի ազգի մը գոյությունը պահպանումին և իր խոսքերը ընթացավարտներու ուղղելով, քաջալերեց զանոնք հավատարիմ գտնվիլ իրենց առած դաստիարակության և կոշումին և օգտակար հանդիսանալու հանրության»:

«Հողդար», 1911, հունիս 25, թիվ 28, «Անդրանիկ», 1911, հունիս 25/7 հուլիս, թիվ 85:

Հունիսի 26.— Ելույթ է ունենում Սերաստիայի Ս. Նշան վանքի անտառում կազմակերպված «Արևելյան գորգի ընկերության» բանվորուհիների գործադուլի միտինգում (չի պահպանվել): «Գործադուլի միթինկը» հաղորդման մեջ «Հողդարը» գրում է. «Եվ վերջապես անզուգական»:



Վարուժան իբրև քնարավոր տնտեսագետ մը լախտի հարված մը տվավ Բանախոսություն, ուր համեստ, քաղաքավար սլաքներ կը սահեին գործարանատիրոջ անգթությունը դեմ, սլաքներ, որոնց հետքը կը մնա՝ ինչպես թունավոր պողպատներունը:

«Հողգար», 1911, հուլիս 2, թիվ 29: Տե՛ս նաև «Ազատամարտ», 1911, թիվ 634:

Հուլիսի 2.— «Հողգարը» ծանուցում է. «Գալ շարթու մեջ տպարանես հրապարակ կը հանվի շքեղ, հատուկ տպագրությունով ու ողորկ թղթով անզուգական ՎԱՐՈՒԺԱՆԻՆ է՛ն կատարյալ մեկ քերթվածը մասնավոր տետրակով մը» (թիվ 29, 1):

Խոսքը «Տրտունջքի» մասին է:

<Մինչև հուլիսի 3>.— Գրում է «Գեղեցկության արձանին» բանաստեղծությունը, ուղարկում Մերուժան Պարսամյանին՝ «Շանթում» տպագրելու համար:

«Նամականի», 195—196:

<Նույն շրջանում>.— Մերուժան Պարսամյանը Կ. Պոլսից՝ վարուժանին (չի պահանջվել): Ուղարկում է «Շանթ» պարբերականի անդրանիկ թիվը, խնդրում է կարծիք հայտնել:

Անդ:

Հուլիսի 3.— Բրգնիկից նամակ՝ Մերուժան Պարսամյանին: Կարծիք է հայտնում «Շանթի» մասին: Խորհուրդ է տալիս իր բանաստեղծություններից առաջին հերթին տպագրել «Գեղեցկության արձանինը»:

Անդ:

Հուլիսի 6.— Գրում է «Ըղեղներ» արձակ ստեղծագործությունը:

«Հողգար», 1911, թիվ 30:

Հուլիսի 9.— «Հողգարում» տպագրվում է «Ըղեղներ» արձակ ստեղծագործությունը և խմբագրությանը հղած հունիսի 15-ի նամակը (թիվ 30, 1):

Հուլիսի 30.— Սերաստիայում առանձին գրքույկով տպագրվում է

«Տրտունջք» բանաստեղծությունը: Անվանաթերթը՝ «ՏՐՏՈՒՆՋՔ. Եղիա Տեմիրճիպաշյանին, 1911, տպագրություն «Հողգարի» Սերաստիա (Մատենաշար «Հողգարի»), 16 էջ:

Ըստ Կարապետ Գաբրիլյանի, գրքույկը «առատավարձ պայմաններով» ցանկացել են տպագրել ուրիշ հրատարակչություններ, բայց հեղինակը նախընտրել է «Հողգարը»:

«Հողգար», 1911, թիվ 33, թիվ 42:

<Մինչև օգոստոս>.— Գրում է «Մեռած աստվածներուն» բանաստեղծությունը: Ուղարկում է Արշակ Զոպանյանին՝ «Անահիտում» տպագրելու համար:

«Անանիտ», 1911, թիվ 7—8, 188—189:

<Նույն շրջանում>.— Գրում է «Գրվազ մը ճամբորդի հուշերեն (վենետիկեն Աթենք)» ուղեգրությունը: Ուղարկում է Իզմիրի «Հայ գրականություն» հանդեսին:

«Հայ գրականություն», 1911, թիվ 2, 11—13:

Օգոստոսի 1/14.— «Շանթ» հանդեսում տպագրվում է «Գեղեցկության արձանը» բանաստեղծությունը (թիվ 4, 51): Վերահրատարակվել է «Գեղեցկության արձանին» վերնագրով:

Նույն օրը.— «Հայ գրականություն» հանդեսում տպագրվում է «Գրվազ մը ճամբորդի հուշերեն (վենետիկեն Աթենք)» ուղեգրությունը (թիվ 2, 11—13):

<Մինչև օգոստոսի 4>.— Սերաստիայում գրում է «Գեղոն» («Վանատուր») բանաստեղծությունը: Ուղարկում է Թեոդիկին 1912-ի «Ամենուն տարեցույցում» տպագրելու համար:

ԳԱԹ, ԳՎՅ, Մ 15, 1—4, «Ամենուն տարեցույցը», 1912, 18—19:

Օգոստոսի 4.— Մեկնում է Սերաստիայից: Ըստ «Հողգարի», վարուժանը գնալու էր Կ. Պոլիս:

«Հողգար», 1911, օգոստոս 6, թիվ 34:

Օգոստոսի 6.— «Հողգարը» տպագրում է Կարապետ Պարսամյանի «Անզուգական պր-ն Վարուժանի մեկնումին առթիվ խոհեր» հոդվածը, 12—810



որտեղ ասվում է, թե մեկնման պատճառը «ամսականներու հապաղեցումն է», ցածր աշխատավարձը, «նյութական անկախության» հասնելու ցանկությունը: Ապա գրում է. «Քաղաքը ամբողջ պաշտամունք ունեո իրեն հանդես: Հավաքություններու, հանդեսներու խալծն էր ինք: Դիր իր անունը ուէ հայտագրի մեջ, և քաղաքը ամբողջ՝ կին, տղա, կուզա, կը խոնվի հոն» (Թիվ 34):

Սգոստոսի 13.— «Հողդարը» «Թոգատցիներուն հաղթանակը» հաղորդման մեջ հայտնում է, որ Վարուժանը որպես ավագ ուսուցիչ պաշտոնավարելու է Թոգատում (Եվդոկիա) (Թիվ 35):

Սգոստոսի 15.— Եվդոկիայի «Իրիս» պարբերականը տպագրում է «Պատկառելի պյուտճե մը մեր դպրոցներուն համար» խմբագրական հոդվածը, որտեղ ասված է. «Կը լսենք թե Դանիել էֆ. Վարուժան իրր ավագ ուսուցիչ մեր Ազգ. դպրոցին մեջ դասախոսելու համար Ուսումն. խորհուրդը վար է դրեր՝ պայմանավորվելով հետը բավական կլոր գումարով մը... Այս առաջին գործով արդեն իսկ Ուսումն. խորհուրդը ցույց կուտա իր մտավոր կարողության շափանիչը՝ կոչելով ի պաշտոն Վարուժանի նման բառին ամենն լայն առումով գիտակից դաստիարակ մը, որ անզույգ է: Փառք ու պարծանք մեր Թոգատի հայության, որ պատիվը կունենա իր դպրոցին մեջ ունենալուն զՎարուժան, որուն վրա սեեոված է ամբողջ մտավոր հայության ուշադրությունը իրր իր ամենն մեծ բանաստեղծը: Կը հուսանք և կսպասենք, որ Ուսումն. խորհուրդը եթե ոչ բոլորը Վարուժանի շափ բարձր հատկություններով օժտված, գեթ անոր նման գիտակից անձնավորություններ պիտի կոչե ի պաշտոն դաստիարակության վսեմ գործին» (Թիվ 11, 2):

<Սգոստոս>.— «Անահիտում» տպագրվում է «Մեռած աստվածներուն» բանաստեղծությունը (Թիվ 7—8, 188—189):

<Մինչև սեպտեմբերի 15>.— Անցնում է ուսուցչական աշխատանքի Եվդոկիայի ազգային վարժարանում: «Ներկա 1911—1912 տարեշրջանի ազգ. վարժարանաց կազմը» հաղորդման մեջ «Իրիսը» գրում է. «Վարուժան էֆ. իրր բանաստեղծ անզուգական է և իրր բեմբասաց աննման. գիտե հմայել և դյուլթել իր զգայուն բանաստեղծություններով և մագնիսացնել իր բանախոսություններով: Վարժարանին մեջ կը դա-

սախոսե հայ գրականություն, տնտեսագիտություն, բարոյագիտություն և ֆրունսերեն»:

Վարուժանը Եվդոկիա է մեկնել Շավարշ ծայրագույն վարդապետ Սահակյանի հրավերով:

«Իրիս», 1911, սեպտեմբեր 15, Թիվ 13, 5, «Հուտարե», 1957, Թիվ 83:

Սեպտեմբերի 24.— Հարց է բարձրացվում, որպեսզի Եվդոկիայի ազգային երեսփոխանական ժողովը Վարուժանին ընտրի կաթողիկոսական առաջիկա ընտրությունների պատվիրակ՝ վճարելով ճանապարհածախսը:

Առաջարկը չի հարգվել:

«Հողդար», 1911, Թիվ 40, 2—3:

<Մինչև հոկտեմբերի 1>.— Գրում է «Տիպարներ» արձակ ստեղծագործության առաջին մասը: Հանձնում է «Իրիսին» տպագրության համար: Հայտնի չէ մնացյալները գրել է, թե ոչ:

«Իրիս», 1911, Թիվ 14—15, 3—4:

Հոկտեմբերի 1 և 15.— «Իրիսում» տպագրվում է «Տիպարներ» արձակ ստեղծագործության Ա. մասը (Թիվ 14—15, 3—4):

Հոկտեմբերի 8.— «Հողդարը» սկսում է տպագրել Կարապետ Գաբրիլյանի «Գիրքեր և դեմքեր» հոդվածը՝ նվիրված «Տրտունջը» բանաստեղծության առանձին հրատարակությանը (Թիվ 42, 2—3):

<Մինչև հոկտեմբերի 15>.— Բանախոսում է Եվդոկիայի ազգային վարժարանի մեծ սրահում (չի պահպանվել): Այդ առթիվ «Հողդարի» թղթակից Շահնուրը, «Թոգատեն լուրեր. Վարուժան և Մուրատ մեր բեմին վրա» հաղորդման մեջ գրում է. «Վարուժանի ներկայությունը շատոնց կը վալելենք, բայց զինքը լսելու բախտը ունեցած չէինք երբեք: Առասպել կուզար մեզ Վարուժանի բեմբասության նկատմամբ պատմըվածները... Վարուժան բանախոսեց այնպիսի հրեշտակային լեզվով, որ երբեք լսած ըլլար թոքատցին: Ամեն մի բառ բանաստեղծություն էր, ամեն մի պարբերություն մի ամբողջ պատմություն: Չի լացուց մեզ, այլ վրեժխնդրության ոգին արթնցուց մեր մեջ. չի շոյեց մեր սառած երակ-



ները, այլ ցնցեց զանոնք ուժգնորեն: «Հերիք,— ըսավ,— ապրեցանք դարեր տևող թմբության մեջ, ապրինք կյանք մը ասպետական, որով ապրեցան մեր նախահայրերը իրենց բնագավառին մեջ»:

Ջղուտ, նիհարակազմ Վարուժան բեմին վրա դարձավ մի առյուծ ամենհի, որ իր մտերմական գոռում-գոշումներով սրահը զղրղեց և ունկընդիրները սարսուացուց: Գուրսը իր մտերմական խոսվածքին մեջ վտակի մը պես հեղասահ Վարուժանը բեմին վրա եղավ ժայռերու բարձունքներեն վար ինկնող շառաշուն ջրվեժ մը՝ դաշտ ու սար զոգացնող:

Ինք հայուն ապագային համար կատարյալ հավատացող մըն է: Բոլոր ազգերուն պատմության մեջ չի կրցավ գտնել ազգ մը, որ հայու շափ տոկուն և զորավոր եղած ըլլա նկարագրով: «Հայը,— ըսավ,— մի մարտիրոս է, մի վկա, ծանր ձեռքեր ջախջախեցին իր գանկը, բայց նա կրցավ ստեղծագործել: Կոտորեցին իր բաղժկները, բայց նա իր ակոսներով բացավ իր սրտին ակոսները: Նիզակներու, մորթիներու և յաթաղանի հարվածներով պատեցին իր կուրծքը և ծակծկեցին ամբողջ իրանը և այնքան ուժգին, որքան մի առույգ երիտասարդի մը սիրտը: Պիտի ապրի հայը, ցորչափ փարած է նա իր գրչին, որ կարտահայտե ստեղծագործող միտքը, իր բահին, որ աշխատությունը կը հատկանշե և իր զենքին, որ միակ գործիքն է զորավորության: Վայ այն ազգին, որ կանգոսնե քաղաքակրթությունը հատկանշող այս եռոտանիին մին. անիկա դատապարտված է հավետ զրկվելու իր գոյութենեն»:

Ունկնդիրներու որոտընդոստ ծափերու և ծափահարությանց մեջ Վարուժան վերջացուց իր կուռ և կորովալի բանախոսությունը:

Արտաշես Հովակիմյանի վկայությամբ Վարուժանը «Հաստատեց կիրականօրչա բանախոսություններու շարք մը... Բանախոսություններեն ետք հաճույքով կը պատասխաներ մեր հարցումներուն, լիպպես գոհացում տալով մեր հետաքրքրության»:

«Հողդար», 1911, հոկտեմբեր 15, թիվ 43, «Հասարե», 1957, թիվ 83:

<Նույն շրջանում>.— Եվզովիայում գրում է «Դադար» բանաստեղծությունը: Ուղարկում է Մերուժան Պարսամյանին՝ «Շանթում» տպագրելու համար:

«Շանթ», 1911, թիվ 9, 136:

Հոկտեմբերի 15/28.— «Շանթում» տպագրվում է «Դադար» բանաստեղծությունը (թիվ 9, 136):

Նույն օրը.— «Հողդարը» տպագրում է Կարապետ Գաբրիկյանի «Գիրքեր և դեմքեր» հոդվածի շարունակությունը (թիվ 43, 2—3):

<Մինչև հոկտեմբերի 18>.— Արաքսի Վարուժանի հետ նամակ՝ Մարիամ Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՅ, № 63 Ը.:

Հոկտեմբերի 18.— Մարիամ Թաշճյանը Սեբաստիայից՝ Արաքսի և Գանիել Վարուժաններին: Անձնական-ընտանեկան հարցերի շուրջ:

Անգ:

Հոկտեմբերի 22.— «Հողդարը» տպագրում է Կարապետ Գաբրիկյանի «Գիրքեր և դեմքեր» հոդվածի վերջին մասը (թիվ 44, 2): Գրախոսությունը խիստ զրվատական է և բարձր է գնահատում «Տրտունջը»:

<Մինչև հոկտեմբերի 24>.— Գրում է «Բանվորուհին» բանաստեղծությունը և ուղարկում «Ազատամարտին»:

«Ազատամարտ», 1911, թիվ 15, 1:

Հոկտեմբերի 24/6 նոյեմբերի.— «Ազատամարտ» շաբաթաթերթում տպագրվում է «Բանվորուհին» բանաստեղծությունը (թիվ 15, 1):

<Հոկտեմբերի վերջ>.— Գրում է «Միջոն» բանաստեղծությունը և ուղարկում «Հայ գրականություն» հանդեսին:

«Հայ գրականություն», 1911, թիվ 5, 10:

<Հոկտեմբեր>.— Եվզովիայի ազգային վարժարանում սկսում է կազմակերպել գրական ցերեկույթներ: «Իրիս» գավառաթերթը տեղեկացնում է. «Ամեն ուրբաթ օր իրիկվան վերջին ժամուն Ազգ. վարժարանին մեջ սկսած են տեղի ունենալ գրական ցերեկույթներ, զոր կը կազմակերպե վարժարանի ուսուցիչներեն հայտնի տաղանդավոր բանաստեղծ Գանիել էֆ. Վարուժան»: Ցերեկույթներում կարդացվել ու քննարկվել են աշակերտների գրական ստեղծագործությունները: Լուսիք



կորկոտյանը իր հուշերում պատմում է. «Գրի և գրականության սիրահարները շատցան շնորհիվ իր սարքած գրական դասախոսություններուն, որոնք ամեն շաբթու տեղի կունենային դպրոցին սրահին մեջ»:

«Երիս», 1911, նոյեմբեր 1-15, թիվ 16-17, 8, «Փյունիկ», 1920, թիվ V:

Նոյեմբերի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսում տպագրվում է «Միջոն» բանաստեղծությունը (թիվ 5, 10):

<Մինչև նոյեմբերի 5>.— Նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 72 ԼԻ:

Նոյեմբերի 5/18.— Միրիճան Թաշճյանը Սեբաստիայից՝ վարուժանին: Հետաքրքրվում է նրա գործերով:

Անդ:

Նոյեմբերի 13.— Բանախոսում է Եվդոկիայի ազգային վարժարանի թատերասրահում տեղի ունեցած դպրոցական հանդեսում (չի պահպանվել): «Դպրոցական-գրական հանդես» թղթակցության մեջ ասված է. «...Բանաստեղծի ճշմարիտ ներշնչումով, այլաբանական խորհրդավոր պատկերներով և հռետորական հմայիչ շարժումներով տարավ, վերացուց ունկնդիրները երևակայական աշխարհներու մեջ դիտելու երբեմնի Թադուհին աղախնի վիճակին մեջ և ի վերջո ներկայացուց, թե որո՞նք էին և որո՞նք պիտի ըլլան այն անձնվեր երիտասարդությունը, որ բարձրացուցին և պիտի բարձրացնեն սգավոր Մայրը, Մայր հայրենիքին իր անկումեն: Դ. վարուժանի ճառը բանախոսութենե մը ավելի «Հայտնության քերթված» մըն էր, ինչպես ըսավ Առաջնորդ Ս. Հայրը»: «Գրական մասը» կազմակերպել է վարուժանը: Աղջկանց վարժարանի սանուհիները հանդես են եկել «Պատգամավորներս» բանաստեղծության բնականացված արտասանությամբ:

«Երիս», 1911, նոյեմբեր 1-15, թիվ 14-15, 9:

Նոյեմբերի 14.— Նվեր է ստանում Ռուբեն Ասասյանի «Հայ տառապլալներ և անձնվեր թուրք սպան» թատերախաղը (Եվդոկիա, 1911):

Մակագրությունը՝ «Առ տաղանդավոր բանաստեղծ տյար Դանիել Վառուժան»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 262:

<Մինչև դեկտեմբերի 1>.— Գրում է «Երեք քույրեր» բանաստեղծությունը և ուղարկում «Հայ գրականություն» հանդեսին:

«Հայ գրականություն», 1911, թիվ 6, 7:

Դեկտեմբերի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսում տպագրվում է «Երեք քույրեր» բանաստեղծությունը (թիվ 6, 7):

Դեկտեմբերի 13.— Ուսուցչական խորհրդի որոշմամբ Եվդոկիայի Ազգային վարժարանը դասարանական դրվածքից անցնում է սերտարանականի: Ըստ Արտաշես Հովակիմյանի «սերտարանական դրություն» նախաձեռնողը եղել է վարուժանը:

«Երիս», 1911, դեկտեմբեր 15, թիվ 19, 6, «Հուլիս», 1957, թիվ 83:

Դեկտեմբերի 15.— «Երիսը» տպագրում է «Դաշտերու տղան» բանաստեղծությունը (թիվ 9, 3): Տե՛ս նաև 1904-ի սեպտեմբերի 14-ի գրառումը:

<Մինչև դեկտեմբերի 17>.— Գրում է «Սիրտս է հոգնած, վիրավոր» սկսվածքով բանաստեղծությունը և ուղարկում «Հողդարին»:

«Հողդար», 1911, թիվ 1, 1:

Դեկտեմբերի 17.— «Հողդարում» տպագրվում է «Սիրտս է հոգնած, վիրավոր» սկսվածքով բանաստեղծությունը (թիվ 1, 1):

<Մինչև դեկտեմբերի 25>.— Արաքսի վարուժանի հետ նամակ՝ Մարիամ Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՅ, № 69 ԼԻ:

Դեկտեմբերի 25.— Մարիամ Թաշճյանը Սեբաստիայից՝ Արաքսի ու Դանիել վարուժաններին: Անձնական հարցերի շուրջ:

Անդ:



<Տարեվերջ>.— 1912-ի «Ամենուն տարեցույցում» տպագրվում են Վարուժանի կարծիքը 1911-ի հատորի մասին (6) և «Գեղոն» բանաստեղծությունը (18—19: Վերահրատարակվել է «Վանատուր» վերնագրով):

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Թեոդիկին: Կարծիք է հայտնում նրա «Կաղանդ» ժողովածուի և 1912-ի «Ամենուն տարեցույցի» մասին: «Նամականի», 199—200:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Մարիամ Թաշճյանին (չի պահպանվել): Հայտնում է, որ հիվանդ է:

ԳԱԹ, ԴՎՖ, № 67 ր.

<Նույն շրջանում>.— Սահակ-Մեսրոպի 1912-ի «Հայրենի տարեցույցում» (Կ. Պ., 1911) «Ազատամարտից» արտատպվում է «Պատգամավորներս» բանաստեղծությունը (82—84):

<Նույն շրջանում>.— Գրում է «Ո՛ր Տալիթա...» բանաստեղծությունը և ուղարկում «Շանթ» հանդեսին:

«Շանթ», 1912, հունվար 1/14, թիվ 14, 226:

<Նույն շրջանում>.— Գրում է «Արևելյան բաղանիք» բանաստեղծությունը և ուղարկում «Ոստան» հանդեսին:

«Ոստան», 1912, Ա. Եռամսյա, թիվ 5, 62—64:

— Ռուբեն Զարդարյանը իր «Մեղրադետ, ժողովածու հայ և օտար գրականության, արձակ և ոտանավոր, բարձրագույն կարգերու համար» ձեռնարկում (Կ. Պ., 1911) արտատպում է «Կարմիր հողը» և «Վահագն» բանաստեղծությունները (74—76, 428—431):

— Հրանտ և Զապել Ասատուրները իրենց «Թանգարան հատընտիր հատվածներու արձակ և ոտանավոր, բարձրագույն դասընթացք, Բ տըպագրություն, ամբողջովին փոխված» ձեռնարկում (Կ. Պ., 1911) արտատպում են «Կարոտի նամակ» բանաստեղծությունը և մի հատված «Հովիվը» դյուցազնավեպից «Պապուս հեքիաթները» վերնագրով (130—131, 308—309):

— Արաքսի և Դանիել Վարուժանները ազգականների հետ լուսանկարվում են Բրզնիկի ճանապարհին:

ԳԱԹ, ԴՎՖ, № 302 ր.

— Արաքսի և Դանիել Վարուժանների ընտանիքում ծնվում է անդրանիկ զավակը՝ Վերոնը:

ԳԱԹ, ԴՎՖ, № 339:

1912

Հունվարի 1/14.— «Շանթ» հանդեսում տպագրվում է «Ո՛ր Տալիթա...» բանաստեղծությունը (թիվ 14, 226):

Նույն օրը.— «Իրիսում» տպագրում է «Հիսուսին պիպեքը» բանաստեղծությունը (թիվ 20, 4—5):

Նույն օրը.— «Ժամանակ» օրաթերթում «Մտերմության ժամեր» ընդհանուր վերնագրի տակ քաղվածաբար տպագրվում է Թեոդիկին ուղղած Վարուժանի 1908-ի նոյեմբերի 18-ի, 1909-ի հունվարի 9-ի, ապրիլի 2-ի և 1910-ի սեպտեմբերի 3-ի նամակները (թիվ 995):

<Մինչև հունվարի 28>.— Արաքսի Վարուժանի հետ նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՖ № 74 ր.

<Մինչև փետրվարի 1>.— «Կղեոպատրա» բանաստեղծությունը ուղարկում է «Հայ գրականություն» հանդեսին (տե՛ս 1911-ի փետրվարի 28-ի գրառումը):

«Հայ գրականություն», 1912, թիվ 8, 12:

Փետրվարի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսում տպագրվում է «Կղեոպատրա» բանաստեղծությունը (թիվ 8, 12):

Նույն օրը.— «Իրիսը» ծանուցում է, որ փետրվարի 5-ին ի նպաստ Եվզոկիայի Աղգային վարժարանի մատենադարանի «աշակերտության կողմե առաջնորդությանը Գ. Վարուժան էֆ.-ի պիտի ներկայացվին Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» և մեկ արարվածով պղտիկ քիես մը՝ «Տոնի համար» (թիվ 22, 7):



<Մինչև փետրվարի 4>.— Արաքսի վարուժանի հետ նամակ՝ Մաղաքյան ամուսիններին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 87 ԼԲ.:

Փետրվարի 4.— Նազելի Մաղաքյանը ծնողների անունից՝ Արաքսի և Դանիել վարուժաններին: Մաղթում է հաջողություններ:

Անդ:

Փետրվարի 5.— Եվդոկիայի աղգային վարժարանի աշակերտները վարուժանի ղեկավարությամբ բեմադրում են Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» և «Տոնի համար» դավելյոր:

«Իրիս», 1912, փետրվար 15, թիվ 23, 5:

<Մինչև փետրվարի 11>.— «Մաղրանկար» բանաստեղծությունը ուղարկում է «Հողդարին»:

«Հողդար», 1912, թիվ 7, 25:

Փետրվարի 11.— «Հողդարում» «Ատելություն երգեր» ընդհանուր խորագրի տակ տպագրվում է «Մաղրանկար» բանաստեղծությունը «Թիվ 7, 25»:

Փետրվարի 15.— «Իրիսը» տպագրում է Արսեն Մարկոսյանի «Թատերական քրոնիկ» հոդվածը՝ նվիրված փետրվարի 5-ի (տե՛ս գրառումը) դպրոցական ներկայացմանը: «Բարեկենդանի կիրակի օրվան հանդես-ներկայացումը,— գրում է նա,— որ տրվեցավ աշակերտության կողմն, առաջնորդությամբ պ. Դանիել վարուժանի, գոհ թողուց ներկաները» (թիվ 23, 5):

Փետրվարի 16.— Նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 75 ԼԲ.:

Փետրվարի 19.— Միրիճան Թաշճյանը Սերաստիայից՝ վարուժանին: Անձնական հարցերի շուրջ:

Անդ:

Փետրվարի 20.— Լուսինը Կորկոսյանը իր լուսանկարը նվիրում է վարուժանին: Մակագրությունը՝ «նվեր բանաստեղծ բարեկամիս՝ տյար Դանիել վարուժանի»:

ԳԱԹ, ԳՎՖ, № 598 ԼԲ.:

<Փետրվար>.— «Գեղարվեստ» հանդեսի 1911-ի շորրորդ գրքում տպագրվում է «...Ո՛վ կալագե» բանաստեղծությունը (94—96): Միուժամանակ հրատարակվում է Մարգարի «Դանիել վարուժան» հոդվածի վերջին մասը (133—141: Տե՛ս 1910-ի «Փետրվարի 17-ից հետո» գրառումը): Քննադատի եզրակացությունը. «Դեռ ոչ մեկ տաճկահայ բանաստեղծ այդ գողտրիկ և կավեկացնենք սքանչելի տճկորով չի երգել»:

<Փետրվարից հետո>.— Հարություն Սուրխաթյանը տպագրում է գրախոսական «Գեղարվեստի» 1911-ի հատորի մասին: «...Ո՛վ կալագե» բանաստեղծության առիթով քննադատը նկատում է. «Դանիել վարուժանը, որի «ցեղային» տափակությունը... այնքան փառաբանված է «Գեղարվեստի» 3 և 4 համարներում (ակնարկում է Մարգարի հոդվածը—Ա. Շ.) «աղգային» տեսակետից շատ ջանք է գործ դրել իր երևակայության մեջ ամեն բան կանանց մարմնի որոշ մասերի հետ համեմատելու համար... Դանիել վարուժանը անշուշտ «ղեկադենտ» է և արեվելյան ղեկադենտ»:

Հայտնի չէ, արեւելահայ ո՞ր հանդեսում է հրատարակվել այս գրախոսությունը (քննադատի արխիվում պահվող տպագիր օրինակի վրա նշված են 138—143 էջերը): Սուրխաթյանը կատարել է որոշ փոփոխություններ՝ մտադրվելով զետեղել իր երկերի առաջին հատորում:

ԳԱԹ, Հ. Սուրխաթյանի ֆոնդ, №№ 73—74 և 154:

<Մինչև մարտի 1>.— Գրում է «Մաղուռնական» բանաստեղծությունը և ուղարկում «Շանթ» հանդեսին:

«Շանթ», 1912, թիվ 18, 281:

Մարտի 1/14.— «Շանթ» հանդեսը տպագրում է «Մաղուռնական» բանաստեղծությունը (թիվ 18, 281):

<Մինչև մարտի 10>.— Արաքսի վարուժանի հետ նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 76 ԼԲ.:



Մարտի 10.— Միրիճան Թաշճյանը Սեբաստիայից՝ Արաքսի և Դանիել Վարուժաններին: Ընտանեկան հարցերի մասին:

Անդ:

Մարտի 12.— Բաց նամակ՝ «Հողդարի» խմբագրին: Դատապարտում է իր անվան շուրջ Սեբաստիայում ծայր առած բամբասանքները: «Նամակների», 196—198:

<Մարտի երկուրդ տասնօրյակ>.— Շրջագայում է Եվդոկիայի շրջակա բնակավայրերում ու գյուղերում, մասնակցում ժողովների: «Սովետական գրականություն», 1977, № 6, 146:

Մարտի 17.— Նիքսարից նամակ՝ Արաքսի Վարուժանին:

Անդ:

Նույն օրը.— «Հողդարում» տպագրվում է Վարուժանի «Բաց նամակը» (թիվ 11, 41—42):

Մարտ.— «Ոստան» հանդեսում տպագրվում է «Արևելյան բաղանիք» բանաստեղծությունը (Ա. եռամսյա, թիվ 5, 62—64):

<Մինչև ապրիլի 1>.— Գրում է «Անիշխանուհին» բանաստեղծությունը և ուղարկում «Հայ գրականություն» հանդեսին: «Հայ գրականություն», 1912, թիվ 10, 5:

Ապրիլի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսում տպագրվում է «Անիշխանուհին» բանաստեղծությունը (թիվ 10, 5):

Ապրիլի 15.— «Իրիսը» տպագրում է Վարուժանի «Թերզյանի խնդիրը տեղվույս մեջ» հոդվածը՝ ուղղված կաթոլիկ հայերի պատրիարքի դեմ: Միաժամանակ «Մուլա» ստորագրությամբ հրատարակում է Վարուժանի «Երգ» («Ծառի մը տակ, մամուռն ինձ բարձ») բանաստեղծությունը (թիվ 1, 6—8):

«Մուլա» ստորագրության մասին տե՛ս Գ. Աղնավուրյան, «Վարուժանագիտության նորահայտ վավերագիրը» («Գրական թերթ», 1975, № 50):

Նույն օրը.— «Հորիզոն» թերթը տպագրում է Վ. Մենակի գրախոսությունը «Գեղարվեստի» 1911-ի հատորի մասին: «Գրական նորություններ» հատվածում անդրադառնալով Մարգարի «Դանիել Վարուժան» հոդվածին, քննադատը գրում է. «Գուվելի է հարգելի քննադատի այդ գովելի վերաբերմունքը դեպի մեր գեղարվեստագետները, սակայն այդպես հեշտությամբ կուռքեր բարձրացնելու թուլությունը կանե այն, որ մեր քննադատների կառուցած պանթեոնում այլևս դժվար կլինի տարբերել իսկական մեծությունները շակերտավոր մեծություններից... Եվ հետո, վատ չէր լինի, եթե պ. Մարգարը իր քննադատական էքսկուրսիաները կատարելիս չմոռանար վերցնել իր հետ այն, ինչը ինքը անվանում է «վիրաբուժական նշտար» (№ 77):

<Մինչև ապրիլի 18>.— Գրում է «Մայիս մեկ» բանաստեղծությունը, ուղարկում «Ազատամարտ» օրաթերթին: «Ազատամարտ», 1912, թիվ 874:

Ապրիլի 18/1 մայիսի.— «Ազատամարտ» օրաթերթում տպագրվում է «Մայիս մեկ» բանաստեղծությունը (թիվ 874):

<Մինչև ապրիլի 27>.— Մերուժան Պարսամյանը Կ. Պոլսից Վարուժանին (չի պահպանվել): Առաջարկում է հոդված գրել Արշակ Չոպանյանի մասին: ԳԱԹ, ԳՎՅ, № 52 ԼԲ:

Ապրիլի 27.— Նամակ՝ Մերուժան Պարսամյանին: Համաձայնություն է տալիս Արշակ Չոպանյանի մասին «բան մը» գրելու նրա առաջարկին: Հայտնի չէ, հոդվածը գրե՞լ է, թե ոչ: Անդ:

<Մինչև մայիսի 15>.— Գրում է «Վարուժնակիս» բանաստեղծությունը: «Նամակների», 199:

Մայիսի 15.— Նամակ՝ Թեոդիկին: 1913-ի «Ամենուն տարեցույցում» հրատարակելու համար ուղարկում է «Վարուժնակիս» բանաստեղծությունը: Անդ:



<Մինչև մայիսի 29>.— Արաքսի Վարուժանի հետ նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 77 Լր.:

Մայիսի 29.— Միրիճան Թաշճյանը Սերաստիայից՝ Արաքսի և Գանիել Վարուժաններին: Ընտանեկան հարցերի շուրջ:

Անդ:

<Մինչև հունիսի 1>.— Արձագանքում է մայիսի 1-ից «Իրիսի» էջերում ծավալված բանավեճին՝ Եվդոկիայի ճիզվիթական վարժարանի շուրջ: Գրում է «Վերքը կարյունի» հոդվածը:

«Իրիս», 1912, թիվ 4, 9—13:

Հունիսի 1.— «Իրիսում» տպագրվում է «Վերքը կարյունի» հոդվածը: Վարուժանը պաշտպանում է Արսեն Մարկոսյանի «Հայ մատաղ սերունդ մը կը փճանա ճիզվիտներու վարժարանին մեջ», «Գոգներիս նրստած՝ մորուքնիս կը փետեն» և այլ ելույթները, դատապարտում է վարժարանի տնօրեն Բեռ Ռիոնտելին և ցույց տալիս, որ ճիզվիթները չեն կարող ո՛չ հայ ժողովրդի, ո՛չ էլ հայ մանուկների բարեկամները լինել (թիվ 4, 9—13):

Հունիսի 8.— «Հորիզոն» թերթը տպագրում է Շիրվանզադեի «Ահա մի ուրիշը» հոդվածը, որտեղ «...Ո՛վ կալագե» բանաստեղծությունը համարվում է «կեղտոտ ոտանավոր», «կատարյալ պոռնկություն», հեղինակը՝ «գոեհիկ, կոպիտ, ամոթից ու ամենատարրական ճաշակից զուրկ բանաստեղծ» (№ 121, տե՛ս նաև Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1962, 475—476):

Հունիսի 10.— «Մշակ» օրաթերթը արձագանքում է Շիրվանզադեի «Ահա մի ուրիշը» հոդվածին: «Մամուլ» ընդհանուր վերնագրի տակ թերթը գրում է. «Բանից դուրս է գալիս, որ «Գեղարվեստ» հանդեսի հրատարակիչ Գ. Լևոնյանը գեղարվեստի դիմակի տակ հրամցում է հայ մատաղ սերնդին և հայ ընթերցողներին ոչ թե պոռնկագրական, այլ ուղղակի պոռնկական գրվածքներ: Օրինակները, որ բերել է Շիրվանզադեն, ավելի քան համոզեցուցիչ են» (№ 125):

<Մինչև հունիսի 17>.— Պիեռ Մայեսը Գենտից՝ Վարուժանին: Հրավիրում է 1913-ին այցելել Գենտ՝ ներկա գտնվելու համաշխարհային ցուցահանդեսին:

Ա. Պատրիկ, 143:

Հունիսի 17.— Նամակ՝ Պիեռ Մայեսին: Հայտնում է, որ մի քանի ամսից հրատարակելու է «Հեթանոս երգերը», որ տակավին չի ձեռնարկել իր թատերախաղին: Հաղորդում է, որ Գենտ այցելելու հարցը կլուծի կնոջ հետ խորհրդակցելուց հետո:

Եվդոկիայում Վարուժանն ունեցել է ստեղծագործական այլ հղացումներ ևս: Լուծե՛ր Կորկոտյանը իր հուշերում պատմում է. «Գրական մտերմիկ խոսակցություններու մեջ կը խոսեր ապագա իր երկու գործերուն մասին: «Աչքերը», թատրերգություն մը զոր հինգ տարինեն պիտի լրացներ և «Սասմոնց տուն», որ իր ամենեն հոյակապ գործը պիտի ըլլար»:

ԳԱԹ, ԳՎՖ, 51 Լր., «Փյունիկ», 1920, թիվ V:

<Մինչև հունիսի 21>.— Գրում է «Ծփրեմ» բանաստեղծությունը և ուղարկում «Աղատամարտ» օրաթերթին:

«Աղատամարտ», 1912, թիվ 928:

Հունիսի 21/4 հուլիսի.— «Աղատամարտ» օրաթերթում տպագրվում է «Ծփրեմ» բանաստեղծությունը (թիվ 928):

Նույն օրը.— Արաքսի Վարուժանի հետ՝ նամակ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 78 Լր.:

Հունիսի 25.— Արաքսի Վարուժանի հետ՝ նամակ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել): Հայտնում են, որ պատրաստվում են տեղափոխվել Կ. Պոլիս:

Անդ:

Հունիսի 26.— Միրիճան Թաշճյանը Սերաստիայից՝ Արաքսի և Գանիել Վարուժաններին: Ընտանեկան հարցերի շուրջ:

Անդ:



<Հովիտի վերջ>.— Ընտանիքի հետ Եվզոկիայից մեկնում է Կ. Պոլիս:

«Իրիս», 1912, օգոստոս 1, թիվ 6—7, 26:

<Մինչև օգոստոս>.— Գրում է «Ընկեցիկը» բանաստեղծությունը և ուղարկում «Հայ գրականություն» հանդեսին:

«Հայ գրականություն», 1912, թիվ 1, 4—5:

<Նույն շրջանում>.— «Հին սեր» բանաստեղծությունն ուղարկում է «Շանթ» հանդեսին:

«Շանթ», 1912, թիվ 27, 34:

Օգոստոսի 1.— «Իրիսը» հաղորդում է. «Թերթիս պատ.[ասխանատու] աշխատակիցներեն և Ազգ. վարժարանի ուսուցիչներեն տյարք Հովհ. Գաղանճյան, Դանիել Վարուժան և Պետրոս Պոնտացի քաղաքն մեկնած են դեպի Պոլիս... Չգիտենք թե Ուսումն. խորհուրդը արդյոք կրկին պետք է վերակոչե՞ն զիրենք իրենց պաշտոնին մեջ»:

Եվզոկիայից մեկնելու և Կ. Պոլիս հասնելու ստույգ օրերը հայտնի չեն: Արտաշես Հովակիմյանի վկայությամբ Եվզոկիայից հեռանալու առիթը ուսուցիչների աշխատավարձը կրճատելու և Վարուժանին տնօրենի պաշտոն հանձնելու առաջարկն էր:

Կ. Պոլսի ճանապարհին Վարուժանը մեկ օր մնացել է Ամասիայում ու Սամսոնում: Սամսոնում տեղի ակումբում բանախոսել է «Փոքր Հայքի նոր սերունդը» թեմայով (չի պահպանվել):

«Իրիս», 1912, թիվ 6—7, 26, «Շանթ», 1918, թիվ 6, «Հասարակ», 1957, թիվ 83:

Նույն օրը.— Գրում է «Մաղթանք» բանաստեղծությունը և ուղարկում «Հողգարին»:

«Հողգար», 1912, թիվ 28, 109:

Նույն օրը.— «Հայ գրականություն» հանդեսում տպագրվում է «Ընկեցիկը» բանաստեղծությունը (թիվ 1, 4—5):

Նույն օրը.— «Շանթում» տպագրվում է «Հին սեր» բանաստեղծությունը (թիվ 27, 34): Հանդեսը միաժամանակ «Մամուլ» բաժնում հրա-

տարակում է Մերուժան Պարսամյանի (Մ. Պ.) պատասխանը Շիրվան-զադեի «Ահա մի ուրիշը» հոդվածին (տե՛ս հունիսի 8-ի գրառումը): Մ. Պարսամյանը գրում է. «Վարուժան այսօր այն բանաստեղծն է, որու մասին խոսելու համար քիչ մը ավելի լրջութուն և ավելի պատրաստականություն պետք է: Եվ կը ցավինք, որ Շիրվանզադե նշանավոր թատերագիր, բայց բանաստեղծական հասկացողութենն բացարձակապես զուրկ կը թվի» (51):

Օգոստոսի 2/15—14/27.— «Բյուզանդիոն» օրաթերթը տպագրում է Ռաֆայել Պաղարճյանի գրախոսությունը «Ցեղին սիրտը» ժողովածուի մասին: Քննադատի հետևությունն է. «Վարուժան ունի անուրանալիորեն բանաստեղծական բարձր հանճար և պետք է դասել զայն մեր, ինչպես Եվրոպայի առաջնակարգ բանաստեղծներու շարքին մեջ» (թիվ 4805—4813):

<Մինչև օգոստոսի 10>.— Հայ հոռմեական (կաթոլիկ) վարչական խորհուրդը սրտում է պատրիարք Թերզյանից ետ վերցնել Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի շենքը, որը նա դարձրել էր «կաթոլիկոսական դիվանատուն»:

«Բյուզանդիոն», 1912, օգոստոս 11/24, թիվ 4813:

Օգոստոսի 10.— Հայ հոռմեական վարչական խորհրդի հանձնարարությամբ խորհրդի անդամներ Զարեհ Շիշմանյանը, Հովհաննես Թուլայանը և Գրիգոր Ոսկյանը մի խումբ մարդկանց հետ ջարդում են Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի կողպեքը, դիվանական թղթերը տեղափոխում պատրիարքի հարկաբաժինը: Վարժարանը հանձնվում է վարչական խորհրդի խնամակալությանը՝ հատկացնելով «Հայ հոռմեական տղոց երկրորդական կրթության»:

Անդ:

Օգոստոսի 14.— Բերայի մատենադարանի սրահում Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի նախագահությամբ տեղի ունեցած Հայոց հրատարակչական ընկերության տարեկան ընդհանուր ժողովում ընտրվում է խմբագրական մարմնի անդամ:

«Շանթ», 1912, օգոստոս 15/28, թիվ 68:



Սգոստոսի 18.— «Հորդարում» տպագրվում է «Մաղթանք» բանաստեղծությունը (թիվ 28, 109): Միաժամանակ պարբերականը ծանուցում է. «Այս պահուս մեր ամենասիրելի մտերիմը՝ անզուգականն Վարուժան, Պոլիս կը գտնվի ու կը հսկե իր սքանչելի մեկ երկին տպագրությունը՝ «Հեթանոս երգերու» (109):

Նույն օրը.— Կաթոլիկ հայերի պատրիարք Պողոս Թերզյանը հրավիրում է խորհրդակցություն և եկեղեցականներից պահանջում. «Հայ կաթոլիկ տղաք պետք չէ այլևս դրկվին Ս. Լուսավորիչ վարժարան»:

«Բյուզանդիոն», 1912, օգոստոս 20/2 սեպտեմբեր, թիվ 4819:

<Սգոստոսի 18-ից հետո>.— Երկու շաբաթով վենետիկից Կ. Պոլիս է գալիս Սիմոն Երեմյանը: Վարուժանը դիմում է նրան՝ ուսուցչական աշխատանք գտնելու խնդրանքով: Ս. Երեմյանը միջնորդում է Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի խնամակալության անդամներ Արամ Երեմյանին և Գրիգոր Ոսկյանին, և վարուժանը ստանձնում է այդ վարժարանի տնօրեն ուսուցչի պաշտոնը: Դասավանդում է հետևյալ առարկաները՝ իմաստասիրություն (շաբաթական 2 ժամ), հայերեն (2 ժամ), քարոյական և քաղաքացիական կրթություն (1 ժամ), քաղաքական տնտեսություն (2 ժամ): Պաշտոնավարելիս ձեռնարկում է գրականության դասադրքի ստեղծումը (հրատարակվել է «Հորդորներ սկսնականներուն» վերնագրով):

«Բյուզանդիոն», 1912, թիվ 4830, «Բազմավեպ», 1931, թիվ 11, 496, ԳԱԹ ԳՎՅ, № 311 ց., 2, «Նավասարդ», 1924, պրակ է, 195—196, պրակ Ը, 227—228, պրակ Թ, 260—262, 1925, պրակ Ա, 4—6, պրակ Բ, 38:

Սգոստոս.— Հակոբ Սիրունու հրավերով մասնակցում է էսայան սանուց միություն նախաձեռնած ամառային դասախոսությունների դասընթացներին: Մոտ 300 ուսուցիչների և ուսանողների լսարանի առաջ էսայան վարժարանի սրահում հանդես է գալիս «Ակնարկ մը գրական դպրոցներու վրա» բանախոսությամբ:

Սիրունի, 82, «Վեցամյակ էսայան սանուց միության. 1908—1914», Կ. Պ., 1914, 6—7, «Ամենուն տարեցույցը», 1928, 341—346:

Սեպտեմբերի 15/28.— «Շանթը» Մերուժան Պարսամյանի «Գիրքեր» գրախոսականում զետեղում է Իսկուհի Մինասի «Պիտի երբեք չգիտնաս...» արձակ բանաստեղծությունը՝ Վարուժանի թարգմանությամբ (թիվ 30, 96):

Նույն օրը.— «Բյուզանդիոն» լրագիրը ծանուցում է. «Լուսավորչյան վարժարան իբրև ուսումնարան բացված է. անցյալ տարի 70 աշակերտ ունեւր, այս տարի 100-ը անցած է աշակերտներուն թիվը. մեկ կողմեն ալ դիմումներ կըլլան» (թիվ 4842):

<Մինչև հոկտեմբերի 1>.— Գրում է «Գինարբուքեն վերջ» բանաստեղծությունը:

«Երկունք», 1912, թիվ 4, 83:

Հոկտեմբերի 1/14.— «Երկունք» պարբերականում տպագրվում է «Գինարբուքեն վերջ» բանաստեղծությունը (թիվ 4, 83):

Հոկտեմբերի 6.— «Կաթողիկե արձագանգ» շաբաթաթերթը խմբագրական հոդվածում վարուժանին մեղադրում է բողոքական տրամադրություններ քարոզելու և անբարոյականության մեջ: Պարբերականը գրում է. «Տեսեք զո՞վ դրեր են Տնօրեն, այսինքն տղայոց ուսուցման քարոյականին, կրոնքին ավանդապահ պաշտպան նախանձախնդիր, տղայոց հայր և խորհրդատու... զո՞վ, գիտե՞ք, վարուժանը: Ահա բառ առ բառ, ինչ որ կը տեղեկագրվի մեզ. «Դանիել վարուժան կամ Չրպուրքյեւրյան առեն մը Բրդնկա տնօրեն ու վարժապետ, հետո անկե հեռացված իր գայթակղելի բարուց պատճառով, կենակցած իրմե դաս առնող աղջկան մը հետ և հետո ամուսնացած էջմիածնական պսակով» (թիվ 65, 588—589):

Հոկտեմբերի 13.— «Կաթողիկե արձագանգ» շաբաթաթերթը տպագրում է «Հերքում» հոդվածը, որտեղ ասվում է. «Դանիել վարուժանի նկատմամբ մեզ տրված տեղեկության մեջ զրված էր, թե նա կենակցած է իրմե դաս առնող աղջկան մը հետ և թե տնօրեն եղած է Բրդնկա վարժարանին: Արդ, արժանահավատ անձինք կը տեղեկացնեն մեզ, թե այս երկու կետերը միայն անճիշտ են, թեև ինքն էջմիածնական պսակով ամուսնացած է... Բայց և այնպես սարսափեցնելու է ուղղափառ ծնողքը



այսպիսի տնօրենի մը հանձնելու իրենց սիրասուն զավակներու դաստիարակութիւնը» (Թիվ 66, 604—605):

Հոկտեմբերի 15.— «Շանթ» հանդեսում տպագրվում է «Ականջներու» բանաստեղծութիւնը (Թիվ 31—106): Տե՛ս նաև 1910-ի մարտի 3-ի գրառումը:

<Հոկտեմբեր>.— Հակոբ Սիրունին, Վարուժանը և Ահարոն Տատուրյանը որոշում են հիմնել «Գրական եղբայրակցութիւն»՝ Ահարոնի առաջարկով կոչելով «Աստեղնատուն»: «Պարզ էր մեր ծրագիրը,— գրում է Սիրունին.— պիտի ունենայինք պարբերական մը, պիտի սարքենք գրական վեճեր և զիրար պիտի գտնեինք խնջուքներու մեջ»: Բանկայթիի ոստիկանութիւնից ստանում են «Աստեղնատուն» անվամբ պարբերական հրատարակելու թույլտվութիւն: Աշխատակցութեան են հրավիրում Կոմիտասին, Սիամանթոյին, Վահան Թեքեյանին, Ռուբեն Զարդարյանին, Փանոս Թերլեմեզյանին և այլոց:

Սիրունի, 99—100:

Նոյեմբերի 7/20.— «Յեղին սիրտը» ժողովածուն նվիրում է Մուրատ-Ռաֆայելյան սանուց միութեան գրադարանին: Մակադրութիւնը՝ «Նվեր Մ. Ռաֆայելյան սանուց միութեան գրադարանին, հեղինակէն»:

ԳԱԹ, ԴՎՖ, № 359:

<Մինչև դեկտեմբերի 1>.— Գրում է «Ո՛վ դար, ո՛վ դար...» բանաստեղծութիւնը:

«Երկունք», 1912, թիվ 6—7, 135—138:

Դեկտեմբերի 1/14.— «Շանթի» խմբագրութիւնը հայտարարում է ժան Ռիշթենի «Ո՛ւր ապրիմ» բանաստեղծութեան թարգմանութեան մրցույթ: Քննիչ հանձնաժողովի կազմում Վահան Թեքեյանի ու Մկրտիչ Պարսամյանի հետ մտնում է նաև Վարուժանը (թիվ 33, 146):

Նույն օրը.— «Երկունքում» տպագրվում է «Ո՛վ դար, ո՛վ դար...» բանաստեղծութիւնը (թիվ 6—7, 135—138):

Նույն օրը.— Տպագրվում է «Աստեղնատուն» պարբերական հրատարակելու ծանուցումը: «Աստեղնատան» ձեռնարկը չի հաջողվել, քանի որ Մերուժան Պարսամյանն ու ժակ Սայապալյանը նույնպես մտադրվել են նույն անվամբ «գրական եղբայրակցութիւն» ստեղծել:

«Շանթ», 1912, թիվ 33, 146, Սիրունի, 99—100:

Դեկտեմբերի 15.— «Կաթողիկէ արձագանգը» Վարուժանին մեղադրում է Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի «Տափաշտակութիւնը» կազմակերպելու մեջ: «Ստուգեցինք,— գրում է պարբերականը,— որ իրենց (աշակերտների—Ա. Շ.) անկողն տնօրենը՝ Վարուժան, դաս տված ժամանակը տղայոց հարկավոր հրահանգներ տվեր է հարձակումի համար և զրկեր է... Վերջը ինքն ալ եկած էր» (թիվ 6—7, 756):

Դեկտեմբերի 29.— Արաքսի Վարուժանի հետ նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԴՎՖ, № 79 լր.:

Դեկտեմբեր.— Մուրատ-Ռաֆայելյան սանուց միութեան «Ընդհանուր ցուցակում» առաջին անգամ հիշատակվում է. «Վարուժան Գանիել.— բանաստեղծ, տնօրեն Լուսավորիչ վարժարանի»:

«Ամսօրյա տեղեկատու», 1912, թիվ 24, 29:

<Նույն ամսին>.— «Վերածնունդ» պարբերականը «Քնարապըսակ» ընդհանուր վերնագրի տակ «Սարսուռներից» արտատպում է «Հայր, օրհնե՛» բանաստեղծութեան 5—9 տները (նոյեմբեր-դեկտեմբեր, թիվ 7—8, 23—24):

<Տարեվերջ>.— «Ամենուն տարեցույցի» 1913-ի հատորում տրպագրվում է Վարուժանի կարծիքը 1912-ի հատորի մասին (5) և «Վարուժանակիս» բանաստեղծութիւնը (43—45):

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Թեոդիկին: Կարծիք է հայտնում 1913-ի «Ամենուն տարեցույցի» մասին:

«Նամականի», 205:



<Նույն շրջանում>.— Գրում է «Անահիտ», «Մուսային», «Արտե-  
րուն հրավերը», «Մշակներ» և «Հարկիք» բանաստեղծությունները: Վեր-  
ջին երկուսը ուղարկում է Իզմիտ՝ «Բյութանիային», մյուսները հանձ-  
նում Կ. Պ ու ի սի պարբերականներին:

«Շանք» 1913, թիվ 34—35, 164, «Շող», 1913, թիվ 1, 6.,  
«Բյուրանիա», 1913, թիվ 23, 1101:

— Արամ Անտոնյանը «Գանձարան, բարձրագույն ընթացք» դասա-  
գրքում (Կ. Պ., 1912) «Սարսուռներից» արտատպում է «Հայր, օրհնե՛» և  
«Հիվանդ է» բանաստեղծությունները (187—188): Միաժամանակ ղե-  
տեղում է կենսագրական ծանոթություն, որտեղ վարուժանին բնութա-  
գրում է որպես «Թրքահայ նոր սերունդին ամենեն հոյակապ բանաս-  
տեղծ» (434—436):

— Լուսանկարվում է կնոջ հետ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 438:

— Արաքսի և Դանիել վարուժանների ընտանիքում ծնվում է երկ-  
րորդ դավակը՝ Արմենը:

ԳԱԹ, ԳՎՖ, № 339:

1913

Հունվարի 1.— «Շող» հանդեսը խմբագրական ծանուցման մեջ  
հայտնում է. «Հայ հոգեթով բանաստեղծ պ. Դանիել վարուժանի «Շո-  
ղի» մնայուն աշխատակցությունը անշուշտ դո՛հ պիտի ձգե մեր հանուր  
ընթերցողները և ու՛հինները» (թիվ 1, 2): Միաժամանակ «Հացին երգը»  
ընդհանուր վերնագրի տակ «Ա» և «Բ» բաժանումներով տպագրվում են  
«Մուսային» և «Արտերուն հրավերը» բանաստեղծությունները (6):

Նույն օրը.— «Շանթ» հանդեսում տպագրվում է «Անահիտ» բա-  
նաստեղծությունը (թիվ 34—35, 164):

Նույն օրը.— «Բյութանիա» պարբերականում «Հացին երգը» ընդ-  
հանուր վերնագրի տակ տպագրվում են «Մշակներ» և «Հարկիք» բա-  
նաստեղծությունները (թիվ 23, 1101):

Նույն օրը.— Արաքսի վարուժանի հետ նամակ՝ Միրիճան Թաշճ-  
յանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 79 Լր.:

Հունվարի 13.— Միրիճան Թաշճյանը Սեբաստիայից՝ Արաքսի և  
Դանիել վարուժաններին: Ընտանեկան հարցերի շուրջ:

Անդ:

Նույն օրը.— Թրքահայ ուսուցչական միության ընդհանուր ժողո-  
վում ընտրվում է կեդրոնական վարիչ մարմնի անդամ (34 քվեից ստա-  
նում է 27-ը):

«Ազատամարտ», 1913, հունվար 18/31, թիվ 1141:

Հունվարի 26/8 փետրվարի.— Արաքսի վարուժանի հետ նամակ՝  
Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել):

ԳԱԹ, ԳՎՖ, № 81 Լր.:

Փետրվարի 1/14.— «Շանթը» ծանուցում է. «ՀեթԱնՈՍ ԵրԳԵՐ»:  
Առաջիկա շաբթու հրապարակ կելլե մեր տաղանդավոր աշխատակից և  
բարեկամ Դանիել վարուժանի քերթվածներու նոր հատորը ամենաշքեղ  
տպագրությունով: Վստահ ենք, որ անհամբերությունով սպասող իր ըն-  
թերցողները մեծ հաճույքով պիտի ընդունին այս լուրը: Երկարորեն  
պիտի ուսումնասիրենք այդ ստվար հատորը, որ, ավելորդ է ըսել, հե-  
ղինակին լավագույն բանաստեղծությունները կամփոփե իր մեջ» (թիվ  
36, 196):

Փետրվարի 10/23.— Կոմիտասի հետ մասնակցում է «Հայ հակա-  
ալքուլական ընկերության»՝ Թորքատյանի ճաշասրահում կազմակերպ-  
ված հանդեսին: Այդ առթիվ «Բյուզանդիոնը» հաղորդում է. «Հույժ  
խանդավառ ընդունելություն մը եղավ Դանիել վարուժանին՝ Կիլիկյան  
եղեռնին վրա իր զգայացունց քերթվածին («Կիլիկյան մոխիրներուն»—  
Ա. Շ.) արտասանության համար»:

«Բյուզանդիոն», 1913, փետրվար 11/24, թիվ 4967, «Հեռա-  
ձայն», 1913, փետրվար 12/25, թիվ 21(1336):



Փետրվարի 12.— Միրիճան Թաշճյանը Սերաստիայից՝ Արաքսի և Դանիել Վարուժաններին: Ընտանեկան հարցերի շուրջ:

ԳԱԹ, ԳՎՅ, № 81 րո.:

<Մինչև փետրվարի 15>.— Գրում է «Սպասում» բանաստեղծու-  
թյունը:

«Շող», 1913, թիվ 3, 4:

Փետրվարի 15.— «Շող» հանդեսում տպագրվում է «Սպասում» բա-  
նաստեղծությունը (թիվ 3, 4):

Փետրվարի 20/5 մարտի.— «Ազատամարտ» օրաթերթը ծանուցում է,  
որ լույս է տեսել «Հեթանոս երգեր» ժողովածուն և հույս է հայտնում,  
որ այդ հատորը «նոր հարստություն մը կը բերե հայ քերթողության  
մեջ» (թիվ 1143):

Անվանաթերթը՝ Դ Ա Ն Ի Ե Լ Վ Ա Ր Ո Ի Ժ Ա Ն, ՀեթԱնՈՍ ԵՐԳԵՐ,  
1912, տպագրություն «Շանթ», Ղալաթիա, 331 էջ:

Բովանդակությունը՝ Հեթանոս երգեր. Գեղեցկության արձանին,  
Վանատուր, Երեմ Բուրե, Հեթանոսական, Կղեպատրա, Զուրին վրա,  
Ո՛ր, Տալիդա, Ադոնիսի մը, Արևելյան բաղանիք, Գրգանք, ...Ո՛ր կայգե,  
«Օրհնեալ ես դու ի կանայս», Հին սեր, Վեճիկ, Առաջին մեղքը, Անա-  
հիա, Ականջներուն, Սադունական, Գինարուբեն վերջ, Մեռած աստ-  
վածներուն, Բեգաս. Հարեր: Գողգոթայի ծաղիկներ. Աստծո լացը, ճա-  
նապարհ խաչի, Լույսը, Տրուունք, Առկայծ ճագ, Խեղճված միջատը,  
Բանվորունին, Մեճավոր, Միջոն, Դաշտերու տղան, Սպառում, Ընկե-  
ցիկը, Պատգամավորներս, Մեռնող բանվոր, Խաբված կույսեր, Մեհե-  
նաները, Մամուս աղոթքը, Ծիվաղը կանցնի, Գիրքերուն մեջ, Դաղար,  
Մայիս մեկ, Հրաշքին աղբյուրը, Լճում, Սիրտս է հոգնած, Վարուժա-  
կիս, Անիշխանունին, Եփրեմ, Մատյանն անա...

Ժողովածուն հրատարակվել է Հովհաննես Պալյանի ծախսով (Սի-  
րունի, 92):

Փետրվարի 21.— «Հեթանոս երգերը» նվիրում է «Հանդես ամսօր-  
յային»: Մակագրությունը՝ «Հանդես ամսօրյայի» հարգելի խմբագրու-

բյան: Համակրանով՝ Կ. Վարուժան» (պահվում է Վիեննայի Մխիթար-  
յանների մատենադարանում):

ԳԱԹ, ԳՎՅ, շմշակած նյութեր:

Փետրվարի 23.— Նամակ՝ ազգային ուսանողներու նպաստամա-  
տույց խնամակալության ատենապետուհի Զարուհի Գալեմքերյանին:  
Խնդրում է օգնել իր երբեմնի աշակերտ Հովհաննես Սերայտարյանին:

ԳԱԹ, Գևորգ Կարպիսյանի հավաքածու:

<Փետրվար>.— Հակոբ Սիրունին ու Դանիել Վարուժանը ծրա-  
գրում են հրատարակել գեղարվեստական տարեգրքերի շարք՝ «Նավա-  
սարդ» վերնագրով: Տպագրության ձեռնարկը գլուխ բերելու համար բա-  
նակցություններ են վարում «Եփրատ» գործակալության տնօրեն Ստեփան  
Քյուրքչյանի, տպագրիչ Օննիկ Արզումանյանի և այլոց հետ: Աշխա-  
տակցելու են հրավիրում գրողների, արվեստագետների, ճանաչված հո-  
գևորական գործիչների:

Սիրունի, 125, «Հառաջ», 1966, թիվ 9337:

<Նույն շրջանում>.— Հիմնում է «Նավասարդ» գրական, գեղար-  
վեստական և գիտական միությունը:

«Ամենուն տարեցույցը», 1921, 303:

Մարտի 2.— Պերպերյան վարժարանի սրահում «երեց» դասարանի  
աշակերտների նախաձեռնությամբ կազմակերպվում է գրական երե-  
կույթ՝ նվիրված Վարուժանին: Մասնակցում են Սկյուտարի բոլոր հայ-  
կական դպրոցների ուսուցչության և աշակերտության ներկայացուցիչ-  
ները: «Առկայծ ճրագ» բանաստեղծության արտասանությունից հետո  
նախագահող Տիրան Զրաքյանը (Ինտրա) բեմ է հրավիրում Վարուժա-  
նին՝ «Նավասարդ» տարեգրքի հաղորդմամբ, բանախոսության նյութն  
է՝ «Գեղարվեստի դերը և բարեշրջումը» (չի պահպանվել):

Փիլիպոս Տեր-Ավետիսյանը (Փ. Տ. Ա.) «Գրական երեկույթ» հա-  
ղորդման մեջ «Բյուզանդիստում» գրել է. «Ժամ մը տեղ իր բանախո-  
սությամբ դրվատիքն ըրավ Արվեստին, վերլուծեց ղայն, ի վեր հանեց  
անոր դերը ազնվացնող և նպատակը բարի, պատմական գլխավոր շրթ-  
ջաններուն Արվեստը ի՛նչ փուլերե անցած էր, մասնավորապես ծան-  
րացավ Հելլենական գեղարվեստին և այն ազդեցության վրա, զոր ունե-



ցավ Քրիստոնեությունը հին հեթանոսականին վրա: Բաղդատելով Գիտությունը Արվեստին հետ, ի մեջ այլոց ըսավ. «Գիտությունը կրնա վերլուծել, բայց չի կրնար հավերժացնել: Արվեստին է վիճակված այդ դերը»: Պատմական օրինակներով ապացուցեց, թե «Ժողովուրդներ իրենց ֆիզիքական գոյությունը կորսնցնելեն ետև կրնան ապրիլ և կապրին իրենց Արվեստով»: Վերջացուց իր հյուսիսեղ և հմտալից բանաստեղծությունը՝ հրավեր կարգալով նոր սերունդին՝ նվիրվել Արվեստին, հոգ չէ, թե ան զոհողություններ պահանջեր «քանի որ, ըսավ, Արվեստը բազմի մ'է, որ իր զոհերը կուզե»: Մտերու մեջ վար իջավ բեմեն:

Հանդեսի երկրորդ մասում ուսուցիչ Փիլիպոս Տեր-Ավետիսյանը ընթերցել է Վարուժանի «Հովիվը»: Ապա «պ. Չրաքյան կես ժամու շափ խոսեցավ պ. Դ. Վարուժանի վրա: Անոր հակիրճ կենսագրականը ընելե վերջ բացատրեց, թե պ. Վարուժանի քերթվածները որքա՛ն գեղեցիկ էին «իրենց հարազատությամբը, թարմությամբը և տիեզերականությունը»: Երևան բերավ «Յեղիս սիրտի» հեղինակին «կայծակնընթաց երևակայությունը, որով ան կրնա ամենախոնարհ եղիճեն բարձրանալ մինչև ամենասեզ կաղնիին կատարը, մինչև ճախրասլաց արծիվները և նույն սերը, որով Վարուժան կուզե ծծել կյանքը ամբողջ իր գեղեցկություններով և թշվառություններով»: Պր. Չրաքյան կարգաց նաև «Յեղիս սիրտին» մեջ են «Հայրենի լեռները», որ ըսավ իր մեջ կը խոսացնե Վարուժանի բոլոր կարողությունները»: Տնօրեն Շահան Պերպերյանի խնդրանքով Վարուժանը «հուզված շնշտերով» արտասանում է «Կիրիկյան մոխիրներուն» բանաստեղծությունը, «որ գնահատվեցավ ներկաներուն ծափահարությամբը»:

«Բյուզանդիոն», 1913, մարտ 5/18, թիվ 4985, «Նավասարդ», 1914, 261:

Մարտի 3/16. — Քննիչ հանձնաժողովի կազմում Կոմիտասի, Գրիգոր Զոհրապի, Ռուբեն Զարդարյանի, Սիամանթուի, Միրջայե Շամտանճյանի, Մելքոն Կյուրճյանի, Սարգիս Մինասյանի և Թեոդոկի հետ մասնակցում է Լեոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի քննարկմանը: Քննարկումից հետո ներկա է գտնվում էսայան սանուց միություն կազմակերպած թեյասեղանին:

«Գրական թեյասեղանը» հաղորդման մեջ «Ազատամարտ» օրաթերթը գրում է. «Գրական գեղեցիկ սփիչ (խոսակցություն—Ա. Շ.) մը ըրավ Դանիել Վարուժան, որ ուրախությամբ հայանեց, թե Շանթ իր

վերջին գործով մեզ կը վերագարձնե Հին Աստվածներուն, սիրո և գինիին ու կը հրավիրե մեզ իջնել կյանքի ծովին մեջ: Ու մաղթեց, որ նոր արվեստագետները փոխանակ «Կոռնկի» երգին Արծվի երգը պատրաստեն, Արծվին, որ գա փոխանակ ավերակներու թառիլ վերածնության կոթողին կատարը, ուր ոսկի տառերով քանդակված ըլլան «Արդարություն և Արվեստ»:

«Ազատամարտ», 1913, մարտ 5/18, թիվ 1153: ՏՆՍ Նաև «Շանթ», 1913, մարտ 15/28, թիվ 37, 312, «Հորիզոն», 1913, № 6:

Մարտի 9. — «Բամբիո» պարբերականը ծանուցում է, որ «նյութերի առատության պատճառով» հաջորդ թիվին է թողնում «Դանիել Վարուժան և իր «Հեթանոս երգերը» գրադատական վերլուծումը» (թիվ 1, 14):

Հաջորդ թիվը չի սպասվել:

Մարտի 10. — Մասնակցում է Սազըլ Աղաճի Ս. Աստվածածին եկեղեցում Թերզյան պատրիարքի դեմ կազմակերպված բողոքի ցույցին: Առիթը պատրիարքի կարգադրությունն էր Զատիկը լատինական տոմարով տոնելու վերաբերյալ: Ժողովուրդը պահանջում է Զատիկ պատարագում չհիշատակել Թերզյանի անունը: Երբ Արփիարյան եպիսկոպոսը «ձայնավոր պատարագում» հիշատակում է պատրիարքի անունը, երկու հազարից ավելի ցուցարարներ գոչում են. «Զհիշվի»: Սկսվում է իրարանցում, ոստիկանները ձերբակալում են 5—10 մարդ, ժողովուրդը ցույց է տալիս դիմագրություն, փշրում են ապակիները, շարժում աթոռները, աշտանակները նետում միմյանց վրա: Զինվորները դիմում են սվինների օգնությանը: Եկեղեցու բակում տեղի է ունենում բողոքի միտինգ:

Մամուլի հաղորդումներից.

«Լուսավորչական վարժարանին տեսուչ և ծանոթ բանաստեղծ պ. Դանիել Վարուժան (ինք ալ կաթոլիկ հայ մը), Պատրիարքարանի պատուհանեն ոգևորիչ բանաստեղծություն մը ըրավ. «Մի՛ վախնաք, ըսավ, Թերզյանի հաշվույն աշխատող մութ ուժերեն. պայքարը վաղվան հաջողությունն է: Եթե ձեր իսկ վզին զգաք սվիններու ցուրտ սարսուռը, գիտեք թե կամքն ու անվեհերությունը կը խորտակե պողպատներն անգամ: Անոնք, որոնք այսօր կը կովին մեզի դեմ, վաղը, մեր հաջողու-



թյան ատեն, պիտի համոզվին թե կղերը չի կրնար իր լուծովը ծանրանալ մեր վրա, և այդպես անոնք փճացման խորխորատը պիտի դիմեն: Կղերը ուզեց լատինականություն պատվաստել մեզի, բայց մենք հայ ենք ու հայ պիտի մնանք»: Ժողովուրդը «Անկցի՛ր Թերզյան, բացագանչություննեքով հաճախ կրնդմիջեր ատենախոսը»:

«Ազատամարտ» օրաթերթ, 1913, մարտ 12/25, թիվ 1159 («Արյունոտ Ձատիկ մը»):

«Մանոթ բանաստեղծ Դանիել Վարուժան կաթողիկոսարանին պատուհանեն բոցավառ ճառ մը արտասանելով դրվատեց ժողովուրդին արիությունը և խարանեց Թերզյանը և կղերին վատությունը: Ո՛ր էր այս կղերը բռնակալության օրերուն, երբ ժողովուրդը կը մարտիրոսվեր: Այդ կղերը ուզեց իրեն գերի ընել զԱստված. մենք այդ Աստվածն է, որ կուզենք ազատել կղերին գերութենեն: Պ. Վարուժանի ճառը խանդավառ ծափերով ընդունվեցավ: Պ. Վարուժան ի վերջո ըսավ. «Կղերը ուզեց լատինականություն պատվաստել մեզի. մենք ապօրինի ծնունդներ չենք. մենք հայ ենք և հայ պիտի մնանք»: Այս խոսքերուն հառաչ բերած ոգևորությունն աննկարագրելի էր»:

«Բյուզանդիոն», 1913, մարտ 11/24, թիվ 4990 («Թերզյանի սլինավոր Ձատիկը»): Տե՛ս նաև «Ժամանակ», 1913, մարտ 11/24, թիվ 1331 («Սվինավոր պատարագը»):

Մարտի 12/25.— «Բյուզանդիոնը» ծանուցում է «Հեթանոս երգերի» ատացումը. «Մայրեհիծայր ներդաշնակություն, շնորհք, գյուտ ու նկարագեղ վրձինի մը ամբողջ հրաշալիքը, որոնք կը թովեն, կը հափշտակեն, կը խանդավառեն բոլոր ընթերցողները: «Հեթանոս երգերը» մեր քերթողական գրականության ամենեն հզոր արտահայտություններեն մին է, և տաղանդավոր հեղինակը ջերմապես շնորհավորելի է հայ գրականության նվիրած իր այս թանկագին գանձին համար» (թիվ 4991):

Մարտի 16/29.— «Կաթողիկե արձագանգ» շաբաթաթերթը տպագրում է «Մեծ շաբաթը» հոգվածը, որտեղ մարտի 10-ի ցույցի մասնակիցները համարվում են «ամբոխ», «սրբապիղծներ», «պատկերամարտներ», «հայհոյիչներ»: Ապա ասվում է. «Պոռոտախոս ճառախոսներեն մին է կղեր Դանիել Վարուժան, որ աջ ու ձախ հարվածեր է կրոնք, կղեր, եկեղեցի և քարոզեր է ազատություն: Վարուժանը, որ հափշտակ-

ված ուսումնարանին, կրքառանին վարիչ կարգված է և որ այն օր հետը բերած էր նորեն իր առաջնակարգ և կրթյալ աշակերտները սրբապիղծ հարձակումին մասնակցելու համար...» (թիվ 88, 203):

Մարտի 21.— Կարապետ Պարսամյանը իր լուսանկարը նվիրում է Վարուժանին: Մակագրությունը՝ «Ամենասիրելի բարեկամիս ու ազնվական բանաստեղծին՝ մեծահարգ Գ. Վարուժան էֆենտի»:

ԳԱԹ, ԳՎՅ, № 607 լր.:

<Մինչև մարտի 27>.— Գարեգին Լևոնյանը վենետիկից՝ Վարուժանին (չի պահպանվել): Խնդրում է նոր բանաստեղծություն «Գեղարվեստի» համար:

«Նամակահի», 201—202:

<Նույն շրջանում>.— Մկրտիչ Պոտուրյանը վենետիկից՝ Վարուժանին (չի պահպանվել): Հաղորդում է «Գեղարվեստին» աշխատակցելու մասին Գարեգին Լևոնյանի խնդրանքը:

Անդ:

Մարտի 27.— Նամակ՝ Գարեգին Լևոնյանին: Ընդունում է «Գեղարվեստին» աշխատակցելու հրավերը և 1913-ի հատորի համար ուղարկում «Բերեք անկե ծաղիկներ» բանաստեղծությունը:

Անդ:

<Մինչև մարտի 28>.— «Սգապսակ Փիեր Քիլեանի հիշատակին, մահվան տարեդարձի առիթով, 1912—1913» ժողովածուում (Կ. Պ. 1913) տպագրվում է Վարուժանի «Գաղափարի ասպետը» հոգվածը (89—71):

Ժողովածուի հրատարակության ազդը տե՛ս «Բյուզանդիոն», 1913, մարտ 28/10 ապրիլ, թիվ 5005:

Մարտի 28.— Նամակ՝ Արիստակես Քասգանտիլյանին: Խնդրում է աշխատակցել իր և Միրունու ձեռնարկած «Նավասարդ» տարեգրքին:

«Նամակահի», 214:







Նույն օրը.— «Հայ գրականություն» հանդեսը տպագրում է Ս. Հ. Գալիտեյանի «Բնագրի աստվածացումը. Դ. Վարուժանի «Հեթանոս երգերուն հրատարակության առթիվ» հոդվածը:

Քննադատը գրում է. «Պ. Դ. Վարուժան, ու ատիկա մեր ամենախորհամոզումն է, հայ մեծագույն և կատարելագույն քերթողն է. ան մեր Հյուսկոն, մեր Պրատուհինն է, քերթողության արվեստը, ոճի և լեզվի կատարունության, ինչպես նաև բովանդակության ու հղացումի խորության տեսակետեն ոչ մեկ քերթող համաշխարհային գրականության մեջ չէ կրցած գերազանցել զայն: Վարուժանի պես տաղանդներ մարդկությունը մատի վրա կը հաշվե... Պետք է առանց չափազանցության երկյուղն ունենալու, առանց ազգամուլ և ինքնախար ըլլալու վախն ունենալու կրկնել թե Վարուժան տիտան քերթող մըն է» (թիվ 9, 21—24):

Մայիսի 5.— Ռուբեն Զարգարյանի «Յայգալույս» ժողովածուին նվիրված գրական ասուլիսից հետո Վարուժանը Կոմիտասի, Սիամանթոյի, Երուխանի, Տիգրան Զյուկյուրյանի, Զապել Ստայանի և այլոց հետ այցելում է հեղինակին, շնորհավորում նրան:

«Լուսադրյուր», 1954, թիվ 26—27, 70—71»

<Մինչև մայիսի 7>.— Առանձին գրքույկով տպագրվում են Վարուժանի «Հեթանոս երգերին» նվիրված գրական ասուլիսի նյութերը:

«Կարողիկե արձագանգ», 1913, հունիս (8)21, թիվ 100, 398»

Մայիսի 7.— Արմենակ Բարսեղյանը «Աղատամարտ» օրաթերթում տպագրում է նամակ՝ հայտնելով, որ առանձին գրքույկով «Հեթանոս երգերին» նվիրված գրական ասուլիսի նյութերում իր կլույթը գետեղվել է կրճատումներով ու անճշտություններով:

Անդ:

Մայիսի 9.— Բերայում գրում է «Յորյանի ծովեր» բանաստեղծությունը:

«Ամենուն տաբեցույցը», 1914, 87:

<Մինչև մայիսի 28>.— Նամակ՝ Երվանդ Հովակիմյանին (չի պահպանվել): Նվեր է ուղարկում «Հեթանոս երգերը»:

ԳԱՔ, ԴՎՖ, № 179:

Մայիսի 28.— Երվանդ Հովակիմյանը Մարսելից՝ վարուժանին: Շնորհակալություն է հայտնում «Հեթանոս երգերը» իրեն նվիրելու համար:

Անդ:

Նույն օրը.— Բերայում գրում է «Լուսնին» բանաստեղծությունը:

«Ամենուն տաբեցույցը», 1915, 169:

Մայիս.— Բերայում գրում է «Միլոյի Աստղիկին» բանաստեղծությունը:

«Կյանք և արվեստ», տարեգիրք, 1934, 5:

Հունիսի 1/14.— Մուրատ-Ռափայելյան սանուց միության տնօրեն ժողովի 47-րդ նիստում ընտրվում է խմբագրական մարմնի անդամ:

«Ամսօրյա տեղեկատու», 1913, թիվ 27, 40—41:

Նույն օրը.— «Շանթ» հանդեսը տպագրում է Փայլակի (Ժակ Սայպայան) «Երևութներ և դատողություններ» հոդվածը «Հեթանոս երգերի» մասին:

Քննադատը գրում է. «Երիտասարդության, գերազանցապես երիտասարդության գիրքն է «Հեթանոս երգերը»: Կյանքը կը բարբախտ հոն ծայրեծայր: Հոն սեր կա, խանդ կա, գորով կա, զղխանք կա, արբշտանք կա և անոնց քով կա նաև զայրույթ, կիրք, վրդովանք, հուսահատություն ու հափրանք, այո, որովհետև այդ բոլորը կան կյանքին մեջ և բանաստեղծին մատները բոլոր լարերը կը հնչեցնեն» (թիվ 41—42, 279—281):

Հունիսի 2/15.— Ատոմ Յարճանյանի «Ամբողջական գործին» նրվիրված էսայան սանուց միության գրական ասուլիսում հանդես է գալիս «Յարճանյանի քերթողությունը» բանախոսությամբ:

Վարուժանի եզրակացությունը.

«Յարճանյան քնար չունի: Իր՝ երգը կոփյուն մըն է, զոր մեր նախնիքը նավասարդի տոներուն կը հնչեցնեին իրենց աշտեն զարնելով վահաններու ոսկեմուլ կումրին: Իր երգը ռազմի շփոթին երախեն արտահոսող մարտահրավերն է, որուն ունկնդիր, այսօր Վիրգիլիոսի հետ և



Տանդեի գրիչով հիացմամբ չի կրսենք՝ Պատիվ բրեք վեմակաճ Բեր-  
րողին»:

Գրական ասուիտներ, 2, Ատոմ Յարճանյան (Սիամանթո),  
Կ. Պ., 1913, 23—24,

Հունիսի 8/21.— «Կաթողիկե արձագանգ» հանդեսը «Վարուժանի  
գրքին վերաբերմամբ» վերնագրի տակ տպագրում է «Բերացի» ստորա-  
գրութեամբ մի նամակ: Հեղինակը հավանութիւն է տալիս «Աղետալի  
գիրք մը» գրախոսականին (տե՛ս ապրիլի 6/19-ի գրառումը), «Հեթանոս  
երգերը» համարում է «անպատկառ անբարոյութեան և նյութապաշտ  
անկրօնութեան դասարան» (թիվ 100, 397—398):

Հունիսի 15/28.— «Շանթ» հանդեսը «Մամուլ» բաժնում տպագրում  
է X. ստորագրութեամբ մի դիտողութիւն, որտեղ «Հեթանոս երգերին»  
տված Ս. Հ. Գալիտնճյանի գնահատականները (տե՛ս մայիսի 1/14-ի  
գրառումը) համարվում են անհիմն ու չափազանցված (թիվ 43, 299):

Հունիսի 30/13 հուլիսի.— Բանախոսում է Միջագոյուղի (Օրթագոյուղ)  
Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տոնախմբութիւնում:

Պատրիարք Քերզյանի կարգադրութեամբ տոնախմբութիւնը պետք  
է կատարվեր լատինաց տոմարով, բայց տեղի կաթողիկ հասարակու-  
թիւնը ընդդիմանում է, լուսազարդարում եկեղեցին, պատարագ է մա-  
տուցվում և կատարում է «Լուսավորչաց Մասունքի ուխտը»:

Մամուլի հաղորդումից.

«Կնսօրեն մեկ ժամ առաջ եկեղեցւոյն բակին մեջ բանախոսու-  
թիւն մը արտասանեց Բերայի Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի  
տնօրեն պ. Գանիել Վարուժան, որ Լուսավորչի ծագման, կյանքին ու  
ազգին մեջ կատարած դերին վրա գեղեցիկ բանախոսութիւն մը ընելի  
հետո ներկաներուն առջև անգամ մ'ալ շեշտեց ազգութեան մի և անբա-  
ժանելի ըլլալու սկզբունքը և բաղդատութիւն մը ընելով Լուսավորչի և  
ինքզինքը անոր հաջորդ ներկայացնող Քերզյանի միջև, ցավ հայտնեց  
որ անիկա ավելի դեպի խավար կառաջնորդե իր ժողովուրդը՝ շնջելու  
աշխատելով իր ժողովուրդը, շնջելու աշխատելով այն ամեն միջոցները,  
որոնք ազգին լուսավորութեան, միութեան և հառաջադիմութեան պատ-  
ճառ կրնան ըլլալ: Հորդորեց հավատարիմ գտնվիլ ազգութեան, զոր  
հայր չէ կորսնցուցած նույնիսկ իր անկախութիւնը ձեռք հանելի հե-

տո և կոչում ըրավ, որ նախամեծար համարին տալ այդ դաստիարակու-  
թիւնը իրենց զավակներուն օտարոտի կրթութեան մը տեղ: Այս բա-  
նախոսութիւնը ծափահարութեամբ ավարտելի հետո դպիրները երգե-  
ցին «էջմիածին ի հօրէ» երգը»:

«Բյուզանդիոն», 1913, հուլիս 1/14, թիվ 5084:

<Հունիս>.— Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի տարեվերջյան  
հանդեսում արտասանում է մաղթանքի խոսք («Հուսկ բանք»), որը  
տպագրվել է վարժարանի «Տարեկան տեղեկագրում» (1913):

«Սուրբ Հակոբ», 1958, 56—58, «Ժամանակ», 1958, թիվ 18142,  
«Հատաչ», 1962, թիվ 1962, թիվ 9453:

<Նույն ամսին>.— Երվանդ Քոչյանը՝ Վարուժանին (չի պահ-  
պանվել): Ուղարկում է իր բանաստեղծութիւնները, խնդրում է կարծիք  
հայտնել:

ԳԱԹ, ԳՎՅ, № 112:

<Նույն ամսին>.— Նամակ՝ Երվանդ Քոչյանին: Խորհուրդ է տա-  
լիս նրա բանաստեղծական փորձերի կապակցութեամբ:

Անդ:

<Նույն ամսին>.— «Այսօրյա տեղեկատուն» տպագրում է Վարու-  
ժանի «Րաֆֆի» հոդվածը՝ նվիրված գրողի մահվան 25-րդ տարելիցին:  
Հոդվածում ասված է. «Րաֆֆի հայ վիպասանութեան հայրը եղավ, մեր  
Սըրթը, եթե կուզեք, որ կրցավ կենդանի կերպով ոգեկոչել անցյալը և  
մարգարեանող ապագան» (մայիս-հունիս, թիվ 27, 40—41):

<Մինչև հուլիսի 9>.— Նամակ՝ Գարեգին Լեոնյանին (չի պահ-  
պանվել): Հրավիրում է աշխատակցել «Նավասարդ» տարեգրքին:

«Նամակաճ», 202—203:

<Նույն շրջանում>.— Գարեգին Լեոնյանը՝ Վարուժանին (չի  
պահպանվել): Համաձայնութիւն է տալիս աշխատակցել «Նավասար-  
դին»:

Անդ:



Հուլիսի 9.— Նամակ՝ Գարեգին Լեոնյանին: Կրկնում է «Նավասարդին» աշխատակցելու հրավերը:

Անդ:

Հուլիսի 12—13.— «Մշակ» լրագիրը տպագրում է Հարություն Սուրխաթյանի «Սեռական էկստազից դեպի լքումն ու հուսահատություն. «Հեթանոս երգեր» Դանիել Վարուժանի» հոդվածը: «Վարուժանի «Հեթանոս երգերի»,— եզրակացնում է քննադատը,— կենտրոնը միմիայն հեշտանքն ու տոփանքն է... Սեռական էկստազը մոռացրել է նրան իրական աշխարհը, պարուրել լուսամտիկ պարուրանքի մեջ և միանգամայն խլել նրանից գեղարվեստական շափի զգացումը... Վարուժանը լքվում ու հուսահատվում է, որովհետև նա ներկայի վրա անցյալի տեսակետից է նայում, մի անցյալի, որը նրա աչքում միատիբական նշանակություն է ստանում» (№ № 151—152):

<Հուլիս>.— Կ. Պոլսի ուսանողական միությունը Պեյզոզում կազմակերպում է բացօթյա հանդիպում Վարուժանի հետ: Արտասանում է իր բանաստեղծություններից, պատասխանում ուսանողների հարցերին, ուրախանում նրանց հետ:

«Արեգակ», 1966, թիվ 25:

<Մինչև օգոստոսի 1>.— Գրում է «Սպասում» («Դրբանս առջև կը ծրփա...») և «Դարձ» բանաստեղծությունները: Ուղարկում է «Հայ գրականություն» հանդեսին:

«Հայ գրականություն», 1913, թիվ 12, 3:

Օգոստոսի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսը տպագրում է «Սպասում» («Դրբանս առջև կը ծրփա...») և «Դարձ» բանաստեղծությունները (թիվ 12, 3): Միաժամանակ պարբերականը սկսում է Հակոբ Քյուֆեճյանի (Օշական) «Մեր բանաստեղծները. Դանիել Վարուժան («Յեղին սիրտը» ու «Հեթանոս երգեր»)» հոդվածաշարի հրատարակությունը (թիվ 4—14):

Հանդեսի խմբագիր Զարեհ Գաղազյանը զետեղում է մի ծանոթագրություն՝ հույս հայտնելով, որ «Շանթը» հրապարակվող ուսումնասիրության շնորհիվ կկարողանա ըմբռնել, թե Վարուժանը մեծ բանաստեղծ է և արժանի է դասվելու օտար մեծ հեղինակների շարքը (տե՛ս

հունիսի 15/28-ի գրառումը): Իսկ Հ. Քյուֆեճյանը գրում է. «Յեղին սիրտին» հեղինակը մեծ բանաստեղծ մըն է, որ աղգային հանճար մը դառնալու երջանիկ կարողությունները կավետե» (4—14):

Օգոստոսի 21.— Նամակ՝ Զապել Եսայանին: Խնդրում է արագացնել «Նավասարդ» տարեգրքի համար խոստացված վիպակը:

«Նամականի», 203:

Օգոստոսի 25.— Բերայի սրճարաններից մեկում գրում է «Նավասարդյան» բանաստեղծությունը:

«Նավասարդ», 1914, 4, «Նավասարդ», 1923, պրակ Ա, 3—4, Սիրունի, 126, ԳԱԹ, ԳՎՖ, № 28:

Օգոստոս.— «Բաղմավեպը» «Գրականը, քերթողականը» ընդհանուր վերնագրի տակ տպագրում է Հովհան Ավգերի կարծիքը «Հեթանոս երգերի» մասին: Հոդվածում ասվում է. «Հեթանոս են այդ երգերը, և հեթանոս ոչ հոռվմեական պերճություններ, ոչ հունական փափկություններ, այլ լոկ բաբելական պղծություններ: Ոչ մեկ սրբություն, ոչ մեկ նվիրական զգացումն հարգված է հոն. հոն Վարուժան մոռցած է բոլորովին ինքզինքը, մոռցած է ընտանեկան սրբություն մ'ունենալը, մոռցած է ձեռքին հանձնված գողտր հրեշտակային սրտեր ունենալը: Եվ Վարուժան... հիմա բերանալիք կըմպե Տոն ժուռանի մը ցելսոտ և գայլոտ զարշույթունքը» (թիվ 8, 381—382):

<Նույն ամսին>.— «Ամսօրյա տեղեկատուն» տպագրում է Վարուժանի «Վաղվան հորեկյանները» հոդվածը՝ նվիրված հայ տառերի գյուտի և տպագրության սկզբնավորման հորեկյաններին (հուլիս-օգոստոս, թիվ 28, 54—55):

Սեպտեմբերի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսը տպագրում է Հակոբ Քյուֆեճյանի «Մեր բանաստեղծները. Դանիել Վարուժան («Յեղին սիրտը» ու «Հեթանոս երգեր»)» հոդվածաշարի շարունակությունը (թիվ 1, 8—14):

Սեպտեմբերի 2/15.— «Շանթ» հանդեսը տպագրում է X. ստորագրությամբ հեղինակի «Ուղղություն» թե հակասություն. գովե՞ստ թե



հեղինակներն. Համաշխարհային գրականությունը և... հայ գրականությունը» քրոնիկը՝ ուղղված Ջարեհ Գաղաղյանի ծանոթագրության դեմ (տե՛ս օգոստոսի 1/14-ի գրառումը): Հեղինակը «Հայ գրականության» խմբագրի կարծիքները համարում է «սնամիտ և տղայական համըշտակության դառանցական արտահայտություններ» (թիվ 45, 318—319):

Սեպտեմբերի 26/9 հոկտեմբերի.— «Հեռաձայն» լրագիրը ծանուցում է, որ էսայան սանուց միությունը հայերեն տառերի ու տպագրության հոբելյանները նշելու է հոկտեմբերի 13/26-ին Բերայում, Փթի Շանի ձմեռային թատրոնում: Երգչախումբը ղեկավարելու է Կոմիտասը, դաշնամուր է նվագելու Հարություն Սինանյանը, Սիամանթոն արտասանելու է իր «Սուրբ Մեսրոպ» պոեմը, բանախոսելու է Վարուժանը (թիվ 81):

Սեպտեմբեր.— Սկսում է համատեղությամբ դասավանդել նաև դպրոցասիրաց Կ. Պոլսի աղջկանց վարժարանում: Շաբաթական պարապում է մեկ անգամ՝ յուրաքանչյուր երեքշաբթի:

«Սովետական գրականություն», 1971, № 8, 154—155:

<Սեպտեմբեր-հոկտեմբեր>.— Նամակ՝ Սիմոն Երեմյանին: Կարծիք է հայտնում նրա «Պատկերներ» ժողովածուի մասին:

«Նամակներ», 203:

Հոկտեմբերի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսը տպագրում է Հակոբ Քյուֆեճյանի «Մեր բանաստեղծները. Դանիել Վարուժան (Ցեղին սիրտը» ու «Հեթանոս երգեր»)» հոդվածաշարի շարունակությունը: Քննադատը եղրակացնում է. «Վարուժան մեր ամենեն մեծ բանաստեղծն է» (թիվ 2, 6—12):

Միաժամանակ հրատարակվում է Ջարեհ Գաղաղյանի «Գրական վերլուծումներ» հոդվածը, որպես պատասխան «Շանթի» դիտողության (տե՛ս սեպտեմբերի 2/15-ի գրառումը): Պաշտպանելով իր տեսակետը, հեղինակը գրում է. «Դ. Վարուժան մեր ժողովուրդին առջև տարածվող նոր դարադրուխին բանաստեղծն է, որ անցյալ ժամանակներու հեթանոսական հրապուլլովը առցուն, կուգա ներկայի աճող հոգեբանություն մեզ կաթեցնելու այն, ինչ որ չէ ըսված մինչև հիմա, այն ինչ որ նախերգված իսկ չէ մինչև հիմա մեզ օրերը»: Ապա քննադատելով Շիրվանզադեի կարծիքը Վարուժանի մասին, պնդում է. «Արդ, առանց վարա-

նումի Դանիել Վարուժանը կրնանք դասել համաշխարհային գրականության մեծագույն դեմքերուն քով, որովհետև անիկա այնքան հաջողորեն, այնքան տիրաբար երգած է ուժի գեղեցկությունը, կյանքի գեղեցկությունը, մեկ խոսքով զորավոր, վիթխարի անհագ կյանք տիեզերական սրգտանքով մը: Իր քերթվածներեն ահագին մասով եթե եվրոպական ուն է լեզվի թարգմանվի, եթե ոչ առաջին, գեթ երկրորդ վերահարն մը պիտի ողջունեն մեր մեծ բանաստեղծ Դանիել Վարուժանին մեջ: Այս է համոզումս և վերջին խոսքս» (28—32):

Հոկտեմբեր 8/21.— Մանուցվում է, որ հոկտեմբերի 13/26-ին Սկյուտարի թաղային հոբելյանական հանձնաժողովը ի պատիվ հայ գրերի ու տպագրության հոբելյանների կազմակերպելու է հանդիսավոր այցելություն նշանավոր մտավորականների շիրիմներին: «Գերեզմանատանը պիտի բանախոսե պ. Դանիել Վարուժան»:

Բանախոսությունը տեղի չի ունեցել ծրագրի ծանրաբեռնվածության պատճառով: «Ժամանակ», 1913, թիվ 1598, 1605, «Ազատամարտ», թիվ 1336:

<Մինչև հոկտեմբերի 9>.— Արշակ Զոպանյանը Փարիզից Վարուժանին է ուղարկում իր «Արձակ բանաստեղծություն» ֆրանսերեն ժողովածուն:

«Նամակներ», 204:

Հոկտեմբերի 9.— Նամակ՝ Արշակ Զոպանյանին: Կարծիք է հայտնում նրա «Արձակ բանաստեղծություն» ժողովածուի մասին:

Անդ:

Նույն օրը.— Նամակ՝ Ավետիս էժտահարին:

Անդ:

Հոկտեմբերի 11/24.— «Ազատամարտ» օրաթերթը ծանուցում է, որ հոկտեմբերի 12/25-ի գիշերը Պեշիկթաշի ակումբներից մեկում տեղի է ունենալու շքեղ հանդես ի պատիվ հայ գրերի ու տպագրության հոբելյանների. «Պիտի բանախոսեն պ. պ. Դանիել Վարուժան և Ռ. Զարդարյան» (թիվ 1336):



Հոկտեմբերի 13/26.— Բանախոսում է Բերայի Փթի Շանի ձմեռային թատրոնի լեփլեցուն դահլիճում հայ գրերի ու տպագրության հոբելյանների առթիվ էսայան սանուց միության կազմակերպած հանդեսում (չի պահպանվել):

Մամուլի հաղորդումներից.

«Նոսեցավ տաղանդավոր բանաստեղծ պ. Դանիել Վարուժան և մեր ու դրացի ազգերու անցյալին վրա պատմական տեսություն մը ըրած ատեն հայտնեց, թե Հայաստանի վրա մեկ կողմե պարսիկներու, ասորիներու և մյուս կողմե Բյուզանդիոնի հալածանքները երկուքի բաժնած էին Հայաստանը, որ իր նշանակությունը և հայկականությունը պիտի կորսնցնեք, երբ չըլլար, շատեղծվեր միության կապ մը. այդ կապը եղավ Սահակ Մեսրոպի հրաշքը, ինչպես հրաշք մըն էր և է հայուն դեռ գոյություն ունենալը. սակայն ինչպես սոխակը երգած միջոցին որսորդին գնդակեն կը վարնվի և իր կտուցին մեջ մնացած վերջին վանկերը կը խառնվին արյունին, նույնպես ալ Եղիշեի լեզուն արյունին խառնվեցավ Վարդանանց պատերազմով: Այս անգամ պետք էր նոր կապեր ստեղծել: Հետևաբար այն պահուն, երբ Եվրոպայի մեջ մամուլը կը ճնշեր, և Հայաստանի սիրտը կը ճշեր, սկսան հայերեն գիրքեր տպվիլ մամուլ հաստատվեցավ և այսպեսով հայությունը շղթա մը գտավ: Մեր գահը, թագը, ծիրանին առին, սակայն լեզունիս պահնցինք և անոնց վրա իշխեցինք, լեզուն եղավ նժույզը և ցեղը առաջ քշեց»: «Ապա պ. Վարուժան գեղեցիկ դարձվածքով մը մաղթանքներ ընելով կոչ ուղղեց այդ լեզվին, որ իր 38 տառերը իբր 38 համաստեղություններ ցանե Հայաստանի վրա և լուսավորե զայն: Այս բանախոսության հաջորդեց կոմիտաս վարդապետի մեներգը...»:

«Ժամանակ», 1913, հոկտեմբեր 14/27, թիվ 1604 («Երեկվան հանդեսներ»):

«Պ. Դանիել Վարուժան արտասանեց բանախոսությունը հայ լեզվին վրա, բանախոսություն մը, որ լայնաշունչ և բարձրաթիչ քերթված մըն էր, հայ լեզուն նմանեցուց աշխետ նժույզի մը, որուն վրա հեծած է հայ ցեղը և դեռ նոր անցած արյունն լճակե մը, կարշավե նորեն, ինչպես արշաված է մինչև հիմա»:

«Ազատամարտ», 1913, հոկտեմբեր 15/28, թիվ 1388:

Նույն օրը.— Բանախոսում է Մուրատ-Ռափայելյան սանուց միու-

թյան կազմակերպած հայ գրի և տպագրության հոբելյանական հանդեսում (չի պահպանվել):

«Ամսօրյա տեղեկատու», 1913, թիվ 29, 71:

Նույն օրվա գիշերը.— Ելույթ է ունենում Պեշիկթաշի ակումբներից մեկում հայ գրի ու տպագրության հոբելյանների պատվին կայացած «տաք և կես ընտանեկան հանդեսին» (չի պահպանվել):

«Ազատամարտ», 1913, հոկտեմբեր 15/28, թիվ 1338, «Ժամանակ», 1913, հոկտեմբեր 16/29, թիվ 1606:

<Հոկտեմբերի երկուրդ կես>.— Ծանուցվում է, որ «Հոկտեմբերի վերջը հրատարակ կելլե ՆԱՎԱՍԱՐԳ գրական և գեղարվեստական տարեգիրը. կազմեցին Դանիել Վարուժան և Հ. Ճ. Սիրունի»: Տրվում է բովանդակությունը և հրատարակվում Վարուժանի «Նավասարդյան» բանաստեղծությունը:

«Հավելված «Նավասարդի», թիվ 1, 1—5:

Հոկտեմբերի 20.— Սիմոն Զավարյանի թաղման ժամանակ Բանկաթիի գերեզմանատանը արտասանում է դամբանական: Հասարակայնության պահանջով բարձրանում է մի քարի և ընթերցում իր «Առկայծ ճրագ» բանաստեղծությունը:

«Ազատամարտ», 1913, հոկտեմբեր 22/4 նոյեմբեր, թիվ 1344, «Հասար» 1966, թիվ 9337:

Հոկտեմբերի 22/4 նոյեմբերի.— «Ազատամարտ» օրաթերթում տըպագրվում է Սիմոն Զավարյանի մահվան առթիվ արտասանած դամբանականը (թիվ 1344):

Հոկտեմբերի 26/8 նոյեմբերի.— «Ժամանակ» օրաթերթը ծանուցում է, որ հոկտեմբերի 27-ին Սամաթիայի «Ժողովուրդ» լսարանում Սիմոն Զավարյանի հիշատակին նվիրված սգահանդեսում բանախոսելու է նաև Վարուժանը (թիվ 1616: Որևէ այլ տեղեկություն չի պահպանվել):

Հոկտեմբերի 27.— Բանախոսում է Մուրատ-Ռափայելյան սանուց միության՝ Թոգաթլյանի ճաշասրահում կազմակերպված կանոնադրական տարեկան գրական-երաժշտական հանդեսում: Բանախոսության



նյութը Ալիշանի ու Պեշիկթաշլյանի զուգակշիռն է: «Ամսօրյա տեղեկատուն» հաղորդում է. «Վարուժան յուր տաք և հոգեշունչ շեշտերով վերացուց ունկնդիրները, իր հոգվույն կայծերուն զամենքն ալ բաժնեկից ըրավ և լռած էր արգեն, երբ դեռ կուզեինք լսել զինքը»: Հանդեսից հետո տրված թեյասեղանին «գոռ շեշտերով» արտասանում է «այս առթիվ պատրաստած իր գողարիկ բանաստեղծությունը՝ «Ակույթը», զոր հրավիրելու գտան գեղեցկորեն տպագրված ոսկետառ իրենց պնակներուն վրա իբր հիշատակ օրվան հանդեսին»:

«Ամսօրյա տեղեկատուն», 1913, թիվ 30, 83, 106—107: Տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1913, թիվ 5183:

Նոյեմբերի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսը տպագրում է Հակոբ Քյուֆեճյանի «Մեր բանաստեղծները. Դանիել Վարուժան («Յեղիս սիրտը» ու «Հեթանոս երգեր»)» հոդվածի շարունակությունը (թիվ 3, 5—12):

<Մինչև նոյեմբերի 2>.— 1914-ի «Ամենուն տարեցույցում» տպագրվում է Վարուժանի կարծիքը 1913-ի հատորի մասին (4) «Յորչաւնի ծովեր» և «Առ Արշալույս» բանաստեղծությունները (87, 112):

«Ամենուն տարեցույցի» 1914-ի հատորի լույս ընծայման ազդե տե՛ս «Բյուզանդիոն», 1913, նոյեմբեր 2/15, թիվ 5188:

<Մինչև նոյեմբերի 11>.— Լույս է տեսնում «Նավասարդ» տարեգիրքը:

«Բյուզանդիոն», 1913, թիվ 5195:

Անվանաթերթը՝ ՆԱՎԱՍԱՐԳ, գրական-գեղարվեստական տարեգիրք, Ա հատոր, կազմեցին ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒՅԱՆ և Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ, Կ. Պ ու ի ս, 1914: Տարեգրքում տպագրված են Վարուժանի «Նավասարդյան», «Ցան», «Անգուպահ», «Կակաշնեղ», «Վհուկը», «Գալար ճյուղը» բանաստեղծությունները, Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» պոեմի և Իսկուհի Մինասի «Մորմոք», Հերմինե Հովյանի «Գարնան ժամեր», Ազամ Միցկևիչի «Իրիկնամուտը», «Հարեմին շիրմները (Միրզան՝ այցելուին)» և «Լիթվանական գեղոն» ստեղծագործությունների թարգմանությունները (4, 45—46, 74, 177—200, 204—206, 209—212, 254—255):

Տարեգրքում հրատարակվում է նաև Հակոբ Սիրունու «Դեպի աղբ-

յուրը» լույսին» հոդվածը՝ Վարուժանի մասին: «Բանաստեղծին համար,— գրում է Սիրունին,—Մարդը ամենեն գեղեցիկն է բնության բովանդակ գեղեցկություններուն մեջ, ամենեն շքեղն ու կատարելատիպը, որուն Բանաստեղծը պիտի մոտենա լի հարգանքով և հպարտությամբ, որովհետև մարմինը, զոր պիտի երգե կամ պիտի փառաբանե, Աստվածությունն իսկ է, որովհետև ան Աստուծո վերջին ստեղծագործությունն է՝ իր պատկերին նմանությամբ հրաշակերտված» (220—224):

«Խմբագրության կողմն» ծանուցման մեջ հայտնվում է, որ «Նավասարդը» հրատարակվելու է նաև «հառաչիկա տարի» և խնդրվում է մինչև 1914-ի հունիսը ներկայացնել իրենց նյութերը:

Նոյեմբերի 11/24.— «Բյուզանդիոն» օրաթերթը գրում է. «Չափազանցություն մը չէ ըսել, թե տարեկան հրատարակություններու մեջ ամենեն ուշագրավն է «Նավասարդ» գրական և գեղարվեստական տարեգիրքը Դանիել Վարուժանի և Հ. Ճ. Սիրունիի, որ այս օրերս հրատարակ ելավ» (թիվ 5195):

Նոյեմբերի 13/26.— Հովհաննես Պալյանը Մոսկվայից՝ Վարուժանին: Հետաքրքրվում է, թե ստացե՞լ է ավելի վաղ գրած իր նամակը: Վարուժանի պատասխանը հայտնի չէ:

ԳԱԹ, ԳՎՖ, № 238:

Նոյեմբերի 15/28.— «Շանթ» հանդեսը տպագրում է X. ստորագրությամբ հեղինակի «Համաշխարհային գրականության մասին տարօրինակ ըմբռնումներ» նկատողությունը՝ ուղղված Զարեհ Գալաղյանի «Գրական վերլուծումների» դեմ (տե՛ս հոկտեմբերի 1/14-ի գրառումը): Հոդվածագիրը Վարուժանին «Համաշխարհային գրականության շափանիչներով» դնահատելու պահանջը համարում է «անհեթեթություն» (թիվ 50, 30—32):

<Մինչև նոյեմբերի 29>.— Սահակ-Մեսրոպի 1914-ի «Հայուն տարեցույցում» տպագրվում է «Լուգանքեն վերջ» բանաստեղծությունը (84):

«Հայուն տարեցույցի» 1914-ի հատորի լույս ընծայման ազդե տե՛ս «Բյուզանդիոն», 1913, նոյեմբեր 29/12 դեկտեմբեր, թիվ 5211:



Նոյեմբերի 30/13 դեկտեմբերի.— «Կաթողիկե արձագանգ» պարբերականը «Դեպքեր և սկզբունքներ» վերնագրի տակ տպագրում է գրախոսական «Նավասարդի» մասին: Տարեգրքի «Եռագետի ոգին» է համարվում «անկրոնություն, հուսահատություն և անբարոյականություն»: «Նավասարդյան» բանաստեղծության մասին ասվում է, որ նրանից «կը բուրե անաստված ու կոսպաշա հեթանոսության դժոխարույր գարշելի խունկը», և հարց է բարձրացվում հեղինակին ազատել Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի տեսչի պաշտոնից (թիվ 125, 785—788):

Նոյեմբեր.— «Ամսօրյա տեղեկատուում» տպագրվում է Ալիշանի և Պեշիկթաշլյանի մասին արտասանած բանախոսությունը (տե՛ս հոկտեմբերի 27-ի գրառումը) և «Ակութը» բանաստեղծությունը (թիվ 30, 98—101, 104):

<Նույն ամսին>.— «Երկունք» հանդեսը «Շողից» (տե՛ս հունվարի 1-ի գրառումը) արտատպում է «Մուսային» և «Արտերուն հրավերը» բանաստեղծությունները (հոկտեմբեր-նոյեմբեր, թիվ 4—5, 78):

<Նույն ամսին>.— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել): Նվեր է ուղարկում «Նավասարդ» տարեգիրքը:

«Էշիածին», 1958, է, 37:

Դեկտեմբերի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսը տպագրում է Հակոբ Քյուֆեճյանի «Մեր բանաստեղծները. Դանիել Վարուժան. (Յեղիս սիրտը» ու «Հեթանոս երգեր»)» հոդվածաշարի շարունակությունը: Քննադատը գրում է. «Ան (Վարուժանը—Ա. Շ.) ունի բանաստեղծի կատարյալ հոգի: Զինքը կը տպավորեն նույն հզորությամբ իրերն ու մարդերը, տեսարաններն ու երազները... Նվազ այրող, քան Դուրյանը, նվազ փափուկ քան Մեծարենցը, ունի անոնցմե ավելի թելեր: Դուրյան ու Մեծարենց երգեհոններ են, անզուգական գեղոններ հայ բանաստեղծության, բայց անոնցմե ծորող մեղեդին գրեթե միօրինակ է միշտ: Վարուժան կերպե ամեն լարի վրա: Ու ան դաշնակ մըն է, իր շեշտերը բազմազան, իր սլացքը ավելի համարձակ, իր քաղցրությունը ավելի կորովի կը գտնեմ» (թիվ 4, 14—18):

Դեկտեմբերի 7.— Երվանդ Օտյանը իր «Մանանա» պարբերականում տպագրում է «Ռոտեն կը դայթակղի...» երգիծական պատասխանը «Կաթողիկե արձագանգի» գրախոսությանը (տե՛ս նոյեմբերի 30/13 դեկտեմբերի գրառումը): Օտյանը «Նավասարդյան» բանաստեղծությունը համարում է «շքեղ», իսկ Վարուժանին՝ «տաղանդավոր երիտասարդ»: Ապա գրում է. «Դանիել Վարուժանը իբրև անկրոն ամբաստանել և զայն պաշտոնանկ ընել տեսլութենեն... Ու այս պիղծ նկարագիրով մարդիկն են, որ կը համարձակին հանուն կրոնի ու բարոյականի խոսիլ մեզի, կոկորդիլոսի արցունքներ թափել մեր ամբարշտության վրա...» (թիվ 9, 141—144, տե՛ս նաև Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան 1962, 681—684):

Դեկտեմբերի 15/28.— Ելույթ է ունենում էսայան վարժարանի սրահում Հակոբ Գուրգենի հանրային և ուսուցչական քառասնամյա գործունեության հոբելյանական հանդեսում (չի պահպանվել):

Մամուլի հաղորդումներից երևում է, որ Վարուժանը պարզել է իր հայացքները գրարարի վերաբերյալ. «Խոսեցավ նաև Դանիել Վարուժան, որ համարելով թե գրաբարը մեռյալ լեզու իսկ ըլլա, ան միշտ ընդհանուր ազգին հարգանքին առարկան պիտ ըլլա, ըսավ: «Եզնիկն, Եղիշեն, Կորյունն ու Խորենացին պետք է հարգվին, ինչպես կը հարգվին Սահակն ու Մեսրոպ» («Բյուզանդիոն», 1913, դեկտեմբեր 16/29, թիվ 5225: Տե՛ս նաև «Ժամանակ», 1913, թիվ 1662): «Մեր ընկերակիցը՝ Դանիել Վարուժան, մեր իսկական թարգմանն էր, որ կը հանդիսանար, երբ հոբելյանի հանդեսի միջոցին իր հանպատրաստից ճառիկով կսեր թե նորերը գրաբար ժառանգելով, կուզեն ընդմեջեն ժառանգել ցեղային նկարագիրը» («Մեհյան», 1914, հունվար 1, թիվ 1, 14):

<Տարեվերջ>.— «Դեղարվեստ» հանդեսի 5-րդ գրքում տպագրվում է «Բերեք անկե ծաղիկներ» բանաստեղծությունը (92): «Հացին երգը» ժողովածուում զետեղվել է «Առաջին ծիլեր» վերնագրով:

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Թեոդիկին: Կարծիք է հայտնում «Ամենուն տարեցույցի» 1914-ի հատորի մասին:

«Նամականի», 205:

— Ուրբեն Զարդարյանը «Մեղրագետ, միջին ընթացք, Բ տարի»



դասագրքում (Կ. Պ., 1913), գետեղում է «Առկայծ ճրագ» բանաստեղծությունը (161):

— Նվեր է ստանում Թ. Գառնիկի «Մասիս երկիրքեն բարձր» բանաստեղծությունների ժողովածուն (Թիֆլիս, 1913): Մակագրությունը՝ «Դանիել Վարուժանի՝ գրչի եղբոր նվեր»:

ԳԱԹ, ԴՎՖ, № 264 լր.:

— Բնակվում է հեռակալ հասցեով՝ Կ. Պոլիս, Բերա, Եիշիլ փողոց 1:

ԳԱԹ, ԴՎՖ, № 111, Գ. Լեոնյանի ֆոնդ, 1841:

— Նամակ՝ Մկրտիչ Պոտուրյանին (չի պահպանվել): Հայտնում է իր համակրանքը նրա հանդեպ: Իր դեղագիտական համոզումների մասին ասում է. «Անցյալը կը պաշտեմ և ի հեճուկս ապագայապաշտեմու, անցյալապաշտ դպրոցը պիտի հիմնեմ»:

«Էշմիածին», 1958, ը, 37:

1914

Հունվարի 1/14.— «Հայ գրականություն» հանդեսը ավարտում է Հակոբ Քյուֆեճյանի «Մեր բանաստեղծները. Դանիել Վարուժան («Յեղիս սիրաբ» ու «Հեթանոս երգեր»)» հոդվածաշարի տպագրությունը:

Քննադատը Վարուժանին որակում է «լույսով, գույնով, հոտով ու միտով լի քանաստեղծ»՝ կարևորելով «այն բարձր, անշահախնդիր, կենդանի ոգին, որով կը թրթռան իր քերթվածները, այն պաղպաղուն, առողջ արվեստը, որով արտահայտված են մեղի համար սիրալի այնքան տաք դգացումներ, այն կենդանության, առնականության շունչը, որով ցեղը կը հրավիրվի իր նախնիքներու զգայնության սուրբ ավազանը մկրտվելու... Եվոլյան քնարն է առաջին: Ամեն հով, որ անոր կը դպի, սարսուռ մը կառնն անոր թելերեն իր թևերուն վրա» (թիվ 5, 28—31):

Նույն օրը.— «Մեհյան» հանդեսում տպագրվում է «Բարտինները» բանաստեղծությունը (թիվ 1, 6): Միաժամանակ հրատարակվում է Վա-

րուժանի, Հակոբ Քյուֆեճյանի, Ահարոնի և Գեղամ Բարսեղյանի «Հավատո հանգանակը», որի հռչակած սկզբունքներն են՝ «ա. Պաշտամունք և արտահայտություն հայ հոգվույն: բ. Ինքնուրույնություն և անձնակախություն ձևի մեջ: գ. Մշակում կենսանորոգ պատվաստումով մը հայ լեզվին: դ. Զուտ գրականությունը հեռու պահել քաղաքականութենե և լրագրությունե» (1):

<Հունվար>.— Հակոբ Սիրունու հետ նախապատրաստում է «Նավասարդ» տարեգրքի Բ հատորի տպագրությունը, բանակցություններ են վարում հեղինակների հետ, Ռաֆայել Շիշմանյանին պատվիրում են Փարիզում զարդեր պատրաստել:

Հրատարակությունը չի հաշողվել:

«Հասար», 1966 թիվ 9337:

Փետրվարի 1.— «Մեհյան» հանդեսում տպագրվում է «Հասուն արտ» բանաստեղծությունը (թիվ 2, 20):

Փետրվարի 2 և 9.— «Հորիզոն» օրաթերթը տպագրում է Նիկոլ Աղբալյանի (Ն. Ա.) գրախոսությունը նվիրված «Նավասարդ» տարեգրքին: «Նավասարդյան» բանաստեղծության մասին ասվում է. «Հնչուն բառերի կուտակումներ, որոնք չեն արտահայտում ոչ մի պայծառ միտք կամ զգացում և ուրեմն չեն կարող ընթերցողի մթին զգացումները և միտքը պարզել գեղեցիկ ու մշակված ձևի բերելով»: Քննադատը եզրակացնում է. «Վարուժան, Սիամանթո և որոնք գնում են նրանց շավղով, խզել են իրենց կապերը հայ ժողովրդի հետ... Նրանք իդեալները որոնում են անցյալի մեջ և իրական կյանքի միտումները թարգմանում են անհարազատ ու մթին պատկերներով՝ միանգամայն խորթ հայ մարդու սրտին» (№ № 23—31):

Փետրվարի 12.— Բերայում գրում է «Զոն» («Վարդ քաղեցիր, սիրտ թող ըլլա») բանաստեղծությունը:

«Բանաստեղծություններ», Երևան, 1955, 370:

Փետրվարի 18.— Նամակ՝ Արշակ Զոպանյանին: Նվեր է ուղարկում «Նավասարդ» տարեգիրքը: Խնդրում է աշխատակցել Բ հատորին:

«Նամակներ», 205:



<Փետրվար>.— Կ. Պոլսի «Փեթակ» հանդեսում տպագրվում է «Հմայքի աղբյուրը» բանաստեղծությունը (հունվար-փետրվար, թիվ 5—6, 192):

<Մինչև մարտի 1>.— Ելույթ է ունենում Կ. Պոլսի ուսանողական միության դասախոսական հանձնախմբի Բերայի ակումբում կազմակերպված «Թրքահայ գրական նորագույն շարժումները» բանավեճում (չի պահպանվել):

«Երկունք», 1914, մարտ 1/14, թիվ 9, 238—239:

<Նույն շրջանում>.— «Նավասարդի» խմբագրությունը (Վարուժան, Հ. Ծ. Միրունի) հայ պարբերականներին է ուղարկում ծանուցում տարեգրքի Բ հատորի տպագրության մասին, որ լույս է տեսնելու աշնանը: Խնդրվում է մինչև մայիսի վերջը հասցնել նյութերը:

Ծանուցումից. «Նավասարդ» հառաչիկային ևս պիտի հրատարակվի Գրականության, Նկարչության, Երաժշտության և Թատրոնի նվիրված բաժիններով՝ միշտ նպատակ ունենալով ցեղային գրականության և արվեստի մարգարիտները պրպտել, ցեղին հանձարը արթնցնել և նաև ուրիշ ցեղերու գոհարները բերել սփռել մեր գրականության ածունեություն մեջ:

«Մեկյան», 1914, մարտ 1, թիվ 3, 47: Տե՛ս նաև ԳԱԹ, ԴՎՅ, № 337:

Մարտի 21/3 ապրիլի.— Ծանուցվում է, որ Վարուժանը ընդգրկված է Մկրտիչ Փորթուգալյանի 40-ամյա գործունեությունը նշող հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի կազմում:

«Քյուզանդիոն», 1914, թիվ 5305: Տե՛ս նաև «Ազատամարտ», ապրիլ 17/30, թիվ 1389:

Մարտի 23/5 ապրիլի.— Մասնակցում և ելույթ է ունենում Մուրատ-Ռաֆայելյան նախկին աշակերտաց միության ընդհանուր ժողովի հինգերորդ նիստում:

Ատենագրությունից. «Տ. [յար] Վարուժան Դանիել խոսք առնելով, ըսավ թե լավ է Հայաստանի մեջ վարժարան մ'ունենալ: Սակայն լավագույն է առայժմ մայրաքաղաքին մեջ սահմանափակել Միության գործունեության հրապարակը և մանչերեն ավելի ձեռք առնել աղջկանց դաստիարակության հարցը, քանի որ անոնք՝ ապագա մայրերը, կոչ-

ված են ըլլալու ռահվիրաները մանուկներու դաստիարակության, որ պետք է հենու ինքնագիտակցության հիմերուն վրա, և առաջարկեց մղում տալ Համազգյաց աղջկանց վարժարանին՝ ջանալով զայն տիպար հաստատության մը վիճակին հասցնել և այդու իսկ անմահացնել Միության:

Երկրորդ անգամ ելույթ ունենալով, արտահայտվում է Միության ակումբը տեղափոխելու օգտին՝ պնդելով, որ դա չի աղդի «Միության ելևժողացիներն վրա»: Այս առաջարկը չի ընդունվում:

Նույն նիստում ընարվում է սնօրեն ժողովի անդամ՝ ստանալով 17 ձայն (53-ից):

«Ամսօրյա տեղեկատու», 1914, ապրիլ—մայիս, թիվ 33, 38—40:

Նույն օրը.— «Հովիտ» հանդեսը տպագրում է Pessimist-ի (Իսահակ Տեր-Ղազարյան) «Հեթանոսության զաճաճ երգիչները» գրախոսությունը «Նավասարդ» տարեգրքի մասին: Քննադատը եզրակացնում է. «Մարմին... ահա մեր երգիչների բանաստեղծության այժմյան նյութը. մարմին՝ կրքի համար, տարփանքի ու հեշտանքի համար, մարմին՝ ծախու, մարմին՝ շորացած, մարմին՝ ալյանդակ... Մեր բանաստեղծների աչքերը դեռ կրքի գերին են, ականջները՝ հեշտանքի կարոտ ու գեղեցիկը տեսնելու տեղ՝ միայն տգեղն են տեսնում ու լսում» (№ 12, 181—185):

<Մինչև մարտի 26>.— Կ. Պոլսում ժան Մինասյանի թարգմանությամբ առանձին գրքույկով ֆրանսերեն տպագրվում է «Հարճը» պոեմը:

«Նամակակ», 206:

<Նույն շրջանում>.— Վարդգես Ահարոնյանը՝ Վարուժանին (չի պահպանվել): Հայտնում է, որ պատրաստում է ատենախոսություն Վարուժանի մասին և այդ կապակցությամբ խնդրում է ինքնակենսագրական ու այլ տեղեկություններ:

Անդ:

Մարտի 26.— Նամակ՝ Վարդգես Ահարոնյանին: Պատասխանում է իր կենսագրությանն ու ստեղծագործությանը վերաբերող հարցերին:

Անդ, 206—208:

Ապրիլի 15/28.— «Շանթ» հանդեսը տպագրում է Իսկուհի Մինասի



«Վասիլիզո» նորավեպը՝ Վարուժանի թարգմանությունը (թիվ 57, 130—133): Միաժամանակ Մերուժան Պարսամյանը (Մ. Պ.) Միմոն Երեմյանի «Պատկերներ» ժողովածուին (Վենետիկ, 1913) նվիրած իր գրախոսականում մեջբերում է Վարուժանի կարծիքը այդ գրքի մասին (139):

Տե՛ս նաև 1913-ի «Սեպտեմբեր-հոկտեմբեր» գրառումը:

Ապրիլի 16—17.— «Մշակ» լրագիրը տպագրում է Հարություն Սուրխաբյանի գրախոսությունը «Նավասարդ» տարեգրքի մասին: Քըն-նադատը տարեգիրքը համարում է, «մի աչքի ընկնող գործ և ուշադրության արժանի» իսկ Վարուժանի մասին մասնավորապես գրում է. «Հայ հեթանոսների քրմապետը Գանիել Վարուժանն է, իսկ քուրմերն են Միամանթոն, Ատրուշանը, Սիրունին, Ահարոնը և ուրիշներ... Ույժի և գեղեցկության գաղափարը նրանք կապում են անհատապաշտության գաղափարի հետ... Վարուժանը հայ առաջին հեթանոսն ու մողեոնիստն է» (№ 79—80):

Ապրիլի 25/8 մայիսի.— «Բյուզանդիոն» օրաթերթը ծանուցում է, որ Մկրտիչ Փորթուզալյանի հոբելյանի առթիվ արևմտահայ մտավորականները հրատարակում են մի ժողովածու, ուր այլ հեղինակների թրվում «Պ. Գանիել Վարուժան «Ռահվիրաները» հուժկու արձակ քերթվածով մը կողջունեն հոբելյարը» (թիվ 5333):

Ապրիլի 26.— «Հողգարը» Մկրտիչ Փորթուզալյանի հոբելյանական հանձնաժողովին հեռագրում է, որ խմբագրությունը Վարուժանին ընտրել է պատգամավոր՝ հոբելյարին ողջունելու համար (թիվ 3):

Ապրիլի 27.— Հրատարակվում է «Քառասուն տարվա աշխատավորը. Մկրտիչ Փորթուզալյան. Հարզանքի պսակ» ժողովածուն, որտեղ տպագրված է Վարուժանի «Ռահվիրաները» արձակ բանաստեղծությունը (66—67):

Ժողովածուի լույս ընծայման ազդը տե՛ս «Ազատամարտ», 1914, ապրիլ 27/10 մայիսի, թիվ 1497:

Նույն օրը.— Ողջունի խոսք է ասում Մկրտիչ Փորթուզալյանի հոբելյանական հանդեսում Փթի Շանի ձմեռային թատրոնում (չի պահանջվել):

Մամուլի հաղորդումից. «Պ. Գանիել Վարուժան բանաստեղծական ոճով մը փառաբանեց Փորթուզալյանի մեջ մտքի և հոգիի ոահվիրան և հրձիգը, որ սորվեցուց ու իրմով օրինակ տվավ, թե դրամը միայն պատվանդան մըն է, որ պետք է համերաշխի մտքին հետ՝ միակ նպատակակետին հասնելու համար»:

«Ազատամարտ» օրաթերթ, 1914, ապրիլ 29/12 մայիս, թիվ 1498, տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1914, ապրիլ 28/11 մայիս թիվ 5335:

Ապրիլի 30.— Թիֆլիսի երաժշտական ընկերության դահլիճում Վահան Տերյանը կարդում է «Հայ գրականության գալիք օրը» ղեկուցումը, որտեղ բացասաբար է արտահայտվում «պոլսահայ բոլոր հանկարծակի հեթանոսացած պոետների» մասին:

Վ. Տերյան, երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, 93—94:

<Ապրիլ>.— Գծտվում է «Մեհյան» հանդեսի խմբագրության հետ: Սիրունի, 137:

Մայիսի 1/14.— «Երկունք» հանդեսը տպագրում է Գ. Մխիթարյանի «Հեթանոս երգեր. Գեղեցկության երգիչը» գրախոսության առաջին մասը՝ նվիրված Վարուժանի ժողովածուին: Քննադատի կարծիքով «Վարուժանի հոգին քառակողմ պրիսմակ մըն է, որուն յուրաքանչյուր կողմեն կը ճառագայթեն Գեղեցկության, Հաճույքի, Երազի և ընկերային Վշտի բարդ ու բազմերանգ ճառագայթները» (թիվ 10—11, 244—247):

Նույն օրը.— «Մեհյան» հանդեսը «Արվեստի համար» ընդհանուր խորագրի տակ տպագրում է Կոստան Զարյանի «Հեթանոսություն» տրամախոսական հոդվածը (թիվ 5, 65—67): Ըստ Սիրունու, այս հոդվածում «իր դեմ խայթող սլաքներ կը կարծեր տեսնել Վարուժան» (Սիրունի, 137):

Մայիսի 16.— Հովհաննես Զարիֆյանը իր լուսանկարը նվիրում է Վարուժանին: Մականգրությունը՝ «Ամենից սիրած իմ երգչին՝ սիրելի Գ. Վարուժանին, բարեկամական ճիշտակ»:



<Մինչև մայիսի 22>.— «Օշական» գրական ժողովածուում տը-  
պագրվում է «Արբայից արքան» բանաստեղծությունը (37):

Ժողովածուի լույս ընծայման ազդը տե՛ս «Ազատամարտ», 1914, մայիս 22/4 հու-  
նիս, թիվ 1518:

<Մայիս>.— Ընկերների հետ ծրագրում է կազմակերպել Հով-  
հաննես Զարիֆյանի թատերախմբի հյուրախաղերը Վանում, Կարինում,  
Մուշում, Բաղեշում և հայաշատ ուրիշ վայրերում:

Հակոբ Միրունու վկայությունից. «Ռ. Զարդարյան, Վարուժան և  
ես ստանձնած էինք խաղացանկին հոգսը: Թատերախմբին համար նոր  
խաղեր պիտի հայթայթեինք՝ առավելապես գործի մղելով հայ հեղի-  
նականեր... Խանդավառված էր նաև Վարուժան: Թատերախաղ մը կորո-  
ճար արդեն: Թերևս «Հարճը» թատերախաղի վերածեր կամ հայկական  
կյանքեն առնված խաղ մը գրեր... Կուզեր ամառը Պարտիզակ երթալ,  
կազդուրվիլ ու դարձին սկսիլ այդ թատերախաղը»:

Յրագիրը չի հաջողվել:

Միրունի, 146:

Հունիսի 1/14.— «Երկունք» հանդեսում տպագրվում է Գ. Մխիթար-  
յանի «Հեթանոս երգեր. Գեղեցկության, Հաճույքի, Երազի ու Տառա-  
պանքի երգիչը» գրախոսության վերջին մասը: Քննադատը գրում է.  
«Դանիել Վարուժան Հաղթանակի ու Պարտության, Հաճույքի ու Վշոյի  
մեծ բանաստեղծն է: Այս երկու լարերով կերգն Կյանքի երգը, որ ան-  
մարելի դաշնակությունը կը հաղորդվի դարեդար, մերթ ուրախ, մերթ  
թախծոտ» (թիվ 12, 278—283):

Հունիսի 2.— Մուրատ-Ռափայելյան սանուց միության տնօրեն ժո-  
ղովը վավերացնում է խմբագրական մարմնի կազմը, որի մեջ մտնում  
է նաև Վարուժանը:

«Ամսօրյա տեղեկատու, 1914, թիվ 34, 68:

Հունիսի 18.— Կաթոլիկ հայերի Ազգային ավագանաց ժողովը Կ.  
Պոլսի 34 աշխարհական անդամների թվում երեսփոխան է ընտրում նաև  
Վարուժանին:

«Ազատամարտ», 1914, հունիս 19/2 հուլիս, թիվ 1542:

Հունիսի 20/3 հուլիսի.— «Ազատամարտ» օրաթերթը ծանուցում է.  
«Ի նպաստ Երամյան վարժարանի գրադարանին պ. Դանիել Վարու-  
ժան, պատասխանելով Վանի Երամյան վարժարանի գրադարանին պ.  
մատենադարանին ի նպաստ եղած կոչին, կը նվիրե մեկ-մեկ օրինակ իր  
երկերեն՝ այն բաղձանքով, որ բոլոր հայ հեղինակները պիտի շուշանան  
րերելու իրենց օժանդակությունը այդ բազմօգուտ հաստատության»  
(թիվ 1543):

Հունիսի 29.— Դպրոցասեր տիկնանց վարժարանների շրջանավարտ-  
ների ավարտական հանդեսում արտասանում է մաղթանքի խոսք՝ «Հուսկ  
բանք» (չի պահպանվել): Դիմելով շրջանավարտներին, Վարուժանն  
ասել է. «Ով ճերմակ քույրեր, վաղը պիտի ըլլաք կարմիր քույրեր, երբ  
գավառ կոշիկք, հանուն հսկա աշխատանքին»:

«Ազատամարտ», 1914, հունիս 29/12 հուլիս, թիվ 1549, Լ. էսա-  
նյան, Դանիել Վարուժան, 90:

<Նույն օրը>.— Լուսանկարվում է Դպրոցասեր տիկնանց վարժա-  
րանի մի խումբ շրջանավարտների հետ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 439

<Հուլիս-օգոստոս>.— Սկյուտարում այցելում է Պոլսո ամերիկ-  
յան կոլեջի ուսուցչուհի Արուսյակ Փանոսյանին՝ նույն հաստատությու-  
նում հայերենի ուսուցչի պաշտոն ստանալու միջնորդության խնդրան-  
քով: Կողմնակի անձանց ներկայության պատճառով չի կարողանում  
հայտնել խնդրանքը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 346:

<Մի քանի օր հետո>.— Նամակ՝ օր Արուսյակ Փանոսյանին (չի  
պահպանվել): Բացատրում է իր այցելության նպատակը:

Անդ:

Հուլիսի 19/1 օգոստոսի.— Սկսվում է Առաջին համաշխարհային  
պատերազմը:

ԸԺՊ, հ. VI, 236:



Հուլիսի 20.— Կ. Պոլսում Գերմանիայի ու Քուրքիայի միջև կնքվում է գաղտնի դաշնագիր:

Անդ, 538:

Սոցստուսի 3.— Հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակով Քուրքիան հայտարարում է համաշխարհային պատերազմում իր շեղուցութիւն մասին:

Անդ:

<Մինչև օգոստոսի 9>.— Ուսումնական խորհրդի ատենապետ Միհրան Չուխաճյանը հանձնարարում է կարծիք հայտնել ուսուցիչ Միհրան էմիրզեի աշխարհաբարից ունեցած գիտելիքների մասին:

ԳԱԹ, Գևորգ Կարպիսյանի հավաքածո:

Սոցստուսի 9/22.— Նամակ՝ Միհրան Չուխաճյանին: Կարծիք է հայտնում Միհրան էմիրզեի գիտելիքների մասին:

Անդ:

<Սոցստուսի կեսեր>.— Հակոբ Սիրունու հետ որոշում են Պարտիզակում կազմակերպել նավասարդյան տոներ: Չի հաջողվել:

Սիրունի, 151—152:

<Նույն շրջանում>.— Ծրագրում է գնալ Տարոն՝ ներշնչումներ քաղելու Սասունցի Դավթի մասին ստեղծագործություն գրելու: Չի հաջողվել:

Անդ:

Սոցստու.— Բերայում գրում է «Կեսօր» բանաստեղծությունը: «Հացին երգը» ժողովածուում տպագրվել է «Միջօրե» վերնագրով:

«Ամենուն տարեցույցը», 1915, 199—200:

<Մինչև սեպտեմբերի 29>.— Նամակ՝ Միրիճան և Մարիամ Թաշճյաններին (չի պահպանվել): Հայտնում է, որ ինքը և կինը լավ են ու հանգիստ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 172 լր.:

Սեպտեմբերի 29.— Միրիճան և Մարիամ Թաշճյանները Սեբաստիայից՝ Վարուժանին: Ընտանեկան հարցերի շուրջ:

Անդ:

Սեպտեմբեր.— Հովհաննես Հինդլյանի և Գալուստ Մալթայանի հրավերով սկսում է պաշտոնավարել «Նոր դպրոցում»: Ուսուցիչ է նշանակվում 1914—1915 ուսումնական տարվա համար՝ շաբաթական երկու ժամ պարապելու պայմանով: Գրիգոր Կիրակոսյանն իր հուշերում պատմում է. «Հոս ալ շրջապատվեցավ խոր համակրանքով ու հարգանքով իր պաշտոնակիցներու կողմե... Ականավոր ուսուցիչներ Գուրյան Սրբազան, Ստեփան Կուրտիկյան, Տիգրան Չլոկյուրյան, Գեղամ Գավաֆյան ջերմորեն կը գնահատեին իր բարձր տաղանդը»:

«Նոր դպրոց». հիսուն տարվան կյանք մը, հավաքեց Վ. Ք. Հինդլյան, Իսթանպուլ 1959, 77, «Պայքար», 1973, թիվ 95:

<Նույն շրջանում>.— Որպես այցելու ուսուցիչ սկսում է պաշտոնավարել Նիկողոսյան աղջկանց բարձրագույն վարժարանում:

«Հուլիանայան...», 84:

Հոկտեմբերի 20.— Ռուսաստանը պատերազմ է հայտարարում Քուրքիային:

ՀԺՊ, հ. VI, 538:

Հոկտեմբերի 21.— Գրում է «Արտին մեջ (Կրկներգ)» բանաստեղծությունը: «Հացին երգը» ժողովածուում տպագրվել է «Հունձը կը ժողվեմ», վերնագրով:

«Նաեր», 1918, թիվ 6, 66:

Հոկտեմբերի 29.— Քուրքիան մտնում է Առաջին համաշխարհային պատերազմի մեջ՝ գերմանա-ավստրիական խմբավորման կողմում:

ՀՍԷ, հ. 7, 527:

Նոյեմբերի 11.— Սուլթանը հայտարարում է «Սրբազան պատերազմ» («Ջիհաթ»):

ՀԺՊ, հ. VI, 541:



<Գեկտեմբեր>.— «Ամսօրյա տեղեկատուն» տպագրում է «Մը-նունդ» արձակ ստեղծագործությունը (Տունիս-դեկտեմբեր, թիվ 34, 55—56):

<Տարեվերջ>.— «Ամենուն տարեցույցում» տպագրվում են վա-րուժանի կարծիքը 1914-ի հատորի մասին, «Լուսնին» և «Կեսօր» («Միջ-օրե») բանաստեղծությունները (4, 169, 199—200):

<Նույն շրջանում>.— Նամակ՝ Թեոդիկին: Կարծիք է հայտնում 1915-ի «Ամենուն տարեցույցի» մասին:

«Նամակներ», 211:

<Նույն շրջանում>.— Մկրտիչ Պարտիզյանը այցելում է Վարու-ժանին, առաջարկում է ժամանակավորապես դնալ Իտալիա՝ վերահաս վտանգից ազատվելու համար: Վարուժանը մերժում է՝ առարկելով, որ «չի կրնար ձգել ընտանիքը»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 348, 16:

— Գրում է «Անհայտի. կծու խոսքեր» բաց նամակը:

«Նամակներ», 208—210:

— Ռուբեն Զարդարյանը «Մեղրագետ, 2 գիրք, բարձրագույն կար-գերու համար» դասագրքում արտատպում է «Կարմիր հողը» բանաս-տեղծությունը, «Հայ ասպետներ» վերնագրով հատվածը «Հարձը» դյու-ցազնավեպից և Ադամ Միցկևիչի «Ալպուխարա» ստեղծագործությունը՝ Վարուժանի թարգմանությամբ (67—69, 334—336): Կենսագրական հակիրճ տեղեկություններում Վարուժանի մասին ասված է. «Տակավին երիտասարդ, բայց արդեն ժամանակակից հայ բանաստեղծության մեջ կը գրավե առաջին տեղերն մեկը... Իր բանաստեղծության դրոշմը կը կազմեն քնարական բարձր և հովվերգական քնքուշ ներշնչումը, պատ-կերներու հարազատություն ու փարթամություն և լեզվի կատարելու-թյուն»:

Միցկևիչի «Ալպուխարայի» թարգմանչի անունը չի նշված, բայց ըստ Լևոն էսաճանյանի, այն թարգմանել է Վարուժանը («Դանիել Վա-րուժան», 84):

— Ռուբեն Զարդարյանը «Մեղրագետ, Ե գիրք, նախակրթարանի վերի երկու կարգերու համար» դասագրքում զետեղում է «Հերկեր» և

«Անդաստան» բանաստեղծությունները՝ կցելով կենսագրական հակիրճ տեղեկություններ հեղինակի մասին (175—176, 239):

— Լուսանկարվում է Ռուբեն Սևակի տանը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 430:

— Թ. Գառնիկը նվիրում է իր «Եվա» (Թիֆլիս, 1914) ժողովա-ծուն: Մակագրությունը՝ «Դանիել Վարուժանին՝ գրչի եղբոր նվեր»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 263 Լր.:

— Լևոն էսաճանյանը նվիրում է իր «Պալատին երազը (թատերա-կան քնարերգություն)» (Կ. Պ., 1914) գիրքը: Մակագրությունը՝ «ԹԵՄԱ-հայ նորագույն գրականության վարպետին՝ տաղանդավոր բանաստեղծ Դանիել Վարուժանի»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 268 Լր.:

— Բնակվում է հետևյալ հասցեով՝ Կ. Պոլիս, Բանկայթի, Նալբանդ, փողոց, թիվ 14, տուն 8:

ԳԱԹ, ԴՎՅ, № 43—47 Լր.:

— Ստեփան Լիսիցյանի, Հովհաննես Թումանյանի և Լևոն Շանթի «Լուսաբեր» դասագրքում (հինգերորդ տարի, Թիֆլիս, 1914) արտա-տպվում է «Մեր կռունկը» բանաստեղծության համառոտված տարբերա-կը՝ «Կռունկների մահը» խորագրով (239):

1915

Հունվարի 1.— Գրում է «Գեղոն Ալիսին» բանաստեղծությունը:

«Շանթ», 1918, թիվ 6, 66:

Հունվարի 14/27.— Գրում է «Աղերս» բանաստեղծությունը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 32 Լր.:

<Հունվար>.— Զարուհի Գալեմբերյանի հրավերով սկսում է հա-յերենի մասնավոր դասեր տալ նրա դասերը:

Գալեմբերյան, 98:

Փետրվարի 18.— Իթթիհատական կենտրոնը («Ջեմիլեթ») գաղտնի



հրահանգով պահանջում է. «Զպիտի թույլատրվի, որ հայ մը օգնութեան և պաշտպանութեան արժանանա»:

ՀՍԷ, հ. 7, 425:

<Փետրվարի կեսեր>.— Աշխատում է «Ազորիք» բանաստեղծութեան վրա:

«Բազմավեպ», 1965, թիվ 4—7, 93—94:

<Մինչև մարտի 22/4 ապրիլի>.— Զարուհի Գալեմբերյանը իր երկյուղն է հայտնում Վարուժանին իթթիհատատականների «ներքին զգացումներուն և հայտնաց բնազդներուն մասին»: Վարուժանը նրան հանգստացնում է. «Տակավին նախորդ երեկո Զոհրապ Թալեաթին հետ ծունկ-ծունկի բոքեր խաղացեր են, լավ են իթթիհատական տրամադրութիւնները մեր մասին»:

Գալեմբերյան, 98—100:

Մարտի 28 (10 ապրիլի).— Մկրտիչ Պարտիզյանը հանդիպում է Վարուժանին, առաջարկում է իր օգնութիւնը՝ Բուդղարիա անցնելու համար, խոստանում է հետագայում «ընտանիքն ալ իրեն մոտ հասցնել»: Մերժվում է:

ԳԱԹ, ԴՎՅ, № 348, 17—18:

Մարտ.— Ավարտում է «Ազորիք» բանաստեղծութիւնը:

Սիրունի, 159:

Ապրիլի 1.— Վահան Զպուգբարյանը Սեբաստիայից՝ Վարուժանին: Անձնական հարցերի շուրջ տաճկերեն նամակ:

ԳԱԹ, ԴՎՅ, № 217:

Ապրիլի 8(21).— Ենի Գաբուի որբանոց-վարժարանում Անայիսը Վարուժանին խորհուրդ է տալիս հեռանալ Կ. Պոլսից: Իր հիշողութիւններում Անայիսը պատմում է. «Բանաստեղծը արհամարհոտ ժպտեցավ. «Ինչո՞ւ կուզեք, տիկին, որ ես Ձեզմե նվազ արիասիրտ ըլլամ. ինչո՞ւ մեկնիմ: Ապահով եղեք, թե մեզի ոչինչ կսպառնա. պետք չէ ըլլալ հոռետես»:

Անայիս, Հուշերս, Փարիզ, 1949, 222—223:

<Մինչև ապրիլի 10/23>.— Արաքսի Վարուժանի հետ նամակ՝ Գրիգոր Զպուգբարյանին (չի պահպանվել): Հայտնում է, որ ինքը տրկար է:

ԳԱԹ, ԴՎՅ, № 88 Ը.:

Ապրիլի 10/23.— Լուրեր են տարածվում, թե տարագրվելիք անձանց ցուցակում չկա Վարուժանի անունը: Տիգրան Զյուկուրյանը ցանկանում է իր ձեռագրերը պահ տալ Վարուժանին:

«Հուշամատյան...», 84:

Նույն օրը երեկոյան.— Հակոբ Սիրունին այցելում է Վարուժանին նրա բնակարանում, խորհուրդ է տալիս հեռանալ Կ. Պոլսից կամ զոնե «տեղը փոխել»: Մերժվում է:

Սիրունի, 154:

Ապրիլի 11/24.— «Շանթ» հանդեսը սկսում է տպագրել զոկտոր Պազիլ խանի «Դանիել Վարուժան» հոդվածի առաջին մասը: Հեղինակը Վարուժանին համարում է «ամեհի հսկա»՝ խոստանալով, որ նրա «ամբողջական ընդգրկումն» իր ուժերից վեր է (թիվ 139, 180—181): Հոդվածի տպագրութիւնն ընդհատվում է Վարուժանի, Պազիլ խանի և հայ մտավորականութեան ձեռքադրման պատճառով: Երկրորդ մասը հրատարակվում է 1918-ի «Շանթում» (թիվ 6, 73—76):

Նույն օրը երեկոյան.— Հովհաննես Պողոսյանն ու Սահակ-Մեսրոպը այցելում են Վարուժանին նրա բնակարանում: Զրուցում են գրականութիւնից ու գավառից: Մնում են մինչև ժամը 23-ը:

Հ. Պողոսյան, Հին օրերու հուշեր, Ութրսթաուն, 1972, 129:

Նույն օրը ժամը 23-ից հետո.— Վարուժանին ձերբակալում են: Արաքսի Վարուժանի հուշերից.

«...Հանկարծ տան դուռը զարնվեցավ և քանի որ Վարուժան կես հանված էր, ես գացի դուռը բանալու... Դուռը պզտիկ մը բացի և ահա երեք հոգի գտա դրան առջևը: Դուռը հրելով բացին և ներս մտան «էֆենտին ո՞ւր է» ըսելով: Իրենցմե մեկը հառաչացավ դեպի ննջարան, ինչ որ զատ բաժանում մըն էր տան մեջ. այնպես կերևեր, որ մեր տան ներքին մասին ծանոթ էին լիովին: Մյուս երկուքը անցան Վարուժանի



գրասենյակը և առին ինչ որ գտան ու լեցուցին իրենց տոպրակները: Մինչ այդ մյուս մարդը Վարուժանին հետ դուրս եկավ ննջարանեն և երեքը միասին ինծի դարձան ու ըսին. «էֆենտին մեզի հետ պետք է գա, որպեզի ստորագրե թե ասոնք իր թուղթերն են»:

«Հուշամատյան...», 85:

Ոստիկանության բռնագրաված թղթերի մեջ էր նաև «Հացին երգը» ժողովածուն, որ չէր հասցրել ամբողջացնել: Հիշյալ ժողովածուից պահպանվել են հետևյալ բանաստեղծությունները՝ «Մուսային» «Մշակները», «Հարկիք», «Հերկեր», «Յան», «Տափան», «Առաջին ծիլեր», «Գարնան անձրև», «Յորյանի ծովեր», «Կակաչներ», «Անդապահ», «Հասուն արտ», «Հունձք», «Հունձք կը ժողվեմ...», «Սալլերը», «Ճարակում», «Խաչբուռ», «Կալեր», «Կալերու գիշեր», «Կամներգ», «Միջօրե», «Գուրը», «Երնում», «Օրհնություն», «Վերադարձ», «Ամբարներ», «Մարգաներ» և «Աղորիք»:

Գանիել Վարուժան, Հացին երգը, Կ. Պ., 1921:

Ապրիլի 12/25.— Վարուժանին 192 ուրիշ ձեռքակալվածների հետ ոստիկանատնից տեղափոխում են Կ. Պոլսի կենտրոնական բանտը: Առավոտից դուրս են գալիս բանտի ընդարձակ բակը: Արտոնվում է «թղթատարական բաց քառթերու վրան լուկ թուրքերեն» նամակներ գրել ընտանիքներին՝ խնդրելով սպիտակեղեն, անկողին, դրամ և ուտելիք: Երեկոյան, երբ պատրաստվում են քնելու, ոստիկանության տնօրեն Պետրի բեյի և բանտի տնօրեն Իբրահիմ էֆենտիի կարգադրությամբ նորից բակ են կանչվում: Նախապես կազմված ցուցակներով առանձնացնում են 71 մարդ (Միամանթո, Ռուբեն Զարդարյան, Տիգրան Չյուլյուրյան, Գեղամ Բարսեղյան և այլք) և կառքերով հանում բանտից: Ապա մնացյալ բանտարկյալներին Վարուժանի հետ շարք են կանգնեցնում և սվինավոր զինվորների խիստ հակողությունով գիշերով Գյուլհանեի ծառուղիով, Սուլթան Ահմեդի, Այա Սոֆիայի հրապարակներով ոտքով տանում են Սառա Պուրնուի նավամատույց: Նստեցնում են Շիրքեթը Խալիթի թիվ 2 շոգենավը (այստեղ էին բերված նաև նախապես կառքերով ուղարկված 71 հոգին) և հասցնում Հայտար փաշայի երկաթուղային կայարան: Իբրահիմ էֆենտիի հրամանով ձեռքակալվածներին տեղավորում են գնացքի առաջին ու երկրորդ կարգի վագոնները:

«Արևմուտք», 1946, թիվ 6, 1947, թիվ 7—8, 12—17:

Իմանալով Վարուժանի ձեռքակալման լուրը, Զարուհի Գալեմքերյանը այցելում է ոստիկանության տնօրեն Պետրի բեյին՝ բարեխոսելու խնդրանքով: Վերջինս իր հերթին խորհուրդ է տալիս դիմել ամերիկյան դեսպանությանը: Գալեմքերյանն անմիջապես դիմում է ամերիկյան դեսպանատան պատասխանատու աշխատակից Արշակ Շամվոնյանին, որը սակայն հորդորում է «ոե՛ք բանի չմիջամտել»՝ կասկածանքների տեղիք չտալու համար:

Գալեմքերյան, 101:

Ապրիլի 13/26.— Գնացքը կտրում է Նիկոմեդիան, Պիլեծիկը, գիշերով հասնում էսկիշեհի: Ավելի քան երկու ժամ տևած դադարի ընթացքում չեն թուլլատրում վագոններից իջնել: Աքսորականները կազմում են իրենց ցուցակները, գրում են նամակներ, դիմումներ ու հեռագրեր, հանձնում Անատոլիի երկաթուղու հայ պաշտոնյաներին՝ պատրիարքարանին իրենց ընտանիքներին ու այլ անձանց ուղարկելու խնդրանքով: Փակել են տալիս վագոնների պատուհանները, և գնացքը շարժվում է առաջ:

«Արևմուտք», 1947, թիվ 18:

Նույն օրը.— Գրիգոր Զոհրապը Զավեն պատրիարքի և պաշտոնատար այլ անձանց հետ Կ. Պոլսում այցելում է Թուրքիայի պրեմիեր Սաիք Հալիմ փաշային, հանձնում իր կազմած հուշագիրը՝ պահանջելով «մեղմ և ներող քաղաքականություն» կիրառել հայերի նկատմամբ:

Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, 292:

Ապրիլի 14/27.— Արշալույսին գնացքը կանգ է առնում էնկյուրիի (Անկարա) մոտակայքում՝ Սընճանքյո փոքրիկ կայարանում: Ըստ վաղօրոք կազմված ցուցակի 71 մարդու (Միամանթո, Ռուբեն Զարդարյան և այլք) իջեցնում են վագոններից և կառքերով ճանապարհում Այաշ: Նորից փակել են տալիս պատուհանները: Երկու ժամ հետո գրնացքը հասնում է էնկյուրի: Խումբը իջեցվում է վագոններից: Էնկյուրիի ոստիկանության տնօրեն Բեհանդդին բեյը հայտնում է, որ կառավարության հրամանով արքայազնը (Զանկերը): Հեռագրեր են տալիս տուն՝ իմացնելով իրենց արքայազնի մասին: Ցուրաքանչյուր կառքում տեղավորում են երեքական մարդ, և կարավանը, ձիավոր



նստիկանների ուղեկցութեամբ ու Իբրահիմ էֆենտիի ընդհանուր հսկողութեամբ ճանապարհ է ընկնում: Վարուժանի հետ միեկնույն կառքում են Ստեփան ու Գրիգոր Միքսճյան հիվանդ եղբայրները: Կարավանը մի քանի ժամ հանգիստ է առնում Բալլի խանում, ապա կես գիշերն անց հասնում Գալեճիկ (Գալաջճըք): Միքսճյան եղբայրների վիճակը ծանրանում է, և վարուժանը բժիշկ Վահրամ Թորոզմյանին հրավիրում է օգնության: Ամբողջ գիշերը միասին հսկում են հիվանդներին:

«Արևմուտք», 1947, թիվ 19—27:

Ապրիլի 15/28.— Վաղ առավոտյան կարավանը թողնում է Գալեճիկը: Իբրահիմ էֆենտին հսկողությունը հանձնում է ոստիկաններին և վերադառնում Կ. Պոլիս: Երեկոյան կարավանը հասնում է Չանղըրը: Աքսորականներին լցնում են զորանոցը: Գիշերում են քարերի ու տախտակների վրա:

«Արևմուտք», 1947, թիվ 29—30, Շամտանեյան, 42:

Նույն օրը.— Թալեաթի, էնվերի և դոկտոր Նազրմի ստորագրութեամբ տեղական իշխանություններին է ուղարկվում հայերի բնաջնջման ու բռնագաղթի հրաման՝ պահանջելով «վերջնական հաշվեհարդարի ենթարկել հայերին», «բնաջնջելով անհարազատ այդ տարրը, քշելով դանոնք դեպի Արաբիո անապատները, համաձայն մեր տված գաղտնի հրահանգին»:

ՀՍԶ, հ. 7, 425:

Ապրիլի 16/29.— Աքսորականները զորանոցից նամակներ ու հեռագրեր ուղարկում Կ. Պոլիս՝ ընտանիքներին ու զանազան հասցեներով:

«Արևմուտք», 1947, թիվ 29—30, Շամտանեյան, 43—47:

Ապրիլի 17/30.— Չանղըրըի հայ բնակիչները երկու կառքով անկողին են բերում զորանոց և բաժանում քսորականներին:

Շամտանեյան, 48—49:

Ապրիլի 20/3 մայիսի.— Գրիգոր Զպուգքյարյանը, Միրիճան Թաշճյանը և Պողոս Արելյանը Սեբաստիայից՝ Դանիել և Արաքսի Վարուժան-

ներին: Ընտանեկան-անձնական հարցերի շուրջ: Գրված է Կ. Պոլսի հասցեով չիմանալով վարուժանի ձերբակալման մասին:

ԳԱԹ, ԴՎՅ, № 88 Լր.:

<Մինչև ապրիլի 21>.— Չանղըրից՝ Արամ Ինճիճյանին (չի պահպանվել): Ըստ Ա. Ինճիճյանի, «իր հանգիստ ըլլալը հայտնելն հետո գրամ կուզե 5—6 ոսկիի շափ»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 182 Լր.:

— Աքսորավայրից ուղարկում է նամակներ ու հեռագրեր, որոնց դրութեան ճշգրիտ ժամկետը հայտնի չէ:

— Թուրքերեն հեռագիր՝ Արաքսի վարուժանին: Խնդրում է Ռեժիսի միջոցով ուղարկել 5 լիրա:

ԳԱԹ, ԴՎՅ, № 46 Լր.:

— Յողգաթից արաբատառ թուրքերեն հեռագիր՝ Արաքսի վարուժանին: (Վարուժանը Յողգաթում չի եղել, հավանաբար ուղարկել է այլ անձի միջոցով):

Անդ:

— Չանղըրից թուրքերեն հեռագիր՝ Արաքսի վարուժանին: Հետաքրքրվում է կնոջ առողջական վիճակով, անհանգստություն հայտնում նրանից նամակ շտապալու համար:

ԳԱԹ, ԴՎՅ, № 45 Լր.:

Ապրիլի 22/5 մայիսի.— Աքսորականներին թույլատրում են սենյակ վարձել քաղաքում՝ պահանջելով ամեն առավոտ ներկայանալ ոստիկանատուն, հաշվառման ենթարկվելու: Գրում են նամակներ, աղերսագրեր ու հեռագրեր Կ. Պոլիս:

— Արաքսի վարուժանի վկայությունից. «Չանղըրըի մեջ վարձակալը եղեր է (վարուժանը—Ա. Շ.) հայ ընտանիքի մը, ուր կա եղեր Մանուշակ անուն փոքր աղջնակ մը...»:

Շամտանեյան, 52, «Հաշմատյան...», 85:

Աքսորավայրում վարուժանը շարունակում է ստեղծագործել:



Արաքսի Վարուժանի վկայությունից. «Աքսորի շրջանին Վարուժանեն ստացած եմ թուրքերեն գրված բացիկներ: Ուզած էր Հոմերոսի «Իլիականը», զոր դրված էի իրեն: Գիտեմ, որ հոն իսկ կաշխատե՞ր ու կը գրե՞ր»:

Արամ Անտոնյանի հուշերից. «Վարուժան... միակ աշխատողը եղավ մեր մեջ. վեց տետրակ բանաստեղծություն գրած էր արդեն...»: Եվ ապա. «Վարուժան կը սիրեր աշխատել քնկուղենիի շուքին մտերմության մեջ և կը նախընտրեր միշտ առանձին մնալ այնտեղ... Իր առաջին տետրակները՝ լեցուն առավելապես հողին փառարանության, անոր բարեբաշխ արգասավորության և բնության հոյաշեն ստեղծումներուն նվիրված քերթվածներով: «Մշակականներ են» կըսեր, երբ կը հետաքրքրվեինք...»:

Միքայել Շամտանձյանի հուշերից. «Ինքը գլխավորաբար զբաղած էր մշակական բանաստեղծություններ գրելով: Անգամ մը, մեր ամենախոռվահույզ օրերուն, նոր գրած մշակական մեկ քանի հնչյակաները ինձի կարդալի վերջ, չկրցա զարմացումս ու հիացումս միանգամայն հայտնելու իրեն, որ այդքան արհավիրքներու մեջ կրցած էր այնքան ջինջ ու այնքան անապական պահել իր հոգին և ծնունդ տալ այնքան խորունկ հանդարտության բնութենապաշտ բանաստեղծություններու Ան պատասխանեց, թե իր այդ հանդարտամտությունը կը քաղե այն հավատքեն, զոր ունի հայուն ապագային վրա»:

Չանդրըրում գրած Վարուժանի ստեղծագործություններից ոչինչ չի պահպանվել:

«Հուշամատյան...», 85, «Արևմուտե», 1947, թիվ 8, ԳԱԹ, ԴՎՖ, № 342, «Հուշարձան Ապրիլ տասերմեկի», 121:

Ապրիլի 25/8 մայիսի.— Արամ Ինճիճյանը՝ Արաքսի Վարուժանին: Հայտնում է, որ տեսակցել է Պողոս բեյի հետ և թույլտվություն վերցրել Վարուժանի հետ թղթակցելու համար: Պողոս բեյը խորհուրդ է տվել Վարուժանից բռնագրաված գրքերն ու ինքնագրերը ձեռք բերել գումարով:

ԳԱԹ, ԴՎՖ, №181 ր.:

Ապրիլի 26/9 մայիսի.— Չանդրըրի աքսորականներից ութ մարդու (Կոմիտաս, Բյուզանդ Քեչյան, Վահրամ Թորգոմյան և այլք) կառավարության հրամանով արտոնվում է վերադառնալ Կ. Պոլիս: Միքայել

Շամտանձյանը վկայում է. «Աքսորի առաջին շաբաթներուն հույսով լեցված ենք ամենքս ալ նպաստավոր լուրերու կսպասենք Պոլիսեն»:

«Ամենուն տարեցույցը», 1922, 40, 43, Շամտանձյան, 53:

<Մինչև մայիսի 7/20>.— Չանդրըրից՝ Արամ Ինճիճյանին (չի պահպանվել): Խնդրում է դրամ ուղարկել:

ԳԱԹ, ԴՎՖ, № 182:

Մայիսի 7/20.— Չանդրըրից նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել): Տեղեկացնում է իր «հանգիստ ըլլալը»:

ԳԱԹ, ԴՎՖ, 175 ր.:

Նույն օրը.— Արամ Ինճիճյանը՝ Արաքսի Վարուժանին: Մանթապանում է ապրիլի 21-ին Վարուժանից ստացած նամակի բովանդակությանը. հայտնում, որ դրամն ուղարկել է և հույս ունի, որ արդեն «իրեն հասած պիտի ըլլա»: Տեղեկացնում է նաև, որ Վարուժանի խնդրով մայիսի 8-ին հանգիստելու է Պողոս բեյին:

ԳԱԹ, ԴՎՖ, № 182 ր.:

Մայիսի 10.— Դպրոցասեր տիկնանց վարժարանը Արաքսի Վարուժանին վճարում է ամուսնու ապրիլ ամսվա աշխատավարձը:

ԳԱԹ, ԴՎՖ, № 144 ր.:

<Մինչև մայիսի 11/24>.— Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի նախկին խնամակալությունը Արաքսի Վարուժանին խոստանում է մինչև սեպտեմբեր վճարել ամուսնու աշխատավարձը:

Անդ:

<Նույն շրջանում>.— Արաքսի Վարուժանը այցելում է էմին բեյին, խնդրում միջնորդել ազատելու ամուսնուն: էմին բեյը խոստանում է «ձեռքեն եկածը չխնայել»:

Անդ:

<Նույն շրջանում>.— Չանդրըրից վերադարձած աքսորականնե-



րը (տե՛ս ապրիլի 26/9 մայիսի գրառումը) Արաքսի վարուժանին հավաստում են, որ նրա ամուսինը առողջ է:

Անդ:

<Նույն շրջանում>.— Չանդրբրից նամակներ՝ Արաքսի վարուժանին (Կ. Պոլիս), Գրիգոր և Թագուհի Չպուգբյարյաններին (Բրզնիկ) և Միրիճան Թաշճյանին (չեն պահպանվել): Կնոջը հայտնել է թե «ինքը շատ հանգիստ ու առողջ է եղեր... Քանի մը ընկերներով սենյակներ վարձեր են ու տուններու մեջ կը բնակին...»:

Անդ:

Մայիսի 11.— Արաքսի վարուժանը՝ Միրիճան Թաշճյանին: Հայտնում է, որ այսօր այցելելու է Զարուհի Գալեմբերյանին՝ վարուժանի ազատման մասին տեղեկություններ իմանալու:

Անդ:

<Մինչև մայիսի 15>.— Չանդրբրից նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել): Հավաստում է, որ հանգիստ է և «մոտ օրեն կը վերադառնա»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 176:

Մայիսի 15.— Միրիճան Թաշճյանը Սերաստիայից՝ Արաքսի Թաշճյանին: Տեղյակ է պահում վարուժանից ստացած նամակի բովանդակությունը:

Անդ:

Մայիսի 17.— Գասթեմունիից թուրքերեն հեռագիր՝ Արա Քավառոզյանին: Հայտնում է, որ հանգիստ է:

Վարուժանը Գասթեմունիիում չի եղել, հավանաբար տրված է այլ անձի միջոցով:

ԳԱԹ, ԴՎՅ, № 53 լր.:

<Մինչև մայիսի 27/9 հունիսի>.— Չանդրբրից նամակ՝ Միրիճան Թաշճյանին (չի պահպանվել): Տեղեկացնում է, որ հանգիստ է, ստանում է կնոջ ու հարազատների նամակները, հույս է հայտնում, որ «մոտ օրեն» կվերադառնա:

ԳԱԹ, ԴՎՅ, № 177 լր.:

Մայիսի 27/9 հունիսի.— Միրիճան Թաշճյանը Սերաստիայից՝ Արաքսի վարուժանին: Տեղյակ է պահում վարուժանից ստացած նամակի բովանդակությունը:

Անդ:

<Մինչև մայիսի 28/10 հունիսի>.— Չանդրբրից նամակ՝ Գրիգոր Չպուգբյարյանին (չի պահպանվել): Հայտնում է, որ լավ է զգում:

ԳԱԹ, ԴՎՅ, № 187 լր.:

Մայիսի 28/10 հունիսի.— Գրիգոր Չպուգբյարյանը Բրզնիկից՝ Արաքսի վարուժանին: Մանրթացնում է վարուժանից ստացած նամակի բովանդակությունը:

Անդ:

<Մինչև հուլիսի 1>.— Չանդրբրից նամակ՝ «Նոր դպրոցի» տնօրեններ Հովհաննես Հինդլյանին և Գալուստ Մալթայանին (չի պահպանվել): Խնդրում է իր աշխատավարձը:

ԳԱԹ, ԴՎՅ, № 178:

Հուլիսի 1.— Հովհաննես Հինդլյանը և Գալուստ Մալթայանը՝ վարուժանին: Հայտնում են, որ հնարավորություն դեպքում կվճարեն իր հասանելիք աշխատավարձը:

Անդ:

Հուլիսի 7.— Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վազենհեյմը կանցլեր Բեսուման Հոլվեզին տեղեկացնում է, որ իրագործվում է «թուրքական պետության մեջ հայ ազգի ոչնչացման նպատակը»:

ՀՍՀ, հ. 7, 430:

Հուլիսի 17/30.— Չանդրբրից թուրքերեն հեռագիր՝ Արամ Ինճիճյանին: Հայտնում է, որ անհանգիստ է ընտանիքից տեղեկություն չունենալու պատճառով, խնդրում է լուր ուղարկել:

ԳԱԹ, ԴՎՅ, № 48 լր.:

Հուլիսի 18/31.— Արամ Ինճիճյանը Կ. Պոլսից՝ վարուժանին, հա-



յերեն ու թուրքերեն հեռագրեր: Հայտնում է, որ սպասում է նրա հեռագրերին:

ԳԱԹ, ԴՎՅ, 53 ր.:

Նույն օրը.— Չանդրբրի ոստիկանապետի հրամանով աքսորականները հավաքվում են կառավարչատան առաջ: Կարգացվում է 56 մարդու անուն, որոնց անմիջապես նստեցնում են կառքերը ու էնկյուրի (Անկաբա) փոխադրելու անվան տակ քշում Դեյր-էզ-Չոր (Տեր-Չոր):

Պալաքյան, 106—108:

Հուլիսի 19/1 օգոստոսի.— Արաքսի Վարուժանը՝ Միրիճան Թաշճյանին: Հայտնում է, թե ամուսնու «քովեն եկողներ եղան, վիճակը լավ է, հույս ունիմ, թե ան ալ շնորհիվ արդարության մոտ օրեն կը վերագառնա»:

ԳԱԹ, ԴՎՅ, № 145 ր.:

<Սօգոստոսի սկիզբ>.— Չանդրբրի պաշտոնատար անձինք աքսորականներից կազմում են ևս 26 մարդուց կազմված մի կարավան և ուղարկում էնկյուրի, ուր կազմակերպվում է նրանց սպանությունը:

Պալաքյան, 143:

Սօգոստոսի 7.— Չանդրբրից՝ Արաքսի Թաշճյանին թուրքերեն հեռագիր: Խնդրում է դիմել ներքին գործերի մինիստրությունը և պատասխանը հեռագրով հաղորդել իրեն:

ԳԱԹ, ԴՎՅ, № 43 ր.:

<Մինչև օգոստոսի 10>.— Ռուբեն Սևակին հայտնի է դառնում, որ որոշված է հաշվեհարկար տեսնել Չանդրբրիում մնացած աքսորականների հետ: Տեղի իթթիհատականներից մեկը՝ Իսմայիլը Սևակին սպառնում է. «Ինձի նայե... ձեզ ամենքդ Թյունեյի մեջ պիտի սպանենք»:

«Հայաստանի կոչնակ», 1922, թիվ 1, 11, թիվ 3, 77:

Սօգոստոսի 10.— Աքսորականներին կանչում են կառավարչատուն, ուր Չանդրբրի ոստականապետը կարդում է Կ. Պոլսից հրավիրված մի

անվանացանկ, պաշտոնապես հայտնելով, թե նրանց ներում է շնորհված և ազատ են մայրաքաղաքից բացի Թուրքիայի ցանկացած վայրը մեկնել:

Հովհան Կարապետյանի հուշերից. «Կարգացված անունները հոն գտնվողներու համեմատ երեսունհինգ էին թվով, բայց հինգ անունի սխալով մը կը հիշատակվեին նախապես Պոլիս վերադարձված ընկերները, մինչ մեր մեջեն բացը կը մնային Դանիել Վարուժան, տղթ. Ռուբեն Զիլինկիրյան Վահան Քեհայան, Օննիկ Մաղազաճյան և Հարություն անուն հացագործ մը: Իսկույն խնդրեցինք ոստիկանապետեն, որպեսզի բարեհաճի թյուրիմացությունը հարթել՝ հարկ եղածը Պոլիս տեղեկագրելով: Վստահ էինք, թե վերոհիշյալ հինգն ալ պիտի կարենային ազատիլ մեզի հետ»:

«Հայաստանի կոչնակ», 1922, թիվ 3, 76: Տե՛ս նաև Պալաքյան, 143, «Հուշարձան ապրիլ տասնըմեկի», 117:

<Մինչև օգոստոսի 12/25>.— Վարուժանը, Ռուբեն Սևակը, Օննիկ Մաղազաճյանը, Վահան Քեհայանը և հացագործ Հարությունը (Արթին աղա) հեռագրեր են տալիս Կ. Պոլիս՝ ընտանիքներին և ներքին գործերի մինիստրությանը՝ խնդրելով իրենց էլ ազատել մնացած աքսորականների նման: Արամ Անտոնյանը վկայում է. «Զոհերը Պոլսեն հեռագրի կսպասեին Պոլիս վերադառնալու համար: Հեռագիրը եկած էր զոհերը ճամբու չհանված, բայց Օղուզ գաղտնի պահած էր զայն, որպեսզի գլուխ հանե ոճիրը»:

«Հուշարձան ապրիլ տասնըմեկի», 118, ԳԱԹ, ԴՎՅ, № 342:

Չանդրբրի ոստիկանապետի նախաձեռնությամբ Կ. Պոլսից ստացվում է նոր հրահանգ, որը պարտադրում է Վարուժանին, Ռուբեն Սևակին և նրանց երեք ընկերներին էնկյուրիի ճանապարհով տեղափոխել Այաշ:

«Հայաստանի կոչնակ», 1922, թիվ 3, 76, «Հուշարձան ապրիլ տասնըմեկի», 118, Պալաքյան, 143:

Վարուժանը, Ռուբեն Սևակը և նրանց երեք ընկերները դիմում են մյուս աքսորականներին՝ խնդրելով միջոց գտնել «ղիրենք փրկելու էնկյուրիի ճամփով Այաշ փոխադրելու պետական կարգադրութենեն»:



Գրիգորիս Պալաքյանը և Տիրան Քելեկյանը այցելում են Չանդըրբի փոխ-կառավարիչ Մեհմեդ Իզզեթ բեյին:

Գ. Պալաքյանի հուշերից. «Երբ կը խնդրեինք, որ գոնե մեր 5 ընկերներուն անմիջական մեկնումը հետաձգել տալ, մինչև որ կարելի ըլլար Այաշ տեղափոխելու հրամանը փոխել տալ, պատասխանեց. «Ես չեմ կրնար շարժադրել Պոլսեն եկած հրաման մը, սակայն վստահ եղեք և զավակներուս վրա կերդնում, որ ամեն կարգադրութուն ըրած եմ, որպեսզի ապահով էնկյուրի հասնին այս ձեր 5 ընկերները»:

Պալաքյան, 145:

Վարուժանի մասին Լևոն էսաճանյանի հայթայթած տեղեկութուններից. «Իդուր կըսեին արտոբախտները.

— Ապահով եղիր, որ անվտանգ որոշած տեղը պիտի հասնիս.

— Դուր ալ ապահով եղեք, որ ազգիս ճակատագիրը երազելով պիտի մեռնիմ»:

Լ. էսաճանյան, Գանիել Վարուժան, 4. Պ., 1919, 5:

Ռուբեն Սևակին հաշողվում է հետաձգել իրենց մեկնման օրը:

Միքայել Շամտանճյանի հուշերից. «Սևակ, օգտվելով կառավարչի փոխանորդին հետ ունեցած իր մտերմական հարաբերություններից, իրենց մեկնումի օրը երկու-երեք անգամ հետաձգել տվա՛վ՝ եղած դիմումներու վրա Պոլսեն գալիք պատասխանի մը սպասելով: Ոչ մեկ պատասխան»:

«Հուշարձան ապրիլ տասներմեկի», 118:

Սզոստոսի 12/25.— Չանդըրբի ոստիկանական զորքերի հրամանատար Նուրեղզինի, ոստիկանապետի և իթթիհատական կոմիտեի հանձնարարությամբ Թյունեյ է գալիս Իսմայիլը և մերձակա քրդական գյուղից հավաքագրում մի քանի հրոսակի՝ Հալոյի (Ալո) ղեկավարությամբ: Տրվում է Վարուժանին, Ռուբեն Սևակին և մյուս երեք ընկերներին ըսպանելու առաջադրանք, ընտրվում է «բուն վայրը, ուր ոճիրը պետք է գործադրվեր»:

«Հայաստանի կոշեակ», 1922, թիվ 3, 77: «Հուշարձան ապրիլ տասներմեկի», 119:

Նույն օրը երեկոյան.— Ավազակապետ Հալոն՝ ժամանում է Չանդըրբ, այցելում իթթիհատական կոմիտեի պատասխանատու քարտուղար Օղուզին:

«Հայկաշեն տարեգիրք», 1922:

Սզոստոսի 13/26.— Արևածագից առաջ.— Կառապան Հասանին հրամայվում է ներկայանալ նշանակված վայրը և անցնել «ոստիկանության տրամադրության տակ»:

Անդ:

Նույն օրը, լուսադեմին.— Վարուժանը, Ռուբեն Սևակը, Վահան Քեհայանը, Օննիկ Մաղազաճյանը և հացագործ Հարությունը գալիս են Չանդըրբի կամրջի մոտ՝ ճանապարհովելու Այաշ: Հրաժեշտ են տալիս տեղում մնացող ընկերներին:

Գրիգորիս Պալաքյանի հուշերից. «Կըսեին մեզի. «Մնաք բարով... Մենք մեռնելու կերթանք, հայ սուրբեր, աղոթեցեք մեզի համար...»: Եվ եզր տարաբախտ Վարուժան ու Սևակ դառնալով կըսեին մեզի, թե «Մեր որբերուն տեր եղեք...» և երբ Վարուժան ի մասնավորի կըսեր, թե «Նոր զավակ մը ունեցած եմ, թող անունը Վարուժան դնեն...», ալ մեր ամենքեին հուզումը շափ ու սահման չունեի...»:

Պալաքյան, 146:

Վարուժանին Ռուբեն Սևակի և մյուս երեք արտոբախանների հետ նստեցնում են նախապես կանչված Հասանի կառքը, իսկ ոստիկանական պաշտոնյա Սուլեյմանը ու մի ոստիկան-զինվոր տեղավորվում են երկրորդ կառքում: Կառքերը շարժվում են Չանդըրբ-Գալաջճըղ-էնկյուրի ճանապարհով Թյունեյ բնակավայրի ուղղությամբ:

Չանդըրբի իթթիհատական կոմիտեի պատասխանատու քարտուղար Օղուզը (Նոնու) հեռախոսով ոստիկանական պահականոցներին իմաց է տալիս կառքերի մեկնման մասին:

Պալաքյան, 146, «Հայկաշեն տարեգիրք», 320:

Նույն օրը, 5—6 ժամ հետո.— Թյունեյի զառկվայրին շհասած, Գալաջճղի սարավանդի մոտ, Թեքն Պուրնուլի բարձունքի վրա դարանակուլած քրդերը Հալոյի ղեկավարությամբ կանգնեցնում են կառքերը, Վա-



րուծանին, Ռուբեն Սևակին, Վահան Քեհայանին, Օննիկ Մաղազաճյանին և հացագործ Հարությունին իջեցնում:

Կառապան Հասանի վկայությունից. «Այս մարդիկը... կառքեն վար իջեցուցին հինգ աքտորականները, որոնց հրամայեցին իրենց ունեցած դրամները հանձնել: Եվ որովհետև ձեռքներին կապված էր, զանոնք խուզարկելու գործը ստանձնեցին ոստիկանները, որոնք անոնցմե կողոպտեցին ինչ որ ունեին՝ դրամ, զանազան առարկաներ, սիկատնիկ, թղթապանակ, համրիչ: Ոստիկանը քանի մը բառեր փսփսաց շեթեններու պետին ականջին: Կերևա թե վերջինս խնդրեց կողոպուտը իրեն և ոստիկան զինվորին թողուլ: Այս գործողությունն ալ ավարտելեն վերջ ոստիկանը և ոստիկանական զինվորը մյուս կառքը նստելով մեկնեցան: Իմ ձեռքերս ալ քակելով արտոնեցին, որ քաղաք վերադառնամ: Գալով աքտորականներուն, շորս շեթեններու և անոնց պետին կողմե հրամայվեցավ իրենց հետևիլ... Չորամեջը կտրելով անցան մյուս եղբր, ուր փոքր անտառիկ մը բլուրը կը զարդարե: Քիչ մը առաջանալով, անոնց պետը արտասանեց քանի մը բառեր, որոնք չկրցի հասկնալ, ինչու որ ես անոնցմե բավական հեռու էի: Ասկե ետք մարդիկը հարձակեցան էֆենտիներուն վրա, անոնց զգեստները հանեցին և բոլորովին մերկացուցին... Այս խեղճ զոհերը մեկիկ-մեկիկ ծառերուն կապվեցան: Իրենց ձեռքերը կապված ըլլալով, չէին կրնար ինքզինքնին պաշտպանել: Հետո շեթեապետը և իր մարդիկը իրենց զաշույնները մերկացուցին և սկսան դանդաղորեն և հանդարտ կերպով զանոնք մորթոտել...»:

«Հայկաշեն տարեգիրք», 321—322:

Գրիգորիս Պալաքյանի հուշերից. «...Միայն վարուծան անձնապաշտպանություն կը դիմե և իբրև պատիժ ոճրագործներն դանակով դուրս թափելն վերջ փորոտիքը, կը փորեն նաև հայրենասեր բանաստեղծին աչքերը...»:

Պալաքյան, 149—150, տե՛ս նաև «Հայաստանի կոչնակ», 1922, թիվ 3, 77, «Հուշարձան պարիլ տասնամեկի», 118—119, Ս. Զարեվանդ, Անցորդի տպավորություններ, Գանիել Վարուժանի և տորթ. Ռ. Զիլինկիրյանի (Սևակ) գերեզմանները, Նյու Յորք, 1924, 58—60:

Նույն օրը.— Կ. Պոլսում ծնվում է Գանիել Վարուժանի երրորդ զավակը՝ Հայկակը (Հայկ):

«Հուշամատյան...», 83:

Ա Ղ Բ Յ Ո Ւ Ի Ն Ե Բ

1. Ե. ԶԱՐԵՆՏԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Գանիել Վարուժանի ֆոնդ, հիմնական նյութեր—ՄՄ 1—5, 7—9, 12—13, 15—16, 22, 27, 39, 43, 49, 53—54, 62, 64, 67, 81—82, 84ա, 86, 88, 94, 101, 112, 115—116, 119—121ա, 123—128, 130—134, 137—138, 140—150, 155—156, 161, 163—164, 169—172, 174—180, 182—191, 212, 216—217, 218ա, 220—242, 245, 248, 250—254, 256—257, 259—260, 262—264, 266—284, 286—287, 289, 291—292, 294—296, 298—305, 309—312, 314—316, 318—328, 330—334, 336, 339—340, 342, 345—346, 348, 358—360, 368, 389—390, 396, 406, 430, 432, 436—439, 442, 454, 458—459, 466, 475, 481, 483, 489—491: Լրացուցիչ նյութեր—ՄՄ 1, 21, 24, 32, 39, 43—53, 60—64, 67—70, 72, 74—79, 81—83, 85—93, 95—96, 103—112, 115, 117, 119, 131, 144—145, 172, 175—177, 181—183, 187, 207, 263—264, 266—269, 302, 311, 596, 598, 604, 607: Զմշակված նյութեր:

Արշակ Զապալյանի ֆոնդ—ՄՄ 6862, 6864, 6875ա, 6882:

Գարեգին Առնյանի ֆոնդ—ՄՄ 1841, 2370:

Հառափյուն Սուրխարյանի ֆոնդ—ՄՄ 73—74, 154:

Գևորգ Կարպիսյանի հավաքածու:

2. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆԻ ԱՆՁԵՌՆԵՐԵԼԻ ՖՈՒՒԻՆՏԱԳԵՐՈՎ և ընծայագրերով զբեռ

3. ԳՐՔԵՐ

Ազատորդի (Վայնաշարյան Հովսեփ), Ազատության շավիղը, Գահիրե, 1909:

Անայիս (Եվփիմե Ավետիսյան), Հուշերս, Փարիզ, 1949:

Անտոնյան Արամ, Գանձարան, բարձրագույն ընթացք, Կ. Պ., 1912:

Աշխարհի ամենագեղեցիկ գիրքը, հավաքածուք Եվրոպայի և Ասիայի ամենահայտնի մատենագիրների ամենալավ գործերի, կազմեց Արմենակ Արամյան, Ալեքսանդրապոլ, 1906:

Ասատուր Հ. և Զ., Թանգարան հատընտիր հատվածներու արձակ և ոտանավոր, բարձրագույն դասընթացք, Բ տպագրություն, Կ. Պ., 1911:

Գալսեմբեյան Զարուհի (Եվտերպե), Կյանքիս ճամբեն, Անթիլիաս, 1952:

Գրական ասուլիսներ, Ա, Շանթի «Հին Աստվածները», Կ. Պ., 1913:

Գրական ասուլիսներ, Գ, Գ. Վարուժանի «Հեթանոս երգերը», Կ. Պ., 1913:

Գրական ասուլիսներ, Զ, Ասոմ Յարճանյան (Սիամանթո), Կ. Պ., [1913]:



Գևորգյան Կարո, Ամենուն տարեգրքը, Պեյրուֆ, 1959:  
 Գիցավան, գիրք Ա, խմբագրեց Հ. Մ. Պոստոյան, Պուրբեշ, 1923:  
 Զարգարյան Ռ., Մեղրագետ, ժողովածու հայ և օտար գրականության, արձակ և ոտանավոր, բարձրագույն կարգերու համար, Կ. Պ., 1911:  
 Զարգարյան Ռ., Մեղրագետ, միջին ընթացք, Բ տարի, Կ. Պ., 1913:  
 Զարգարյան Ռ., Մեղրագետ, Ե գիրք (նախակրթարանի վերի երկու կարգերու համար), Կ. Պ., 1914:  
 Զարգարյան Ռ., Մեղրագետ, Զ գիրք (բարձրագույն կարգերու համար), Կ. Պ., 1914:  
 Զարեանց Ս., Անցորդի տպավորություններ. Դանիել Վարուժանի և տորթ. Ռ. Զինկիլիբյանի (Սեակ) գերեզմանները, Նյու Յորք, 1924:  
 Էսանանյան Առն, Դանիել Վարուժան (կյանքն և իր գործը), [Կ. Պ.], 1919:  
 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պ., 1909—1922, 1928:  
 Կիսակոչյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երեւան, 1967:  
 Կիսիցյան Ստ., Քումանյան Հովհ. և Շանք Լ., Լուսաբեր, հինգերորդ տարի, Քիֆլիս, 1914:  
 Լայ գրողներ, Բ, կազմեցին Ղ. Աղայան, Հովհ. Թումանյան, Վ. Փափազյան, Քիֆլիս, 1910:  
 Լայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ VI, Երևան, 1981:  
 Լայկական սովետական հանրազոտարան, հ. հ. 1,3, 6—7, Երևան, 1974, 1977, 1980, 1981:  
 Լինդլյան Վ. Խ., «Նոր դպրոց», 50 տարվա կյանք մը, Իսթանպուլ, 1959:  
 Լիշատակ երկհարյուրամյա հոբելիսի Միխրայան միարանություն ի վեներիկ. Տ սեպտ. 1701—1901 սեպտ. 8, Վենետիկ, 1901:  
 Լուչամալյան Դանիել Վարուժանի, [Փարիզ], 1958:  
 Լուչարձան ապրիլ տասնըմեկի, Կ. Պ., 1919:  
 Նիգմենյան Կեռեմիկ, Դանիել Վարուժան, դպրոցական կյանքը, անտիպ նամակները, գրականությունը, Գահիրե, 1955:  
 Շամտանյան Միքայել, Լայ մտքին հարկը եղեռնին, արսորականի մտածումներ և զգացողություններ, Կ. Պ., 1919:  
 Պալախյան Գրիգորիս, Լայ Գողգոթան, զրվազներ հայ մարտիրոսագրություններ, Պոլիսեն զեպի Տեր-Զոր, 1914—1920, Ա հատոր, Վրեննա, 1922:  
 Պատմագիրք հուլամալյան Սեբաստիո և զավտին հայության, հ. Ա, կազմեց Առաքել Ն. Պատրիկ, Պեյրուֆ, 1974:  
 Պատրիկ Առաքել, Դանիել Վարուժան իմ հուշերում, Բ տպագրություն, Պեյրուֆ, 1968:  
 Պաղպալյան Եփրեմ, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վրեննա, 1957:  
 Պողոսյան Հովհաննես, Լին օրերու հուշեր, Ուոթթաուն, Մես., Միացյալ Նահանգներ, 1972:  
 Սահակ-Մեւրոպ, Գավառի տարեցույցը (Ցեղին կյանքին թերթերը), 1910, Կ. Պ. 1911:  
 Սահակ-Մեւրոպ, Լայրենի տարեցույց (Ցեղին կյանքին թերթերը), 1911, Կ. Պ., 1912:  
 Սահակ-Մեւրոպ, Լայուն տարեցույցը, 1913, Կ. Պ., 1914:

Սգազակ Փիեռ Քիլյառի հիշատակին, ժահվան տարեդարձին առիթով, 1912—1913, Կ. Պ., 1913:  
 Սիրունի Հ. Ն., Դանիել Վարուժան, Պուրբեշ, 1940:  
 Վարուժան Դանիել, Բանաստեղծություններ, Երևան, 1955:  
 Վարուժան Դանիել, Լացին երգը, Կ. Պ., 1921:  
 Վարուժան Դանիել, Լեթանոս երգեր, Կ. Պ., [1913]:  
 Վարուժան Դանիել, Զարգը (1895—1896), Փարիզ, 1908:  
 Վարուժան Դանիել, Սարսուռներ, քնարական բանաստեղծությունը, Վենետիկ, 1906:  
 Վարուժան Դանիել, Տրտունջը, սիլիա Տեմիրճիպալյանին, Սեբաստիա, 1911:  
 Վարուժան Դանիել, Ցեղին սիրտը, քերթվածներ, Կ. Պ., [1910]:  
 Վեցամյակ էսայան սանուց միության, 1908—1914, Կ. Պ., 1914:  
 Տերյան Վահան, Երկերի ժողովածու շորս հատորով, հատոր երրորդ, Երևան, 1975:  
 Փափազյան Վահրամ, Երկեր, հատոր առաջին, Երևան, 1979:  
 Փափազյան Վերանես, Պատմություն հայոց գրականության, սկզբից մինչև մեր օրերը, Քիֆլիս, 1910:  
 Քառասուն տարվան աշխատավորը, Սկրտիլ Փորթազալյան, հարգանքի պակ, Կ. Պ., 1914:  
 Օշական, Գրական ժողովածու, Կ. Պ., 1914:  
 Օշական Հ., Համապատկեր արևմտահայ գրականության, վեցերորդ հատոր, Պեյրուֆ, 1968:  
 Օսյան Նովանդ, Մանանա, Կ. Պ., 1913:

4. ՀՈՒՎԱՍՆԵՐ, ՀՈՒՇՆԵՐ

Աբրահամյան Հակոբ, Ինչպե՞ս հրապարակվեցավ «Նավասարդ» տարեգիրքը, «Հատաշ», 1966, թիվ 9337: Տե՛ս նաև ԳԱԹ, ԴՎՅ, № 389:  
 Ազնավուրյան Գոհար, Անհայտ էջեր Դանիել Վարուժանի ժառանգությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 3:  
 Ազնավուրյան Գոհար, Դանիել Վարուժանի նորահայտ նամակներից, «Սովետական գրականություն», 1977, № 6:  
 Ազնավուրյան Գոհար, Վարուժանագիտության նորահայտ վավերագրեր, «Գրական թերթ», 1975, № 50:  
 Անտոնյան Արամ, Կոմիտաս վարդ.[ապետ] արսորին մեջ, «Արևմուտք», 1946, թիվ 5—6, 1947, թիվ 7—27:  
 Բեակունի Սկրտիլ, Հիշատակներ Դանիել Վարուժանի կյանքին, «Շանթ», 1918, թիվ 6:  
 Գազանյան Թադևոսի, [Լուշեր], ԳԱԹ, ԴՎՅ, № 345:  
 Երևանյան Սիմոն, Դանիել Վարուժան, «Բազմավեպ», 1931, թիվ 9—10:  
 Երեմյան Սիմոն, Դանիել Վարուժան (ինքնակենսագիր), «Բազմավեպ», 1931, թիվ 11:  
 Զարգարյան Լուչ, Դանիել Վարուժան, «Լուսաղբյուր», 1954, թիվ 26—27: Տե՛ս նաև ԳԱԹ, ԴՎՅ, № 406:  
 էջեր Վ. Բյուրատի հուշերեն, «Բազմավեպ», 1965, թիվ 4—7:  
 Էփեռնյան Վեռմին, Լանդիպոմս Դանիել Վարուժանի հետ, ԳԱԹ, ԴՎՅ, № 346:  
 Ի հիշատակ դարադարձի Մուրադ-Ռափայելյան վարժարանաց, «Բազմավեպ», 1936, թիվ 8—12:  
 Լանիս Առն, Հովերգության մը պակումը, Կարո Գևորգյան, Ամենուն տարեգրքը, 1959:



Կառապանի մը պատմությունը, «Հայկաշեն տարեգիրք», 1922:  
 Կարապետյան Գ. Լ., Դանիել Վարուժանի անտիպ նամակներից, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 4:  
 Կարապետյան Հովհան, էջ մը արտերական հիշատակներես, «Հայաստանի կոչնակ», 1922, թիվ 1, 3:  
 Կիրակոսյան Գ., Անձուաց հուշեր Դանիել Վարուժանի, «Պայքար», 1973, թիվ 75—77:  
 Կոբկոսյան Լուսին, Տարի մը Վարուժանի հետ, «Փյունիկ», 1920, թիվ V:  
 Հովակիմյան Արտաշես, Դանիել Վարուժանի եվզողի մեջ, «Հուսարեր», 1957, թիվ 83:  
 Մավիսազյան Շաֆե, Խոստացա կատարել իր կամքը, «Բազին», 1967, թիվ 4:  
 Մոսկոֆյան Հ. Կ., Դանիել Վարուժանի ինչպես որ գիտելի, «Պայքար», 1954, թիվ 207:  
 Շամուսենյան Միխայել, Իթիֆհատի հայաչինջ նոպան, «Շանթ», 1918, թիվ 5, 7, 1919, թիվ 9—15:  
 Շամուսենյան Միխայել, Զանդերեն վերհիշումներ, «Հուշարձան արվել տասնըմեկի», Կ. Պ., Պարտիզյան Մկրտիչ, Իմ հուշերը, ԳԱԹ, ԳՎՅ, № 348:  
 Պողոսյան Եփրեմ, Դանիել Վարուժանի արձակ գրականություն մշակած է, «Հառաջ», 1962, թիվ 9453: Տե՛ս նաև ԳԱԹ, ԳՎՅ, № 390:  
 Պոտուրյան Մկրտիչ, Գ. Վարուժանի, «Դիցավան», գիրք Ա:  
 Պոտուրյան Մկրտիչ, Դանիել Վարուժանի, «Էջմիածին», 1958, Ը:  
 Սաֆրասայան Արամ, Հանդիպում Դանիել Վարուժանի հետ, «Արեգակ», 1966, թիվ 25:  
 Տիկին Արիկյանի հուշերեն, ԳԱԹ, ԳՎՅ, № 340:  
 Տեր-Մաքսուսյան Վահանուհի, Դանիել Վարուժանի, «Սովետական գրականություն», 1971, № 8:  
 Փիրանյան Տիգրան, Դանիել Վարուժանի սերն ու ամուսնությունը, «Տեղեկագիր», 1979, թիվ 12—13:  
 Փոքուրյան Վահրամ, Դանիել Վարուժանի, «Հառաջ», 1937, թիվ 3376:

5. Պ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ա Լ Ե Ն Ե Ի Բ

«Ազատամարտ», օրագիր, Կ. Պ., 1909—1914:  
 «Ազատամարտ», շաբաթաթերթ-հավելված գրական, գեղարվեստական և գիտական, Կ. Պ., 1910—1911:  
 «Ազդակ», շաբաթաթերթ գրական, հասարակական, բաղաբական, Կ. Պ., 1909:  
 «Ամսօրյա տեղեկատու», ամսօրյա տեղեկատու Մուրատ-Ռափայելյան նախկին աշակերտաց միության, Կ. Պ., 1912—1914:  
 «Անահիտ», հանդես ամսյա, ազգային, գրական, գեղարվեստական, Բարիզ, 1905—1909, 1911:  
 «Անդրանիկ», գավառական լրագիր, շաբաթաթերթ ազգային, բաղաբական, գրական, տնտեսական, երկրագործական, բանասիրական, առևտրական, Սևրաստիա, 1909—1910:  
 «Ապառաժ», ամսաթերթ, Ամասիա, 1911:  
 «Ասավոտին» տարեգիրք, Կ. Պ., 1921:  
 «Ասպարեզ», շաբաթաթերթ ազգային, ուսումնական, բարոյական և բաղաբական, Ֆրեզ-նո, Բալիֆորնիա, 1910:  
 «Արեգակ», ամսաթերթ, Լոնտոն, 1966:

«Արևել», օրաթերթ ազգային, Կ. Պ., 1910:  
 «Արևմուտք», ազգային, գրական անկախ շաբաթաթերթ, Փարիզ, 1946—1947:  
 «Բազին», ամսագիր գրականության և արվեստի, Պելլուսթ, 1967:  
 «Բազմավեպ», հանդես, Վենետիկ, 1902, 1904—1910, 1913, 1931, 1936, 1939, 1941, 1965:  
 «Բամբուկ», շաբաթաթերթ գրական, գիտական, գեղարվեստական, Կ. Պ., 1913:  
 «Բանբեր Երևանի համալսարանի», 1969:  
 «Բյուզանդիոն», աղատական հայաթերթ ամենօրյա, Կ. Պ., 1908—1914:  
 «Բյուրանիա», գավառաթերթ ազգային, գրական, բաղաբական, տնտեսական, տասնօրյա, Իզմիտ, 1910—1911, 1913:  
 «Կեղարվեստ», գրական, գեղարվեստական, երաժշտական պատկերազարդ հանդես, Թիֆլիս, 1908—1909, 1911—1913:  
 «Կեղուհի», պատկերազարդ հայաթերթ, Վենետիկ, 1905, 1909:  
 «Կրակուն քերք», Երևան 1975:  
 «Երկունք», հասարակական, գիտական և գրական ամսաթերթ, Կ. Պ., 1912—1914:  
 «Եփրատ», ազգային, գրական և բաղաբական հանդես կիսամսյա, Խարբերդ, 1910:  
 «Էջմիածին», հանդես, էջմիածին, 1958:  
 «Ժամանակ», ժողովրդական օրաթերթ, Կ. Պ., 1912—1913, 1958:  
 «Իրիս», շաբաթաթերթ (1911-ից կիսամսյա), գավառաթերթ հայ առաջադիմական ակումբի եվզողի, եվզողի, 1911—1912:  
 «Լուսաբեր», լրագիր ազգային, բաղաբական, տնտեսական և գրական, Գահիրե, 1905:  
 «Լուսաբարձ», ամսագիր, գրական գեղարվեստական, գիտական, Փարիզ, 1954:  
 «Կարողիկն արձագանգ», կրոնական, գիտական և տեղեկագրական շաբաթաթերթ հայ կաթողիկե պատրիարքարանի, Կ. Պ., 1912—1913:  
 «Կյանք և արվեստ», տարեգիրք, Փարիզ, 1934:  
 «Հայ գրականություն», հանդես ամսօրյա գրական, գիտական և գեղարվեստական, Իզմիտ, 1911—1914:  
 «Հայաստանի կոչնակ», շաբաթաթերթ բաղաբական, տնտեսական, գրական, գեղարվեստական, նյու Յորք, 1922:  
 «Հայկաշեն տարեգիրք», Կ. Պ., 1922:  
 «Հայրենիք», շաբաթաթերթ, Պոսթըն, 1908:  
 «Հայրենիք», օրագիր, Կ. Պ., 1909:  
 «Հառաջ», լրագիր, Փարիզ, 1937, 1962:  
 «Հեռավայն», օրագիր ազգային, գրական և բաղաբական, Կ. Պ., 1913:  
 «Հողադ», շաբաթաթերթ, Սերաստիա, 1910—1912:  
 «Հովիտ», ազգային, հասարակական, գրական շաբաթաթերթ, Թիֆլիս, 1914:  
 «Հորիզոն», հասարակական, գրական և բաղաբական օրաթերթ, Թիֆլիս, 1910, 1912—1914:  
 «Հուսարեր», օրաթերթ, Գահիրե, 1957:  
 «Ջան Եայրենյազ», շաբաթաթերթ բաղաբական և գրական, Կ. Պ., 1910:  
 «Ճակատամարտ» օրագիր, Կ. Պ., 1921:  
 «Մենյան», հանդես գրականության և արվեստի, Կ. Պ., 1914:



- «Մեր տարեցույցը», Կ. Պ., 1911:
- «Մշակ», օրաթերթ, Թիֆլիս, 1910, 1912—1914:
- «Նավասարդ», գրական և գեղարվեստական տարեգիրք, Ա հատոր, կազմեցին Գանինի Վարուժան և Հ. Ճ. Սիրունի, Կ. Պ., [1913]:
- «Նավասարդ», պարբերական գրականության և արվեստի, Պուրբիշ, 1924—1925:
- «Շանթ», կիսամսյա հանդես գրական և գեղարվեստական, պատկերազարդ, Կ. Պ., 1911—1915, 1918—1919:
- «Շիրակ», գրական և ընկերական ամսաթերթ, Աղեքսանդրիա, Գահիրե, 1905—1906:
- «Շոք», ժողովրդական-ուսանողական կիսամսյա հանդես, Կ. Պ., 1913:
- «Ստան», եռամսյա մեծ պարբերագիր արվեստներու, գրականության և գիտության, Կ. Պ., 1911—1912:
- «Պայլաբ», օրաթերթ, Պոսդոն, 1957, 1973:
- «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1977:
- «Ռազմիկ», լրագիր ազգային, գիտական և քաղաքական, Ֆիլիպս, 1906—1909:
- «Սասուն», պատկերազարդ ամսաթերթ գրական, բանասիրական, մանկավարժական և քաղաքական, Կ. Պ., 1909:
- «Սովետական գրականություն», հանդես, Երևան, 1971, 1977:
- «Սուրբ Հակոբ», տեղեկատու հայ կաթողիկե հաստատությանց, Իսթանպուլ, 1958:
- «Վերածնունդ», ամսաթերթ, Կ. Պ., 1912:
- «Տանաք», ժողովրդային շարաթափերթ կրոնական, ազգային, գրական, Կ. Պ., 1911:
- «Տեղեկատու», ազգային, հասարակական, քաղաքական, գրական շարաթափերթ, Նյու Յորք, 1979:
- «Փերակ», կիսամսյա հանդես գրական, գավառական, հասարակական, Տրապիզոն, 1910—1911:
- «Փերակ», ամսօրյա պատկերազարդ հանդես դպրոցներու հատուկ, հրատարակություն Նիկողոսյան աղջկանց բարձրագույն վարժարանի, Կ. Պ., 1914:
- «Փյունիկ», գրական, գեղարվեստական ամսաթերթ, Պոսդոն, 1920:
- «Քնարիկ», հանդես կիսամսյա, դպրոցական, գրական (խմորատիպ), Վենետիկ, 1908:

ԴԱՆԻՆԸ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(այբբենական ցանկ)

- Աղոնիսի մը 140, 173, 200
- <Ալիշանի և Պեշիկթաշլյան> (բանա-խոսություն) 220
- Ալիշանի շիրմին առջև 24, 33—35, 38—39, 140, 155
- Ալպուխարա (գեղուն) (թարգմ.) 146, 232
- Ականջներուն 157, 196, 200
- Ակնարկ մը գրական դպրոցներու վրա 194
- Ակութը 218, 220
- Աղբյուրը լույսին—տե՛ս Լույսը
- Աղերս 233
- Աղբրիք 234, 236
- Աղբատը 22
- Ամբարներ 236
- Այգերդ—տե՛ս Երգ («Այսպես այդ մ'էր մայիսի») 2
- Այգերդ—տե՛ս Երգ («Ծառի մը տակ, մամուռն ինձ բարձ») 2
- Անահիտ 198, 200
- Անդապահը 218, 236
- Անդաստան 233
- Անի—տե՛ս Անիի ավերակներուն մեջ
- Անիի ավերակներուն մեջ 68, 102, 111, 140, 155, 157
- Անիշխանուհին 188, 200
- Անհավատը 35, 38, 43, 53
- Անհավատ հոգույն գահավիժումը—տե՛ս Անհավատը
- Անհավատություն—տե՛ս Անհավատը
- Անմոռուկ 21
- Անցա հաղար անգամներ 22
- Անցնող տարին 27—28, 38—39, 55
- Ապրիլի 68, 139—140, 155

- Առագաստն ենթ—տե՛ս Պսակման խոհուղեն վերջ
- Առաջին ծիւեր 205, 221, 236
- Առաջին մեղքը 79, 83, 88, 92, 94, 140, 153, 164, 200
- Առ Արշալույս 218
- Առաքյալը 94, 99—100, 104, 140, 155
- Առկայծ ճրագ 169, 171, 200—201, 217, 222
- Առ ցողիկն ի վարդի 16, 22
- Առեանգիրը 56—57, 60, 62, 140, 155,
- Ասպետական կենցաղին—տե՛ս Հարճը
- Աստվածուհին—տե՛ս Նմեսիս
- Աստուծո ասուպը 31, 38—39
- Աստուծո լացը 39, 140, 162, 200
- Ավազանին ձուկերուն 28, 38—39, 53
- Ավերակներու տիկինը 119—120, 155
- Արծիվներու կարավանը 47, 62, 140, 155
- <Արձակ ձոն> 16
- Արձան—տե՛ս Նմեսիս
- Արմենուհին 98, 100—101, 104, 110, 112—113, 128—129, 142, 155
- Արյան հաղթանակ 123, 136, 140, 155
- Արյունոտ ճյուղը 31, 38—39, 53
- Արտերուն հրավերը 198, 220
- Արտին մեջ (կրկներգ)—տե՛ս Հուճճ կը ժողվեմ
- Արքայից արքան 228
- Արեւիյան բաղանիք 184, 188, 200
- Բանաստեղծի մահը (Հ. Ալիշանի հիշատակին)—տե՛ս Ալիշանի շիրմին առջև



Բանաստեղծ-Նահապետի շիրմին առջև—  
տե՛ս Այվյանի շիրմին առջև  
<Բանաստեղծությունների ժողովածու>  
42—43  
Բանվորուհին 181, 200  
Բառ մը 22  
Բարիկենդանի վերջին իրիկունն (Թարգմ.)  
18  
Բարձունքն ի վեր—տե՛ս Բեգաս  
Բարտինները 222  
Բեգաս 168—169, 200  
Բերեք անկե ծաղիկներ—տե՛ս Ասաշին  
ծիվն  
Բժիշկը—տե՛ս Հայ բժիշկը

Գաղափարի ասպետը 205  
Գարնան անձրև 236  
Գարնան երեկոները Մոտայի մեջ 22  
Գարնան ժամեր (Թարգմ.) 218  
Գեղեցկության արձանը—տե՛ս Գեղեցկա-  
րյան արձանին  
Գեղեցկության արձանին 176—177, 200  
Գեղոն—տե՛ս Վանատուր  
Գեղոն Ալիսին 233  
Գերեզմանատան մեջ 20, 22  
Գերմանները և Ուլֆիաս 76  
Գինարբուքեն վերջ 195, 200  
Գիրքերուն մեջ 129, 140, 146, 200  
Գյուղիս դպրոցը 32  
Գրգանք 165, 200  
Գութ 27, 38—39  
Գուռը 236

Դադար 180—181, 200  
Դալար ճյուղը 218  
<Դամբանական> 217  
Դաշտերու տղան 37—39, 45—46, 140,  
183, 200  
Դաստիարակ 36, 38, 52  
Դարձ 212  
Դափնե վարդ 21  
Դեռ կանուխ... 44, 49, 140  
Դերենիկը 69, 140, 155

Դիակի սայլը 111—112, 140, 150, 155,  
161  
Դյուցազնի մը սուրին 141, 155, 171  
Դրվագ մը ճամբորդի հուշերես (Վենե-  
տիկեն Աթենք) 177

Երկիր Տոնել 11, 35, 37, 41, 155  
Եղբայրներու և քույրերու շիրմին վրա  
22  
Եղբերդ 25  
Ես ինձի 31, 38—39, 140  
Երազ և խոհ 38, 53  
Երգ («Այսպես այդ մ'էր մայիսի») 16,  
38—39  
Երգ («Անմոռուկ ծաղիկ») —տե՛ս Վար-  
դեր  
Երգ («Մտոի մը տակ մամուռն ինձ բարձ») 24, 26, 38—39, 140, 188  
Երգ խոստովանքի 38—39, 140  
Երգ սրկապանի—տե՛ս Պասկման խոս-  
նուրդեն վերջ  
Երեք քույրեր 183, 200  
Երնում 236  
Եփրեմ 191, 200

Է տառը մեր այբբենարանին մեջ 28

Ըղիղներ 176  
Ըմբոստանքի շեփոր 140  
Ընդդեմ Աստուծո—տե՛ս Հայնոյություն  
Ընկեցիկը 192, 200

Թատրոնին շուրջը 19  
Թերզյանի խնդիրը տեղվույս մեջ 188  
Թղենիներուն տակ 24, 38—39  
Թիպարտները 146, 155  
Թնդանթիակիրները—տե՛ս Թիպարտեն-  
րը  
Թշվառ լելակ 21  
Թողք մեծնամ 39, 49, 54—55, 140,  
155

Իզձ 22  
Իշիր 36

Ի՞նչ է երջանկությունը 22  
Ինչպես...—տե՛ս Ինչպես որ...  
Ինչպես որ... 31, 38—39  
Ինչո՞ւ... 32, 38—39  
Իրիկնամուտը (Թարգմ.) 218

Լիթվանական գեղոն (Թարգմ.) 213  
Լոզանքեն վերջ 219  
Լվացարարուհին 73, 77—78, 140, 155  
Լուսին 209, 232  
Լույսը 111, 140, 143, 146, 200  
Լքում (Նիրվանայի հորը) 95, 137, 140—  
141, 152, 164, 200

Խարեական սեր—տե՛ս Խարսիկ սեր  
Խարված կույսեր 171, 200  
Խարսիկ սեր (սիրերդ) 19, 22, 38—39  
Խաչքուռ 236  
Խաչին (արձակ) 30, 39  
Խաչին (չափածո) 30, 38—39, 49, 51  
Խավարկուտ հյուղակն ձայն մը (Ձմեռ)  
32  
Խեղդված միշտար 78, 140, 149, 200  
Խնձոր ծաղիկ (Խնձոր ծաղիկն)—տե՛ս  
Սիրեզ («Ամոթխած լուսին») 28  
Նոստովանանք—Տե՛ս Երգ խոստովա-  
նանքի

Մաղկեփունջ կամ Բրգնիկցիի մը նվագ-  
ները (ժողովածու) 21—23  
Մաղրանկար 47, 140, 186  
Մեր կոռուկը 64, 136—137, 140, 142,  
155, 233  
Մերուկը 30, 38—39  
Միծաղ, գայրույթ 34, 38  
Մնունդ 232

Վալեր 236  
Վալերու գիշեր 236  
Վահաներ 218, 236  
Վամներդ 236  
Վարմիր հողը 60, 65, 72, 79, 140, 155,  
164, 184, 232

Վարտի նամակ 112, 125, 130, 138,  
140, 155, 184  
Վեսոր—տե՛ս Միջօրե  
Վիրիլյան մոխիրներուն 143, 155, 199, 202  
Վղեղատար 172, 185, 200  
Վմաղբ սիրահարը 28  
Վովկասահայ վիրավորը—տե՛ս Վիրավա-  
րը  
Վոլի երթ 45, 62, 75, 79, 84, 140, 155  
Վոռուկը—տե՛ս Մեր կոռուկը  
Վոսածաղիկ 21

Հակինթ 21  
Հաղթողը 122, 137—138, 140, 142,  
155  
Համբույր մը 22  
Հայ ասպետներ—տե՛ս Հարճը  
Հայաստանն ու տերությունը 139  
Հայ բժիշկը 51—52, 54, 56, 61, 66, 68,  
140, 155  
Հայ լեզվի խնդիրը 174  
Հայկակներուն օրոցքը—տե՛ս Հայկակնե-  
րուն օրոցներ  
Հայկակներուն օրրանը 49, 62, 75, 90,  
140, 155  
Հայհոյանք 90, 93—94, 140, 155  
Հայհոյություն—տե՛ս Հայնոյանք  
Հայրենի լեռներ 120, 122—123, 140,  
155, 202  
Հայրենիքի ոգին 86, 90, 92, 140, 155  
Հայր, օրհնե՛ 37—39, 52, 197—198  
Հաշիշ 52  
Հատալանք մը—տե՛ս Մերուկը  
Հառա՛չ—տե՛ս Նպատակին  
Համիկ 21  
Հասուն արտ 223, 236  
Հավատո հանգանակ 223  
Հավերժության սեմին 52  
Հարատուողը—տե՛ս Նպատակին  
Հարմին շիրմիները (Միրզան՝ այցնե-  
լուին) (Թարգմ.) 218  
Հարկիք 198, 236



Հարձը 167, 170, 200, 225, 228, 232,  
 Հացին հրզը (ժողովածու) 36, 152, 155,  
 198, 221, 230—231, 236  
 Հեթանոսական 159, 170, 200  
 Հեթանոս երազ—տե՛ս Հեթանոսական  
 Հեթանոս երգեր (ժողովածու) 137, 155,  
 157, 165, 191, 194, 199—200, 203,  
 204, 206—210, 212—214, 218, 220,  
 222, 227—228  
 Հեծկլտանք 218  
 Հետաքրքիր ոգին 36  
 Հերկեր 232, 236  
 Հերոսը 147  
 Հին սեր 46, 140, 192, 200  
 Հիշատակ անցելույն 22  
 Հիսուսի պաճուճապատանքը 34, 38—39,  
 51, 140, 185  
 Հիսուսին պեպեքը—տե՛ս Հիսուսի պա-  
 ճուճապատանքը  
 Հիվանդ է 52, 115, 198  
 Հղին—տե՛ս «Օրհնեալ ես դու ի կա-  
 ճայս»  
 Հմայքի աղբյուրը 224  
 <Հողվածներ «Մեճմուայը ախպարում»>  
 (1902) 23  
 <Հողված «Մեճմուայը ախպարում»>  
 (1908)  
 Հողգարի բլրակին 174  
 Հովիվը 155, 164, 184, 202  
 Հորդորներ սկանականներուն 194  
 Հորս բանտը—տե՛ս Հորս բանտին մեջ  
 Հորս բանտին մեջ 12, 71, 78, 140, 155  
 Հրածեղտ 15  
 Հրաշքին աղբյուրը 147, 151, 156, 170,  
 173, 200  
 Հրավեր 51, 140  
 Հունձք 236  
 Հունձք կը ժողվեմ 231, 236  
 Հուսահատական մրմունջներ—տե՛ս Աև  
 օրերու սև նաքի  
 Հուսահատի մրմունջներ 22  
 Հուսի բանք, (1910) 164  
 Հուսի բանք (1913) 211

Հուսի բանք (1914) 229  
 Զյունն դագաղը 33, 38—39, 52  
 Զոն («Նդեգնյա գրուվ երգեցի փառ-  
 քեր») 155, 159  
 Զոն («Վարդ քաղցեցիր, սիրտ թող բլլա») 223  
 Ճանապարհ խաչի 173, 200  
 Ճարակում 236  
 Ճիվաղը կանցնի 170, 200  
 Մաղթանք 192, 194  
 Մաղթանքի ձայներ 33  
 Մամուս աղոթքը 75, 140, 169, 172, 200  
 Մայիս 22  
 Մայիս մեկ 189, 200  
 Մայրեղույթուն—տե՛ս «Օրհնեալ ես դու  
 ի կանայս»  
 Մանկութենես 11, 29, 38—39  
 Մանուկը 29, 38—39  
 Մանուշակ 21  
 Մանուշակին (սիրերգ) 16, 38—39  
 Մաշած լար (ժողովածու) 53—54  
 Մատյանն ահա 200  
 Մատինը 35, 38, 43, 111, 115, 140, 155  
 Մարազներ 236  
 Մարած օճախը 81, 83, 87—89, 140,  
 155, 164  
 Մեխակ 21  
 Մեծ մարդը—տե՛ս Մխիթար Աբրե  
 Մեռած աստվածներուն 147, 177—178,  
 200  
 Մեռածին համբույր մը 36, 38, 39, 56  
 Մեռնող բանվորը 162, 170, 200  
 Մերենաները 172, 200  
 Միշոն 181—182, 200  
 Մինավորը 129, 140, 173—174, 200  
 Միջատի մը—տե՛ս հեղզված միջատը  
 Միշոն 181—182, 200  
 Միջօրե 230, 232, 236  
 Մխիթար Աբրե 29, 32, 38—39  
 Մշակներ 198, 236

Մոխիրներուն առջև 37—39, 52  
 Մորմոր (Թարգմ.) 218  
 Մրբահասույզ կայծոռիկներ (ժողովածու)  
 11, 15—20, 24—38  
 Մուսային («Հացին հրզը») 198, 220,  
 236  
 Մուսային («Մարտուններ») 38, 52  
 Մուրացիկը 33, 38, 52  
 Մուրացիկին երգեհոնիկը—տե՛ս Մուրա-  
 ցիկը  
 Յարճանյանի քերթողութունը (բանախո-  
 սութուն) 209  
 Նախերգան—տե՛ս Մուսային («Մարտու-  
 ններ») 37—38  
 Նավասարդյան, 213, 217—218, 220—  
 221, 223  
 Նարգես 21  
 Նեմեսիս 127, 140, 153, 155, 158  
 Նշանածը—տե՛ս Սիրանին գետեգրեր  
 Նպատակին 25, 38, 49, 51, 140  
 Շուշան 21  
 Ո՛վ լալագե 169, 187, 190, 200  
